


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
II

Ներկայացվող աշխատությունը
Հրատարակվում է Բաց Հասարակության
Խնստիտուտի Օժանդակության Հիմնադրամի
Հայկական մասնաճյուղի Հովանավորությամբ:





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЦЕНТР ЭТНОКУЛЬТУРОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ "ВОСТАН"

НАЦИОНАЛЬНЫЕ МЕНЬШИНСТВА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ
СТАНОВЛЕНИЯ ГРАЖДАНСКОГО
ОБЩЕСТВА

II

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА

ЕРЕВАН 2005

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHEOLOGY AND ETHNOGRAPHY

CENTER FOR ETHNOCULTUROLOGICAL STUDIES "VOSTAN"

NATIONAL MINORITIES OF THE
REPUBLIC OF ARMENIA
IN TRANSITION

II

"GITUTIUN" PUBLISHING HOUSE, NAS RA

YEREVAN 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՈՍՏԱՆ» ԷԹԵՐՆԵՏԿԱՌԻԹԱՔԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՅՄԱՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

II



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2005

A II
9/638

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի և «Ռոստան» էքսմոնոգրաֆիկական
հետազոտությունների կենտրոնի ջրղծմամբ

Խմբագիր՝ Յու. Սկրատովյան

Редактор Ю. Мкртумян

Հ 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈԲՐԱՄԱՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵ-
ՐԸ ԲԱԿԱԲԱԶՅԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԳԻ ՊԵՅՄԱՆ-
ՆԵՐՈՒՄ II (Յու. Սկրատովյան, Հ. Սարգսյան, Ա. Թադևոսյան և ուրիշ.) - Գիրք II.
- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, 254 էջ:

Սույն աշխատությունը 2000թ. հրատարակված «Հայաստանի Հանրապետության ազ-
գային փոքրամասնություններն այսօր» առաջին գրքի ծրագրային և բովանդակային շա-
րունակությունն է: Առաջին գրքում բնութագրված էին եզդիները, եզդի բրդերը, ռուսները,
հույները, ասորիները և բուլաները: Ներկա աշխատության մեջ բնութագրվում են հանրապե-
տությունում բնակվող հետևյալ ազգային փոքրամասնությունները՝ ուկրաինացիները, վրա-
ցիները, բելառուսները, գերմանացիները, հրեաները, լեհերը և մի շարք փոքրաթիվ էթնիկ
խմբեր (պարսիկները, արաբները, մոլդավացիները, մորդվանները, բուլղարները, ինգուշները,
բաբարները, օսերը, լատիշները, լիավացիները, ադրբեջանցիները, ուղիները, գնչուները):
Ռուսումնասիրությունն իրականացվել է երկու կտրվածքով. բացահայտվել են վերոհիշյալ
ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի ժողովրդագրական և էթնո-
մոլակերպային զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց իրավունքնե-
րի օրենսդրական ապահովման վիճակը Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավա-
րության և քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում: Ռուսի հե-
ղինակները հատուկ ուշադրություն են դարձրել Հայաստանի Հանրապետությունում քաղա-
քացիական հասարակության ձևավորման ընթացքին և հիմնախնդիրներին, հատկապես
պետականության, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ինստիտուցիո-
նալ հիմքերի ձևավորմանը: Հեղինակների խումբը հետազոտություններ է կատարել հան-
րապետության բոլոր մարզերի ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ
խմբերի բնակության վայրերում, որոնց արդյունքները հիմք հանդիսացան սույն գրքի հա-
մար: Աշխատության մեջ վերլուծվում են նաև Հայաստանի Հանրապետության 2001թ. անց-
կացված մարդահամարի ցուցանիշները ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ
էթնիկ խմբերի վերաբերյալ: Սույն հետազոտությունն ունի գիտականաշողական, ինչպես
նաև քաղաքական և հասարակական նշանակություն, քանզի էքսմոնոգրաֆներն բնու-
թագրվում են վերոհիշյալ ազգությունները, բացահայտվում գոյություն ունեցող հիմնախն-
դիրները և ներկայացվում են առաջարկություններ ազգային փոքրամասնությունների հար-
ցում պետական քաղաքականության և օժանդակության ծրագրերի բարելավման համար:

Գիրքը նախատեսվում է ինչպես մասնագետների, այնպես էլ հասարակության լայն
շրջանակների համար:

Հ 0803010413
703(02) - 2005 2005 թ.

ԳՄԴ- 66.3 (2Հ)

ISBN 5-8080-0615-5

«ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2005

«Ռոստան» էքսմոնոգրաֆիկական հետազոտությունների կենտրոն, 2005

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

1998թ. «Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպությունը մշակեց գիտական գործունեության ծրագիր՝ կապված հանրապետության բնակչության ազգային, մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման խնդիրների ուսումնասիրության հետ: Նկատի առնելով Հայաստանի Հանրապետությունում մի շարք ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի առկայությունը՝ ծրագրում ուրույն տեղ հատկացվեց նաև ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի էթնոմշակութային, լեզվական և իրավաքաղաքական հարցերի հետազոտմանը: Ազգային փոքրամասնությունների ուսումնասիրության ծրագիրը հավանության արժանացավ Բաց հասարակության ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի Հայկական մասնաճյուղի կողմից: Այդ ծրագիրը իրագործվեց երկու փուլով:

Առաջին փուլն ընդգրկեց 1998-2000թթ., երբ հետազոտվեցին Հայաստանի Հանրապետության մի շարք ազգային փոքրամասնություններ, այդ թվում՝ եզդիները, եզդի քրդերը, ռուսները, հույները և ասորիները, ինչպես նաև բոշաների էթնոմշակութային հանրությունը: Արդյունքում հրատարակվեց «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր» առաջին գիրքը:

Ծրագրի իրագործման երկրորդ փուլն ընդգրկեց 2001-2004թթ., որի արդյունքում պատրաստվեց սույն գիրքը: Այն ընդգրկում է ՀՀ մյուս ազգային փոքրամասնությունների՝ ուկրաինացիների, վրացիների, բելառուսների, գերմանացիների, հրեաների և լեհերի, ինչպես նաև փոքրաթիվ էթնիկ խմբերի իրավաքաղաքական և էթնոմշակութային բնութագրությունը:

Ընթերցողը, ամենայն հավանականությամբ, նկատեց, որ առաջին և երկրորդ գրքերի անվանումները տարբեր են. մի դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I», մյուս

դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում»: Բովանդակային և հարցադրումների առումով, ըստ էության, դրանց մեջ տարբերություն չկա: Այսօր Հայաստանի Հանրապետությունում ընթանում են ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման բախո՝ ու հակասական գործընթացներ: Ուստի երկարաժամկետ վերնագրի մեջ հեղինակները ցանկացել են ընդգծել, որ ազգային փոքրամասնությունների զարգացման արդի միտումները դիտարկում են քաղաքացիական հասարակության կայացման գործընթացների համատեքստում:

Իրագործված ծրագրի¹ նպատակն է Հայաստանի Հանրապետության հասարակությանը, օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններին ներկայացնել հանրապետության ազգային փոքրամասնությունների արդի վիճակը, նրանց օրինական ձգտումները պահպանելու սեփական էքոնոմիկային արժեքները, ինչպես նաև մերօրյա սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման բախո՝ պայմաններում առաջացած հրատապ խնդիրները, որոնց հանգուցալուծմանն ու բավարարմանը պետք է միտված լինի և՛ օրենսդրական դաշտի ձևավորումը, և՛ ՀՀ Կառավարության ֆինանսական և նյութական օժանդակությունը:

Ազգային փոքրամասնությունների զարգացման գործընթացները դիտարկելով հանրապետությունում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության կայացման համատեքստում՝ հնարավորություն է ընձեռնում մի կողմից ճիշտ ըմբռնել գոյություն ունեցող խնդիրները, մյուս կողմից, մշակել դրանց հանգուցալուծմանը նպաստող ուղիներ և առաջարկություններ, ինչը և կատարված է հրատարակված երկու գրքերում: Իրագործված հետազոտությունների պրակտիկ նշանակությունն իր արտահայտությունը գտավ մի շարք կարևոր իրադարձություններում: Հանրապետության լայն հասարակայնությունը ճանաչեց և ըմբռնեց ազգային փոքրամասնությունների էքոնոմիկային զարգացման գործընթացների իրողությունները և խնդիրները:

2000թ. մարտ ամսին ՀՀ Նախագահի նախաձեռնությամբ կազմակերպվեց հանրապետության բոլոր 11 ազգային փոքրամասնությունների

¹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում. Հետազոտական ծրագիր, Եր., 2001, էջ 4-14 (Ծրագրի ղեկավար՝ Յու. Սկրտումյան):

ազգային-մշակութային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների առաջին համագումարը, որն ընդունեց մի շարք կարևոր փաստաթղթեր՝ կապված ազգային փոքրամասնությունների զարգացման ասպարեզում գոյություն ունեցող խնդիրների հետ, ինչպես նաև ստեղծեց ՀՀ Նախագահի խորհրդականին առընթեր Համակարգող խորհուրդ, որի անդամներն ընտրվեցին հենց համագումարի պատգամավորների կողմից, բացառապես ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից:

«Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոնի անդամները, որոնք սերտ կապեր էին հաստատել ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային հասարակական կազմակերպությունների հետ և լավատեղյակ էին այդ ասպարեզում գոյություն ունեցող խնդիրներին, ակտիվորեն մասնակցեցին այդ համագումարի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:

2004թ. ՀՀ Կառավարությունն իր կառուցվածքում ստեղծեց ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի նոր վարչություն, որը կոչված է համակարգելու պետության գործունեությունն այդ բնագավառում:

Սույն աշխատության հեղինակներից երկուսը՝ Հ.Գ. Սարգսյանը և Յու.Ի. Սկրտումյանը, մասնակցեցին 2001թ. Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի նախապատրաստական աշխատանքներին՝ կազմելով հանրապետության տարածքում բնակվող ազգությունների անվանացանկը, որը հավանության արժանացավ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից: Կցանկանալի այստեղ շեշտել, որ խոսքը ՀՀ-ում բնակվող ազգությունների անվանացանկի կազմման սուկ տեխնիկական կողմի մասին չէ: Ազգությունների անվանացանկն արտահայտում է պետության քաղաքականության որոշակի ուղղվածություն: Համաշխարհային պատմությունից հայտնի են շատ դեպքեր, երբ մարդահամարի նախօրեին ազգությունների անվանացանկում միտումնավոր չեն ընդգրկվել շատ ազգություններ, որոնց վերաբերյալ, հասկանալի է, մարդահամարի միջոցով ոչ մի ցուցանիշ չի կարող գրանցվել, քանզի տվյալները գրանցվում են միայն անվանացանկերում ներգրավված ազգությունների վերաբերյալ: 2001թ. ՀՀ մարդահամարի անցկացման համար ազգությունների անվանացանկը կազմելիս հեղինակները հաշվի առան երեք կարևոր հանգամանք.

ա) աշխարհի բնակչության էթնոլեզվական կառուցվածքը, որն ընդունված է ժամանակակից գիտության մեջ,

բ) Հայաստանի Հանրապետության բնակչության ազգային կազմի մասին տվյալները, որոնք վավերացվել էին վերջին 75 տարիների ընթացքում անցկացված վեց մարդահամարների ժամանակ՝ 1926, 1939, 1959, 1970, 1979, 1989թթ.,

գ) 1980-ական թվականների վերջերին և 1990-ականներին տեղի ունեցած բնակչության տեղաշարժերի և բռնագաղթերի արդյունքում առաջացած փոփոխությունները: Այդ տարիներին Ադրբեջանում կատարված հայկական ջարդերից հետո ոչ միայն հայ փախստականներ ապաստան գտան Հայաստանում, այլ նաև ուրիշ ազգությունների ներկայացուցիչներ, որոնք առ այսօր ապրում են ՀՀ-ում, դառնալով նաև երկրի քաղաքացիներ, ինչպես օրինակ, ուղիները, որոնք, հասկանալի է, նույնպես ընդգրկվեցին ազգությունների անվանացանկում:

Հեղինակային խմբի անդամները հետազոտությունների ժամանակ հանրապետության տարբեր բնակավայրերում արձանագրել են ադրբեջանցիների ընտանիքներ: Մարդահամարի համար նախապատրաստվող ՀՀ ազգությունների անվանացանկում ներառվեցին նաև ադրբեջանցիները, և մարդահամարը վավերացրեց նրանց որոշակի թվաքանակի առկայությունը հանրապետությունում: Նման մոտեցումների արդյունքում կազմվեց անվանացանկ, որն ընդգրկեց շուրջ 150 ազգություն, և սա այն պարագայում, երբ գոյություն ունեցող մտայնության համաձայն Հայաստանի Հանրապետության բնակչությունը համարվում է մենէթնիկ: Ի դեպ, խորհրդային կարգերի օրոք մարդահամարների անցկացման համար անվանացանկերն ընդգրկել են շուրջ 120 էթնանուն:

Կարող ենք որոշակիորեն ասել, որ նկատի առնվեցին բոլոր փաստերը և իրադարձությունները, որպեսզի բացառվեն վրիպումները, որովհետև չկանխատեսված բացթողումները նույնպես կադավաղեին մարդահամարի տվյալները:

Վկայակոչելով այս ամենը՝ գրքի հեղինակներն ընդգծում են, որ իրագործված ուսումնասիրության հիմնական նպատակը ոչ միայն և ոչ այնքան գուտ ակադեմիական և գիտաճանաչողական խնդիրներն էին, որքան առաջին հերթին տվյալ բնագավառում գոյություն ունեցող իրավիճակը բացահայտելը և դրա բարելավմանը նպաստելը: Ինչ վերաբերում է ՀՀ ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի բազմակողմանի՝ ազգաբանական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական ակադեմիական մենագրական ուսումնասիրությանը, ապա դա չափա-

գանց կարևոր և հրատապ խնդիր է, որի իրականացումը, հուսով եմք, մոտ ապագայի հարց է:

Սույն աշխատանքի ճանաչողական խնդիրների շրջանակը և կառուցվածքը որոշելիս նկատի առնվեց այն իրողությունը, որ ո՛չ ժամանակակից գիտության մեջ, ո՛չ էլ միջազգային-իրավական, միջազգային-քաղաքական բնույթի փաստաթղթերում «ազգային փոքրամասնություն», «էթնիկ փոքրամասնություն» և «էթնիկ խումբ» հասկացությունների հստակ, համընդհանուր ճանաչման արժանացած սահմանումներ և որակումներ գոյություն չունեն, այդ իսկ պատճառով գրքի հեղինակները նպատակահարմար գտան մեկ առանձին բաժին հատկացնել տեսական-մեթոդաբանական խնդիրներին, որպեսզի ընթերցողին հասկանալի և ըմբռնելի դառնան գործածվող գիտաբառերն ու հասկացությունները և դրանց բովանդակությունը:

Սույն ուսումնասիրության հեղինակներն են.

Մ.Ռ. Գաբրիելյան – պատմաբան-ազգագրագետ, Հայաստանի ազգազրության և էթնոսոցիոլոգիայի հիմնախնդիրների մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնի ասիստենտ:

Մ.Վ. Գալստյան - էթնոսոցիոլոգ, հայ և ընդհանուր սոցիոլոգիական հիմնախնդիրների մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Ա.Զ. Թադևոսյան – պատմաբան-ազգագրագետ, Հայաստանի էթնոշակութաբանության և էթնոքաղաքագիտության հիմնախնդիրների մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Յու.Ի. Մկրտումյան – պատմաբան-ազգագրագետ, հայ և Կովկասի ժողովուրդների ազգագրության հիմնախնդիրների մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնի գլխավոր խորհրդատու:

Հ.Գ. Սարգսյան - աշխարհագրագետ-էթնոժողովրդագետ, Հայաստանի և Կովկասի պատմական աշխարհագրության և էթնոժողովրդագրության հիմնախնդիրների մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

«Ոստան» էքոնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության անդամներն իրենց երախտագիտությունն են հայտնում Բաց հասարակության ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի Հայկական մասնաճյուղին՝ սույն հետազոտության իրագործումը հովանավորելու համար:

Սույն ուսումնասիրության հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ 2001 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի մի շարք ցուցանիշներ (մինչև 1000 բնակչություն ունեցող ազգությունների տվյալները) տրամադրելու համար:

Հեղինակային խումբն իր շնորհակալությունն է հայտնում Հայաստանի ազգությունների միության, ուկրաինական, բելառուսական, լեհական, վրացական, հրեական և գերմանական համայնքների ղեկավարներին և անդամներին՝ սույն հետազոտության իրականացման ընթացքում համագործակցության և աջակցության համար:

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոս Հ.Թ. Հարությունյանին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս.Գ. Հոբոսյանին և նույն ինստիտուտի գիտաշխատող Ա.Ա. Դաբալյանին՝ արժեքավոր խորհուրդների, խմբագրական ճշգրտումների և նյութերի համակարգմանն օժանդակելու համար:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՀՀ ազգային փոքրամասնությունների ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական, էթնոմշակութաբանական և իրավաքաղաքական խնդիրները

Սույն գլխում հայեցակարգային վերլուծության են ենթարկվում ՀՀ ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի ուսումնասիրության հիմնախնդիրները: Նախ և առաջ անդրադառնանք տեսական, մեթոդաբանական տեսանկյուններին: Հաշվի առնելով այն իրողությունը, որ ո՛չ ժամանակակից գիտության մեջ, ո՛չ էլ միջազգային-իրավական և միջազգային-քաղաքական փաստաթղթերում¹ «էթնիկ խումբ» և «ազգային փոքրամասնություն» հասկացությունները միանշանակ չեն սահմանվում ու բնորոշվում, նպատակահարմար գտանք սույն աշխատության մեջ անդրադառնալ այդ հասկացություններին և ճշգրտել դրանց գործածության առումները:

Այստեղ, կարծում եմ, տեղին չէ մանրակրկիտ վերլուծել գրականության մեջ և միջազգային իրավական փաստաթղթերում գոյություն ունեցող բոլոր մոտեցումները և սահմանումները (նկատի առնելով այն հանգամանքը, որ սույն աշխատության հիմնական խնդիրները կապված են ՀՀ ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային և իրավաքաղաքա-

¹ *С.В. Соколовский*, Права меньшинств, М., 1997; Права и статус национальных меньшинств в бытии СССР, М., 1993; Selection of Texts from International and Regional Human Rights Instruments and other Documents, Lund (Sweden) 1993; *М.Ю. Мартынова*, Национальные меньшинства в странах Восточной Европы в 90-е годы, М., 1995; *Г.Е. Жванья*, Международно-правовые гарантии защиты национальных меньшинств, Тбилиси, 1959; *С.М. Пулякин*, Проблема защиты меньшинств в международном праве. – Государство и право, 1992, N 8; *Յու. Ի. Մկրտումյան*, Ազգային փոքրամասնությունների իրավունքները մարդու իրավունքների համակարգում. – «Համատեղ սեմինարների նյութերի ժողովածու», Եր., 1997, էջ 79-86; *P. Thornberry*, International Law and the Rights of Minorities. – Oxford: Clarendon Press, 1991.

կան հարցերի ուսումնասիրության հետ), բայց ելնելով ասպարեզի վրա եղած բոլոր տեսակետների համադրումից, ուղղակի ընդգծենք, որ աշխատության մեջ գործածելով *Էթնիկ խումբ* հասկացությունը, մենք նկատի ունենք որևէ էթնոսի (ազգի, ժողովրդի) այնպիսի հատված, որը բնակվում է այլ երկրում, այսինքն՝ իր պատմական հայրենիքից դուրս և սերտորեն կապված է տվյալ երկրի էթնիկ հանրության, նրա սոցիալ-տնտեսական, լեզվամշակութային և պետաիրավական համակարգի հետ:

Եթե նման խումբը ինքնակազմակերպվում և ստեղծում է լինստիտուցիոնալ կառույցներ, որոնք միտված են միափոխելու տվյալ խմբի հավաքական ջանքերը՝ պահպանելու և զարգացնելու համար սեփական լեզվամշակութային արժեքները, ապա այն հանդես է գալիս որպես *ազգային փոքրամասնություն*: Այսինքն, այս կամ այն *Էթնիկ խումբ*, որը ցանկանում և քայլեր է ձեռնարկում բնակության երկրում իր մշակութային և էթնիկ ինքնությունը պահպանելու, ստեղծելով մշակութային, կյոնական, բարեգործական և այլ համաբնույթ կազմակերպություններ, միություններ և համայնքներ, ապա այն հանդես է գալիս որպես *ազգային փոքրամասնություն*.² Ընդ որում, կարևորվում է ոչ այնքան տվյալ խմբի քանակական մեծությունը, որքան խմբի անդամների քաղաքացիական կարգավիճակը, այսինքն՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է լինեն տվյալ պետության քաղաքացիներ և մշտական բնակիչներ:

Ազգային փոքրամասնություններն իրենց ազգային-մշակութային արժեքների պահպանման ու զարգացման տեսանկյունից գտնվում են անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններում, քան էթնիկ խմբերը, քանզի վերջիններս, հաճախ ունենալով ցրիվ (դիսպերս) բնակություն, փաստորեն զրկված են իրենց էթնոմշակութային ինքնությունը պահպանելու համար հավաքական ջանքեր գործադրելու հնարավորությունից:

Ելնելով այս սկզբունքներից՝ հեղինակային խումբը ՀՀ տարածքում դիտարկվում է 11 ազգային փոքրամասնություն և մի քանի տասնյակ փոքրաքիվ էթնիկ խմբեր (տե՛ս սույն աշխատության երրորդ և չորրորդ գլուխները): Այն ազգային փոքրամասնությունները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ունեն իրենց ազգային պետական կազմավորումները, գտնվում են համեմատաբար բարենպաստ պայմաններ

² *С.В. Соколовский*, նշվ. աշխ., էջ 9-17:

յում՝ իրենց ազգային պետություններից ստանալով զանազան բնույթի օժանդակություն (բարոյական, քաղաքական, ֆինանսական, նյութական և այլն): Որպես կանոն, ազգային պետությունները շահագրգիռ հետաքրքրություն են դրսևորում այլ երկրներում բնակվող իրենց «հայրենակիցներին» նկատմամբ՝ ցուցաբերելով բազմակողմանի աջակցություն:

Օրինակ, 90-ական թվականների սկզբներից առ այսօր Հունաստանը բազմակողմանի օժանդակություն է ցուցաբերում Հայաստանի Հանրապետությունում բնակվող հույներին: Նույնը կարող ենք ասել Ռուսաստանի Դաշնության մասին, որն օժանդակում է Հայաստանում բնակվող ռուս բնակչությանը կամ Բելառուսի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Իսրայելի, Լեհաստանի, Վրաստանի և Ուկրաինայի մասին, որոնք աջակցում են իրենց ազգային համայնքներին: Այս համգամանքը, անշուշտ, նպաստում է էթնոշակության ինքնության պահպանմանն ու զարգացմանը և արտագաղթի պարագայում կանխորոշում է դրա ուղղությունը դեպի պատմական հայրենիք:

Ազգային փոքրամասնությունների իրավունքները դիտարկելիս միջազգային իրավական և միջազգային քաղաքական փաստաթղթերում առանձնացվում է երկու հարթություն՝ անհատական և խմբային: Պատմականորեն սկզբից շեշտը դրվում էր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, այսինքն, անհատական իրավունքների վրա: Միայն 1980-ական թվականների կեսերից ազգային փոքրամասնությունների իրավունքների համակարգը հստակորեն համալրվեց նաև խմբային (հավաքական) իրավունքի սկզբունքով: Այսինքն, ազգային փոքրամասնությունն ամբողջությամբ դիտարկվեց որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների էությունը ճիշտ և հստակ ըմբռնելու համար կցանկանայինք ընդգծել, որ խոսքը չի վերաբերում ազգային փոքրամասնությունների համար հատուկ նորմերի և երաշխիքների սահմանմանը, այլ բնակության երկրում բնիկ ազգությանը պատկանող քաղաքացիների հետ իրավահավասարությանը, որպեսզի օգտվեն հավասար (ընդհանուր) քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ իրավունքներից:

Նրանց նկատմամբ ոչ միայն չպետք է կիրառվի որևէ խտրականության քաղաքականություն, այլ նաև պետք է հնարավորություններ և երաշխիքներ ընձեռնվեն ազատ գործածելու իրենց մայրենի լեզուն հասարա-

կական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում նաև կրթության համակարգում և մամուլում, ստեղծելու տարբեր բնույթի կազմակերպություններ (բարեգործական, կրոնական, հասարակական և այլն), պահպանելու և զարգացնելու պատմամշակութային արժեքներն ու ավանդույթները, ինչպես նաև միջազգային ազատ կապեր հաստատելու պատմական հայրենիքի և այլ երկրներում բնակվող ազգակից համայնքների հետ:

Որպես կանոն, այդ բոլոր միջոցառումներն ազգային փոքրամասնությունները պետք է իրագործեն սեփական միջոցների հաշվին: Բայց հաշվի առնելով այն իրողությունը, որ տարբեր երկրներում բնակվող ազգային փոքրամասնությունները հաճախ բավարար միջոցներ չունեն իրենց առջև ծառացած խնդիրների լուծման և գործունեությունը արդյունավետ իրականացնելու համար, կառավարությունները պարտավորվում են մշակել օժանդակության, այդ թվում նաև նյութական և ֆինանսական աջակցության պետական ծրագրեր, ինչպես նաև իրավական երաշխիքներ ազգային փոքրամասնությունների՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում *իրական* մասնակցությունն ապահովելու համար:

Ազգային փոքրամասնությունների դրության կարգավորման հարցերը դիտարկելիս անհրաժեշտ է տարբերակել և համադրել երկու բաղադրամաս. միջազգային իրավական, միջազգային քաղաքական երաշխիքները և ներպետական օրենքներն ու նորմերը: Հարկ ենք համարում ընդգծել, որ եթե միջազգային իրավական և միջազգային քաղաքական դրույթներն ու երաշխիքները պետությունների համար չունեն, բառիս բուն իմաստով, հարկադրական ուժ, ապա չափազանց մեծ է դրանց բաղդական և հասարակական նշանակությունը: Չի կարող քաղաքակիրթ համարվել ուրև պետություն, որտեղ ազգային փոքրամասնությունների իրավունքներն անտեսվում են կամ ոտնահարվում: Հենց այս սկզբունքներից ելնելով՝ ներկա աշխատության մեջ ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները:

Սույն ուսումնասիրության իրականացումը հնարավորություն ընձեռեց գրառել և հետազոտել բավականաչափ հավաստի ու բազմակողմանի նյութեր ուկրաինացիների, վրացիների, բելառուսների, գերմանացիների, հրեաների և լեհերի, ինչպես նաև բազմաթիվ փոքրաթիվ էթնիկ խմբերի վերաբերյալ, քանզի առանց փաստացի իրավիճակի իմացության հնարավոր չէ ո՛չ տվյալ խնդրի էության, ո՛չ էլ ազգային փոքրամասնությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համակար-

զի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, պայմաններ, որոնք անհրաժեշտ են ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային բնականոն զարգացումն ապահովելու և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում նրանց ներդաշնակ ընդգրկման համար:

Ուստի, հեղինակային խումբը Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերի՝ Արարատ, Արմավիր, Արագածոտն, Գեղարքունիք, Կոտայք, Լոռի, Շիրակ, Տավուշ, Սյունիք, Վայոց ձոր, քաղաքային և գյուղական շուրջ 150 բնակավայրերում, և հատկապես, խոշոր քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Վաղարշապատում, Հրազդանում, Արովյանում, Արմավիրում, Գավառում, Կապանում և այլ, բազմաթիվ գործուղումների կազմակերպման միջոցով գրառեց արժեքավոր և ներկայացուցչական տվյալներ, որոնք և հիմք հանդիսացան սույն գրքի համար: Բազմաթիվ գործուղումները պայմանավորված են այն հանգամանքով, որ վերոհիշյալ ազգային փոքրամասնությունները մեծ մասամբ ցրիվ (դիսպերս) են բնակված հանրապետությունում:

«Ուստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոնը հրատարակեց հետազոտության մի շարք ծրագրեր, որոնք և հիմք հանդիսացան սույն աշխատության համար: Այդ ծրագրերում առանձնացվեցին չորս հիմնական բաժիններ, որոնք և ընդգրկեցին ուսումնասիրվող հիմնական հարցերի շրջանակները:

Առաջին բաժինը նվիրված էր ՀՀ ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի արդի ժողովրդագրական գործընթացներին: Այն ներառում էր.

- համառոտ պատմական ակնարկ յուրաքանչյուր ազգային փոքրամասնության և էթնիկ խմբի մասին,
- ժողովրդագրական գործընթացների հիմնական միտումները 1990-2003թթ.: Հոծ և ցրիվ տարաբնակեցման հիմնական վայրերը,
- բնակչության սեռատարիքային կառուցվածքը և փոփոխությունները այդ թվականներին: Բաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը,
- քաղաքային և գյուղական ընտանիքների կառուցվածքը: Մեներնիկ և միջէթնիկ ամուսնությունների տարածվածության աստիճանը և փոփոխությունների միտումները,
- բնակչության տեղաշարժերի պատճառները, բնույթն ու ուղղությունները, արտագաղթի և ներգաղթի ծավալները: Միգրանտների սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական կառուցվածքը:



Երկրորդ բաժինը ներառում էր հարցեր, որոնք վերաբերում են ՀՀ ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական զարգացման արդի միտումներին.

- ազգային փոքրամասնությունների մասնագիտական կառուցվածքը. ծառայողներ (արդյունաբերության, գյուղատնտեսության, պետական կառավարման, կրթության, առողջապահության և սպասարկման ոլորտներում ընդգրկված բարձրագույն, միջնակարգ մասնագիտական, միջնակարգ և քերի միջնակարգ կրթությամբ), դաշտավարներ, այգեգործներ, անասնապահներ, անհատ ձեռներեցներ, ֆերմերներ: Մտավորականության տեսակարար կշիռը,
- մասնակցությունը սեփականաշնորհման և մասնավորեցման գործընթացներին. հիմնական ձևերն ու բնագավառները (արդյունաբերություն, սպասարկման ոլորտներ, առևտուր և այլն),
- մասնակցությունը գյուղատնտեսության ոլորտում (հողատարածքներ, գյուղատնտեսական տեխնիկա, անասուն և գյուղատնտեսական նշանակության կառույցներ) իրականացված սեփականաշնորհման և մասնավորեցման գործընթացներին: Մասնակցության աստիճանը, ձևերը, չմասնակցելու պատճառները, գնահատականներն իրականացված վերափոխումների վերաբերյալ,
- քաղաքային և գյուղական ընտանիքների սոցիալ-ունեցվածքային վիճակը (սեփական տուն, բնակարան, հողամաս, անասուն, գյուղատնտեսական տեխնիկա, ավտոմեքենա, սեփական գործ, աշխատանք և այլն), սոցիալ-ունեցվածքային վիճակի փոփոխությունները վերջին տարիներին,
- ընտանիքի եկամուտների հիմնական աղբյուրները՝ աշխատավարձ, սեփական գործ, գյուղմթերքների իրացումից ստացվող եկամուտ, կենսաթոշակ, նպաստ, օգնություն՝ ազգականներից, այլ օգնություն,
- գործազրկության ձևերը, տարածվածության աստիճանը, պատճառները, հետևանքները, հաղթահարման ուղիները:

Երրորդ բաժինն ընդգրկում էր ՀՀ ազգային փոքրամասնությունների էթնոշակութային զարգացման արդի միտումներին առնչվող հարցեր.

- էթնոլեզվական իրավիճակը, մայրենի լեզվի պահպանվածության և կենցաղավարման աստիճանը: Երկլեզվություն և բազմալեզվություն: Ազգային լեզուն կրթական համակարգում (պետական, մաս-

նավոր): Մասնագետների պատրաստում, դասագրքերի և գրականության հրատարակում և հայթայթում: Ազգային փոքրամասնությունների կողմից ձեռնարկված միջոցառումները,

- տոնաձխական արդի համակարգի բնույտը գծերը, ավանդույթներն ու նորույթները պետական և ազգային տոնացույցում, ընտանեկան ծիսաշարին բնույտը ավանդույթներն ու նորույթները. հարսանիք, ծնունդ, կնունք, հուղարկավորություն, այլ արարողություններ: Միջէթնիկ կապերի արտացոլումը տոնաձխական համակարգում,
- կրոնը և ժողովրդական հավատալիքներն ընտանեկան և համայնքային կյանքում. փոփոխությունների հիմնական միտումները,
- էթնիկ և մշակութային նույնականացման և ինքնանույնականացման հատկանիշները. ընդհանուր ծագում, կրոն, լեզու, մշակութային ավանդույթներ, բնավորության ընդհանուր գծեր և այլն,
- հաղորդակցության մշակույթի նորմերը և վարվելաձևի կարծրակերպերը միջէթնիկ հարաբերություններում,
- պատմական հայրենիքի և այլ երկրների գաղթօջախների հետ ունեցած կապերը. բնույթը, շփումների հաճախականությունը, օգնության և փոխօգնության եղանակները: Պետական աջակցության ձևերը:

ՀՀ-ում ընթացող քաղաքացիական հասարակության կայացման գործընթացների ազդեցությունն ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային արժեքների պահպանման և վերարտադրության, իրավաբաղադական կացության և բարոյահոգեբանական տրամադրության վրա:

Վերջին, *չորրորդ* բաժնում ընդգրկվեցին հարցեր, որոնք բացահայտում են ՀՀ ազգային փոքրամասնությունների մասնակցությունը հանրապետության հասարակական-մշակութային կյանքին, *հետազոտվեցին*.

- ազգային փոքրամասնությունների հասարակական, հասարակական-մշակութային կառույցները, դրանց գործունեության հիմնական ուղղություններն ու ոլորտները, նշանակությունը ազգային փոքրամասնությունների կյանքում,
- ազգային փոքրամասնությունների կառույցների համագործակցության ձևերը հանրապետական և տեղական մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ,

- ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների փոխ-
համագործակցության ձևերն ու բնույթը,
- ազգային փոքրամասնությունների ներգրավվածությունն ու մաս-
նակցության ձևերը հանրապետությունում ընթացող քաղաքական-
հասարակական գործընթացներին,
- ՀՀ ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները հանրա-
պետությունում քաղաքացիական հասարակության կայացման
համատեքստում:

Ահա այն հիմնական հարցերը, որոնք ուսումնասիրվել են սույն գրքի
շջանակներում: Դրանց դիտարկումը միջազգային-իրավական չափա-
նիշների և չափորոշիչների տեսանկյունից հնարավորություն ընձեռեց
բացահայտելու ՀՀ ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային
զարգացման միտումները և նրանց իրավունքների օրենսդրական ապա-
հովման դրվածքը և ընթացքը հանրապետությունում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Քաղաքացիական հասարակության կայացման ընթացքը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 1991 – 2004 թթ.

2.1. Խնդրո առարկան

ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդագրական, էթնոմշակութային, սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական զարգացման միտումները ճիշտ ընկալելու և պարզաբանելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել պետության, հասարակության, տնտեսության համակարգում և օրենսդրական դաշտում կատարված փոփոխությունների համատեքստում: Դրանով է պայմանավորված, որ սույն գրքում ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները դիտարկելիս անդրադարձ է կատարվում նաև հանրապետության զարգացման հիմնարար հարցերին:

1990-ականներին հանրապետությունում կատարվեցին արմատական համակարգային վերափոխումներ, և խորհրդային տիպի խեղաթյուրված սոցիալիստական համակարգից կտրուկ անցում կատարվեց դեպի աշխարհի զարգացած շատ երկրներում քննություն բռնած, այսպես կոչված, արևմտյան քաղաքական, տնտեսական, քաղաքացիական և ժողովրդավարական արժեքային մոդելին: Այդ մույն ժամանակաշրջանում էական սոցիալ-քաղաքական փոփոխություններ տեղի ունեցան ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Դրանք հանրահայտ են, ուստի սույն գրքի ճանաչողական խնդիրների շրջանակներից դուրս են: Բայց առավել կարևորվում է Հայաստանում տեղի ունեցած բեկումնային իրադարձությունների հետևանքների նշանակության բացահայտումը ՀՀ ազգային փոքրամասնությունների ճակատագրում:

Նման բեկումնային, արմատական վերափոխումների շրջանում մի-

ջազգային կազմակերպությունները հատուկ ուշադրություն են դարձնում հատկապես ազգային փոքրամասնությունների դրությանը, որոնք, որպես կանոն, հայտնվում են առավել անպաշտպան վիճակում: Այս տեսանկյունները բազմիցս արծարծվում են սույն աշխատության մեջ: Հարկ ենք համարում ընդգծել, որ Հայաստանում կատարված վերափոխումները ստորև դիտարկվում են վերոհիշյալ նպատակով, այլ ոչ թե իրենց ամբողջ ծավալով ու բովանդակությամբ (ինչը, անշուշտ, արժանի է հատուկ մանրակրկիտ հայեցակարգային ուսումնասիրության):

ՀՀ Սահմանադրության հենց առաջին հոդվածում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:¹ Մեր խնդիրն է պարզել, թե անցած տասներեք տարիների ընթացքում (1991-2004թթ.) նորանկախ պետականությունը, երկրում ձևավորվող նոր տնտեսական համակարգը, ՀՀ հասարակությունը ինչպիսի զարգացում ունեցան և ինչպես անդրադարձան բնակչության ժողովրդագրական կառուցվածքի, կենսամակարդակի, հանրապետությունում առաջացած բարոյահոգեբանական մթնոլորտի, ազգամիջյան հարաբերությունների վրա: Այս բոլորը հետազոտվում են ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրների համատեքստում:

Սույն գլխում առավել կարևորեցինք հանրապետությունում քաղաքացիական հասարակության կայացման պետաիրավական, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ինստիտուցիոնալ տեսանկյունների հակիրճ հայեցակարգային դիտարկումը:

2.2. Քաղաքացիական հասարակության կայացման պետաիրավական տեսանկյունները

Հայաստանի Հանրապետությունը ապրում է պատմական բարդ ու հակասական այնպիսի ժամանակաշրջան, որն իր մեջ ներառում է վիթխարի հնարավորություններ և ժողովրդավարական ու քաղաքացիական արժեքների ձևավորման ու զարգացման հեռանկարներ: Այս տեսանկյունից ավելի քան տասը տարիների հեռավորությունից առանձնահատուկ արժեքավորման կարիք ունի Հայաստանի Հանրապետության պետա-

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., 1996, էջ 7:

իրավական հիմքերի կայացման հիմնախնդիրը: Այն հնարավորություն կտա բացահայտելու և զննահատելու ձևավորվող պետաիրավական համակարգի դերը հասարակության կայուն և բնականոն զարգացման, Հայաստանում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման գործում: Հայաստանի Հանրապետությունում պետաիրավական դաշտի ձևավորումը պայմանականորեն կարելի է բաժանել չորս փուլի, որոնց համար որպես կարևոր չափանիշներ հիմք են ընդունվել հետևյալ գործոնները.

- Հայաստանում անկախ պետականության հիմքերի ձևավորման, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման համար որակյալ օրենքների ընդունումը,
- իրական կյանքում այդ օրենքների և ընդունված այլ իրավական փաստաթղթերի կիրառման, սոցիալական բոլոր շերտերի համար օրենքի գերակայության, դրանց հավասարաչափ գործառնության և օգտվելու մատչելիության ապահովումը,
- հանրապետությունում ձևավորվող պետաիրավական համակարգի դերը, ազդեցությունը, հետևանքները պետության և պետականության վերաբերյալ բնակչության արժեքային համակարգի ձևավորման գործում:

*Առաջին փուլ*ն ընդգրկում է 1988-1990թթ.: Այդ տարիները Հայաստանի համար կարելի է բնութագրել որպես ազգային շարժման վերելքի ժամանակաշրջան, երբ պետության անկախացումը, ազգային ինքնիշխան պետության ստեղծումը դեռևս չէր դիտվում որպես գլխավոր նպատակ, այլ խնդիր էր դրված առկա քաղաքական համակարգի ժողովրդավարական բարեփոխումների շրջանակներում արդարացիորեն լուծել Ղարաբաղյան հիմնահարցը:

Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարն ուղեկցվում էր ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքով, որը գլխավորում էր Հայոց համազգային շարժումը (ՀՀԸ): Այս ժամանակաշրջանում Հայաստանում գործող համարյա բոլոր պետական, կուսակցական և հասարակական կառույցներն ապրում էին խոր ճգնաժամ, և իշխանության հանդեպ ունեցած անվստահության հետևանքով բացառվում էր պաշտոնական իշխանությունների հետ համագործակցությունը:

ՀՀԸ-ի կազմակերպած զանգվածային անժամկետ գործադուլները, հանրահավաքները և բողոքի այլ միջոցառումները դրական ազդեցու-

քյուն ունեցան քաղաքական գործընթացների զարգացման վրա, բայց բացասաբար ազդեցին հանրապետության արդյունաբերության և ամբողջ տնտեսության հետագա վիճակի վրա: ԽՍՀՄ-ն Լեռնային Ղարաբաղի հարցին ոչ միայն չովեց արդարացի քաղաքական լուծում, այլև Ադրբեջանում տեղի ունեցած հայկական զանգվածային ջարդերի կազմակերպիչները և իրականացնողները խորհրդային իշխանությունների թողտվությամբ և աջակցությամբ մնացին անպատիժ: Հայաստանում ազգային շարժումը վերածվեց քաղաքականի:

Հայաստանում սկիզբ առան ԽՍՀՄ-ից դուրս ազգային անկախ պետականության և նրա պետաիրավական հիմքերի կառուցման գործընթացները: Հայ հասարակությունը համախմբվեց Ղարաբաղյան հարցի արդարացի լուծման և ազգային անկախ պետականության կերտման գաղափարի շուրջ, ինչի շնորհիվ ժողովուրդը պատրաստակամորեն և ըմբռնումով տարավ առկա տնտեսական ու սոցիալական զրկանքները և դժվարությունները, ինչպես նաև առաջացած հոգեբանական բարդույթները:²

Նոր պետաիրավական գործընթացների սկիզբը դրվեց 1990թ., երբ ընտրվեց նոր Գերագույն խորհուրդ, որն իր կազմով փաստորեն բազմակուսակցական էր: Տարածված է այն տեսակետը, որ այդ ընտրություններն անցան արդար և ազատ, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Հայոց համազգային շարժումը համարյա բոլոր ընտրատարածքներում առաջադրեց իր թեկնածուներին և օգտվելով հասարակության լայն աջակցության և վստահության գործոնից՝ նպաստեց օրենսդիր մարմնում այնպիսի անձանց ընտրվելուն, ովքեր Շարժման ակտիվ մասնակիցներ էին, բայց չունեին պետական, օրենսդրական, տնտեսական գործունեության անհրաժեշտ փորձ և գիտելիքներ:

Այդ ընտրությունների ժամանակ հանրապետության պետական, քաղաքական, վարչատնտեսական, գիտաարտադրական և գիտակրթական էլիտայի փորձառու ներկայացուցիչները մեծ թվով ընտրատարածքներում ՀՀԸ-ի անմիջական միջամտությամբ պարտություն կրեցին և դուրս մնացին նորանկախ պետության պետաիրավական հիմքերի կառուցման

² Մանրամասն տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, Պետության դերը, եր., 1998, էջ 20:

գործընթացներից: Արդյունքում հետագայում ընդունվեցին օրենքներ, որոնք հաճախ ունեցան բացասական հետևանքներ պետության, տնտեսության և հասարակության զարգացման գործընթացներում: Կադրերի ներգրավման առումով ՀՀԾ-ն մույն մտեցումը ցուցաբերեց մաս կործադիր իշխանության ձևավորման հարցում:

Հայոց նորանկախ պետության իրավաքաղաքական հիմքերի կառուցման համար նշանակալի իրադարձություն էր 1990թ. օգոստոսի 23-ի «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի ընդունումը: Ըստ դրա՝ Հայաստանի Հանրապետությունը հռչակվում էր որպես ինքնիշխան պետություն՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ, իր սեփական դրոշով, զինանշանով ու հիմնով: Այդ փաստաթղթով Հայաստանը ձևավորվում էր որպես խորհրդարանական հանրապետություն, և «Ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում էր բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին»:³

Հռչակագրով Հայաստանի Հանրապետությունում ապահովվում էր քաղաքացիների ազատ և իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից ու դավանանքից, տրվում էր խոսքի, մամուլի, խղճի ազատություն: Անկախության հռչակագրով ամրագրվում էր մաս օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը և մի շարք այլ կարևոր կառույցների ձևավորումը:⁴

Անկախության մասին Հռչակագիրը, որով հիմք էր դրվում ԽՍՀՄ կազմից Հայաստանի դուրս գալու և անկախ հայկական պետականություն ստեղծելու գործընթացին, միանշանակորեն չընդունվեց բնակչության որոշ խմբերի կողմից, քանզի, ըստ նրանց, տնտեսական և քաղաքական անվտանգության ապահովման տեսակետից Հայաստանը հետագայում չէր կարող գոյատևել առանց Ռուսաստանի: Ըստ այդ ժամանակաշրջանի հասարակական կարծիքի հարցումների՝ Հայաստանի վիակատար անկախության կողմնակիցների թիվը կազմել է հարցվողների շուրջ 40-45%-ը:⁵

Այսպիսով, առաջին փուլը կարելի է բնութագրել որպես ազգային և այնուհետև քաղաքական շարժման վերելք, որի պայմաններում ստեղծ-

³ Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995, էջ 9:

⁴ Նույն տեղում:

⁵ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999, Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, Եր., 1999, էջ 27:

վում էին հայոց նորանկախ պետականության քաղաքական և իրավական հիմքերը: Սակայն ՀՀԸ-ն՝ որպես իշխող կազմակերպություն, պետության օրենսդիր և գործադիր ոլորտների ձևավորման հարցում անհատներին և խմբերին բաժանեց «յուրայիններին» և «օտարներին»՝ դրանով իսկ հիմք դնելով ոչ պրոֆեսիոնալ կադրերի մուտքին իշխանության ոլորտներ, իսկ իշխանությունը հետագայում որոշ մարդկանց համար դարձավ հարստության և անաշխատ եկամուտների կուտակման ուղիղ ճանապարհ: Այդ իրողությունները բացասաբար անդրադարձան ՀՀ պետականության կայացման և հզորացման գործընթացների վրա:

Երկրորդ փուլը (1991-1995թթ.), ըստ մեզ, ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակումից մինչև պետության հիմնական օրենքի՝ Սահմանադրության ընդունումն ընկած ժամանակաշրջանը:

Հայաստանի Հանրապետության իրավաքաղաքական հիմքերի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցավ «Հանրաքվեի մասին» օրենքի ընդունումը, որի հիման վրա 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց համաժողովրդական հանրաքվե: Հանրաքվեի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը, միջազգային բոլոր նորմերին համապատասխան, իրավական ճանապարհով դուրս եկավ խորհրդային ամբողջատիրական համակարգից և հռչակվեց անկախ ժողովրդավարական պետություն:⁶

Պետության ներքաղաքական կյանքում արձանագրվեց ժողովրդավարության առաջին զիջումը «պետության գերագույն շահերին»,⁷ երբ Հայոց համազգային շարժումը ուժեղ և կենտրոնացված պետական համակարգ ստեղծելու փաստարկով, առանց լայն հասարակական, համազգային քննարկումների և լուրջ դիմադրության, օրենսդրական փոփոխությունների շնորհիվ հանրապետությունում խորհրդարանական կառուցվածքը փոխարինվեց կիսանախագահական կառավարման համակարգով:⁸

Հատկանշական է, որ այդ ժամանակահատվածում իշխանությունները ստանում էին հասարակության լայն աջակցությունը, և օգտվելով ժողովրդի հայրենասիրական բարձր զգացումներից ու ինքնագոհության

⁶ Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), էջ 119-130:

⁷ Մարդկային զարգացման գեկույց, Հայաստան 1998, Պետության դերը, էջ 21:

⁸ Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), էջ 28:

պատրաստակամությունից, ինքնիշխան պետության պայմաններում քաղաքական պայքարի փորձի պակասից, կատարեցին մի շարք վերափոխումներ, որոնց վերաբերյալ քաղաքական վճիռներ կայացնելիս ժողովրդին չդարձրին հուսալի գործընկեր և չհիմնվեցին առկա հասարակական կարծիքների վրա: Իշխանությունների գործելակերպի նկատմամբ հասարակության վերահսկողության բացակայության պայմաններում հետզհետե իշխող կուսակցության՝ ՀՀԸ-ի շրջանում ձևավորվում էր «հաղթողների» բարդույթը, որի հետևանքով նրանք ոչ միայն ընդդիմությանը մասնակից չդարձրեցին նոյանկախ պետության իրավաքաղաքական հիմքերի կառուցմանը, այլև չէին հանդուրժում ցանկացած տարակարծություն: Կառավարման համակարգում կադրային քաղաքականությունն իրականացվում էր անձնական հավատարմության և կուսակցական պատկանելության սկզբունքով: Անշուշտ, այս երևույթները ժողովուրդ-պետություն համագործակցության առումով ունեցան լուրջ բացասական հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության պետաիրավական հիմքերի կառուցման առումով կարևոր նշանակություն ունեցավ 1995թ. հուլիսի 5-ին ՀՀ Սահմանադրության ընդունումը: Սահմանադրության 15-րդ հոդվածով հաստատվեց, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները:⁹

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվում է գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատում: Գործադիր իշխանությունը ներկայացնում են ժողովրդի կողմից ընտրվող ՀՀ Նախագահը, նրա կողմից ձևավորվող կառավարությունը, վերջինի կողմից նշանակվող տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետները: Օրենսդիր իշխանությունը ներկայացնում է մեծամասնական և համամասնական կարգով ընտրված Ազգային ժողովը: Որպես ներկայացուցչական մարմին՝ խորհրդարանը պետք է ապահովի հասարակության գործունե մասնակցությունը պետական մակարդակով որոշումների ընդունման գործում և դրանց իրականացման հասարակական վերահսկողությունը: Պետք է նշել, որ Սահմանադրությամբ հանրապետությունում ամրապնդվեցին

⁹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, էջ 10:

սահմանադրական կարգի հիմքերը, և ավարտվեց պետականության ստեղծման իրավական դաշտի ձևավորման երկրորդ կարևոր փուլը:¹⁰

Սակայն պետք է խոստովանել, որ Սահմանադրության՝ որպես պետության հիմնական օրենքի տեղն ու դերը Հայաստանի ժողովրդավարացման գործընթացներում միանշանակորեն չի գնահատվում ինչպես բովանդակային առումով, այնպես էլ դրա համաժողովրդական քվեարկության արդյունքների տեսանկյունից:¹¹

Սահմանադրության վերաբերյալ Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում, ինչպես նաև միջազգային առյուծանակներում գոյություն ունեն լուրջ տարակարծություններ: Այն իր ընդունման պահից չի արժանացել հասարակության ստվար զանգվածների վստահությանը և ունի լուրջ շեղումներ ժողովրդավարական սկզբունքներից: Ներկայիս Սահմանադրությունը դեռևս չի ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների անկախությունը, հավասարակշռությունը և փոխադարձ վերահսկողությունը:¹² Պատահական չէ, որ այսօր պատրաստվում են նախագծեր՝ գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու համար, որպեսզի այն համապատասխանեցվի միջազգային չափորոշիչներին և նպաստի ժողովրդավարության ու քաղաքացիական հասարակության կայացմանը հանրապետությունում: Հասարակական-քաղաքական շրջանակներում հատկապես տարածանքությունների տեղիք է տալիս ՀՀ Նախագահի լիազորությունների հարցը: ՀՀ Նախագահը ղեկավարում է ոչ միայն գործադիր իշխանությունը, այլև ապահովում է «օրենսդիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»:¹³ Մինչդեռ Սահմանադրությունում առկա է գործադիր իշխանության լիազորությունների գերազանցությունը մյուս թևերի նկատմամբ:¹⁴

¹⁰ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I, էջ 18:

¹¹ Մ. Գալստյան, Օրենքի և դատավարական համակարգի դերը Հայաստանի ժողովրդավարացման գործընթացներում. - Հիմնախնդիրներ: Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 2001, էջ 14:

¹² Մարդկային զարգացման գեկույց, Հայաստան 1999. Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, էջ 64-65:

¹³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, էջ 21-34:

¹⁴ Օրինակ, գործող Սահմանադրությամբ չի ապահովվում դատական իշխանության անկախությունը, քանի որ դատավորներին, դատախազներին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի 9 անդամներից 4-ին նշանակում է հանրապետության Նախագահը: Կոդիցիոն առաջարկները մշակում է Արդարադատության խորհուրդը, որը նույնպես գլխավորում է ՀՀ Նախագահը: Լուրջ անհավասարակշռություն գոյություն ունի ԱԺ-ն լուծարելու և Նախագահին պաշտոնակազմի անկախ հարցերի միջև:

1991-1995թթ. ընդունվեցին մի շարք օրենսդրական ակտեր, որոնք արմատապես փոխեցին ոչ միայն քաղաքական, այլև կառավարման համակարգը: Պետական կառավարման կուսակցական խորհրդային վարչահրամայական ձևն ընդունված օրենքների հիման վրա փոխարինվեց կառավարման նոր սկզբունքով, որը միտված էր արմատավորելու ժողովրդավարական սաղմեր, կատարվեցին մի շարք կառուցվածքային բարեփոխումներ: Բայց հանրապետության պետաիրավական համակարգի կայացման տեսանկյունից կարևոր է զանազանել ընդունված օրենքները՝ պրակտիկայում փաստացի կիրարկման դրվածքից: Օրենքի անկատարությունը, դրա կիրարկման վերահսկողության բացակայությունը և օրենքի գերակայության հարցը իրավահարաբերությունների, անհատի վարքի ձևավորման, պետության հետ համագործակցության վրա ազդող լուրջ հիմնախնդիրներից է: Մասնավորապես, այդ հիմնախնդիրը հանրապետությունում առավել սուր ձևով է դրսևորվում տեղական ինքնակառավարման մարմինների, Ազգային ժողովի և ՀՀ Նախագահի համարյա բոլոր ընտրությունների ժամանակ: Այդ օրենքները բովանդակային առումով ոչ միայն անկատար են, այլև իրենց մեջ պարունակում են իրավական անորոշություններ: Հայաստանի Հանրապետությունում 1995թ. անցկացվեցին Ազգային ժողովի ընտրություններ, որոնք, ինչպես որակվեցին, «ազատ, արդար ու թափանցիկ» չէին, դրանք անցան երբեմն մահ բռնությունների մթնոլորտում: Հանրապետությունում օրենքի նկատմամբ մեծ խախտումները խոչընդոտում են ժողովրդավարական այնպիսի կարևոր սկզբունքի իրականացմանը, ինչպիսին ժողովրդի ազատ կամքի արտահայտությունն է ներկայացուցչական բարձրագույն մարմնի ձևավորման գործում: Այդ երևույթներն իրենց խոր հետքն են թողնում հասարակական գիտակցության և հոգեբանության վրա: Օրենքի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը ավելի խորացրեց ժողովրդի և իշխանությունների (մահ պետության) օտարումը:

Երրորդ փուլն ընդգրկում է 1996-1998թթ.: Այդ փուլում Հայաստանում անցկացվեցին դատաիրավական բարեփոխումներ, որոնք միտված էին ստեղծելու անկախ և մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող դատական համակարգ:

Հայաստանում սկզբնավորվեցին ժողովրդավարական նոր գործընթացներ, երբ հասարակությունն իր քաղաքացիական իրավունքները պաշտպանելու համար համախմբվեց ընդդիմության շուրջը և մերժեց իշ-

խանութքներին կողմից շրջանառության մեջ՝ դրված «ժողովրդավարության գոհաբերումը հանուն պետական շահերի» կարգավաճը: Պետության վարկանիշը հասարակության շրջանում և միջազգային ոլորտներում անկում ապրեց 1996թ. հեթական մախազահական ընտրությունների ժամանակ (որոնք իրականացվեցին լուրջ խախտումներով, և հասարակական-քաղաքական շատ ուժերի կողմից ընտրությունների պաշտոնական արդյունքները չընդունվեցին), ինչի հետևանքով սրվեց ժողովուրդ-իշխանություն առճակատումը, և այն 1998թ. փետրվարին ավարտվեց հանրապետության առաջին Նախագահի հրաժարականով: Հետագա մախազահական և խորիքաբանային ընտրությունները մույնպես անցան լուրջ խախտումներով, որոնք գրանցվել էին ինչպես տեղական, այնպես էլ միջազգային դատարանների և կազմակերպությունների կողմից:¹⁵ Դրանք պառակտեցին հասարակությունը և առաջացրին առ այսօր չհաղթահարված խոչընդոտներ պետականության ամրապնդման, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման գործում:

Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման համար Հայաստանի իրավական համակարգում կատարվեցին մի շարք փոփոխություններ. ընդունվեցին նոր Քաղաքացիական օրենսգրքը, Քաղաքացիական և Քրեական դատավարության և այլ օրենսգրքեր: Հայաստանի Հանրապետությունը միացավ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հիմնական պայմանագրերին և ակտերին՝ Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրին, Քաղաքացիական իրավունքների, Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին դաշնագրին և այլն:¹⁶

1998թ. Հանրապետության Նախագահին առընթեր ստեղծվեց Մարդու իրավունքների հանձնաժողով, որը կոչված էր վերահսկելու մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում: Սրանով հանդերձ նշենք, որ հանրապետությունում մի շարք լուրջ հիմնախնդիրներ գոյություն ունեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, և դրանց հաղ-

¹⁵ Մարդկային զարգացման գեկույց, Հայաստան 1998, Պետության դերը, էջ 22:

¹⁶ Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, Փաստաթղթերի ժողովածու, գիրք Ա, էր., 2001; գիրք Բ, էր., 2001; Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը: Գործողություն հանուն առաջընթացի, Մարդկային զարգացման ազգային գեկույց, Հայաստան, 2000, էր., 2000, էջ 30-32:

քահարունը պահանջում է լուրջ ջանքեր:¹⁷ Եվ օրինաչափ է, որ 2003թ. Հայաստանում Ազգային ժողովը սահմանեց և նշանակեց նոր պաշտոնյա՝ օմբուդսմեն (մեծ լիազորություններով մայրու իրավունքների պաշտպան):

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող նշված գործընթացներին համընթաց լուրջ բարեփոխումներ կատարվեցին նաև պետական կառավարման համակարգում: Խնդիր էր դրված պետական կառավարման համակարգում հստակեցնել պետության տեղը, դերը, ինչպես նաև գործառույթները: Պետական կառավարման բնագավառում ժողովրդավարական սկզբունքներն արմատավորելու մպատակով ստեղծվեցին համապատասխան կառույցներ, և տարվեց ապակենտրոնացման քաղաքականություն: Մասնավորապես, տեղի ունեցավ կառավարման ուղղագիծ կառուցվածքների ապակենտրոնացում և հորիզոնական կապերի ու ժեղացում, ինչպես նաև ստորին օղակների հետ լիազորությունների, պարտականությունների և պատասխանատվությունների բաժանում:

1996թ. հունիսի 22-ին Ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, որով սահմանվեցին «տեղական ինքնակառավարում» հասկացությունը, սկզբունքները, դրանց լիազորությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Օրենքը ոչ միայն նախատեսում էր ժողովրդի մասնակցությամբ ընտրություններում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորում, այլև համայնքների ինքնավարության ապահովում: 1996թ. նոյեմբերին տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, ինչի հիման վրա կազմավորվեց 931 համայնք, որտեղ իրականացվում էր տեղական ինքնակառավարում: Մի քանի տասնյակ գյուղական համայնքներ ձևավորեցին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն իրենց հոծ բնակչության վայրերում:

Այդ համակարգը հիմք դրեց պետական իշխանության ժողովրդավարացման, կառավարման ապակենտրոնացման կարևոր սկզբունքներին: Բայց տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության հետագա ընթացքը ցույց տվեց, որ հանրապետական կառավարման մարմինների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների և լիազորությունների

¹⁷ Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց, 1999, էջ 70:

բաժանման և որոշակի կատարելագործման կարիք կա: Նշենք նաև, որ ներկայումս այդ համակարգի գործունեությունը միանշանակորեն չի ընդունվում հասարակության կողմից: Սակայն, կառավարման համակարգում բնակչության մասնակցության աստիճանը դեռևս ցածր է: Անշուշտ, այստեղ որոշակի դեր է կատարում նաև այն, որ քաղաքային և մարզային մակարդակներում ընդունված որոշումների վրա քաղաքացիների ազդեցությունը շատ քիչ է, քանզի մարզպետները ոչ թե ընտրվում, այլ նշանակվում են կառավարության կողմից:¹⁸

Լուրջ հիմնախնդիրներ են առկա նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, որտեղ ընտրակաշառքը և չարաշահումները ոչ միայն դարձել են սովորական երևույթ, այլև շնորհիվ ազգակցական-ընտանեկան կապերի, հաճախ համայնքի ղեկավար և ավագանու անդամ են ընտրվում բարձր գրագիտություն և մեծ փորձառություն չունեցող մարդիկ:

Հայաստանի Հանրապետության պետաիրավական հիմքերի կայացման համար կարևոր նշանակություն ունեցան դատական համակարգում իրականացված վերափոխումները, որոնց արդյունքում ընդունվեցին մի շարք միջազգային չափորոշիչներին համապատասխանող օրենքներ. մասնավորապես, 1998թ. հուլիսի 18-ին ընդունվեց «Դատարանակազմության մասին» օրենքը: Այդ օրենքով ամրապնդվեց այն կարևոր սկզբունքը, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները: Որպես ընդհանուր իրավասության դատարաններ՝ ՀՀ-ում հանդես են գալիս առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարության ամրագրման համար այնտեղ տեղ են գտել օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության, արդարադատության իրականացմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցության դատարանում գործերի բնության հրապարակայնության կարևոր սկզբունքները:¹⁹

Չնայած դատաիրավական համակարգում կատարված բարեփոխումներին, այնուհանդերձ, դատական իշխանության նկատմամբ ձևա-

¹⁸ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Եր., 1999, էջ 422-443; Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում. Մարդկային զարգացման ազգային զեկույց, Եր., 2001, էջ 42:

¹⁹ Հայաստանի Հանրապետության օրենքը. «Դատարանակազմության մասին», Եր., 1998:

վորված վստահության աստիճանը և գերիշխող հասարակական կարծիքը վկայում են այն մասին, որ դրանք դեռևս չեն տվել շոշափելի դրական արդյունք: Սահմանադրությամբ նախատեսված դատական իշխանության անկախությունը Հայաստանում իրականություն չի դարձել, և ՀՀ-ն դեռևս հեռու է լիարժեք *իրավական պետություն* համարվելուց: Ըստ էության, ապահովված չէ դատարանների ինքնուրույնությունն ու դատավորների իրական անկախությունը, քանի որ նրանց գործունեությունը կազմակերպվում է վարչատարածքային սկզբունքով, ինչը կախվածություն է առաջացնում գործադիր և վարչական մարմիններից:

Դատավորների անկախությանը խանգարում է այն հանգամանքը, որ գործադիր իշխանության գերիշխող մասնակցությամբ է տեղի ունենում դատավորի քեկնաժողովի ընտրությունը, նշանակումը, կարգապահական պատասխանատվության կանչելը, լիազորությունների վաղաբեցումը, ամենամյա առաջխաղացման ցուցակներում հաստատելը և այլն:²⁰

Վարչատարածքային բաժանման սկզբունքով դատական համակարգի կազմակերպումը, ըստ որի՝ յուրաքանչյուր մարզում գոյություն ունի առաջին ատյանի մեկ դատարան, իսկ երեք վերաքննիչ դատարանները և մեկ վճռաբեկ դատարանը գտնվում են Երևանում, տուրքերի և վերջիններից օգտվելու առումով հաճախ մատչելի չեն մարզերի բնակչության մեծամասնությանը: Ներկայումս դատաիրավական ոլորտի կանոնավոր գործունեության համար լուրջ խոչընդոտ կարելի է համարել համակարգի կոռումպացված լինելը, ինչը բազմիցս նշվել է մամուլում և պաշտոնական տարբեր ոլորտներում: Կաշառքի առկայությամբ օրենքը կորցնում է իր գործառնական նշանակությունը և ծառայում առանձին անձանց և խմբերի շահերին, ինչը վտանգում է հասարակության և պետության համագործակցության հիմքերը: Այդ հիմնախնդիրը իր բացասական ազդեցությունն է թողնում հասարակության բոլոր շերտերի համար օրենքի գերակայության և հավասարաչափ գործառնության սկզբունքի վրա:

Այս տեսանկյունից հանրապետության հարուստ խավը՝ տնտեսական էլիտան, հասարակության մեջ ունենալով քաղաքական ազդեցություն և առավել մոտ կանգնած լինելով իշխանական բուրգին՝ ըստ էության, գտնվում է արտոնյալ վիճակում: Դատաիրավական համակարգում սո-

²⁰ Ս. Դիրանդյան, Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահական մարմինները, Եր., 2000: Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Եր., 2001, էջ 42:

ցիալական այդպիսի սկզբունքի խախտումը մարդկանց մոտ ստեղծել է այն պատկերացումը, որ օրենքի տեսանկյունից հասարակությունը բաժանված է երկու մասի՝ հարուստ խավի, որն օրենքի առջև ունի որոշակի չամրագրված արտոնություններ, և հասարակ մայրիկ, որոնք չունեն մեծ հնարավորություններ, և օրենքն ամբողջ ուժով կարող է կիրառվել նրանց նկատմամբ:

Օրենքի գործառնական շրջանակները երբեմն պայմանավորում են «վերսիններին» հետ անհատի ազգակցական կապի աստիճանը, միջանձնային հարաբերություններում «յուրային» լինելու հանգամանքը, կուսակցական պատկանելությունը և այլ գործոններ: Այդ բոլորը մարդկանց մոտ առաջ է բերում իրավական անպաշտպանվածության զգացում, որն էլ իր հերթին բացասաբար է ազդում պետության նկատմամբ ունեցած նրանց արժեքային կողմնորոշումների և դիրքորոշումների վրա:²¹

Անշուշտ, դատախարակական համակարգում ստեղծված այդ իրավիճակը մեկ տասնամյակում հաղթահարել հնարավոր չէ, և ինչպես իշխանական, այնպես էլ հասարակության շրջանում ձևավորված մտածողության և կարծրակերպերի (ստերեոտիպերի) հաղթահարման համար անհրաժեշտ են լրացուցիչ բարեփոխումներ. այսօր հանրապետությունում աշխատանքներ են ծավալվում դատախարակական համակարգում նոր օրինագծերի ստեղծման ուղղությամբ: Դատական իշխանության իրական անկախության հաստատմանը կարող է նպաստել հանրապետության բնակչության շրջանում իրավական կյանքի ծավալումը և իրավական գիտակցության բարձրացումը, որը կարող է դառնալ կարևոր գործոն նրանց քաղաքական ակտիվության բարձրացման և քաղաքացիական հասարակության ձևավորման համար:

Չորրորդ փուլում, որն ընդգրկում է 1999-2004թթ., Հայաստանի Հանրապետությունը անդամակցեց Եվրոպական խորհրդին և պետաիրավական համակարգում ստանձնեց այնպիսի վերափոխումներ, որոնք պետք է նպաստեին Հայաստանում ժողովրդավարության, մայրու իրավունքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների պաշտպանության գործընթացների ծավալմանը և ամրագրմանը: Այդ փուլում օրենսդիր, գործադիր և դատական ոլորտների կատարելագործման առումով ընդունվեցին նոր օրենքներ, այդ ոլորտների գործող օրենքներում կատարվեցին մասն մի շարք փոփոխություններ և լրացումներ. հիմնական նպա-

²¹ Մ. Գալստյան, նշվ. աշխ., էջ 10-28:

տակը Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի համապատասխանեցումն էր Եվրոպական խորհրդի պահանջներին:

Հատկապես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Եվրոպական խորհրդի պահանջով Հայաստանում գործող կրոնական փոքրամասնությունների շահերի պաշտպանության, այլընտրանքային զինծառայության մասին օրենսդրական դաշտի ստեղծումը լուրջ տարածանությունների տեղիք տվեց հասարակության շրջանում:²² Հասարակական և քաղաքական որոշ խմբեր այդ առումով արտահայտեցին այն տեսակետը, որ մի շարք պահանջներ չեն համապատասխանում ազգային մտակեցվածքին (մեմբալիտետին), արժեքային կողմնորոշումներին և համարվում են օտար մշակութային տարրեր (օրինակ, սեռական փոքրամասնությունների հարցը):

Չնայած նոր ընտրական օրենսգիրքը նախորդի համեմատ մի քայլ առաջ էր պրոֆեսիոնալ խորհրդարան ձևավորելու առումով, և այնտեղ ամրագրված էր այն դրույթը, որ պատգամավորներին արգելված է զբաղեցնել պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, այնուհանդերձ, ինչպես 1999թ., այնպես էր 2003թ. ընտրությունների արդյունքում ձևավորված Ազգային ժողովում մեծ թիվ են կազմում տնտեսական և ֆինանսական էլիտայի ներկայացուցիչները: Նրանք, փաստորեն, պահպանելով իրենց դեկավար դիրքը գործարար աշխարհում, իրավաբանորեն ներկայացվում են որպես տվյալ ձեռնարկության կամ հիմնարկի խորհրդի նախագահ՝ հասարակական հիմունքներով:

Այդ ընտրությունների փորձը ցույց տվեց, որ տնտեսական էլիտան խորհրդարան է մուտք գործում նաև համամասնական ցուցակներով՝ դառնալով որևէ կուսակցության անդամ: Տնտեսական էլիտան, շնորհիվ հարստության, Հայաստանում վերածվել է «կարգավիճակային խմբի», որը լուրջ ազդեցություն և մեծ դերակատարում ունի իշխանության բուրգի ձևավորման գործում: Այդ հանգամանքը հանգեցրեց նրան, որ քաղաքականության մշակումը և քաղաքական որոշումների ընդունումը Հայաստանում երբեմն իրականացնում են այնպիսի մարդիկ, ովքեր չունեն

²² «Ենովայի վկաներ» կրոնական կազմակերպությունը տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես չէր ճանաչվում, քանզի այդ կազմակերպության մշակած կանոնադրությունը չէր համապատասխանում հանրապետության օրենքներին: Երկար բանավեճերի և բանակցությունների արդյունքում այդ կազմակերպության կանոնադրությունը համապատասխանեցվեց ՀՀ գործող օրենսդրությանը, և 2004թ. հոկտեմբերին «Ենովայի վկաներ» կրոնական կազմակերպությունը ստացավ պետական գրանցում:

բարձր պրոֆեսիոնալ մակարդակ: Պետական ապարատը, օգտագործելով իր բոլոր վարչական ռեսուրսները, իսկ որոշ կուսակցություններ՝ իրենց ֆինանսական լծակները, կարողացան ապահովել համապատասխան ձայներ Ազգային ժողովում:

Յուրաքանչյուր հեքթակսան ընտրություններում կատարված մեծ անօրինականությունների թողությունը ժողովրդի մեջ վերջնականապես ամրապնդեց այն կարծիքը, որ Հայաստանում ցանկացած ընտրություն դատապարտված է կեղծված լինելու, ինչն իր հերթին հասարակության շրջանում լուրջ հարված է հասցնում օրինականության և պետության գաղափարին:

Պետական կառավարման ոլորտում կարևոր նշանակություն ունեցավ «քաղաքացիական ծառայության» համակարգի ներդրումը, որի նպատակը քաղաքական իշխանության փոփոխություններից անկախ և պաշտպանված քաղաքացիական ծառայողների դասի ստեղծումն էր: Հայաստանում քաղաքացիական ծառայության համակարգի կայացումը առաջին հերթին պայմանավորված է իշխանության բոլոր քեների տարանջատման և դրանց անկախ գործառնության հանգամանքով: Սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, մրցույթի կազմակերպումը և դրա արդյունքում հաղթողների հետագա աշխատանքային առաջնադասման գործընթացները դեռևս կատարելագործման, հստակեցման կարիք են գգում:

Այսպիսով, շուրջ մեկուկես տասնամյակում կատարվել են բազմաթիվ բարեփոխումներ, միտված Հայաստանի Հանրապետության պետականության կայացմանն ու հզորացմանը, պետաիրավական ոլորտում անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության արմատավորմանը: Չնայած դեռևս առկա են լուրջ խոչընդոտներ և շեղումներ, որոնց մի մասը դիտարկվեց սույն շարադրանքում: Դրանք էական ազդեցություն թողեցին հանրապետության զարգացման գործընթացների վրա: Տնտեսության քայքայումը, հասարակության սոցիալական ծայրաստիճան բևեռացումը, զանգվածային արտագաղթը, գործազրկության բարձր մակարդակը, բնակչության իրավական ու սոցիալական անպաշտպանվածությունը բացասաբար անդրադարձան պետության նկատմամբ հասարակության վերաբերմունքի և արժեքային համակարգի ձևավորման վրա:²³

²³ Մ. Գալստյան, նշվ. աշխ., էջ 10-28; Անկախություն և անցումային 10 տարիները Հայաստանում, էջ 42:

2.3. Քաղաքացիական հասարակության կայացման սոցիալ-տնտեսական տեսանկյունները

Հայաստանի նորանկախ հանրապետության պատմության կարևորագույն ցուցիչներից են արձատական, սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնց մայատակը խորհրդային տնտեսական համակարգի վերացումը և շուկայական տնտեսության ձևավորումն էր.²⁴

Նորանկախ Հայաստանի իշխանությունները բավականին կարճ ժամանակահատվածում, հաճախ առանց բավարար գիտական հիմնավորումների ու հանրապետության մախընթաց զարգացման առանձնահատկությունները հաշվի առնելու, ձեռնամուխ եղան տնտեսական վերափոխումների իրագործմանը: Նախապատվությունը տրվեց «շոկային քերականի» եղանակին, և արդեն 1992թ. հունվարի 4-ին ազատականացվեցին զենքերը²⁵: Բնական է, որ նման արձատական մոտեցումները, որոնց պատրաստ չէր հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը, խիստ բացասական ազդեցություն ու հետևանքներ ունեցան արդեն վերափոխումների առաջին փուլում:

1990-ականների սկզբին արտադրության ընդհանուր ծավալի կտրուկ անկման պատճառով 1994թ. սկսված վերականգնումն իրական ՀՆԱ-ն բերել է 1990թ. մակարդակի ընդամենը 95,5%-ին:²⁶

Հայաստանի հետխորհրդային զարգացումը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հատվածների. 1991-1993թթ.՝ տնտեսության փլուզում և անկում (երկու տարվա ընթացքում 1990թ. ՀՆԱ-ի նկատմամբ ավելի քան 53% անկում), 1994-1996թթ.՝ տնտեսական անկման կասեցում և մակրոտնտեսական կայունացման վաղ շրջան (1994թ.-ից գրանցվել է ՀՆԱ-ի աճ), 1997-2000թթ.՝ տնտեսության վերականգնում, աշխուժացում և կառուցվածքային բարեփոխումների իրագործում, 2001թ. ցայսօր ընդգրկող հատվածը տնտեսական արագ աճի շրջանն է:²⁷

Գների անմախառն աճի, առաջին անհրաժեշտության պարենային

²⁴ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր 1, էջ 17-23:

²⁵ Մ. Գևորգյան, Անցումային տնտեսությունը Հայաստանում. հիմնական գծերն ու առանձնահատկությունները. – Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում: Գիտական հոդվածների ժողովածու, գիրք 1, Եր., 1997, էջ 5:

²⁶ Հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները ՀՀ-ում. 2003թ. հունվար-դեկտեմբեր. – Հայաստանյան զարգացումներ, Եր., 2004, էջ 7:

²⁷ Նույն տեղում:

ապրանքների, այդ թվում՝ հացի տևական դեֆիցիտի, էլեկտրամատակարարման անմիաժամ պահանջարկի պայմաններում «շոկային քերականային» ուղղակի հետևանք հանդիսացող որոշ այլ իրողություններ միանգամից ազդեցին բնակչության կենսամակայության վրա՝ առաջին պլան մղելով ընդամենը ցանկացած գնով գոյության նվազագույն պայմաններն ապահովելու խնդիրները: Այսինքն, արդեն անցման առաջին փուլում հանրապետության բնակչությունը բախվեց չնախատեսված դժվարությունների ու բարդությունների, որոնց մի զգալի մասը, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, ուղղակի արդյունք էր նաև հանրապետության նոր օրենսդիր և գործադիր մարմինների կողմից իրագործված վերափոխումների անհեռատես կիրարկման եղանակների ու ձևերի: «Ազատականացման ճիշտ ուղու ընտրությունը, - նշում է Հ. Լ. Սարգսյանը, - մեզանում պահանջում էր առավելագույնս հաշվի նստել հանրապետության առանձնահատուկ պայմանների հետ ...: Սկզբնական փուլը չունեցավ իր տրամաբանական զարգացումը, որի հիմնական պատճառը ակնհայտ է: Տնտեսական կարգավորման կառույցների կազմալուծումից հետո առաջացած վակուումը չլցվեց նորաստեղծ հարաբերությունների համապատասխան տնտեսական կառույցներով և չամրագրվեց իրատեսական ծրագրերով: Այդ պայմաններում կառավարման բնորոշ գիծը դարձավ իրավիճակային ինքնանպատակ գործելակերպը»:²⁸

1991-1993թթ. ընթացքում ՀՆԱ-ն նվազեց ավելի քան 2 անգամ՝ 1993թ. կազմելով 1990թ. մակարդակի միայն 46.9 տոկոսը: Տրանսպորտային շրջափակման և վտակների ներմուծման ծավալների խիստ կրճատման, ինչպես նաև հայկական ատոմակայանի փակման պատճառով նույն ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրությունը պակասեց 58 տոկոսով: Տնտեսության խոր ճգնաժամի հետևանքով տնտեսության ոչ գյուղատնտեսական հատվածում կրճատվեցին մոտ 645 հազար աշխատատեղեր:²⁹

1991թ.՝ հանրապետության անկախացման արդեն առաջին տարում իշխանությունները ձեռնամուխ եղան շուկայական հարաբերությունների հնարավորինս արագ ամրագրման գործընթացին: Շուկայական տնտե-

²⁸ Հ.Լ. Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը, Եր., 2001, էջ 13-14:

²⁹ Աղբյուրային հարահարման ռազմավարական ծրագիր (այսու՝ ԱՀՌԾ), Եր., 2003, էջ 25:

սուբյանն անցնելու կարևորագույն քայլը հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի ձեռնարկումն էր: Գյուղատնտեսության ոլորտում վերափոխումները կանոնակարգելու նպատակով ընդունվեցին «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը, «Հողային օրենսգիրքը», ինչպես նաև կառավարության մոտ չորս տասնյակ որոշումներ:³⁰ 1991թ. ավարտված վերափոխումների արդյունքում հանրապետության գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը դարձավ հողի սեփականատեր, վաճառվեցին անասունները, տեխնիկան ու գյուղատնտեսական կառույցները: Հողի մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված անհատական գյուղացիական տնտեսությունը դարձավ տնտեսական կյանքի կազմակերպման հիմնական միավոր գյուղերի մեծ մասում:³¹

Սակայն սա գյուղատնտեսության ոլորտի վերափոխումների ընդհանուր պատկերն է: Հողի սեփականաշնորհման ընթացքի, արդյունքների ու հետևանքների վերաբերյալ հետազոտությունները ցույց են տալիս, որ հանրապետության բազմաթիվ գյուղերում սեփականաշնորհումից անմիջապես հետո գյուղական բնակչությունը հայտնվեց ծանր կացության մեջ: Վերափոխումների գիտական հիմնավորումների ու ռազմավարական պլանավորման բացակայությունը հանգեցրին նրան, որ բազմաթիվ դեպքերում սեփականաշնորհումը կատարվեց կամայականորեն, Երևանից տարբեր գյուղեր զործոված Գերագույն խորհրդի պատգամավորների և կառավարության անդամների (նախարարների) անմիջական մասնակցությամբ, որոնք, առանց հաշվի առնելու գյուղական բնակչության կարծիքը, պարտադրեցին ընդունված օրենքների և որոշումների անհսպաղ կիրառումը:

Գյուղացիությանը վերափոխումների մասին բավարար տեղեկատվություն չտրվեց, չներկայացվեցին օրենքների ու կառավարության որոշումների դրույթները, չապահովվեց առաջարկված տարբերակներից ինքնուրույն ընտրություն կատարելու հնարավորությունը, ինչը և կամայականությունների ու սխալ որոշումների ընդունման պատճառ դարձավ:

Գյուղատնտեսության ոլորտի վերափոխումները մույն սկզբունքով

³⁰ Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), էջ 67-107:

³¹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I, էջ 17-23; *Մ. Գաբրիելյան*, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001, էջ 16-36; *Վ. Խոջաբեկյան*, Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցումային շրջանում, Եր., 1998, էջ 5-10:

կատարվեցին և՛ հարթավայրային, և՛ նախալեռնային ու լեռնային գոտիների գյուղերում, որտեղ տարբեր էին և՛ հողատարածքների չափերը, և՛ սեփականաշնորհվող հողի հատկանիշները, և՛ մշակման հնարավորությունները: Ավելին, շատ հաճախ ամառադար ձևով բաշխվեցին տարբեր տեսակի հողատեսքերը: Մյուս կողմից, ընտանիքների ստացան լավագույն հողակտորները՝ գյուղի ամփօջական հարևանությամբ, ու լավագույն այգիները, մեկ այլ դեպքում՝ գյուղից բավականին մեծ հեռավորությունների վրա գտնվող, հիմնականում անջրլի հողատարածքներ, որոնց մի մասն այսօր պարզապես չի մշակվում: Հիմնախնդիրները բավականին շատ էին նաև անասնազխաքանակի սեփականաշնորհման ոլորտում: Դարձյալ առանց լուրջ տնտեսագիտական հիմնավորումների, որպես սեփականաշնորհվող նվազագույն գլխաքանակ, օրենքով նախատեսվեց 5 գլուխ խոշոր և 20 գլուխ մանր անասունը, ինչն արդյունքում գյուղաբնակ ընտանիքների մեծ մասին զրկեց անասուն սեփականաշնորհելու հնարավորություններից:

Շատ գյուղերում անասնազխաքանակը սեփականաշնորհեց մի քանի մարդ, որոնք հաճախ գյուղատնտեսության հետ որևէ կապ չունեին: Անասունների սեփականաշնորհած անհատները չկատարեցին օրենքով նախատեսված բազմաթիվ պարտավորություններն, ու կարճ ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվեց անասնազխաքանակի կտրուկ անկում:

Անհետատես եղանակով կատարվեց նաև գյուղատնտեսական տեխնիկայի ու գյուղատնտեսական նշանակության կառույցների վաճառք-մասնավորեցումը: Գյուղատնտեսական տեխնիկան կենտրոնացավ հիմնականում մեխանիզատորների ձեռքում, որոնք հաճախ ֆինանսապես ի վիճակի չէին ապահովել անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերումը և տեխնիկայի ամխափան շահագործումը:

Գյուղատնտեսության ոլորտի վերափոխումների ծանր հետևանքները հանրապետության բազմաթիվ գյուղերում մինչև այսօր հաղթահարված չեն: Սեփականաշնորհված հողակտորների զգալի մասի կտրուկաժուրյունն ու մեծ հեռավորությունը գյուղերից, ինտենսիվ գյուղատնտեսություն վարելու սահմանափակ հնարավորությունները, մեքենատրակտորային պարկի մշակաժուրյունը, ցանքաշրջանառության կազմակերպման բարդությունները, իրացման մեխանիզմների բացակայությունը և բազմաթիվ այլ գործոններ դարձել են գյուղատնտեսական գործունեության արդյունավետության անկման պատճառ: Չնայած վերջին տարիներ-

րին արձանագրվող մասնակի դրական տեղաշարժերին՝ հանրապետության գյուղատնտեսությունը դեռևս ամբողջապես չի հաղթահարել սեփականաշնորհման ծանր հետևանքները:

Այսինքն, հողի սեփականաշնորհումը չկարողացավ լուծել ամենակարևոր խնդիրներից մեկը՝ գյուղական համայնքում ձևավորել հողի նկատմամբ սեփականատիրոջ զգացողություն ունեցող ակտիվ ու շահագրգիռ միջին խավ: Այսօր գյուղական բնակչության մեծ մասը գյուղատնտեսությունն ու գյուղատնտեսական զբաղմունքները դիտում է ընդամենը որպես գոյության նվազագույն պայմաններն ապահովելու տարբերակ, իսկ հնարավորության դեպքում պարզապես հեռանում է հանրապետությունից:

Փաստորեն, 1991թ. հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացով Հայաստանում դրվեց տնտեսական վերափոխումների հիմքը, որը, ինչպես արդեն նշեցինք, հանգեցրեց ծանր ու դժվար հաղթահարելի հետևանքների: Տնտեսագիտության դոկտոր Հ. Լ. Սարգսյանը միանշանակ դրական, առաջադիմական համարելով հողի մասնավոր սեփականության գաղափարը, նշում է, որ «ազրաբային այդ հույժ կարևոր բարեփոխումների ընթացքում թույլ տրվեցին կոպիտ սխալներ, բացթողումներ, որոնք, ի վերջո, բացասական ազդեցություն ունեցան ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացման վրա»:³²

Գյուղատնտեսության վերափոխումներին, ըստ շուկայական տնտեսությանն անցման սկզբունքների, պետք է հաջողդեր արդյունաբերական ձեռնարկությունների, սպասարկման ոլորտի հիմնարկների ապապետականացումն ու սեփականաշնորհումը: Սակայն 1991-1994թթ. փաստացի պատերազմը ՀՀ սահմաններում, արցախա-ադրբեջանական հակամարտությունը, Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից շարունակվող շրջափակումը, 1988թ. աղետալի երկրաշարժի դեռևս չհաղթահարված հետևանքներն առաջին պլան մղեցին բնակչության ֆիզիկական անվտանգության ու կենսական նվազագույնի ապահովման խնդիրները:

Այսինքն, խախտվեց շուկայական տնտեսությանն անցման տրամաբանությունն այն առումով, որ գյուղատնտեսության ոլորտում ապահովվեց հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված անհատական գյուղացիական տնտեսությունների ձևավորումը, մինչդեռ արդյունաբերական ձեռնարկություններն ու սպասարկման ոլոր-

տի տարբեր կազմակերպությունները շարունակում էին մնալ պետական: Ավելին, գների ազատականացումը, որը դարձավ նաև բնակչության կենսամակարդակի ու ֆինանսական հնարավորությունների կտրուկ անկման պատճառ, չուղեկցվեց համարժեք միջոցառումներով. հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությանը չտրվեց սեփական եկամուտների աճ ապահովելու հնարավորություն:

Պատահական չէ, որ արդյունաբերական ձեռնարկությունների փաստացի անգործության պայմաններում բնակչության մի մասը՝ նախ և առաջ ինժեներատեխնիկական անձնակազմը, արդյունաբերական բանվոր-ծառայողները, ինչպես նաև այլ սոցիալական խավերի ներկայացուցիչներ հարկադրված էին զբաղվել առևտրով և պատահական այլ աշխատանքներով՝ ընտանիքի գոյության նվազագույն պայմաններն ապահովելու համար:

Արդյունաբերական ձեռնարկությունների, ինչպես նաև անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումը հանրապետությունում «կրականացվեց երկու փուլով: 1992-1993թթ. սկսվեց «փոքր օբյեկտների սեփականաշնորհումը», իսկ 1995թ.՝ միջին և խոշոր ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհումը»:³³ Այն ևս, ինչպես գյուղատնտեսության ոլորտի վերափոխումները, ուներ սեփականության բազմաձևության և շուկայական տնտեսության ձևավորման նպատակ: Շուկայական հարաբերությունների զարգացման գործում սեփականության ապապետականացումը և սեփականաշնորհումը դիտարկվեցին որպես տնտեսության առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի խնդիրներ:³⁴ Ընդունվեցին սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացները կարգավորող բազմաթիվ օրենքներ ու որոշումներ: Սեփականաշնորհման հիմնական ձև դարձավ պետական և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների բաց բաժնետիրական ընկերությունների (բաժանորդագրություն) ձևով սեփականաշնորհումը:

Սեփականաշնորհման գործընթացներին բնակչության մասնակցությունն ապահովելու նպատակով հանրապետության յուրաքանչյուր բա-

³³ *Էդ. Մինասյան*, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., 2003, էջ 109:

³⁴ *Ա. Մարկոսյան*, Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. – Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, էջ 129:

դաքացու տրվեց 20000 դրամ անվանական արժեքով հավաստագիր (սկզբնապես արժեքը որոշված էր 10000 դրամ)՝ «սեփականաշնորհման սերտիֆիկատ»։ Նույն նպատակով կիրառվեց ևս մեկ տարբերակ՝ «20% մասնակի անհատույց սեփականաշնորհումը», ըստ որի, մասնավորեցվող ձեռնարկությունների աշխատավարական կոլեկտիվների անդամները, աշխատանքային ստաժին ու աշխատավարձին համապատասխան, ձեռնարկության գույքի գնահատված արժեքի 20%-ի սահմաններում ստանում էին բաժնեմաս։

Սույն գրքի ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունները ցույց տվեցին, որ բոլոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, որոնք աշխատում էին տարբեր արդյունաբերական ձեռնարկություններում, մյուսների հետ հավասար (առանց որևէ խտրականության) մասնակցել են սեփականաշնորհմանը, իսկ ոչ եզակի դեպքերում՝ նաև դարձել ձեռնարկությունների, բաց բաժնետիրական ընկերությունների նախագահներ և փոխնախագահներ։

Սակայն, անդրադառնալով սեփականաշնորհման անցկացման ընդհանուր սկզբունքներին, կարելի է փաստել, որ օրենսդրորեն, ապահովվեց հանրապետության քաղաքացու մասնակցությունը սեփականաշնորհման գործընթացներին։ Բայց իրականում տեղի ունեցավ հակառակը։ Չանգվածային աղքատացման պայմաններում բնակչության մեծամասնությունը սեփականաշնորհման հավաստագրերը շուկայում վաճառեց անվանական արժեքից մի քանի անգամ ցածր գներով (որոշ ամիսներին դրանք շուկայում արժեին ընդամենը 2000-2500 դրամ, այսինքն, անվանական արժեքից 8-10 անգամ ցածր)։ Բնական է, որ հավաստագրերի մեծ մասը հայտնվում էր տարբեր արդյունաբերական ձեռնարկություններ սեփականաշնորհելու ցանկություն ունեցող անձանց ձեռքին՝ վերջիններիս տալով դրանք գնահատված արժեքից մի քանի անգամ էժան ձեռք բերելու հնարավորություն (շուկայում 2000-2500 դրամով ձեռք բերված հավաստագիրը սեփականաշնորհման ժամանակ հաշվառվում էր 20000 դրամով)։ Այսինքն, ինչպես հողի սեփականաշնորհման ոլորտում, արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումը հերքական անգամ դարձավ տարբեր գործընթացներից հանրապետության բնակչության զանգվածային օտարման պատճառ։

Փաստորեն, կատարվեց հավաստագրերի կենտրոնացում մի քանի անձանց կամ խմբերի ձեռքում, որոնք էլ կարճ ժամանակահատվածում

դարձան բազմաթիվ հզոր արդյունաբերական ձեռնարկությունների սեփականատերեր: Ինչպես ցույց տվեց հետագա տարիների փորձը, կատարվեց արտադրական հզորությունների փոշիացում, սեփականաշնորհված ձեռնարկությունների մեծ մասը չի գործում մինչ օրս, իսկ օգտագործման համար պիտանի մեքենա-սարքավորումների մի մասը, հաճախ նաև որպես մետաղի ջարդոն, ուղղակիորեն վաճառվեց: Տնտեսագետների վերլուծությունը վկայում է «արդյունաբերական արտադրության կրճատման անմախքնաբար թափի մասին: 1993թ. արդյունաբերական արտադրանքի արտադրության մակարդակը 1990թ. նկատմամբ կազմել է 36,7%: Ավելի քան 30%-ով կրճատվել է արդյունաբերա-արտադրական անձնակազմը»:³⁵ Բնակչության մեծ մասի տնտեսական հնարավորությունների, հետևաբար նաև տնտեսական ակտիվության վրա ամմիջական ազդեցություն ունեցավ նաև բանկային խնայողությունների փաստացի փոշիացումը: Արդյունքում հանրապետության բնակչության մի ստվար հատվածը, նույնիսկ օրենքների առկայության պայմաններում, սահմանափակ նյութական հնարավորությունների, ձեռնարկությունների ղեկավարների կամայականությունների, սեփականաշնորհման ընթացքի վերաբերյալ անբավարար տեղեկատվության պատճառով չկարողացավ գործում մասնակցություն ունենալ սեփականաշնորհմանը:

Տնտեսական վերափոխումներն ու քաղաքացիական հասարակության կայացման սոցիալ-տնտեսական հիմքերի ձևավորման գործընթացներն այս տեսանկյունից դիտարկելիս կարելի է արձանագրել, որ դրանք ուղղակիորեն կապվում են բննարկվող ժամանակահատվածում հանրապետությունում քաղաքական համակարգի ձևավորման գործընթացների հետ: 1991թ. հանրապետությունում քաղաքական իշխանության եկած Հայոց համագգային շարժումը չառաջադրեց պետականության կայացման հստակ ռազմավարություն ու մարտավարական լուծումներ:

Տնտեսական վերափոխումների բացասական հետևանքները ցույց են տալիս, որ հաճախ կայացվում էին պարզապես կամայական որոշումներ, ինչն առավել ակնառու դրսևորվեց արդեն հողային վերափոխումների գործընթացում: Միաժամանակ, արդեն անկախության առաջին տարիներին հանրապետությունում դրվեցին «կլանային» համակարգի, մենաշնորհների ձևավորման հիմքերը: Հանրային-համաժողովրդական սեփականության կենտրոնացումը մի քանի անձանց կամ խմբերի ձեռքում աս-

³⁵ Հ.Լ. Մարգսյան, նշվ. աշխ., էջ 18:

նավորչությունը, շուկայական տնտեսության ու քաղաքացիական հասարակության սկզբունքներին հակասող բազմաթիվ այլ իրողություններ դարձան պետական ու հասարակական կարևորության գործընթացներից բնակչության մեծ մասի օտարման պատճառ:

Սոցիալական, մասնագիտական աստիճանակարգման գործընթացները, որոնք բնորոշում էին հայ հասարակության, ինչպես նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների զարգացումը նախորդ տասնամյակներում, փոխարինվեցին ունեցվածքային շերտավորմամբ ու անմախաղեպ բեռնացմամբ: Շատ արագ Հայաստանի՝ ունեցվածքային տեսանկյունից համեմատաբար համասեռ բնակչությունը բաժանվեց երկու շերտի՝ չնչին տոկոս կազմող հարուստների ու համեմատաբար ունևորների (12-15%) և 50 տոկոսից ավելին կազմող աղքատների:³⁷

Ազգային վիճակագրական ծառայության (նախկին Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն) կողմից Համաշխարհային բանկի օժանդակությամբ կատարված կենսամակարդակի ամբողջացված ուսումնասիրության տվյալներով աղքատ բնակչությունը (որոնց մեկ շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը ցածր են եղել աղքատության ընդհանուր գծից) հանրապետությունում կազմում է ազգաբնակչության շուրջ 50%-ը:

Աղքատության փտանգին ենթակա անձինք (որոնք մեկ շնչի հաշվով սպառումով գտնվում են աղքատության գծից փոքր-ինչ բարձր) ևս կազմում են բնակչության զգալի մասը, որով պայմանավորված՝ սոցիալական պաշտպանության ենթակա բնակչությունն, ըստ էության, կազմում է ողջ բնակչության մոտավորապես 2/3-ը:³⁸ Բնականաբար, այս ցուցանիշն անհամեմատելի է անցումային տնտեսությամբ երկրներում աղքատության միջին մակարդակի հետ:³⁹ Որպես աղքատության անմախաղեպ աճի ամմիջական հետևանք՝ հանդես է գալիս զանգվածային արտագաղթը:

³⁷ Աղքատության պատճառների, հետևանքների ու ազդեցությունների մասին մանրամասն տես Հ. *Խառնաշյան*, Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 16; Է. *Օրդյան*, Հ. *Մանուկյան*, Աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ համայնքներում, Եր., 2001; Ա. *Թադևոսյան*, Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Եր., 2001; Ն. *Մարգարյան*, Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդավարական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Եր., 2001; Մ. *Գաբրիելյան*, Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001; Աղքատության հաղթահարման իմ/մեր տեսականը (հոդվածներ, քաղվածքներ ՄԻԺԻ-ի կողմից կազմակերպված մրցույթից), Եր., 2001:

³⁸ ԱՀՈՄ, էջ 24-32:

Չդիտարկելով արտագաղթի ծավալները, ուղղությունների հետ կապված խնդիրները՝ նշենք, որ այն ոչ միայն վտանգում է ժողովրդագրական իրավիճակը, այլև արգելակում ժողովրդավարական, սոցիալական պետության, քաղաքացիական հասարակության կայացման գործընթացները:

Հանրապետությունից հեռանում է տնտեսապես ակտիվ բնակչությունը. հիմնականում երիտասարդներ ու միջահասակներ, որոնց որոշ մասը, չնայած բավականին լուրջ դժվարությունների, տարբեր երկրներում կարողանում է հարմարվել, ապահովել տանելի կենսամակարդակ, հնարավորության դեպքում տեղափոխել ընտանիքները:⁴⁰

Այս ամենի արդյունքում փոխվում է մաս բնակչության սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական կառուցվածքը: Տարբեր մարզերում անցկացված ազգագրական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունները քույլ են տալիս փաստել բնակչության՝ սոցիալ-մասնագիտական տեսանկյունից համեմատական միատարրության իրողությունը:

Խորհրդային շրջանում տնտեսական, հասարակական հարաբերություններում կարևոր դեր խաղացող սոցիալ-մասնագիտական խմբերի մեծ մասը ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում այսօր գոյություն չունի:

Ե՛վ գյուղերում, և՛ քաղաքներում, տնտեսական ծանր պայմանները դառնում են մաս սոցիալական դերերի ու գործառույթների հետ կապված լուրջ փոփոխությունների պատճառ: Այսօր, ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, սոցիալական դերերի, գործառույթների աստիճանակարգումը կատարվում է ըստ ունեցվածքային սկզբունքի, ըստ աղմ, հասարակական հարաբերություններում կարևոր դերեր ստանձնելու տեսանկյունից առաջնային են համարվում հիմնականում անձի կամ խմբի նյութական հնարավորությունները:

Գործազրկությունը հանդես է գալիս որպես քաղաքային, որոշ դեպքերում մաս գյուղական միջավայրը բնորոշող կարևոր իրողություն և ունի ոչ միայն տնտեսական, այլև բարոյաևեզեքամական ազդեցություն ու

⁴⁰ Գ. Պողոսյանը նշում է, որ արտագաղթածների մեծ մասը 18-55 տարեկան քաղաքացիներ են, համեմատաբար է անդրադառնում ոչ միայն երկրի տնտեսական զարգացման միտումների, այլ մաս բնակչության ժողովրդագրական կազմի ու բարոյաևեզեքամական մթնոլորտի վրա (Ճ.Ա. *Погосия*, Миграционные процессы в Армении. – Миграции на Кавказе, Ереван, 2003, էջ 117):

հետևանքներ: Ունեցվածքային աստիճանակարգման և արտահայտված սոցիալական բեռնացման պայմաններում կարևորվում են ոչ այնքան մասնագիտական իմացություններն ու պատրաստվածությունը, որքան անձնական ծանոթությունները, միջնորդությունների ճանապարհով խնդիրներ լուծելու հնարավորությունները: Նման իրողությունը, ըստ գրառված նյութերի, դրսևորվում է պետական կառավարման տարբեր մակարդակներում, ստորին օղակներին մինչև վերինը:

Սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական ու սոցիալ-ունեցվածքային խմբերին բնորոշ է կրավորականությունը (պասսիվություն): Քաղաքացիական նախաձեռնությունները, հասարակական, քաղաքական, մշակութային գործընթացներին ակտիվ մասնակցությունն այսօր, ըստ էության, նվազագույնի են հասցված: Որպես օրինակ բերենք տարբեր մակարդակի ընտրությունների մեխանիզմները: Որոշ գյուղերում համայնքների ավագանիների ու գյուղապետերի ընտրության ժամանակ, կարևորվում են ոչ այնքան թեկնածուների մասնագիտական կարողությունները և փորձառությունը, որքան մեծ ազդատոհմերին պատկանելը: Քաղաքներում արդեն կարևոր են «թիմային կամ կլանային» մեխանիզմները: Հաջողության են հասնում այն թեկնածուները, ովքեր ունեն տնտեսական, ֆինանսական ազդեցության լծակներ կամ վայելում են հանրապետության քաղաքական վերնախավի աջակցությունը:

Այս տեսանկյունից քաղաքացիական ակտիվության բացակայության լավագույն ապացույցը 2003թ. խորհրդարանական ընտրություններն էին, որոնց ընթացքում, ըստ մեր դիտարկումների, հիմնականում դեր էին խաղում ոչ թե այս կամ այն թեկնածուի մասնագիտական որակավորումն ու անձնական կարողությունները, այլ նյութական հնարավորությունները: Ավելին, հանրապետության որոշ համայնքներում, ինչպես ցույց են տալիս հետազոտության ժամանակ գրառված նյութերը, երբեմն քաղաքացին ընտրություններին չի մասնակցում այն պարզ պատճառով, որ իրեն ընտրակաշառք չի առաջարկվել:

Անփոփոխելի մեթոդաբանությունը՝ որոշ դիտարկումներ՝ կապված տնտեսական վերափոխումների ընթացքի, ունեցվածքային բեռնացման, քաղաքացիական հասարակության կայացման գործընթացների վրա դրանց ունեցած ազդեցության հետ:

Տնտեսական վերափոխումները, որոնց նպատակը շուկայական հարաբերությունների ձևավորումն էր, մասնավոր սեփականության իրա-

վումքի վրա հիմնված արդյունավետ տնտեսական գործունեության խթանումը, մանր ու միջին սեփականատերերի խափի կայացումը անցած տարիների ընթացքում հանդիպել են լուրջ դժվարությունների: Չնայած վերջին տարիներին դիտվող համեմատական կայունությանն ու տնտեսական աճին՝ այնուամենայնիվ, և՛ տնտեսական զարգացման, և՛ բնակչության կենսամակարդակի ցուցանիշները դեռևս զիջում են 1990թ. ցուցանիշներին:

Ավելին, նույն տնտեսական վերափոխումների հետևանքները որոշ դեպքերում, ինչպես օրինակ, ընտրությունների հետ կապված, հանդես են գալիս որպես հանրապետությունում քաղաքացիական հասարակության կայացման խոչընդոտներ, քանզի զանգվածային աղքատացման արդյունքում հանրապետության քաղաքացիների մի ստվար զանգված կարևորում է ոչ այնքան քաղաքացիական հասարակության կայացման կամ դրանցում սեփական մասնակցության իրողությունները, որքան ընդամենը կենսական նվազագույնի ապահովման հարցերը:

Քաղաքացիական ակտիվության ու նախաձեռնությունների պակասը, բնակչության անտալքերությունը, քաղաքացիական իրավունքների իրացման բավականին ցածր մակարդակը, աստիճանաբար ավելի ու ավելի լայն տարածում ստացող կոռուպցիան, որում ներգրավվում են նաև բնակչության տարբեր շերտերը, կարելի է դիտել նաև որպես տնտեսական վերափոխումների ուղղակի հետևանք, քանի որ տանելի կենսամակարդակ ապահովելու իրական հնարավորությունները հանրապետությունում հիմնականում բացակայում են: Միջին մյութական հնարավորություններ ունեցող խափի բացակայությունը սահմանափակում է նաև հասարակության՝ որպես օրգանական ամբողջության ներդաշնակ զարգացման հնարավորությունները, քանի որ, ինչպես արդեն ցույց տրվեց, կարևորվում են հիմնականում անձնական կամ նեղ խմբային շահերը, որոնք բազմաթիվ դեպքերում ստորադասվում են պետական ու հասարակական շահին:

Աղքատությունը, որը հանդես է գալիս որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարբեր գործոնների (աշխարհաքաղաքական իրավիճակ, Արցախյան չկարգավորված հակամարտություն, երկրաշարժի՝ դեռևս չհաղթահարված հետևանքներ, տնտեսական վերափոխումների բացասական ազդեցություն) զուգակցում, իր հերթին խոչընդոտում է տնտեսական զարգացումը:

Այսինքն, 1990-ականներին սկսված տնտեսական վերափոխումները, որոնց նպատակը արդյունավետ տնտեսական համակարգ ստեղծելն էր, առաջացրին խոր և տևական սոցիալ-տնտեսական ճգնաժամ, որը, ըստ էության, տակավին հաղթահարված չէ, և հետևանքները դեռևս հանդես են գալիս որպես քաղաքացիական հասարակության կայացմանը խոչընդոտող էական գործոններ:

2.4. Զաղաքացիական հասարակության կայացման հասարակական-քաղաքական ինստիտուցիոնալ տեսանկյունները

Հետխորհրդային զարգացման հենց սկզբնական շրջանում օրինաչափորեն առաջացավ նոր հասարակական-քաղաքական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը: Սակայն այն կապված էր մի շարք խոչընդոտների հետ, որոնք պայմանավորված էին մի կողմից՝ ԽՍՀՄ ժամանակաշրջանից պահպանված քաղաքական մշակույթին բնորոշ տարրերով, մյուս կողմից՝ տնտեսական և հասարակական համակարգերի քայքայվածությամբ:

Զաղաքական համակարգի ձևավորմանն ուղեկցող մեկ այլ ոչ պակաս ազդեցիկ գործոնը Ադրբեջանի հետ Հայաստանի փաստացի պատերազմական վիճակն էր, որը երկրի ներքին կյանքում զգալի դերակատարության հնարավորություն էր ստեղծում ռազմականացված ուժերի համար:

Անցած տարիների ընթացքում երկրում տեղի են ունեցել էական փոփոխություններ. կազմավորվել են գործադիր, օրենսդիր, դատական իշխանության ինստիտուտները, ֆորմալ առումով ներդրվել են իշխանության ձևավորման ժողովրդավարական ինստիտուտներ, ձևավորվել են նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Իրականացվել են լայնակի ինստիտուցիոնալ բարեփոխումներ կառավարման համակարգում, ու ներկայումս փորձ է արվում կանոնակարգել քաղաքացիական ծառայության ոլորտը:

Զաղաքական դաշտում այս տարիներին ձևավորվել է բազմակուսակցական համակարգ, ու քաղաքական ուժերը հնարավորություն ունեն մասնակցելու իշխանության ձևավորման գործընթացներին՝ ընտրություններում պատգամավորության քեկնածուներ առաջադրելով:

Կայացման գործընթացում է նաև հասարակական համակարգը: Հա-

յաստանում, ի դեմս ոչ կառավարական կազմակերպությունների լայն ցանցի, ընթանում են հասարակության ինքնակազմակերպման իմաստի-տուցիոնալ գործընթացներ:⁴¹

ՀՀ ազգային փոքրամասնությունները ևս ստեղծել են մի քանի տաս-նյակ հասարակական կազմակերպություններ: Ուսումնասիրելով այդ կազմակերպությունների գործունեությունը՝ պարզ դարձավ, որ դրանց ու-շաղիքային կենտրոնում գտնվում են մայրենի լեզվի և ազգային-մշակու-թային այլ արժեքների պահպանության, ժառանգորդության հարցերը, իսկ համահանրապետական հիմնախնդիրները (ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության կայացման գործընթացները և այլն) համեմատաբար պակաս ուշաղիքային են արժանանում, ինչն հասկա-նալի և օրինաչափ է նման հասարակական կազմակերպությունների գոր-ծունեության առաջին փուլի համար:

Ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունները հան-րապետությունում ներկայումս ձևավորման և կայացման փուլում են, սա-կայն նկատվում են նաև գործառնական կայացման դրսևորումներ: Ան-ցած տարիների ընթացքում ձևավորվել են շուրջ 3500 հասարակական կազմակերպություններ, որոնք՝ աստիճանաբար (սակայն չափազանց դանդաղ) կարևոր դերակատարություն են ստանձնում հանրապետու-թյունում քաղաքացիական հասարակության կայացման գործընթացնե-րում:

Նշվածին ավելացնենք նաև, որ առկա են բազմաթիվ հիմնախնդիր-ներ, որոնք խոչընդոտում են ժողովրդավարության կայացմանը: Դրանք վերաբերում են.

- տնտեսական ոլորտում հավասար ու ազատ մրցակցային պայ-մանների բացակայությանը կամ խիստ սահմանափակվածությա-նը, ստվերային տնտեսության հսկայական ծավալներին,
- հասարակական համակարգում տարբեր խմբերի միջև ծայրահեղ բևեռացումներին ու իրավունքների անպաշտպանությանը,
- քաղաքական համակարգում ժողովրդավարության իմաստիտուցնե-րի կազմավորմանն ու ծավալմանը և իրականում դրանց քողի ներ-քո ավտորիտարիզմի դրսևորումներին:

⁴¹ Այսօր Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեն շուրջ 3500 հասա-րակական կազմակերպություններ:

Ներկայումս Հայաստանի քաղաքական համակարգում առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք գլխավորապես առնչվում են իշխանության քննի տարանջատվածության, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման միջև իշխանության ապակենտրոնացվածության, քաղաքական կուսակցությունների դերակատարության,⁴² ընտրությունների անցկացման և իշխանությունների ձևավորման, կառավարմանը հասարակության մասնակցության հարցերին:

Իշխանության քննի տարանջատումը հռչակված է Սահմանադրությամբ, որը համարվում է իշխանությունը մեկ ուժի ձեռքում կենտրոնացնելուց խուսափելուն ուղղված անհրաժեշտ պայման, ինչը քաղաքացիական հասարակության կայացման կարևոր ինստիտուցիոնալ նախապայմաններից է:

Հարկ է նկատել, որ Հայաստանի քաղաքական կառավարման համակարգում իշխանության քննի տարանջատվածությունը լիովին չի իրականացված, և առկա են թերություններ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ տարանջատումը հնարավոր դարձնող մեխանիզմների մեջ: Արդյունքում իշխանության քննի տարանջատվածությունը չի իրականացվում կշիռների ու հակակշիռների այնպիսի հարաբերակցությամբ, որ թույլ կտա իշխանության երեք քննից յուրաքանչյուրին գործել լիազորությունների ու պատասխանատվությունների հավասարակշռվածության պայմաններում:

Կարելի է ասել, որ Նախագահ – Կառավարություն – Ազգային ժողով կշիռների և հակակշիռների համակարգի անկատարությունը հանրապետությունում այնպիսին է, որում թույլ են անկայուն իրավիճակների կանխարգելման մեխանիզմները, սակայն առկա են ճգնաժամերի կարգավորման հնարավորություններ: Դրանով է պայմանավորված այն իրողությունը, որ ինչպես հանրապետության քաղաքական կուսակցությունները, այնպես էլ միջազգային տարբեր առյաններն օրակարգի հարց են դարձրել ՀՀ գործող Սահմանադրության և մի շարք հանգուցային օրենքների քարտեզադրումը:

Հայաստանի քաղաքական համակարգի որակներին վրա ազդող գործոններից է մասնավոր գործարարությամբ զբաղվելու և պաշտոնի անհամատեղելիությունը պայմանավորող մեխանիզմների անկատարությունը: Օրենսդրություն ամրագրված է այն հիմնարար սկզբունքը, որ գործադիր, օ-

⁴² Հանրապետությունում այսօր գործում են շուրջ 100 կուսակցություն:

րենսդիր և դատական իշխանության ներկայացուցիչները իրավունք չունեն մասնավոր բիզնեսով զբաղվելու: Սակայն օրենսդրական այս սկզբունքները, ըստ էության, գրեթե չեն գործում, անկատար են դրա վերահսկման ու թափանցիկության մեխանիզմները, ինչը բույլ է տալիս թե՛ Կառավարության անդամներին և թե՛ Ազգային ժողովի պատգամավորներին գտնել օրենքը շրջանցելու՝ ու մասնավոր ձեռներեցության ոլորտում անուղղակի ձևերով պահպանելու իրենց իրական ներգրավվածությունը:

Հիշյալ հանգամանքը լուրջ բացասական ազդեցություն է գործում երկրի քաղաքական համակարգի կոռումպացման վրա մի կողմից, մյուս կողմից իր մեջ պայտուհակում է քաղաքական համակարգում իշխանության թևերի անկախությանը խոչընդոտող ստվերային գործոն, այն պատճառով, որ իշխանության ներկայացուցիչների անուղղակի ներգրավվածությունը բիզնեսի ոլորտ խոցելի է դարձնում նրանց շահերի տեսանկյունից և առաջացնում այնպիսի փաստեր, երբ քաղաքական գործընկերությունը պայմանավորվում է ոչ այնքան քաղաքական, որքան ձեռներեցության ոլորտում առկա շահերից բխող գործոններով:

Հայաստանում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման համար առանցքային նշանակության հիմնահարցը մնում են ընտրությունները և կառավարմանը հասարակության մասնակցության խնդիրը:

Ծառայու՞մ են արդյոք ընտրությունները հասարակության կողմից մտահասու (կոմպետենտ) իշխանություններ ձևավորելու խնդրին: Արդյո՞ք Հայաստանում ընտրությունների միջոցով ձևավորվող իշխանությունը ստեղծում է այնպիսի օրենքներ և իրականացնում է այնպիսի ծրագրեր, որոնք հանդիսանում են համաժողովրդական կամքի արդյունք ու նպատակաուղղված են մարդկանց համար հավասար հնարավորությունների ձևավորման և հասարակության զարգացման հիմնախնդիրներին: Անցած ավելի քան տասնամյա ուղու զնահատույնը ցավոք թույլ չի տալիս այս հարցերին դրական պատասխան տալ մի քանի պատճառով:

Իշխանությունների ձևավորման գործում դեռևս չափազանց մեծ է հենց իշխանությունների դերը: Անցած տարիների ընթացքում Հայաստանում ձևավորվել են ընտրությունների ընթացքի և արդյունքների վրա ազդելու մի շարք մեխանիզմներ, որոնք բավական բազմազան են: Դրանց հիմքում ընկած են ընտրակեղծիքները, ընտրակաշառքները և մարդկանց

կամքը ապակողմնորոշող, վախի զգացում առաջացնող ճնշման լծակներ: Եթե բնութագրենք 1990-2004թթ. ընթացքում Հայաստանում տեղի ունեցած նախագահական ու խորհրդարանական ընտրությունները, ապա կարելի է նկատել ժողովրդի դերի նվազում և խմբիշխանական շրջանակների ազդեցության մեծացում, ինչպես նաև տարբեր տեսակի ճնշման միջոցների կիրառում, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքներում ընտրողների կամքի ապակողմնորոշում և այլն:

Նշվածը հանգեցնում է նրան, որ իշխանություններն ընտրությունների շրջանում հանդես են գալիս ոչ թե իշխանության ձևավորմանը հասարակության մասնակցության երաշխավորի դերում. այլ հակառակը՝ իշխանական մեքենան ընտրությունների շրջանում ամեն ինչ անում է ժողովրդի մասնակցությանը խորհրդանշական բնույթ հաղորդելուն, ինչն աստիճանաբար նպաստում է իշխանության ձևավորման գործընթացից ժողովրդին օտարելուն:

Պատահական չէ, որ 2001 թվականին իրականացված հարցումների համաձայն՝ բնակչության 46 տոկոսը նշել է, որ ընտրությունները քույր չեն տալիս քաղաքացուն իր ձայնը արտահայտելու, իսկ 17 տոկոսը մասնակիորեն է համաձայնվել դրա հետ:⁴³

Մյուս խոչընդոտը քաղաքական կուսակցությունների օտարվածությունն է ժողովրդից: Չնայած բանական բազմազանությանը (շուրջ 100 քաղաքական կուսակցություններ)՝ դրանք չեն կատարում իրենց հիմնական հասարակական գործառնությունը՝ հասարակության համախմբումը քաղաքական և պետականության գաղափարների շուրջը և դրա հիման վրա իշխանության ձևավորմանը հանրության մասնակցության ապահովումը՝ ի շահ ազգային ու պետական նպատակների:

Հայաստանի քաղաքական ուժերին բնորոշ է խմբիշխանական շահերին նվիրվածությունը, և հաճախ դրանք ձգտում են իշխանության՝ սեփական խմբային ու կուսակցական խնդիրները լուծելու նպատակով: Այս պատճառով քաղաքական ուժերից շատերը վերածվել են ոչ թե հասարակության համար իշխանության մատչելիությունը ապահովող միջնորդի, այլ ստվերային բնույթ ունեցող խմբիշխանական տարբեր շրջանակների: Այս ամենի հետևանքում քաղաքական ուժերը հասարակությանը դի-

⁴³ Քաղաքացիների իրազեկությունը և մասնակցությունը Հայաստանում, IFES, ազգային սոցիոլոգիական հարցում, Նրևան, 2001:

տում են որպես գործիքի, այլ ոչ թե գործընկերոջ: Կարելի է փաստել, որ Հայաստանում ձևավորված բազմակուսակցական համակարգը *de facto* չի իրականացնում հասարակության բազմակարծության արտահայտողի և պաշտպանի գործառույթը:

Ուստի հանրապետությունում առավել կարևորվում է մասնակցային կառավարման մեխանիզմների ներդրումը, որը կարող է նպաստել, որպեսզի այն իրականացվի հասարակական պատվերի հիման վրա, այլ ոչ իշխանության մատչելիությամբ բնորոշվող ազդեցիկ հատվածական շրջանակների:

Ճիշտ է, վերջին ժամանակներս կառավարմանը հասարակության մասնակցությունը ապահովելու փորձեր արվում են, սակայն այն դեռևս գտնվում է, ըստ էության, ձևական ներգրավման շրջանակներում:⁴⁴ Դրա պատճառները երկուսն են. մի կողմից թույլ է իրական մասնակցության հանդեպ շահագրգռվածությունը և քաղաքական կամքի դրսևորումը կառավարող շրջանակներում, մյուս կողմից՝ ցածր է հասարակության քաղաքացիական մշակույթը և ինքնակազմակերպման աստիճանը: Հասարակական կազմակերպությունները, ցավոք, դեռ ցածր հեղինակություն և վստահություն ունեն հանրության մեջ: Դրանց մեծ մասը ձևական գործունեություն է ծավալում, իսկ կայացածների թիվը դեռևս խիստ սակավ է:

Քաղաքացիական հասարակության իրական ձևավորման տեսանկյունից կարևորվում է ՁԼՄ-ների դերը և դրանց անկախությունը: Փաստացիորեն ՀՀ-ում ՁԼՄ-ները չունեն ֆինանսական անկախություն: Այս հանգամանքը խոչընդոտում է մամուլի կողմից հասարակության իրազեկումը օբյեկտիվ տեղեկատվություն հաղորդելու միջոցով: Թե՛ իշխանամետ և թե՛ ընդդիմադիր մամուլը իրականացնում է կողմնակալ տեղեկատվության տարածում, ինչն ավելի շատ ծառայում է հասարակության մեջ առճակատմանը, քան համագործակցությանն ու միասնականությանը:

Իշխանության ձևավորմանը և կառավարմանը շարքային մարդկանց գլխակցված և շահագրգիռ մասնակցության ապահովումը կարևորա-

⁴⁴ Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ադրատության և կոռուպցիայի հաղթահարման ռազմավարական ծրագրերին, որոնց հասարակության իրական մասնակցությունը դեռևս չի հաջողվել ապահովել: Տե՛ս նաև *Ա. Թադևոսյան, Մ. Գաբրիելյան*, Ադրատության ու գոյատևման պատկերը. Հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2003, էջ 91:

գույն խնդիրներից է, որը ծառացած է այսօր պետության և քաղաքական ուժերի առջև:

Մարդու իրավունքների պաշտպանվածության շուրջ բանավեճերում հաճախ որպես դրական ձեռքբերում նշվում է դատական ու իրավապահ ոլորտներում իրականացված օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումները: Սակայն հարցի էությունը նրանում է, քե այդ օրենքներն ու ինստիտուտները ուղղահայաց, քե՞ հորիզոնական հարաբերությունների ձևավորմանն են ծառայում: Մարդու իրավունքների պաշտպանվածության մասին կարելի է դատել միայն օրենքների ու ինստիտուտների հորիզոնական գործառնության դեպքում: Հայաստանում, ցավոք, այդ ինստիտուտների գործառնությունը գերազանցապես ուղղահայաց, հիերարխիկ է: Այն պայմանավորված է իշխանության մատչելիությունից բխող ուժի ու ազդեցության չափից: Այս տեսանկյունից Հայաստանում ամենից շատ պաշտպանված են իշխանության վերին օղակների մատչելիություն ունեցողների իրավունքները: Դրանցում առաջնային պաշտպանվածություն ունեն իշխանության ուժային ոլորտների ներկայացուցիչները: Իսկ հասարակության շարքային անդամները հաճախ հայտնվում են դրանցից պաշտպանվողի կարգավիճակում:⁴⁵ Այս առումով մարդու իրավունքները Հայաստանում դեռևս լիարժեք պաշտպանված չեն: Միայն դատախազական համակարգի նոր բարեփոխումները կարող են էականորեն նպաստել իրադրության բարելավմանը:

Քաղաքացիական հասարակության ու ժողովրդավարության կայացման արդի վիճակի վերլուծությունը ի մի բերելով՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- ՀՀ-ում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորումը դեռևս լիարժեք չի կայացել, ինչը քույլ չի տալիս իրականացնելու իրական ժողովրդավարական ընտրություններ ու մասնակցային կառավարում,
- արդյունավետ չեն գործում այն մեխանիզմները, որոնք կարող են երաշխավորել քաղաքացիական հասարակության ու ժողովրդավարական ինստիտուտների գործառնությունը,

⁴⁵ Այս առումով հետաքրքիր դիտարկումներ ունի ՀՀ նախկին վարչապետ Հ. Բազրադյանը: Տե՛ս Հ. *Քաղաքային*, Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Եր., 2000, էջ 78:

- հանրապետության վերնախավում, ինչպես նաև հասարակության լայն զանգվածներում դեռևս ցածր է ժողովրդավարական արժեքների գիտակցման և քաղաքացիական գիտակցության աստիճանը: Այս տեսակետից առավել կարևորվում է հասարակության քաղաքացիական գիտակցության ու մշակույթի զարգացման խնդիրը;
- պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման, հասարակական-քաղաքական վերնախավում բույլ է ժողովրդավարական սկզբունքների գիտակցման, արժեքափորման ու կիրառման աստիճանը, ինչը ենթադրում է օրենսդրական դաշտի և կառավարման մեխանիզմների ժողովրդավարական սկզբունքներից բխող արմատական վերափոխումներ:

2.5. Ամփոփում և եզրահանգումներ

XX դ. վերջը հայ ազգի համար նշանավորվեց երկու ազգային պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձևավորումով. երկուսն էլ գործող միջազգային-իրավական նորմերի կիրառման ճանապարհով: Չնայած աշխարհաքաղաքական և տարածաշրջանային բարդ իրադրությանը և Հայաստանում ստեղծված դժվար կացությանը, այնուհանդերձ, հայ ազգի համար ստեղծվեցին բացառիկ հնարավորություններ զարգանալու և պետականությունը հզորացնելու առումով:

Լեռնային Ղարաբաղի հայերի ազգային-ազատագրական պայքարը, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը, ամբողջատիրական համակարգի վերացումը, հայ ժողովրդի ազգային վերելքը բարձրացրին ՀՀ ամբողջ բնակչության, այդ թվում նաև՝ այստեղ բնակվող տալիբեր ազգային փոքրամասնությունների ազգային ինքնագիտակցությունը և հետաքրքրությունը դեպի սեփական ազգային-մշակութային արմատներն ու արժեքները: Դա ուղեկցվեց նաև նրանց մեծ մասի՝ իրենց ազգային պետությունների հետ սերտ կապերի հաստատումով:

Անցան հանրապետության զարգացման առաջին տասներեք տարիները. ի՞նչ ձեռքբերումներ ունենք և ինչպիսի՞ խնդիրների առջև ենք կանգնած արդի շրջանում: Նախորդ երեք ենթաբաժիններում (2.2., 2.3., 2.4.) Մ.Վ. Գալստյանը, Մ.Ռ. Գաբրիելյանը և Ա.Զ. Թադևոսյանը անաչա-

որեն վերլուծեցին պետաիրավական, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ինստիտուցիոնալ տեսանկյունները՝ բացահայտելով Հայաստանի Հանրապետության պետականության կայացման և հզորացման, հետխորհրդային շրջանի նոր տնտեսական համակարգի սաղմնավորման ու ծավալման, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության արմատավորման բայողությունները: Բացահայտվեցին նաև խոր և տևական սոցիալ-տնտեսական ճգնաժամի, բնակչության կենսամակարդակի աննախադեպ անկման, հայ բնակչության, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների զանգվածային արտագաղթի, աղքատության և հուսալքության բազմապիսի դրսևորումների, բայոյա-հոգեբանական մթնոլորտի վատթարացման պատճառները:

Հարց է առաջանում. ինչու՞ մեր ժողովրդին (ՀՀ հասարակությունը) չհաջողվեց նվազագույն կորստներով հաղթահարել, այսպես կոչված, «անցումային շրջանը»՝ ունենալով հզոր ինտելեկտուալ, քաղաքակրթական ներուժ: Դրա պատասխանն էլ արդարացիորեն ի հայտ են բերել վերոհիշյալ հեղինակները: Այս տարիների ՀՀ պատմությունը դեռ կուսումնասիրվի մանրակրկիտ ձևով և անաչառորեն, կբացահայտվեն կառավարման ասպարեզում բույլ տրված սխալներն ու բացթողումները, ինչը երաշխիք կհանդիսանա գալիքում դրանցից խուսափելու համար:

Ամփոփելով վերը շարադրածը՝ կցանկանայինք անել մի քանի եզրահանգումներ:

1. 1988-1990թթ. ազգային շարժման ժամանակաշրջան էր, և ինքնիշխան պետության ստեղծումը չէր դիտվում որպես գլխավոր նպատակ: Հիմնական խնդիրն էր խորհրդային Միությունում ընթացող, այսպես կոչված «պերեստոյկայի» պայմաններում արդարացիորեն լուծել Ղարաբաղյան հիմնահարցը: Ազատության հրապարակում «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսները և բացականչությունները սկզբնական շրջանում լայն տարածում ունեին: Երբ շատ շուտ պարզվեց, որ խորհրդային իշխանությունները ոչ միայն հսկված չեն արդարացիորեն լուծել Ղարաբաղյան հիմնահարցը, այլև ի վիճակի չեն ապահովել հայ բնակչության նույնիսկ ֆիզիկական անվտանգությունը խորհրդային Աղբբեջանում, նոր շարժումը ստացավ քաղաքական բնույթ՝ ընդունելով հակակոմունիստական և հակախորհրդային ուղղվածություն:

Խորհրդային Միությունը 1991թ. արագորեն փլուզվեց, Հայաստանի Հանրապետությունը ընթացավ անկախության և ինքնուրաշման ճանա-

պարհով՝ չունենալով թե՛ պետաիրավական, թե՛ սոցիալ-տնտեսական գիտականորեն հիմնավորված զարգացման ծրագրեր: Հ. Լ. Սարգսյանը իրավացիորեն նշում է, որ «մշակվող ամենամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը անցած տասնամյակում գիտական պատշաճ սպասարկում չեն ունեցել, գուրկ են եղել մեթոդաբանական հիմնավոր մոտեցումներից, անհուսալի և հայեցողական կանխատեսումները չեն պարունակել տնտեսական աշխույժ քաղաքականության լծակներն ու տարրերը, չի ապահովվել դրանց տարբերակայնությունն ու հաշվեկշռվածությունը՝ նույնիսկ տարվա կտրվածքով»:⁴⁶ Հեղինակը նաև ընդգծում է. «Կառավարության տնտեսական բարեփոխումների ձեռնարկումներում, հատկապես 1992թ., անտեսվեցին սոցիալական կողմնորոշումների հիմնահարցերը: Արմատավորվող տնտեսական նոր հարաբերություններում սոցիալական անհրաժեշտ մեղմիչները չգործադրելը հանգեցրեց այս ոլորտի որոշ ցուցանիշների ոչ թե անկմանը, այլ պարզապես «ազատ» անկմանը: Ծայրաստիճան սրվեց սոցիալ-ժողովրդագրական իրադրությունը, տեղի ունեցավ մարդկային կապիտալի փոշիացում, որն իսկ հակացույցն է «բարեփոխումներ» հասկացության գործածմանը այս ոլորտում»: «Անցումը շուկայական տնտեսությանը հանրապետությունում իրագործվեց ազատականացման ռոտո վերաբերյալ մոտ և հեռու արտասահմանի հանձնարարականների պարզունակ տեղայնացման և (կամ) զուտ քաղաքական նպատակներ հետապնդող մոտեցումների ներդրման միջոցով»:⁴⁷

Պարզ է, որ շուտափույթ մշակած և ընդունած ծրագրերը կամ ուրիշ երկրներից ընդօրինակած փորձը՝ առանց հանրապետության առանձնահատկությունները հաշվի առնելու, պետք է ուղեկցվելին վրիպումներով, սխալներով և կորուստներով, ինչը և տեղի ունեցավ: Հանրահայտ է հետևյալ պարզ ճշմարտությունը՝ հաջող կառավարելու համար անհրաժեշտ է գոյություն ունեցող օբյեկտիվ գործոնների իմացություն և ձեռնարկվելիք քայլերի հետևանքների գիտական կանխատեսում:

2. Նորանկախ պետականության կայացման, տնտեսության վերակառուցման և մյուս ոլորտներում իրականացված վերափոխումների գործընթացներից արհեստականորեն (քաղաքական, գաղափարախոսա-

⁴⁶ Հ.Լ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 21:

⁴⁷ Նույն տեղում, էջ 15, 34:

կան և այլ նկատառումներից ելնելով) դուրս մղվեց մտավորականության առավել գիտակ և առավել պարկեշտ ստվար զանգվածը, այսինքն՝ ազգային ինտելեկտուալ ներուժի մեծ մասը, ըստ էության, չներգրավվեց հայրենաշեն գործընթացներում:

Հատկանշական է, որ Խորհրդային Միության փլուզումից հետո արևմտյան հեղինակավոր տնտեսագետները առաջացած նորանկախ պետություններում «անցումային շրջանում» կանխատեսում էին արտադրության ծավալների և բնակչության կենսամակարդակի անկում, սակայն ոչ այն չափով, ինչը տեղի ունեցավ, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում: Պատճառն այն է, որ նրանք հաշվարկել էին օբյեկտիվորեն գոյություն ունեցող բացասական գործոնները, բայց չէին կանխատեսել, որ ինտելեկտուալ ներուժի մեծ մասը ինչ-ինչ պատճառներով դուրս է մղվելու կառուցողական ծրագրերից: Եվ պատահական չէ, որ «տնտեսական անկման թափով Հայաստանը 1992թ. գերազանցել է նախկին Միության բոլոր հանրապետություններին»:⁴⁸

Խոսելով գիտական ներուժի ընդգրկվածության մասին՝ մենք նկատի չունենք կոնկրետ անձանց: Խոսքն այն մասին է, որ գիտությունը լրիվ անտեսվեց մեր հայրենաշեն գործընթացներում: Մինչդեռ իրագործված սոցիալ-տնտեսական, քաղաքական, օրենսդրական և մշակութային համակարգային վերափոխումները պետք է հիմնվեին գիտականորեն մշակված ծրագրերի վրա: Գիտական ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանային երկրի կառավարման ռազմավարության և մարտավարության համար: Արևմտաեվրոպական բոլոր զարգացած երկրների պատմությունն ասպացուցում է, որ գիտությունը մեծ դերակատարություն է ունեցել տնտեսության և պետության հզորացման գործում, քանզի դրա շնորհիվ նվազագույնի են հասցվել հնարավոր սխալները և գտնվել են զարգացման ամենաարդյունավետ ուղիները: Այս բոլորը Հայաստանում տեղի չունեցան, չնայած հզոր գիտական ներուժի առկայությանը:

Միայն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներում և հանրապետության բուհերում աշխատում են հարյուրավոր հմուտ գիտնականներ, որոնք, պետության առաջադրանքի պարագայում, կարող էին գիտականորեն մշակել պետության, տնտեսության, հասարակության զարգացման հետ առնչվող հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման առավել արդյունավետ եղանակները:

⁴⁸ Նույն տեղում, էջ 16:

Չարմանալի է, բայց փաստ է, որ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ավագ և առաջատար գիտաշխատողները, գիտությունների դոկտորները ստանում են ավելի ցածր աշխատավարձ, քան ՀՀ Ազգային ժողովի հավաքարարները:⁴⁹ Մեկնաբանությունները, ինչպես ասում են, ավելորդ են: Ակնհայտ է, որ գիտության և գիտնականի դերը մեր հանրապետությունում թերագնահատված է: Այստեղից էլ, մեր համոզմամբ, գալիս է մեր անհաջողությունների մեծ մասը:

Գիտությունը պահանջում է պետության հատուկ հոգածություն և ֆինանսավորում: Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ռեկտոր, հռչակավոր գիտնական Վ. Ա. Սաղովնիչին, հիմնավորելով գիտության լիարժեք ֆինանսավորման անհրաժեշտությունը, դիմել է Ռուսաստանյան Դաշնության ղեկավարությանը՝ գրելով. «Опасность проистекает из установки, согласно которой наука станет богаче, когда богатым станет государство, когда его экономика окрепнет и разовьется. Это ошибочно для бедной страны, каковой является сейчас Россия. Ошибочность заключается в том, что в этом случае сознательно переставлены местами причины и следствия. Для нас установка должна звучать так: через богатую науку к богатой России. В истории цивилизации еще не было примера, когда бы страна богатели при одновременном оскудении науки»:⁴⁹ Նման մոտեցում անհրաժեշտ էր ցուցաբերել մաև Հայաստանում: Դրա շնորհիվ կորուստները կլինեին քիչ, տնտեսական վերելքը և հասարակության առաջընթացը՝ մեծ:

3. Եվս մեկ կարևորագույն գործառույթ ՀՀ նորանկախ պետությունը չապահովեց՝ բնակչության առավել կարիքավոր և վերափոխումների արդյունքում աղքատացած խավերի սոցիալական պաշտպանությունը:⁵⁰ Արդյունքում՝ զանգվածային աղքատացում, բնակչության ունեցվածքա-

⁴⁹ Այդ իրողությունը բնութագրական էր 1990-ական-2004թթ. համար: Միայն 2005թ. սկզբներից ՀՀ ԳԱԱ ինստիտուտների դոկտոր գիտաշխատողների աշխատավարձը մոտեցավ ՀՀ Ազգային ժողովի հավաքարարների աշխատավարձի չափին: Այստեղ մենք ուշադրությունը բևեռում ենք ոչ այնքան աշխատավարձի չափի, որքան տարբեր որակի և նշանակության աշխատանքների տեսակների չափորոշիչների վրա:

⁴⁹ В.А. Садовничий, Наука и общество. - Вестник Российской академии наук, 1998, т. 68, N 8, с. 716.

⁵⁰ Արևմտաեվրոպական պետությունների քաղաքականության հիմնական առանձնահատկությունը եղել է բնակչության տարբեր խավերի սոցիալական պաշտպանվածության ապահովումը, որի շնորհիվ ամրապնդվել է հասարակության ներքին կայունությունը և համեմատաբար բարձր, համախմբվել են բոլոր ինտելեկտուալ ուժերը երկրի առաջ ծառացած խնդիրների լուծման համար:

յին բևեռացում, լայնածավալ արտագաղթ և հասարակության պառակտ-վածություն:

4. 1990թ. մայիսին ընտրված Գերագույն խորհրդի պատգամավորնե-րի զգալի մասին, հասկանալի պատճառներով,⁵¹ բնորոշ էին հակա-խորհրդային և հակակոմունիստական հայացքներ ու տրամադրություն-ներ, ուստի անկախություն ձեռք բերելուց հետո շատ կարճ ժամանակում ջանացին վերացնել մեր կյանքից բոլոր այն արժեքները, որոնք ծնունդ էին Խորհրդային Միության կամ կոմունիստական գաղափարախոսու-թյան արժեքային համակարգի: Ընդունած թերի օրենքներով և դրանց ա-ռավել թերի կիրարկման եղանակով չափազանց կարճ ժամանակահատ-վածում համաժողովրդական և կոլտնտեսային սեփականության օբյեկտ-ները գյուղում և քաղաքում սեփականաշնորհվեցին, մասնավորեցվեցին և իրականում փառհալվեցին, որի արդյունքում համատարած աղքատու-թյուն ու գործազրկությունը տիրեց հանրապետությունում:

Պետական ու ժողովրդական տոնացույցից հանվեցին նույնիսկ այն-պիսի տոներ, ինչպիսիք են Մարտի 8-ը՝ Կոմկոմի միջազգային օրը, Մա-յիսի 1-ը՝ Աշխատավորների համերաշխության օրը և Մայիսի 9-ը՝ Հաղ-թանակի օրը:⁵²

5. 1990-ական – 2004թթ. քաղաքական և սոցիալ-տնտեսական իրա-դարձությունները Հայաստանում ծավալվեցին ավելի արագ, քան բնա-կության հասարակական գիտակցության մեջ կատարված համարժեք փոփոխությունները: Արդյունքում խնդիրներ ունենք ինչպես բնակչու-թյան քաղաքական մշակույթի բարձրացման, այնպես էլ հասարակական առողջ՝ պետական ու ազգային շահերին համապատասխանող պահան-ջարկի ձևավորման հարցերում: Պետք է հաշվի առնել, որ հայ ժողովուր-դը վերջին դարերի ընթացքում չի ունեցել ժողովրդավարական և իրավա-կան պետականության ավանդույթներ:

6. Անցած տարիներին որոշակիորեն դրսևորված էական խոչընդոտ-

⁵¹ ԽՄԿԿ ամբողջատիրական (տոտալիտար) պետության տասնյակ տարիներ վարած քա-ղաքականության նկատմամբ դրսևորած վերաբերմունք:

⁵² Ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը, բոլոր երկրների ժողովուրդները հպար-տանում են Ֆաշիզմի ջախջախման գործում իրենց մասնակցությամբ. մեր ժողովրդի հար-յուր հազարավոր զավակները գոհվել և վերավորվել են Ու Համաշխարհային պատերազմի ուզանաճակատներում՝ պայքար մղելով ֆաշիզմի դեմ, իսկ հայ ժողովրդի տոնացույցից փորձ էր արվում հանել այդ հիշարժան օրը: Հասկանալի է, որ այն պետք է վերականգնվեր տոնացույցի համակարգում, ինչը և տեղի ունեցավ հետագայում: Վերականգնվեց նաև Մարտի 8-ի տոնակատարությունը:

ներից է նաև այն, որ պետությունը չի ցուցաբերում համապատասխան *քաղաքական կամք*⁵³ նպատակն ունեցող քաղաքական արժեքների արմատավորման համար: Համաշխարհային պատմությունը ևս պարզաբան է, որ միայն այն երկրներն են հասնում սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակի, և այն երկրներում է բարձրանում բնակչության կենսամակարդակը, ու արտագաղթը փոխարինվում ծավալում և զանգվածային ներգաղթով (իսկ մեր օրինակով՝ հայրենադարձությամբ), որտեղ պետության բոլոր մակարդակների մարմինները հետևողականորեն դրսևորում են քաղաքական կամք՝ ապահովելու իրավական և արդարացի սոցիալական սկզբունքների գերակայությունը երկրում: Հայաստանում այդ խնդիրը ամենախրատապն ու կարևորագույնն է:

Կարելի է ևս մի քանի ոչ պակաս կարևոր եզրահանգումներ կատարել, սակայն վերը շարադրած՝ համակարգային բնույթ կրող եզրահանգումները բավական են հասկանալու, որ պետությունը մեզանում որդեգրեց քաղաքականություն, որը, ի քիվս գոյություն ունեցող ամբարեմալաստ *օբյեկտիվ* գործոնների, առաջացրեց նաև *սուբյեկտիվ* բնույթի, առ այսօր չհաղթահարված խոչընդոտներ, որոնք բացասաբար անդրադարձան երկրի, բնակչության, այդ թվում նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների հիմնական զանգվածների զարգացման գործընթացների վրա, խոչընդոտներ, որոնք դանդաղեցնում և բարդացնում են քաղաքացիական հասարակության կայացումը:

Վերոհիշյալ համատեքստում են սույն գրքում դիտարկվելու ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները և նրանց զարգացման առանձնահատկությունները:

⁵³ Հակառակ ջանքերը, ցավոք, հաճախ են ներդրվել մեզանում:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և էթնոմշակութային զարգացման արդի գործընթացներն ու միտումները

2000թ. հրատարակված «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր» առաջին գրքում բնութագրված էին հինգ ազգային փոքրամասնություններ՝ եզդիները, եզդի քրդերը, ռուսները, հույները և ասորիները: Սույն գլխում բնութագրվում են հանրապետությունում բնակվող մյուս ազգային փոքրամասնությունները՝ ուկրաինացիները, վրացիները, բելառուսները, գերմանացիները, հրեաները և լեհերը: Առաջին գրքում յուրաքանչյուր ազգային փոքրամասնության բնութագրությունը տրված է երեք տարբեր գլուխներում.¹ առաջինում դիտարկվում են նրանց ժողովրդագրական, երկրորդում՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-մասնագիտական, երրորդում՝ էթնոմշակութային տեսանկյունները: Նման բաժանումն ընթերցողի համար փոքր-ինչ յժվարություն է ստեղծել՝ ամբողջական պատկերացում կազմելու այս կամ այն ազգային փոքրամասնության մասին:

Ելնելով այս հանգամանքից՝ սույն գլխում յուրաքանչյուր ազգային

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I.

«ԵՐԿՐՈՐԴ. ԳԼՈՒԽ. ՀՀ ազգային փոքրամասնությունների արդի էթնոմշակութային զարգացման գործընթացներ: Եզդիներ, եզդի քրդեր, էջ 24-37: Ռուսներ, էջ 37-44: Հույներ, էջ 44-50: Ասորիներ, էջ 50-54:

ԵՐՐՈՐԴ. ԳԼՈՒԽ. ՀՀ ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական զարգացման արդի միտումներ: Եզդիներ, եզդի քրդեր, էջ 61-73: Ռուսներ, էջ 73-81: Հույներ, էջ 81-91: Ասորիներ, էջ 91-95:

ՉՈՐՐՈՐԴ. ԳԼՈՒԽ. ՀՀ ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային զարգացման արդի միտումներ: Եզդիներ, եզդի քրդեր, էջ 100-112: Ռուսներ, էջ 112-121: Հույներ, էջ 121-128: Ասորիներ, էջ 128-135»:

փոքրամասնությունն ամփոփ բնութագրվում է մեկ միասնական ակնարկում: Ստորև ներկայացվում են այս գրքում հետազոտվող ՀՀ ազգային փոքրամասնությունները ըստ նրանց թվաքանակի նվազման՝ համաձայն ՀՀ 2001թ. մարդահամարի ցուցանիշների:

3.1. Ուկրաինացիներ

ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալներով հանրապետությունում բնակվում էր 1633 ուկրաինացի: Նրանց ժողովրդագրական ցուցանիշներում կարելի է նշել երկու բնորոշ առանձնահատկություն. քաղաքային բնակչությունը բացահայտորեն գերակշռում է՝ կազմելով շուրջ 85% (1386 մարդ): Այնուհայտ է նաև կանանց գերակշռությունը՝ ավելի քան 85% (1393):

Ուկրաինացիները բնակվում են Հայաստանի ողջ տարածքում՝ հատկապես Արևելյանի, Վայքի, Ստեփանավանի, Կապանի, Արմավիրի, Հրազդանի, Չարենցավանի, Էջմիածնի, Սևանի, Ախուրյանի, Արարատի, Մասիսի, Մեղրու, Վարդենիսի շրջաններում և Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Իջևան քաղաքներում:²

Ինչպես տեսնում ենք, ուկրաինացիներն այսօր ցրված են հանրապետության ամբողջ տարածքում: Ամենամեծ հատվածը կենտրոնացված է Երևանում:

Պատմությունից հայտնի է, որ ուկրաինացի առաջին վերաբնակիչները Հայաստանում 1858թ. հիմնադրել են մեկ գյուղ՝ Նիկոլանկա (1938 թ.՝ Կիրով, այժմ՝ Ամրակից):³ Դա տեղի ունեցավ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո, երբ զգալի թվով ռուս բնակչություն, որոնց հետ նաև ուկրաինացիներ, տեղափոխվեցին Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածք:⁴

Ի.Վ. Դոլժենկոն այս կապակցությամբ գրում է, որ Նիկոլանկա գյուղը

² Ռ.Ն. Յավիր, Ուկրաինացիները Հայաստանում. – Հայաստանի ազգությունները, էջ 100; Յու.Բ. Մկրտումյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 4, 2002, Հ.Գ. Մարգարյան, տետր 3, 2001:

³ Այն գտնվում է ներկայիս Ստեփանավան քաղաքից 4 կմ հեռավորության վրա: Սբ. Նիկոլայի պաշտամունքը ուկրաինացիների մեջ տարածված էր և այսօր էլ տարածված է, ռուսի պատահական չէ, որ նրանց կողմից հիմնադրված բնակավայրը անվանվեց սբի անունով՝ Նիկոլանկա: Նշենք նաև, որ շուրջ չորս տասնամյակ անց՝ 1890-ական թվականներին վերջերին, նրանք գյուղում կառուցեցին եկեղեցի, որը նույնպես կոչեցին Սբ. Նիկոլայի անունով:

⁴ И.В. Долженко, История переселений и основание русских селений в Закавказье. – Русские старожилы Закавказья, М., 1995, с. 22-38.

հիմնադրել են Պոլտավայի, Չեռնիգովի և Խարկովի նահանգներից գաղ-
թած «մարտուսական» կազակները:⁵

Հայաստանի ուկրաինացիների «Ուկրաինա» ֆեդերացիայի նախա-
գահ Ռ.Ն. Յավլյորն իր հողվածում նշում է, որ 1858թ. գարնանը ուկրաի-
նական 26 ընտանիք (157 մարդ), որոնք սկզբում բնակություն էին հաս-
տատել Վրաստանում, տեղափոխվեցին Հայաստան: Երկու տարի անց
նրանց միացավ ևս 15 ընտանիք Բակուրիանիից:⁶

XIXդ. երկրորդ կեսից Հայաստանի տարածքում աստիճանաբար
ստվարանում է ուկրաինացիների թիվը: Սակայն 1873 և 1886թթ. բնակ-
չության հաշվառումների ժամանակ ուկրաինացիներին գրանցել էին
«ռուսներ» անվան տակ: Ուկրաինացիների վերաբերյալ վիճակագրա-
կան տվյալներ հանդիպում ենք 1897թ. մարդահամարի ցուցանիշներում:
Կատարված հաշվարկները ցույց տվեցին, որ այդ ժամանակ Հայաստա-
նում բնակվում էր 1853 ուկրաինացի:⁷

XXդ. սկզբներին ուկրաինացիների վերաբերյալ ամբողջական տվյալ-
ներ չկան: 1908 և 1914թթ. հաշվառումները բերել են, իսկ 1922թ. գյուղա-
տնտեսական մարդահամարի ժամանակ գրանցվել է ուկրաինացիների
ընդամենը 94 ծովա (շուրջ 500 մարդ):

Ստորև բերվող աղյուսակն արտացոլում է ՀՀ ներկայիս տարածքում
բնակվող ուկրաինացիների թվաքանակի պատմական շարժընթացը
XXդ.:

Ինչպես երևում է աղյուսակից, ուկրաինացիների թիվը հաստատում
աճ է ունեցել 1926-1979թթ., որը կազմել է 6074 մարդ (տարեկան միջին
հաշվով 115 մարդ) կամ 31,7%: 1959-1979թթ. աճի բայժը տեմպերը հիմ-
նականում պայմանավորված էին աշխատուժի ներհոսքով: 1989թ.,
1979թ. համեմատ, ուկրաինացիների թվաքանակը նվազել է 559-ով, իսկ
1970թ. համեմատ՝ 49 մարդով:

2001թ. մարդահամարի արդյունքները ցույց են տալիս, որ ուկրաինա-
ցիների թիվը 1989թ. մարդահամարից հետո նվազել է ավելի քան 5 ան-
գամ, ընդ որում, տղամարդկանց թիվը նվազել է շուրջ 16, կանանցը՝ 3,2

⁵ *И.В. Далженко*, նշվ. աշխ., էջ 23:

⁶ *Ռ.Ն. Յավլյոր*, նշվ. աշխ., էջ 97:

⁷ Первая всеобщая перепись населения Российской Империи 1897г. – Эриванская губерния, СПб., 1905, с. 52-53; Елисаветпольская губерния, СПб., 1904, с. 62-63; Тифлисская губерния, СПб., 1905, с. 76-78.

անգամ, քաղաքային բնակչությունը նվազել է 5,5, իսկ գյուղականը՝ 3 անգամ:

Աղյուսակ 1. Ուկրաինացիների թվաքանակի շարժընթացն ըստ 1926-2001թթ. մարդահամարների տվյալների.⁸

Տարե- թիվ	Ընդա- մենը	Տղա- մարդ	%	Կին	%	Քաղաք. բնակ.	%	Գյուղ. բնակ.	%
1926	2826	2337	83,2	489	16,8	2184	77,8	642	22,2
1959	5593	2286	40,7	3307	59,3	4810	85,8	783	14,2
1970	8390	4813	58,0	3577	42,0	7360	88,6	1030	11,4
1979	8900	4018	45,0	4882	55,0	7244	81,3	1656	18,7
1989	8341	3772	45,4	4569	54,6	7604	91,5	737	8,5
2001	1633	240	13,2	1393	86,8	1386	86,2	247	13,8

Աղյուսակ 2-ում ներկայացված է Հայաստանում բնակվող ուկրաինացիների թվի շարժընթացը XXդ. վերջին երեք մարդահամարների արդյունքներում՝ ըստ մարզերի.

Աղյուսակից երևում է, որ ընդհանուր առմամբ բոլոր մարզերում, բացառությամբ Արարատի և ք. Երևանի, ուկրաինացիների թիվը նվազել է. 1970թ. Երևանում երկու անգամ քիչ ուկրաինացիներ էին բնակվում, քան մնացյալ մարզերում միասին վերցրած, 1979թ.՝ 1,6, իսկ 1989թ.՝ 1,1 անգամ: Արարատյան դաշտի բնակավայրերում (ներառյալ ք. Երևանը) նշված երկու մարդահամարների արդյունքներով ավելի շատ ուկրաինացիներ էին ապրում, քան մյուս բոլոր մարզերում. 1979-ին՝ 700 մարդով, իսկ 1989թ.՝ 1,5 անգամ ավելի: 1970-1989թթ. Արարատյան դաշտի բնակավայրերի ուկրաինացիների թիվն ավելացել է 1440 մարդով կամ 1,3 անգամ, իսկ մյուս մարզերում նվազել է 1489 մարդով կամ 1,5 անգամ:

⁸ Աղյուսակները կազմելիս օգտվել ենք. Население Закавказья. Всесоюзная перепись населения 1926г. Краткие итоги. Тифлис, 1928, Таблица V, с. 8; Итоги Всесоюзной переписи населения 1959г. по Армянской ССР, М., 1963, с. 220-222; 1989թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Եր., 1991, էջ 99-102; ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

Հետաքրքիր է, որ եթե Արարատի մարզում 19 տարվա ընթացքում ուկրաինացիների քիվն աճել էր 1,8 անգամ, իսկ Երևանում՝ 1,4, ապա Լոռու մարզում այն նվազել էր 2,2 անգամ, Վայոց Ձորում՝ 3,4, Գեղարքունիքում՝ 2, Սյունիքում՝ 1,7 անգամ:

**Աղյուսակ 2. Ուկրաինացիների քվաքանակի Հայկական ԽՍՀ-ում
շարժընթացը 1970-1989թթ. ըստ Երևանի քաղաքի
և ՀՀ ներկա մարզերի**

Վարչատարածքային միավոր	1970թ.	1979թ.	Աճը 1979թ., 1970թ. համեմատ	1989թ.	Աճը 1989թ., 1979թ. համեմատ
1. ք. Երևան	2634	3388	754	3812	424
2. Արարատի մարզ	434	573	139	796	223
3. Արմավիրի մարզ	932	844	-88	832	-12
4. Արագածոտնի մարզ	103	103	0	61	-42
5. Գեղարքունիքի մարզ	431	255	-176	209	-46
6. Լոռու մարզ	1148	894	-254	511	-383
7. Կոտայքի մարզ	644	631	-13	529	-102
8. Շիրակի մարզ	1116	1597	481	1051	-546
9. Սյունիքի մարզ	603	380	-223	337	-43
10. Վայոց Ձորի մարզ	199	41	-158	58	17
11. Տավուշի մարզ	146	194	48	145	-49
Ընդամենը	8390	8900	510	8341	-559

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ուկրաինացիների քիվը խորհրդային տարիներին հիմնականում աճել է, հատկապես ներհոսքի հաշվին, բնական աճը փոքր էր: Ուկրաինացիների քիվը սկսեց պակասել 1988թ. ադետալի երկրաշարժից հետո: Ռ.Ն. Յավիրը գրում է. «Ուսումնասիրված տվյալների համաձայն՝ երկրաշարժի գոտում մնացել է այդ շրջանում մախկնում ապրող ուկրաինացիների 30 տոկոսը»:⁹

Արտագաղթը շարունակվեց նաև անկախության տարիներին, հատ-

⁹ Ռ.Ն. Յավիր, նշվ. աշխ., էջ 101:

կապես 1990-ականների առաջին կեսին: Ուկրաինացիների արտագաղթի պատճառները շատ են: Նշենք, որ դրանք ունեն իրենց օբյեկտիվ ու սուբյեկտիվ հիմնավորումը, բայց բնավ կապված չեն հարկադիր մեկնման հետ, - իմչպես գրում է մաս Ռ.Ն. Յավիրը¹⁰:

Հետազոտության ընթացքում հեղինակների կողմից գրառած նյութերը ցույց են տալիս, որ 1990-ականների սկզբներին, զանգվածային արտագաղթի ժամանակ, Հայաստանից առաջին հերթին հեռացել է մենեթնիկ ուկրաինական ընտանիքների մեծ մասը, հետագայում մաս երկէթնիկ ընտանիքների որոշ մասը՝ հատկապես երիտասարդները: Ընտանիքների գերակշռող մեծամասնությունը մեկնել է անվերադարձ, իսկ որոշ մասը՝ վերադառնալու ակնկալիքներով:

Ուկրաինացիների մեջ անցկացված էթնոսոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ 37%-ը արտագաղթել են գործազրկության, 33%-ը՝ նյութական ծանր պայմանների, 12%-ը՝ հեռանկարի անորոշության, 11%-ը՝ հարազատներին մոտ լինելու, 7%-ը՝ սոցիալական և իրավական անպաշտպանվածության պատճառներով:¹¹

Ստացված արդյունքներից հետևում է, որ ուկրաինացիների տեղաշարժերն առաջին հերթին պայմանավորված են հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով: Բացի անվերադարձ տեղաշարժերից, Հայաստանում բնակվող ուկրաինացիները մեկնում են մաս արտագնա աշխատանքի: Արտագնացությունը իրականացվել է և այսօր էլ իրականացվում է երկու ձևով. անհատական և խմբային, ընդ որում՝ երկրադրյի դեպքում կարևոր դեր են խաղում ազգակցական, ընկերական և հարևանային կապերը: Երկու դեպքում էլ սովորաբար արտագնա աշխատանքի է մեկնում ընտանիքի անդամներից մեկը, որը և ստանձնում է ընտանիքի հոգսերը: Ի դեպ, մեկնում են ոչ միայն մենեթնիկ ուկրաինական ընտանիքների, այլ մաս երկէթնիկ՝ հայ-ուկրաինական ընտանիքների անդամներ: Հատկանշական է, որ ընտանիքով մեկնողները, որպես կանոն, մեկնում են անվերադարձ և դրանց տեսակարար կշիռը մեծ էր ՀՀ ուկրաինացիների մեջ: Իսկ անհատական և խմբային ձևով արտագնա աշխատանքի մեկնողների զգալի մասը 1-2, նույնիսկ 8-10 տարի աշխատելուց հետո վերադառնում է Հայաստան: Այդ ընթացքում

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 101-102:

նրանք համարվում են ժամանակավոր բացակայողներ:

Նյութերը ցույց են տալիս, որ ուկրաինացիների մեծ մասը աշխատանքի է մեկնել Ռուսաստան՝ 62%, Ուկրաինա՝ 25%, եվրոպական երկրների՝ 13%: Նրանց ընտանիքների 42%-ը՝ հաճախակի, իսկ 14%-ը՝ ոչ պարբերաբար ֆինանսական օգնություն է ստացել: Նրանք, ովքեր վերադառնալու ակնկալիքներ ունեն, այն կապում են Հայաստանում տնտեսական վիճակի բարելավման և աշխատանք ու բարձր աշխատավարձ ունենալու հանգամանքի հետ:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի ընդունումը հարուցեց ուկրաինացիների հերթական արտահոսքը, հատկապես՝ մտավորականության շրջանում:¹²

Պետք է նշել, որ «Ռստան» էթնոշակութաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության կողմից անցկացված ուսումնասիրությունների ընթացքում գրանցվել են նաև ներգաղթի փաստեր, քեև արտագաղթի և ներգաղթի ծավալները համեմատելի չեն:

Սույն ծրագրի շրջանակներում 2000-2001թթ. հեղինակները ՀՀ ուկրաինացիների մեջ իրագործեցին անհատական և խմբային հարցումներ, որոնց արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1991-2001թթ. Հայաստան տեղափոխվածները կազմել են ընդամենը 5%: Այդ նույն արդյունքները վկայում են, որ նրանց 50%-ը ներգաղթել է հանրապետություն 1960-1980-ական թվականներին, մնացած մասը՝ հիմնականում 1930-1940-ականներին:¹³ Ընդ որում, հանրապետությունում այսօր բնակվող ուկրաինացիների 52%-ը Հայաստան է տեղափոխվել ամուսնության պատճառով, 32%-ը՝ աշխատանքի, 7%-ը՝ զինվորական ծառայության, 3%-ը՝ ուսման նպատակով: Տեղափոխման այլ պատճառներից նշել են նաև Երկրորդ աշխարհամարտի հետևանքով կատարված տեղահանությունը (եվակուացիան)՝ 6% և 1980-1990-ականներին Ադրբեյջանում տեղի ունեցած հայկական ջարդերը, որոնց հետևանքով Հայաստանում ապաստան գտան հայ-ուկրաինական խառնամուսնական ընտանիքները:

ՀՀ ուկրաինացիների համար բնորոշ է երկեթնիկ (հիմնականում, հայերի հետ) ամուսնությունների համեմատաբար բարձր տեսակարար կշի-

¹² Նույն տեղում, էջ 101:

¹³ Նույն տեղում, էջ 98-102; *Յու.Ի. Մլրտումյան*, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 4, 2002, Հ. Գ. Մարգարյան, տետր 3, 2001:

ըը, որն անշուշտ, արդյունք է համատեղ բնակության, աշխատանքի,¹⁴ ուսման, զինձառայության¹⁵ և այլն:

Հեղինակների կողմից գրառած նյութերը հնարավորություն են ընձեռում ներկայացնել ՀՀ ուկրաինացիների սոցիալ-մասնագիտական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և էթնոմշակութային համակողմանի բնութագրությունը, որը սակայն չի մտնում սույն աշխատանքի հիմնական ճանաչողական խնդիրների մեջ:¹⁶

Որպեսզի սույն ակնարկում հիմնական գծերով ներկայացվի ՀՀ ուկրաինացիների արդի կացությունը և ուրվագծվեն նրանց զարգացման միտումները առաջիկա տարիներին, անհրաժեշտ համարեցինք վերը շարադրածին ավելացնել հետևյալը.

ՀՀ ուկրաինացիների մենէթնիկ ընտանիքների անդամների միջին թիվը կազմում է 3 մարդ, որը ցածր է հանրապետական միջինից: Երկէթնիկ՝ հայ-ուկրաինական ընտանիքների անդամների միջին թիվը հիմնականում համապատասխանում է հանրապետական միջին ցուցանիշներին: Հարցվողների 14%-ը մեկ անձից բաղկացած ընտանիքներից էր, 33%-ը՝ երկու, 37%-ը՝ երեք-չորս, 16%-ը՝ հինգ և ավելի: Սակայն նրանց տարիքային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերարտադրողական տարիքի անձանց տեսակարար կշիռը համեմատաբար ցածր է, իսկ կենսաբաշխակայիններ՝ բարձր, ցուցանիշներ, որոնք առաջիկայում խոչընդոտելու են ՀՀ ուկրաինական բնակչության թվաքանակի բնական աճին:¹⁷

Անդրադառնալով ուկրաինացիների բնութագրման սոցիալ-տնտեսական տեսանկյուններին՝ կարելի է նշել մի շարք առանձնահատկություններ.

Առաջին. կանանց գերակշռությունը, հատկապես գյուղական վայրե-

¹⁴ Հանրահայտ է, որ խորհրդային կարգերի օրոք հայ մասնագետները գործուղվում էին Ուկրաինա, իսկ ուկրաինացի մասնագետները՝ Հայաստան՝ աշխատելու տնտեսության տարբեր ոլորտներում: Հայաստան գործուղված ուկրաինացիների մեծ մասը հիմնականում բնակչություն էր հաստատում Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Կապան, Ալավերդի, Դիլիջան և այլ բաղաբներում:

¹⁵ Հաճախ հայ զինակոչիկները ծառայում էին Ուկրաինայում, իսկ ուկրաինացի զինակոչիկները՝ Հայաստանում:

¹⁶ Սակայն նկատի ունենալով այդ նյութերի բարձր արժեքը՝ դրանց վերլուծությանը հետազոտում կարելի է նվիրել առանձին պատմազգագրական հետազոտություն:

¹⁷ ՀՀ ուկրաինացիների լավագիտակ Ռ.Ն. Յավիրը նույնպես նշում է, որ թոշակառուները մեծ տոկոս են կազմում: Տե՛ս նշվ. աշխ., էջ 100:

րում և այն համգամանքը, որ նրանց մեծ մասը հայ-ուկրաինական ընտանիքների անդամներ էին, և հասկանալի է, որ սեփականաշնորհմանը ու մասնավորեցմանը մասնակցել են ընտանյոք:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ արդյունաբերական ձեռնարկությունների և սպասարկման օբյեկտների սեփականաշնորհմանը մասնակցել է ուկրաինացիների ընդամենը 12%-ը, քանզի սեփականաշնորհման ժամանակ աշխատուժակ ուկրաինացիների մեծ մասը գտնվում էր հարկադիր արձակուրդում (կամ բացակայում էր հանրապետությունից արտագնա աշխատանքի մեկնած լինելու պատճառով): Պետք է նշել, որ գոյություն ունեք մահ տեղեկատվության խիստ պակաս:

Աղետի գոտում բնակվող ուկրաինացիների մեծ մասը երկրաշարժից հետո արտագաղթեց Հայաստանից կամ մտադիր էր արտագաղթելու, ուստի, չցուցաբերեցին տնտեսական գործունեություն ծավալելու և սեփականաշնորհմանը մասնակցելու շահագրգռվածություն:

Տնտեսության ոլորտում առաջացած անբարենպաստ տեղաշարժերն իրենց ազդեցությունն ունեցան մահ բնակչության սոցիալ-մասնագիտական կառուցվածքի վրա: Ինժեներատեխնիկական շերտը ուկրաինացիների մեջ կազմում էր շուրջ 65%, և այսօր հենց այդ հատվածում գործազուրկների թիվը մեծ է, պատճառները կապվում են հիմնականում աշխատատեղերի բացակայության և ձեռնարկությունների մեծ մասի անգործության հետ: Օրինաչափ է, որ հարցվողների 85%-ը նշել է, որ իրենց ընտանիքի նյութական վիճակը վերջին շուրջ մեկուկես տասնամյակում վատթարացել է, միայն 4%-ն է բարելավում ունեցել: Ավելին, 65%-ը նշել է, որ ընտանիքի եկամուտների հիմնական մասը կազմում են նպաստներն ու կենսաթոշակները, զգալի թվով ընտանիքների գոյության միջոցները դեռևս ապահովվում է Ռուսաստան և Ուկրաինա կատարվող արտագնա աշխատանքների հաշվին:¹⁸

Արտագնացության հետևանքով ՀՀ ուկրաինացիներին առավել բնորոշ են երկսերունդ կամ նույնիսկ միասերունդ ընտանիքները (հատկապես մենեքնիկ միջավայրում): Խառն ամուսնությունները լայնորեն տա-

¹⁸ Այդ իսկ պատճառով Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիան մեծ ուշադրություն է դարձնում բարեգործական գործունեությանը (տես *Ռ.Ն. Յավիր*, նշվ. աշխ., էջ 97-103): Պատահական չէ, որ 1997թ. ստեղծված ՀՀ ուկրաինացիների կազմակերպությունը կոչվում էր «Ուկրաինա» բարեգործական հիմնադրամ, էջ 97, դրանով իսկ շեշտվում էր, որ կարևորվում է *բարեգործական* նշանակությունը:

րածված են ուկրաինացիների մեջ, հայ-ուկրաինական ընտանիքների տեսակարար կշիռը գերակայող է, եզակի չեն մասնա-ուկրաինական, բելառուս-ուկրաինական, հրեա-ուկրաինական, ավելի սակավ՝ ուկրաինա-թաթարական, ուկրաինա-բաշկիրական և այլ էթնիկ կառուցվածքի ընտանիքները:

Այս ամենը ցույց է տալիս, որ հանրապետության ուկրաինացիները սերտ միջէթնիկ և միջմշակութային հաղորդակցության ու համագործակցության մեջ են ներառված, ինչը մի կողմից վկայում է հասարակության մեջ նրանց ինտեգրման բարձր մակարդակի, մյուս կողմից՝ ընթացող բազմակողմ ափսոսանքային մասին:

ՀՀ ուկրաինացիների մեջ գերակշռում են ռուսախոսները:¹⁹ Քաղաքներում բնակվող հայ-ուկրաինական խառնամուսնական ընտանիքներում երբեմն տիրապետող նույնպես ռուսերենն է, հատկապես միջին և երիտասարդ սերունդներում: Այս երևույթը բնորոշ է ռուս-ուկրաինական և բելառուս-ուկրաինական խառնագգային ընտանիքներում, ինչը, ի թիվս այլ պատճառների, բացատրվում է խորհրդային կարգերի օրոք ռուսերենի պարտադիր ուսուցմամբ բոլոր ազգային հանրապետություններում: Հատկանշական է, որ նույնիսկ ուկրաինական մենէթնիկ ընտանիքներում տիրապետող խոսակցական լեզուն երբեմն ռուսերենն է: Այս կապակցությամբ հետաքրքիր է Ռ.Ն. Յավիրի այն դիտարկումը, որ Խորհրդային Միությունում կատարվում էր ուկրաինացիների ծուլում ռուսների մեջ, նույնիսկ Հայաստանում,²⁰ որտեղ ուկրաինացիների շուրջ 80%-ը ռուսախոս էր: Այս առումով, ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարների ցուցանիշներում կան բազմաթիվ վկայություններ:

Ըստ 1926, 1959, 1970, 1979թթ. մարդահամարների տվյալների՝ Հայկական ԽՍՀ ուկրաինացիների մեծ մասը ոչ թե ուկրաիներենը, այլ ռուսերենն են համարել մայրենի լեզու:²¹ «Մեր առաջնահերթ խնդիրն է վերականգնել մայրենի լեզվի իմացությունն ուկրաինացիների շրջանում և հայերենին՝ որպես պետական լեզվին տիրապետելը», - ընդգծում է Ռ.Ն.

¹⁹ Տե՛ս մասն *Ռ.Ն. Յավիր*, նշվ. աշխ., էջ 98-101:

²⁰ Նույն տեղում, էջ 102:

²¹ Տե՛ս, Население Закавказья. Всесоюзная перепись населения 1926г. Краткие итоги, Тифлис, 1928, с. 25; Итоги Всесоюзной переписи населения 1959г. по Армянской ССР, М., 1963, с. 102; Итоги Всесоюзной переписи населения 1979г. по Армянской ССР, т. 1, Ер., 1980, с. 214-215; Численность и состав населения СССР по данным Всесоюзной переписи населения 1979г., М., 1984, с. 134-135:

Յավիրը:²² ՀՀ ուկրաինացիների ֆեդերացիան անհրաժեշտ ջանքեր է ներդնում կիրակնօրյա դպրոցի կազմակերպման, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հայթայթման ուղղությամբ, բայց ֆինանսավորման և համապատասխան տարածքների խիստ կարիք է զգում: Այս և այլ հրատապ խնդիրների մասին մանրամասն տե՛ս «Հայաստանի ազգությամբ» հիշատակված գրքում, որը կազմել են հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները:

ՀՀ անկախության օրոք հայաստանաբնակ ուկրաինացիների մեջ մայրենի լեզվի նկատմամբ անմախաղեպ հետաքրքրության և իմացության աճ է արձանագրվել: Հատկանշական է, որ անհամեմատ մեծացել է ոչ միայն հայերենին տիրապետողների, այլ նաև հայերենը մայրենի լեզու համարողների թիվը: Ըստ 2001թ. մարդահամարի՝ վերջիններս կազմում են 17,8%:²³

Հետազոտությունները ցույց տվեցին, որ եթե խորհրդային տարիներին հայաստանաբնակ ուկրաինացիները գրեթե մոռացության էին մատնել իրենց ազգային կրոնածիսական ու տոնական ավանդույթները, ապա ներկայումս բնորոշ է անդրադարձը ազգային-մշակութային արժեքներին՝ երաժշտական մշակույթի գոհարներին, ժողովրդական, պետական և կրոնական տոներին ու ավանդույթներին, ազգային տարազին, ժողովրդական դեկորատիվ-կիրառական արվեստին և այլն: ՀՀ ուկրաինացիների մեջ բավականին կայուն պահպանվում են ազգային ուսեստի ավանդական տարրերը, ինչը յուրովի դրսևորում է նրանց էթնոմշակութային ինքնության պահպանվածության աստիճանը:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայաստանաբնակ ուկրաինացիների գերակշռող մասը ծագումով Արևելյան Ուկրաինայի պատմաազգագրական շրջաններից են, այսինքն նրանք ուղղափառ քրիստոնյաներ են,²⁴ ուստի հաճախում և կրոնածիսական պահանջներն են բավարարում ՀՀ տարածքում գործող ուղղափառ եկեղեցիներում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ուկրաինացիները հաճախ այցելում են նաև հայկական եկեղեցիներ, հատկապես եկեղեցական մեծ

²² *Ռ. Ն. Յավիր*, նշվ. աշխ., էջ 102:

²³ Տե՛ս ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները): Եր., 2003, էջ 362-367:

²⁴ Արևմտյան Ուկրաինայի բնակչության մեջ տարածված է նաև կաթոլիկությունը:

տոներին, որոնցից ամենատարածվածը Ջատկի տոնն է, որն ուկրաինացիներն անվանում են «Վելիկոդեն»: Այդ տոնակատարության համար նրանք պատրաստում են հատուկ քիվածքներ և ուտեստներ, հագնում են ազգային տարազ ու փոխալցելություններ կատարում:

Նոր տարին ուկրաինացիների առավել սիրված տոներից է: Այն նշում են հայոց մեջ ընդունված ավանդույթներով և հացկերությամբ, սակայն պահպանում են նաև ուկրաինացիների մեջ հիմնավորց ժամանակներից ձևավորված սովորույթներ, արարողություններ և ժամանցի ձևեր:

Էթնոմշակութային տեսանկյունից ուկրաինացիների կյանքում կարևոր դեր են կատարում Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիան և նրա կողմից ստեղծված մշակութային կենտրոնը՝ համախմբելով հիմնականում ցրվի բնակվող ուկրաինական բնակչությունը՝ միավորելով համատեղ ջանքերը ազգային արժեքների պահպանման ու տարածման գործում:

Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիայի մասնաճյուղերը գործում են Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Հրազդանում և այլ շրջաններում ու բնակավայրերում. պատմամշակութային հանդիսավոր և զանգվածային միջոցառումներ են կազմակերպվում, այդ թվում երաժշտական փառատոներ, գեղարվեստական ցուցահանդեսներ, գրական ցերեկույթներ, հորելյանական տարաբնույթ հանդիսություններ և այլն: Այս ամենը իրադարձություն է դառնում ոչ միայն ուկրաինական ազգային փոքրամասնության միջավայրում, այլ նաև հանրապետության մշակութային կյանքում՝ մասնակից դարձնելով նաև հայ հասարակության և ազգային այլ փոքրամասնությունների զանգվածներ: Կազմակերպվել և գործում են գեղարվեստական չորս՝ «Դ-վինոչեկ» (Ջանգակ), «Մայլատկո» (Մանչուկ) մանկապատանեկան պարային, «Վերբիչենկա» և «Դ-նիպրո» ուկրաինական ազգային երգի ու պարի համույթները, որոնք արժեքավոր ներդրում ունեն ՀՀ ուկրաինացիների մշակութային կյանքի զարգացման, էթնիկ ինքնագիտակցության բարձրացման, ազգային մշակութային արժեքների պահպանման ու ժառանգման գործում:

ՀՀ ուկրաինացիների ֆեդերացիան ակտիվ աշխատանքներ է ծավալում նաև մայր հայրենիքի՝ Ուկրաինայի հետ բազմաբնույթ և բազմապիսի կապերի ամրապնդման գործում՝ ստանալով ՀՀ-ում Ուկրաինայի դեսպանության աջակցությունը:

Հայաստանի ուկրաինացիների հասարակական-մշակութային կյան-

քում կարևոր դեր է կատարում մահ 1997թ. ուկրաիններեն և հայերեն լեզուներով պարբերաբար հրատարակվող «Дніпро» թերթը, որն անվճար տարածվում է հայաստանաբնակ ուկրաինացիների մեջ բոլոր մարզերում և բնակավայրերում: Թերթի միջոցով տեղեկատվություն է ապահովվում պատմական հայրենիքում և ՀՀ-ում կատարվող կարևորագույն իրադարձությունների, հայ-ուկրաինական պատմական և արդիական հարաբերությունների, արտերկրներում բնակվող ուկրաինական համայնքների, ՀՀ ուկրաինացիների առօրյա և տոնական կյանքի, ՀՀ ուկրաինացիների ֆեդերացիայի գործունեության և այլնի վերաբերյալ:



Վերջին ժամանակներս «Դնիպրո» թերթի խմբագրությունը էջերից մեկը տրամադրում է Հայաստանի Ազգությունների միության կազմի մեջ մտնող այն ազգային փոքրամասնություններին, որոնք դեռևս չունեն իրենց տպագիր մամուլը,²⁵ ինչը ՀՀ ազգային փոքրամասնությունների համագործակցության և համերաշխության վառ օրինակներից է: Երևան և Վանաձոր քաղաքներում ուկրաիններեն լեզվով ռադիոհաղորդումներ են արձակվում:

Ֆեդերացիան կայուն և գործնական կապեր է հաստատել մահ Ուկրաինայում գործող հայկական համայնքների/հետ՝ կազմակերպելով բազմաթիվ միջոցառումներ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ուկրաինայում: Դրանով իսկ մեծ ներդրում է կատարում Հայաստան – Ուկրաինա բազմակողմ միջպետական բարեկամական կապերի ամրապնդման և զարգացման գործում:

Ակնհայտ է, որ այս ամենը բարենպաստ մախաղլյալներ է ստեղծում

²⁵ Ա.Ն. Յավիր, նշվ. աշխ., էջ 102-103:

ՀՀ ուկրաինացիների էթնոմշակութային կյանքը բովանդակալից և ազգանպաստ դարձնելու, հավաքական ուժերը համախմբելու, լեզվամշակութային արժեքները պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև հանրապետության հասարակական-մշակութային կյանքին ներդաշնակորեն ինտեգրվելու գործում:

3.2. Վրացիներ

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող վրացիների մասին գրականության մեջ հավաստի տեղեկություններ կամ ծավալուն ուսումնասիրություններ գոյություն չունեն:²⁶ Նույնիսկ նրանց թվաքանակի մասին հրապարակի վրա ստույգ տվյալներ չկան:²⁷ Իրոք, մինչև 2001թ. ՀՀ մարդահամարի անցկացումը դժվար էր ստույգ թիվ մատնանշել, եթե նկատի ունենանք անկախության տարիներին տեղի ունեցած բնակչության զանգվածային արտագաղթը:

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները հրապարակվեցին 2003թ. վերջերին, ինչպես նշված է վերևում՝ 12 գրքով, սակայն դրանցում վրացիների թվաքանակի վերաբերյալ որևէ տվյալ չկա, քանզի ընդգրկված են 1000 և ավելի թվաքանակ ունեցող ազգությունները: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աջակցության շնորհիվ հնարավոր դարձավ հետազոտության ամբողջացման նպատակով ստանալ նաև տվյալներ մինչև 1000 թվաքանակ ունեցող ազգությունների, այդ թվում նաև վրացիների մասին:²⁸ Ըստ այդ տվյալների, վրացիների թիվը ՀՀ-ում 2001թ. կազմել էր 696 մարդ: Հատկանշական է, որ նրանցից 604-ը քաղաքաբնակ էին, և միայն 92-ը՝ գյուղաբնակ: ՀՀ վրացիներին բնութագրական մյուս ժողովրդագրական ցուցանիշը վկայում է, որ ըստ սեռային կազմի այսպիսի պատկեր ունենք. 461 կին, 235 տղամարդ, այսինքն, ամբողջ

²⁶ Բացառություն է կազմում «Ժվերիա» ՀՀ վրացական համայնքի նախագահ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, **Թ.Լ. Ասաթիանու** չավազանց բովանդակալից ակնարկը («Վրացական համայնքը», տե՛ս Հայաստանի ազգությունները, էջ 44-47):

²⁷ **Թ.Լ. Ասաթիանի**, նշվ. աշխ., էջ 44 («Ամբողջ Հայաստանում վրացիների լրիվ թիվը դեռևս պարզված չէ»); **Գառնիկ Ասատրյան, Վիկտորիա Առաքելովա**, Հայաստանի ազգային փոքրամասնությունները, Եր., 2002, էջ 18. Վրացիների «թվաքանակը չնչին է (համայնքը կազմում է ոչ ավելի քան հարյուր մարդ)», - գրում են հեղինակները:

²⁸ Օգտվելով առիթից, հեղինակային խումբը իր խորին երախտագիտությունն է հայտնում ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի ղեկավարությանը արժեքավոր տվյալներ տրամադրելու համար:

վրաց բնակչության մեջ կանայք կազմում են 66%, իսկ տղամարդիկ՝ 34%: Այս հանգամանքը էական ազդեցություն է թողնում ՀՀ վրացիների ժողովրդագրական, սոցիալական և էթնոմշակութային զարգացման գործընթացների վրա, որոնց ստորև կանդիդատնանք:

Վերոհիշյալ առումով ուշագրավ է արժեքավոր է ակադեմիկոս Թ.Լ. Ասաթիանու հիշատակված ակնարկը: Սույն գրքի հեղինակների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները նույնպես վկայում են, որ ՀՀ վրացիների մեծագույն մասն ապրում է Երևան քաղաքում, ինչպես նաև Լոռու մարզի քաղաքներում (հատկապես Վանաձորում) և բազմաթիվ գյուղական բնակավայրերում:

«Հայաստանում ապրող վրացիները, - գրում է Թ. Ասաթիանին, - սակավ բացառությամբ, հայ տղամարդկանց հետ ամուսնացած կանայք են», իսկ վրացի տղամարդկանց մեծ մասը, տարբեր ժամանակներում «աշխատանքի էին գործուղվել Երևան (և այլ քաղաքներ – Յու. Մ.), կամ էլ կրթություն ստանալով Երևանում, մնացել էին աշխատելու՝ ընտանիք կազմելով Հայաստանում»,²⁹ հիմնականում ամուսնանալով հայուհիների հետ:³⁰

Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում վրացական բնակավայրեր չեն եղել: Դա է պատճառը, որ մեկնեքիկ վրացական ընտանիքների տեսակարար կշիռը փոքր է, գերակշռում են հայ-վրացական (երբ ամուսինը հայ է) և վրաց-հայկական (երբ ամուսինը վրացի է) խառն ազգային կազմ ունեցող ընտանիքները, որտեղ ծնված և դաստիարակված անձանց բնորոշ է երկեքիկ ինքնագիտակցություն:

Չխորանալով պատմական հեռավոր դարաշրջանների իրողությունների մեջ,³¹ տարբեր սկզբնաղբյուրների համեմատական ուսումնասիրության հիման վրա հնարավոր դարձավ բացահայտել վրացիների թվաքանակի պատմական շարժընթացը վերջին հարյուրամյակում ՀՀ արդի տարածքի սահմաններում:

²⁹ Թ.Լ. Ասաթիանի, նշվ. աշխ., էջ 44:

³⁰ Յու.Ի. Մկրտումյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 3, 2001, էջ 14-15:

³¹ Ինչպես մենք նշել ենք վերևում, սույն աշխատության ճանաչողական խնդիրները գերազանցապես կապված են ժամանակակից իրողությունների հետ: Ավելի վաղ շրջանի տվյալների ուսումնասիրությունը դուրս է սույն գրքի նպատակներից և կարող է առանձին հետազոտության առարկա դառնալ:

**ՀՀ-ում բնակվող վրացիների քվաքանակի
շարժմբացը 1897-2001թթ.³²**

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
514	274	816	1439	1314	1364	696

Գոյություն ունի տեսակետ, ըստ որի 1990-ական – 2001 քվականների ընթացքում Հայաստանից վրացիների արտագաղթ տեղի չի ունեցել:³³ Սակայն, բերված վիճակագրական հավաստի տվյալները ցույց են տալիս, որ վրաց բնակչության քվաքանակը 2001թ. զրեթե երկու անգամ նվազել է 1970, 1979 և 1989թթ. համեմատությամբ: Հասկանալի է, որ վրաց բնակչության մի մասի արտագաղթը բացատրվում է ՀՀ-ում անկախության տարիներին առաջացած իրողություններով, որոնք մանրամասն դիտարկվել են սույն աշխատության երկրորդ գլխում:

Անդրադառնալով ալդի վրաց բնակչության սոցիալ-մասնագիտական, երնոմշակութային և ժողովրդագրական բնութագրմանը, հարկ ենք համարում նշել, որ նրանց մեծ մասը տիրապետում է վրացերենին և ունի բարձրագույն կրթություն, այսինքն մտավորականության ներկայացուցիչներ են:³⁴

Հանրահայտ է, որ նրանց գերակշռող մասը կազմում են ինժեներները, ուսուցիչները, բժիշկները, գիտնականները, և հատկապես, երաժիշտները: Վրաց ժողովուրդը աշխարհին հայտնի է իր բարձրագույն երաժշտական մշակությով, և օրինաչափ է, որ մեծ թվով վրացիներ սովորել են Երևանի պետական կոնսերվատորիայում, դասավանդել են Հայաստանի երաժշտական ուսումնական հաստատություններում: Թ. Ասաբիանին գրում է, որ բարձրորակ մասնագետների շուրջ 15%-ը կազմում են երաժիշտները:³⁵ Ազգային երաժշտական մշակույթի ավանդույթների պահպանումը և ժառանգումը առավել բնութագրական է ՀՀ վրաց բնակչության երնոմշակութային զարգացման համար:

1997թ. ՀՀ վրացիների հավաքական ջանքերով ստեղծվեց ««Իվերիա»

³² Տե՛ս սույն գլխի 4-10 ծանոթագրությունները:

³³ Թ.Լ. Ասաբիանի, նշվ. աշխ., էջ 44; Գառնիկ Ասատրյան, Վիկտորիա Առաքելովա, նշվ. աշխ., էջ 18:

³⁴ Թ.Լ. Ասաբիանի, նշվ. աշխ., էջ 44; Գառնիկ Ասատրյան, Վիկտորիա Առաքելովա, նշվ. աշխ., էջ 18; Յու.Բ. Մկրտումյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 1, էջ 20-22:

³⁵ Նույն տեղում:

վրացական համայնք» բարեգործական հասարակական կազմակերպություն, որի գործունեության նպատակներն ու խնդիրները միտված են ՀՀ-ում վրացական համայնքի ամրապնդմանն ու զարգացմանը, վրացերենի ուսուցման կազմակերպմանն ու վրացական մշակութային կենտրոնի ստեղծմանը, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման, Հայաստանի և Վրաստանի միջև բազմակողմանի տնտեսական, գիտական ու մշակութային համագործակցությանը նպաստելուն, այլ երկրների վրացական համայնքների հետ կապերի հաստատմանն ու ամրապնդմանը և այլն:³⁶

Կազմակերպության կարևորագույն խնդիրներից է հայաստանաբնակ վրացիների սոցիալական, մարդասիրական օգնության կազմակերպումը, նյութական և բարոյական աջակցության ասպահովումը: Գործունեության այդ ոլորտը չափազանց կարևոր է, հատկապես եթե նկատի ունենանք երկու հանգամանք: Առաջին. հանրապետությունում գոյություն ունեցող տևական և խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամը, բնակչության ծայրահեղ աղքատացումը և գործազրկության տարածվածությունը, երկրորդ. վրացական համայնքի անդամների շուրջ 40%-ը կենսաթոշակառուներ են, որոնք նյութական օգնության կարիք են զգում:³⁷

Հատկանշական է, որ վրացական համայնքը մարդասիրական օգնություն է ցույց տալիս մաս հայ բնակչությանը, հատկապես Սպիտակի աղետալի երկրաշարժից և Ղարաբաղյան հակամարտությունից տուժածներին:³⁸

Վրացական համայնքը մշակութային բազմաթիվ միջոցառումներ է կազմակերպում՝ գրական-երաժշտական երեկոներ, ցուցահանդեսներ, հայ և վրաց ժողովուրդների մշակույթի և պետության ականափոր գործիչներին նվիրված հոբելյանական հանդիսություններ ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում, մասնակից դարձնելով տարբեր սերունդների ներկայացուցիչներին, այդ թվում՝ դպրոցականներին, ուսանողներին, հասարակության լայն զանգվածներին, ուղևորություններ կազմակերպում դեպի Վրաստան, այցելելով տեսարժան վայրեր, մշակութային օջախներ, հանդիպումներ կազմակերպում Վրաստանի պետական

ատյաններում (խորհրդարանում, կառավարությունում, տարբեր մախարայություններում) և հասարակական կազմակերպությունների, այդ թվում մաս Վրաստանի Ազգությունների միության անդամ հայկական համայնքների հետ: Միջոցառումները լայնորեն լուսաբանվում են Վրաստանի ԶԼՄ-ներում:

ՀՀ-ում կանոնավոր գործում է վրացական կիրակնօրյա դպրոցը, որտեղ դասավանդվում է վրացերենը, վրացական երգն ու պարը, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ու համագործակցության պատմության հիշարժան դրվագները: Դպրոց են հաճախում տարբեր տարիքի (6-18 տարեկան) շուրջ երկու տասնյակ մախ, հաճախ մաս խառն ազգային ընտանիքներից:

ՀՀ վրացիների համախմբման, էթնոմշակութային ինքնության պահպանման գործում կարևոր դերակատարություն ունի 2004թ. հոկտեմբերից լույս ընծայվող «Իվերիա» թերթը, որը տպագրվում է ռուսերեն և վրացերեն լեզուներով: Այն լուսաբանում է ՀՀ և արտերկրների վրացական համայնքների ներքին կյանքը, կարևորագույն իրադարձությունները Հայաստան – Վրաստան միջպետական հարաբերություններում, տեղեկատվական նյութեր է զետեղում վրացական ազգային-մշակութային արժեքավոր ավանդույթների մասին և այլն:



ივერია

№ 2

ԻՎԵՐԻԱ ♦ ИВЕРИЯ

Октябрь 2004

ГАЗЕТА ГРУЗИНСКОЙ БЛАГОТВОРИТЕЛЬНОЙ ОБЩИНЫ «ИВЕРИЯ» В РА



Теплый солнечный октябрь особенно любим ереванцами. И есть за что. ДЕНЬ УЧИТЕЛЯ, ДЕНЬ ПЕРЕВОДЧИКА, ПРАЗДНИК ЗРЕБУНИ И НАШ ДОРОГОЙ ТБИЛИСОБ. Поэтому поэ-

Վրացիները պատկանում են քարթվելյան էթնոլեզվաընտանիքին,³⁹ բաղկացած են շուրջ երկու տասնյակ էթնոտարածքային և ենթաէթնիկ խմբերից ու հանրություններից: Իրականացված հետազոտության ընթացքում հնարավոր եղավ բացահայտել, որ Հայաստան ներգաղթած

³⁹ Տարիներ առաջ տիրապետող էր այն տեսությունը, համաձայն որի վրացերենը և վրաց ժողովուրդը դասվում էր «կովկասյան» կամ «փրերո-կովկասյան» էթնոլեզվաընտանիքին, սակայն նորագույն ուսումնասիրությունները հիմք են տալիս առանձնացնելու նրանց որպես ուրույն քարթվելյան (քարթվելական) էթնոլեզվաընտանիք:

վրացիների մեջ գերակշռում են քայրիվները, կախերցիները և իմերեթցիները: Նրանք պահպանում են ազգային մշակույթի բնորոշ գծերը և առանձնահատկությունները՝ ընտանեկան սովորույթները, տոնածիսական ավանդույթները, ինչպես նաև ազգային ուտեստի առավել տարածված տարրերը, ազգային երաժշտական արժեքները՝ ներառելով իրենց կենցաղում, առօրյա և տոնածիսական կյանքում հայկական ազգային մշակույթի շատ տարրեր:

Միջմշակութային փոխազդեցությունների և փոխառությունների արդյունքում, այսօր հայոց մեջ ևս տարածում են գտել վրացական ծագում ունեցող արժեքներ: Հետաքրքիր է, որ հայ-վրացական ընտանիքներում երեխաներին տրվում են և՛ հայկական և՛ վրացական անուններ: Վրացական անուններից առավել տարածված են Մանանա, Քեթևան, Նանուլի, Մակվալա, Նանա, Վախթանգ, Կոտե, Գոգի, Ավթանդիլ և այլ:

Վերջին մեկուկես տասնամյակում, ինչպես հանրապետության ամբողջ բնակչության, այնպես էլ հայաստանաբնակ վրացիների մեջ նկատելի է կրոնական գիտակցության ու զգացմունքների աճ և կրոնական, եկեղեցական ծիսակատարություններին մասնակցելու ցանկություն: Սակայն, քանզի Հայաստանում չկան վրացական ուղղափառ եկեղեցիներ, ապա դեռևս 1986թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի և Ամենայն Վրաց կաթողիկոս-պատրիարք Իլյա II-ի միջև համաձայնություն է ձեռք բերվել Երևանի Նորազավիթ քաղամասի վերանորոգված հայկական եկեղեցիներից մեկը հատկացնելու Հայկական ԽՍՀ վրացական համայնքին: Վեհափառ Հայրապետների համաձայնության իրագործումը առավել ամրապնդեց երկու դրկից ժողովուրդների դարավոր բարեկամությունը:⁴⁰

Այսօր ՀՀ վրացիները պարբերաբար հաճախում են այդ եկեղեցին՝ սովորաբար կիրակնօրյա ժամերգության, ինչպես նաև պատեհ առիթով՝ ժողովրդական և եկեղեցական տոներին, կնունքի, պսակադրության և այլ արարողություններին:

«Իվերիա» վրացական համայնքի գործունեությունը նպաստում է հայաստանաբնակ վրացիների էթնոմշակութային ինքնության պահպանման և հանրապետության հասարակական-մշակութային կյանքի ոլորտներում ինտեգրման ընթացքի վրա:

⁴⁰ *Յու.Ի. Մկրտումյան*, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 4, 2001, էջ 32-35:

3.3. Բելառուսներ^{*}

Ըստ 2001թ. ՀՀ տարածքում անցկացված մարդահամարի ցուցանիշների, բելառուսների թիվը կազմում էր 257 մարդ:⁴¹ Որպեսզի հստակ պատկերացում կազմենք ՀՀ ներկայիս սահմաններում վերջին հարյուրամյակում բնակվող բելառուսների թվաքանակի շարժընթացի մասին, ստորև ներկայացվում է համապատասխան աղյուսակ.

**ՀՀ-ում բնակվող բելառուսների թվաքանակի
շարժընթացը 1897-2001թթ.⁴²**

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
103	360	-	1179	1183	1061	257

Մինչև 1897թ. Հայաստանի տարածքում նույնպես բնակվել են բելառուսներ: Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ առաջին բելառուս վերաբնակիչները Հայաստանում հաստատվել են XIX դ. առաջին կեսին, սակայն հրատարակված վիճակագրական և այլ աղբյուրներում բոլոր երեք արևելասլավոնական (ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ) ժողովուրդների ներկայացուցիչները գրանցվում էին *ռուսներ* անվան տակ:

Միայն 1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարի ժամանակ բելառուսները առանձնացվել էին, ուստի, ինչպես տեսնում ենք աղյուսակից, նրանց թիվը մենք չի եղել, ընդամենը՝ 103 մարդ, մինչդեռ ռուսները կազմում էին 25.014, իսկ ուկրաինացիները՝ 1.853 մարդ:

Բելառուսների թվաքանակի կայուն աճ արձանագրվել է հիմնականում խորհրդային շրջանում, երբ պայմանավորված արդյունաբերության զարգացման, հանրապետությունում նոր արտադրական ձեռնարկությունների ստեղծման գործընթացներով, ինչպես նաև խառնամուսական (հիմնականում հայ-բելառուսական) ընտանիքների թվաքանակի աճով, զգալի թվով բելառուսներ տեղափոխվեցին Հայաստան: Ըստ 1926թ.

^{*} Նախկինում գործածվում էր բելորուսներ երանումը, այժմ՝ բելառուսներ (1991 թվականից):

⁴¹ ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

⁴² Տե՛ս սույն գլխի 4-12 ծանոթագրությունները:

մարդահամարի ցուցանիշների՝ բելառուսների թիվը գրեթե քառապատկվել էր, հասնելով 360-ի, ինչը հիմնականում մեխանիկական աճի, այսինքն, նոր խմբերի ներգաղթի արդյունք էր:⁴³

Հայաստանում բնակվող բելառուսների թվաքանակի աճի միտումը պահպանվեց նաև հաջորդ տասնամյակներում:⁴⁴ Ըստ 1970թ. մարդահամարի արդյունքների՝ Հայաստանում արդեն բնակվում էր 1.179 բելառուս:⁴⁵ Այսինքն, 1926թ. մարդահամարին հաջորդած 44 տարվա ընթացքում բելառուսների թիվն աճել էր ավելի քան երեք անգամ, իսկ տարեկան միջին աճը կազմում էր 1,6%, ինչը բավականին բարձր ցուցանիշ էր և նույնպես պայմանավորված էր հիմնականում մեխանիկական աճով:

1970թ. (1.179 մարդ), 1979թ. (1.183) և 1989թ. (1.061) բելառուսների թվաքանակի մեջ էական փոփոխություններ չեն արձանագրվել:⁴⁶

Այսինքն, խորհրդային շրջանում բելառուս ազգաբնակչության աճ արձանագրվել է հիմնականում 1930-1970-ական թվականներին, իսկ 1980-1990-ականներին արդեն բելառուսների թվաքանակն արտացոլում էր կայունացման միտումներ:

2001թ. մարդահամարի տվյալներն արդեն արձանագրեցին էական փոփոխություններ: Ըստ մարդահամարի արդյունքների՝ բելառուսների թիվը կտրուկ նվազել է՝ կազմելով ընդամենը 257 մարդ, ինչը 1989թ. համապատասխան ցուցանիշից փոքր է 4,1 անգամ:⁴⁷

Բելառուսների թվի նման փոփոխությունը արդյունք է առաջին հերթին 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների. ավերիչ երկրաշարժ, Արցախյան պատերազմ, շրջափակում, հանրապետության անկախացմանը հաջորդած սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամ, բնակչության զանգվածային աղքատացում ու կենսամակարդակի կտրուկ անկում և այլն,⁴⁸ որոնցից զերծ չմնացին նաև Հայաստանում բնակվող բելառուսները: Բնական է, որ այսպիսի պայմաններում հանրապետությունում բնակվող

⁴³ Всесоюзная перепись населения 1926г. Краткая история, Тифлис, 1928, Таблица 5, с. 8.

⁴⁴ Итоги Всесоюзной переписи населения 1989г. по Армянской ССР, М., 1989, с. 9.

⁴⁵ Итоги Всесоюзной переписи населения 1970г. Национальный состав населения СССР, М., 1973, с. 303.

⁴⁶ Итоги Всесоюзной переписи населения 1989г. по Армянской ССР, М., 1989, с. 9.

⁴⁷ ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

⁴⁸ Սույն գրքի նախորդ բաժիններում այս իրադարձությունները և դրանց հետևանքները հանգամանորեն դիտարկված են:

բելառուսների մեծ մասը, ինչպես մենեթնիկ, այնպես էլ խառնամուսնական ընտանիքներից, մախընտրում էր արտագաղթել, հիմնականում դեպի պատմական հայրենիք՝ նորանկախ Բելառուսի Հանրապետություն և Ռուսաստանի Դաշնություն:

Անցկացված հետազոտությունը թույլ տվեց պարզել, որ բելառուս ազգաբնակչության արտահոսքի հիմնական ալիքը ձևավորվել է 1990-ականների առաջին կեսերին, սոցիալ-տնտեսական ճգնաժամի ամենածանր տարիներին: Սրանում ոչ երկրորդական դեր խաղաց մաս «Լեզվի մասին» ՀՀ օրենքի արագ կիրարկումը, որը սահմանափակեց հատկապես գրական հայերենին չտիրապետող բելառուսների աշխատանքային առաջխաղացման հնարավորությունները: Հանրապետությունում բարդություններ առաջացան մաս նրանց երեխաների կրթության հարցում:

Կարող ենք որոշակիորեն արձանագրել, որ բելառուսների մեծ մասի արտագաղթը պայմանավորված էր հիմնականում սոցիալ-տնտեսական ճգնաժամով, բայց էական ազդեցություն ունեցան մաս կրթության, սոցիալական շարժունության սահմանափակումները:

Այժմ դիտարկենք բելառուսների հիմնական ժողովրդագրական ցուցանիշները, քաղաքային ու գյուղական բնակչության հարաբերակցությունը, ինչպես մաս վերջիններիս շարժընթացն ու փոփոխության պատճառները անցած հարյուրամյակում:

1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարի արդյունքներով քաղաքաբնակ և գյուղաբնակ բելառուսների թիվը գրեթե հավասար էր, սակայն քաղաքաբնակ կանանց թիվը երկու անգամ գերազանցում էր գյուղաբնակների թվին: Ուշագրավ է, որ բելառուսների կեսից ավելին բնակվում էր Ալեքսանդրապոլի գավառում⁴⁹ (Ալեքսանդրապոլ⁵⁰ քաղաքում՝ 22 մայր, գյուղերում՝ 27): Նման կենտրոնացումը ամենայն հավանականությամբ կապված էր Թիֆլիս-Երևան երկաթուղու շինարարության և սպասարկման հետ, ինչի օգտին խոսում է մաս տղամարդկանց մեծ թիվը. գավառի տարածքում բնակվող 49 բելառուսներից միայն երեքն էր կին:

Ըստ 1926թ. մարդահամարի արդյունքների՝ գյուղաբնակներն արդեն գերազանցում էին քաղաքաբնակներին՝ կազմելով 62%: Երևանում բնակվում էր 23 բելառուս (6 տղամարդ, 17 կին):

⁴⁹ Ներկայիս Շիրակի մարզի տարածք:

⁵⁰ Ներկայիս Գյումրի քաղաքը:

1970թ. Հայաստանում բնակվող 1.179 բելառուսներից 535-ը կամ 45,4%-ը տղամարդ էր, 644-ը կամ 54,6%-ը՝ կին: Փոխվել էր նաև քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը. գյուղերում բնակվում էր ընդամենը 209 մարդ կամ բելառուսների ընդհանուր թվի 17,7%-ը, ինչը 1926թ. համապատասխան ցուցանիշից փոքր էր 3,6 անգամ: Հայաստանաբնակ բելառուսների շուրջ 30%-ը բնակվում էր մայրաքաղաք Երևանում:

Կանանց մեծ թիվը պայմանավորված էր հիմնականում այն հանգամանքով, որ բավականին բարձր էր խառնամուսնական, հատկապես հայ-բելառուսական ընտանիքների տեսակարար կշիռը: 1979թ. արդեն արձանագրվում է տղամարդկանց թվաքանակի նվազում և կանանց թվաքանակի աճ, ինչը, ամենայն հավանականությամբ, դարձյալ արդյունք է հայ-բելառուսական ընտանիքների թվի ավելացման: Կանայք, ըստ այս մարդահամարի տվյալների, կազմում էին բնակչության 64,8, իսկ տղամարդիկ՝ 35,2%-ը: Այսինքն, ընդամենը 10 տարում կանանց տեսակարար կշիռն աճել, տղամարդկանցը՝ համապատասխանաբար նվազել էր 10,2%-ով:

Էական փոփոխությունների էր ենթակվել նաև քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը: 1979թ. քաղաքներում բնակվում էր 1.040 մարդ (355 տղամարդ, 685 կին), կամ հանրապետությունում բնակվող բելառուսների ընդհանուր թվի 87,9%-ը: Ընդ որում, ամբողջ բելառուս բնակչության 35%-ը բնակվում էր Երևանում: Գյուղաբնակ էր ընդամենը 143 բելառուս (61 տղամարդ, 82 կին): Քաղաքային բնակչության տեսակարար կշռի նման աճը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր նաև բավականին լայն տարածում ստացած ուրբանիզացման գործընթացներով, երբ քաղաքներ էին տեղափոխվում ու հաստատվում ոչ միայն բելառուսական, այլ նաև հայ-բելառուսական բազմաթիվ ընտանիքներ:

Բնակչության ժողովրդագրական համանման միտումները պահպանվեցին նաև հետագա տարիներին: Ըստ 1989թ. մարդահամարի տվյալների՝ հանրապետությունում բնակվող 1.061 բելառուսներից 415-ը կամ 39,1%-ը տղամարդ էր, 646-ը կամ 60,9%-ը կին: Ինչպես երևում է, արձանագրվել էր տղամարդկանց թվաքանակի մի փոքր աճ: Քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունն այսպիսին էր. քաղաքներում բնակվում էր 891 մարդ կամ բելառուսների ընդհանուր թվի

83,9%-ը, ընդ որում հանրապետությունում բնակվող բելառուսների մոտավորապես 40%-ը (427 մայր, որից՝ 152 տղամաշտ և 275 կին) ապրում էր Երևան քաղաքում:

Այսօր հանրապետության բելառուսների շուրջ 90%-ը բնակվում է խոշոր քաղաքներում՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան, Աբովյան: Կանանց տեսակարար կշիռը շարունակում է մնալ չափազանց բարձր, ընդ որում մեծամասնություն են կազմում խառնամուսնական՝ հայ-բելառուսական ընտանիքները:

Բելառուսների՝ Հայաստան տեղափոխվելու պատճառների ու աղապտացիայի մասին ուշագրավ նյութեր գրառվեցին նաև հետազոտության ընթացքում, որոնք լրացնում են պաշտոնական վիճակագրական տվյալները:

Ուսումնասիրությունները քույլ տվեցին արձանագրել, որ մինչև հանրապետության անկախացումն⁵¹ այստեղ բնակված բելառուսների որոշ մասը հաստատվել է 1950-ական թվականներին, ընդ որում՝ 36%-ը Հայաստան է տեղափոխվել 1960-ական, 46%-ը՝ 1970-80-ական, իսկ 18%-ը՝ 1990-ականներին: 54%-ի՝ Հայաստան տեղափոխվելու պատճառը եղել է ամուսնությունը: Բելառուսների մյուս մասը՝ շուրջ 36%-ը հանրապետություն է տեղափոխվել աշխատանքի նպատակով: Խորհրդային շրջանում Հայաստանի տարբեր արդյունաբերական ձեռնարկությունների գործարկումը, հատկապես թեթև արդյունաբերության ոլորտում, պատճառ դարձավ, որ դրանցում աշխատանքի անցնելու կապակցությամբ այլ ազգությունների ներկայացուցիչների հետ հանրապետություն տեղափոխվեցին նաև բավականին մեծ թվով բելառուսներ: Նրանց մի մասը եկել էր միութենական ու հանրապետական մամուլում տպագրված հայտարարությունների շնորհիվ, տեղում ստացել միջնակարգ-մասնագիտական կրթություն ու այնուհետև անցել աշխատանքի: Միայն 10%-ը որպես Հայաստան տեղափոխվելու պատճառ նշել է զինվորական ծառայությունը: Ինչպես ամուսնության, այնպես էլ այլ նպատակներով Հայաստան տեղափոխվածների մեջ, բացառությամբ զինվորական ծառայությունից, մեծամասնություն են կազմում կանայք:

Հետաքրքիր է նաև այսօր հանրապետությունում բնակվող բելառուս-

⁵¹ Կատարված հետազոտությունները փաստագրեցին, որ 1991թ. հետո տեղի է ունեցել բելառուսների ոչ միայն արտագաղթ, այլ նաև ոչ մեծ ծավալներով ներգաղթ:

ների միգրացիոն տրամադրությունների վերլուծությունը: Հարցման մասնակիցների 46%-ը հնարավորության դեպքում հանրապետությունից հեռանալու ցանկություն է հայտնել: Տեղում մնալու դիրքորոշում հայտնած ՀՀ բեղառուները խառնամուսանական ընտանիքներից են, և ըստ մեր դիտարկումների, օրգանապես սերտաճել են հանրապետության կյանքի տարբեր ոլորտներին՝ ինչպես կենցաղային, այնպես էլ հասարակական մակարդակներում:⁵²

Ինչպես արդեն նշվեց վերևում, հարցման մասնակից բեղառուների մեջ բավականին բարձր է նաև հանրապետությունից հեռանալու ցանկություն ունեցողների տեսակարար կշիռը, և հիմնական պատճառները բավարար ֆինանսական միջոցների բացակայությունն է, ծանր նյութական պայմանները, գործազրկությունը, իսկ որոշ մասի համար՝ պարզապես հարազատների մոտ ապրելու ցանկությունը: Հեռանալու ցանկություն հայտնածների մեծ մասը նշել է, որ կցանկանար տեղափոխվել Բեյրութի Հանրապետություն կամ Ռուսաստանի Դաշնություն:

1990-ական թվականներին ՀՀ տարածքում բնակվող բեղառուների մեջ լայն տարածում ստացան տնտեսական նպատակներով սեզոնային և կարճաժամկետ այլ տեսակի տեղաշարժերը, որոնք շատ դեպքերում դրսևորեցին անվերադարձ միգրացիայի վերածվելու միտումներ, քանի որ տեղափոխվում են նաև ընտանիքի մնացած անդամները, բարեկամները: Իրագործված հետազոտության ընթացքում պարզվեց, որ ՀՀ բեղառուների միջավայրում գերակշռում են հիմնականում *անհատական, ընտանեկան ու խմբային* տեղաշարժերը: Սակայն տեղափոխվածները կապերը չեն խզում Հայաստանում մնացած ծնողների ու ազգականների հետ՝ պարբերական կամ դիպվածային օգնություն ցուցաբերելով վերջիններին: Օգնության ծավալները մեկ տարվա հաշվարկով տատանվում են մի քանի հարյուրից մինչև 1500 դոլարի սահմաններում և ուղարկվում են հիմնականում կենսական կալիքները հոգալու, ուսանողների ուսման վարձերը վճարելու, այլևայլ աշխատանքներ կազմակերպելու նպատակով: Բայց արտագաղթած բեղառուների այդ հատվածը հիմնականում

⁵² Նման տրամադրություններ ունեցող բեղառուների հետ զրուցելիս հաճախ կարելի էր լսել հետևյալ արտահայտությունը. «Երբևեկս ծնվել եմ այստեղ, մենք ՀՀ քաղաքացիներ ենք, արդեն երկար տարիներ ապրում ենք այստեղ: Ես ինձ հայաստանյան միջավայրում հարագատի պես եմ զգում և տեղափոխվելու մտադրություն չունեմ»: – Դաշտային ազգազրկան նյութեր, 2001թ., տետր 2, էջ 14-15 (պահվում է «Ոստան» էթնոշակութաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության արխիվում):

չունի Հայաստան վերադառնալու ցանկություն, ինչը ընտանիքների մնացած անդամները բացատրում են ՌԴ-ում կամ Բելառուսում սոցիալական շարժունությամբ, բարձր կենսամակարդակ ապահովելու ավելի մեծ հնարավորությունների առկայությամբ:⁵³

Վերջին մեկուկես տասնամյակում ՀՀ-ում տեղի ունեցած փոփոխություններն իրենց ազդեցությունն են բողել մաս բելառուսների միջավայրում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացների վրա:

Մեփականաշնորհման արդյունքում բելառուսների մեծ մասը հայտնվել է գործազրկության կամ հարկադիր պարապուրդի մեջ և հաճախ չի կայողանում ապահովել նույնիսկ գոյության նվազագույն միջոցները: Ծանր է հատկապես թոշակառուների և միայնակ կանանց վիճակը, որոնք չունեն ըստ մասնագիտության աշխատանք գտնելու հնարավորություն, իսկ կենսաթոշակները և նպաստները, ինչպես արդեն նշվել է, չեն բավարարում նույնիսկ ամենատարրական պահանջները: Այս իրադրությունն առաջացել է հատկապես այն պատճառով, որ խորհրդային շրջանում հայաստանաբնակ բելառուսների մեծ մասը ընդգրկված է եղել գերազանցապես տարբեր արդյունաբերական ձեռնարկություններում, որոնց գերակշիռ հատվածն այսօր կա՛ն չի գործում, կա՛ն գործում է մասնակիորեն:

Այսօր ըստ զբաղվածության հիմնական ոլորտների՝ ՀՀ 20 տարեկանից բարձր բելառուսների պատկերն այսպիսին է՝ գործազուրկներն ու կենսաթոշակառուները կազմում են հարցվողների շուրջ 50%-ը, տարբեր արդյունաբերական ձեռնարկություններում ու սպասարկման հիմնարկություններում ընդգրկվածները նույնպես կազմում են շուրջ 50%:

Այսինքն, հայաստանաբնակ բելառուսները, հայերին հավասար, դիմակայում են սոցիալ-տնտեսական ճգնաժամի ծանր հետևանքները և իրենց կենսամակարդակի բարելավումը պայմանավորում Հայաստանում այսօր ընթացող դրական փոփոխություններով:

Գրառած նյութերը հնարավորություն են ընձեռում բնութագրելու մաս ՀՀ բելառուսների կրթական մակարդակը. թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցողները կազմում են հարցման մասնակիցների շուրջ 30%-ը, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները՝ 55%-ը, բարձրագույն կրթություն ունեցողները՝ 15%-ը:

⁵³ Մ.Ռ. Գաբրիելյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, 2001, էջ 8-12:

Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների բարձր տեսակարար կշիռը պայմանավորված է նրանով, որ Հայաստան տեղափոխված բելառուսների զգալի մասը հրավիրված կամ գործուղված է եղել արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում աշխատելու նպատակով:

Հայաստանաբնակ բելառուսների րվաքանակում այսօր կանանց չափազանց բարձր տեսակարար կշիռը պայմանավորում է նաև էքոնոմիկայի տարբեր գործընթացների հիմնական ուղղվածությունն ու ընդհանուր բնութագիրը:

Խառնամուսանական ընտանիքների մեծ մասում որպես հիմնական խոսակցական լեզու հանդես է գալիս հայերենը, չնայած, ինչպես արձանագրվել է հարցումների ընթացքում, զուգահեռաբար բավականին լայնորեն օգտագործվում է նաև ռուսերենը, ինչն արտահայտված է հատկապես Հայաստանից հեռանալու ցանկություն ունեցող ընտանիքների միջավայրում: Նաև սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ Երևանում, Գյումրիում, Վանաձորում բնակվող բելառուսների միջավայրում բավականին բարձր է ռուսական դպրոցներում կամ դասարաններում սովորող երեխաների տեսակարար կշիռը: Որոշակիորեն կարելի է փաստել, որ չափահաս բելառուսական բնակչության միջավայրում բավականին լայն տարածում ունի հայ-ռուսական երկլեզվությունը:

Ուսումնասիրության արդյունքները հանգեցնում են այն եզրակացության, որ Հայաստանում արդեն բավականին երկար ժամանակ բնակվող բելառուսները, խոսակցական հայերենին բավականին ակտիվ յուրացմանը զուգընթաց, կարողացել են հստակացնել իրենց հայկական մշակույթի առտնին և տոնածխական հիմնական արժեքներին: Մյուսմասով, տարբեր ընտանիքներում հաճախակի են նշվում նաև բուն բելառուսական (ինչպես նաև ընդհանուր արևելասլավոնական) ժողովրդական և ուղղափառ-քրիստոնեական բազմաթիվ տոներ, հատկապես Ծննդյան տոները, Չատիկը, նախնիների հիշատակին նվիրված տարբեր ծեսերն ու արարողությունները, Յանկա Կուպալային նվիրված տոնը և այլն: Վերջին տարիներին բավականին ակտիվորեն է նշվում նաև Բելառուսի Անկախության օրը՝ հուլիսի 3-ը:

Հայաստանաբնակ բելառուսների միջավայրում բավականին բարձր է հավատացյալների տեսակարար կշիռը, որոնք հիմնականում հաճախում են Երևան քաղաքի Քանաքեռ քաղամասի ռուսական ուղղափառ եկեղեցին:

Ուտեստի համակարգում ևս հայկականը զուգակցվում է բելառուսականի հետ: Բելառուսները, չնայած հայկական ուտեստի հիմնական տարրերի արագ յուրացմանը, կայուն պահպանում են նաև բելառուսական ուտեստի համալիրի հիմնական տարրերը: Ուտեստում առավել հաճախակի են օգտագործվում կարտոֆիլը, ստուդենը, խոզի մսից տնական երշիկեղենը և այլն: Այսինքն, այս ոլորտում ևս, չնայած հայկական մշակույթի բավականին մեծ ազդեցությանը, այնուամենայնիվ, փորձ է արվում հայկական միջավայրում պահպանել ու վերարտադրել նաև բելառուսականը:

Հայաստանաբնակ բելառուսների մշակութային նկարագրի պահպանման, բելառուսական մշակույթի պրոպագանդման ճանապարհին բավական կարևոր քայլ էր 1996թ. հուլիսին բելառուսական համայնքի՝ որպես հասարակական կազմակերպության ստեղծումը: Անցած տարիների ընթացքում Հայաստանի բելառուսական համայնքը կարողացել է գործում քայլեր ձեռնարկել հայաստանաբնակ բելառուսների համախմբման ուղղությամբ: Կառույցը մասնաճյուղեր ունի Աբովյան, Վանաձոր, Կապան քաղաքներում:

Բելառուսական համայնքը մի քանի հարյուր անդամ ունի, որոնցից մի զգալի մասը ծնվել է խառնամուսանական՝ հայ-բելառուսական ընտանիքներում:

Կազմակերպության գործունեությունն ընթանում է մի քանի հիմնական ուղղություններով. երիտասարդության, ազգային կրթության և դաստիարակության, ՀՀ-ում բնակվող բելառուսների սոցիալական հարցերի հոգածության, հայ և բելառուս ժողովուրդների բարեկամության և համագործակցության ամրապնդման, մշակութային բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման, իրավական խորհրդատվությունների ակա-հովման, ինչպես նաև պատմական հայրենիքի՝ Բելառուսի Հանրապետության և արտերկրների համապատասխան բելառուսական կազմակերպությունների հետ միջազգային կապերի հաստատման բնագավառներում:

Անցած տարիների ընթացքում համայնքը կարողացել է բելառուսական մշակույթին նվիրված բազմաթիվ միջոցառումներ կազմակերպել ինչպես Հայաստանի ազգությունների միության շրջանակներում, այնպես էլ առանձին:

Հայաստանաբնակ բելառուսները մասնակցել են ՀՀ ազգային փոքրամասնությունների դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցադրությա-

ջակցություն է ցուցաբերում նաև ՀՀ Կառավարությունը: 2001թ. Հայաստանի բելառուսական համայնքը տարեկան ստանում է շուրջ մեկ միլիոն դրամ՝ կրթական, մշակութային ու սոցիալական որոշ կարիքներ հոգալու նպատակով:

Մինչև վերջին մեկ-երկու տարին բելառուսական համայնքի համար բավականին լուրջ բարդություն էր գրասենյակի բացակայությունը, սակայն ՀՀ Կառավարության 2004թ. որոշմամբ ազգային փոքրամասնություններին հատկացված շենքում բելառուսական համայնքը կստանա համապատասխան մասնաբաժին, ինչը հնարավորություն կընձեռի կանոնավոր միջոցառումներ կազմակերպել և կանոնակարգել համայնքի գործունեությունը:

3.4. Գերմանացիներ

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի ցուցանիշների հանրապետությունում բնակվում էր 133 գերմանացի, որոնցից 84-ը՝ քաղաքներում, 49-ը՝ գյուղերում, ընդ որում կանանց թիվը գրեթե 4 անգամ գերազանցում էր տղամարդկանց թվին (106 կին և 27 տղամարդ):⁵⁴ Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս գերմանացիների թվաքանակի շարժընթացը XX դարում:

ՀՀ-ում բնակվող գերմանացիների թվաքանակի շարժընթացը 1897-2001թթ.⁵⁵

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
207	104	-	407	333	265	133

Աղյուսակի տվյալների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում կատարել մի շարք եզրահանգումներ.

- ա) XX դարում գերմանացիների թիվը Հայաստանի տարածքում համեմատաբար մեծ չի եղել:
- բ) Գերմանացիների թվաքանակի համեմատաբար շոշափելի աճը տեղի է ունեցել 1960-ականներից հետո, երբ Խորհրդային Միու-

⁵⁴ ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

⁵⁵ Տե՛ս սույն գլխի 4-12 ծանոթագրությունները:

քյունում ռեաբիլիտացվեցին 1940-ականներին ռեպրեսիայի ենթարկված ժողովուրդները,⁵⁶ և նրանց իրավունք վերապահվեց վերստին բնակություն հաստատել ԽՍՀՄ եվրոպական մասում: Սկսած 1960-ականներից՝ գերմանացիների ընտանիքների փոքր խմբեր պարբերաբար Ռուսաստանից և Ղազախստանից գալիս էին Հայաստան և բնակություն հաստատում Երևանում, Լենինականում (այժմ՝ Գյումրի), Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), ինչպես նաև այլ քաղաքներում, Լոռու և Տավուշի մարզերի գյուղերում:

- գ) 1980-ականներին, հատկապես երկրորդ կեսից սկսվեց գերմանացիների արտագաղթը հանրապետությունից, որը շարունակվեց նաև ՀՀ անկախության տարիներին, նրանց թիվը նվազեց՝ հասնելով 133-ի:

ՀՀ գերմանացիների էթնոժողովրդագրական մյուս ցուցանիշներն ափսոսաբար համեմատելի կղիտարկենք ստորև:

Գերմանացի վերաբնակիչների հաստատումն ու տարածումը ՀՀ արդի տարածքում սկսվել է XIX դ. առաջին կեսերին: Հայաստանաբնակ գերմանացիների պատմության և մշակույթի հարցերը հանգամանորեն հետազոտված են ՀՀ գերմանացիների մշակութային ընկերության նախագահ Ալեքսանդր Յասկորսկու և նրա որդի Ռուդոլֆ Յասկորսկու աշխատություններում,⁵⁷ որոնք հրատարակվել են Երևանում:

Ընթերցողի ուշադրությունը կցանկանայինք բևեռել հատկապես մի ուշագրավ փաստի վրա. Ա. և Ռ. Յասկորսկիները, ուսումնասիրելով Կովկասի, այդ թվում նաև Հայաստանի գերմանացիներին, բացահայտել են,

⁵⁶ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության 1941թ. օգոստոսի 28-ի հրամանագրով ԽՍՀՄ եվրոպական մասում բնակվող բոլոր գերմանացիները բռնագաղթվեցին իրենց բնակության վայրերից և արտաքսվեցին Սիբիր, Ուրալ և Ղազախստան: Այս ոճրի պատճառները հանրահայտ են և հանգամանորեն ուսումնասիրված են գրականության մեջ: Դրանց դիտարկումը դուրս է սույն աշխատության ճանաչողական խնդիրների շրջանակներից (И.Г. Остроух, Е.А. Шервуд, Немцы в России. – Этнографическое обозрение, 1993, № 3, с. 40-51; Депортация народов СССР в 1930-1950 гг., М., 1990, с. 10-15; С.И. Брук, Немцы в СССР: М., 1990, с. 5-15; Советские немцы: история и современность, М., 1990):

⁵⁷ *Ալեքսանդր Յասկորսկի*, Կովկասի գերմանացիները Հայկական լեռնաշխարհում. – Հայաստանի ազգությունները, Եր., 2000, էջ 74-79, *Александр Яскорский, Рудольф Яскорский*, Швабы Причерноморья и Кавказа: О происхождении и жизни немецкой этнической группы в Причерноморье и на Кавказе, Ер., 2003:

որ նրանք գերազանցապես շվաբներ են,⁵⁸ ինչով և բացատրվում է հիշատակված գրքի վերնագիրը:

Անդրադառնալով Հայաստանի տարածքում բնակություն հաստատած գերմանացիների պատմության և ժողովրդագրության հարցերին, կարելի է փաստել, որ նրանց հիմնական մասը տեղափոխվել է Վրաստանի և Ադրբեջանի գաղթօջախներից: Սկզբնական շրջանում նրանց բնակարանակը շատ փոքր էր. այսպես, 1886թ. հաշվառումների ժամանակ Հայաստանում բնակություն էր հաստատել գերմանացիների երեք ընտանիք (4 տղամարդ և 5 կին): 1897թ. մարդահամարի ժամանակ նրանց թիվը հասել էր 207-ի (160 տղամարդ և 47 կին), քաղաքաբնակ էր շուրջ 100 մարդ, կամ ամբողջ գերմանական բնակչության շուրջ 48%-ը: Եթե տղամարդկանց թիվը գյուղերում երկու անգամ էր գերազանցում կանանց թվին, ապա քաղաքներում՝ 7,6 անգամ: Սա խոսում է այն մասին, որ փոքր թվով ընտանիքների առկայության պայմաններում տղամարդկանց ներհոսք է կատարվել՝ արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում աշխատելու նպատակով:

1926թ. գերմանացիների թիվը Հայաստանում նվազել էր հիմնականում մեխանիկական տեղաշարժերի հետևանքով: Փոխվել էր նաև տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը. եթե առաջ գերակշռում էին տղամարդիկ, ապա 1926թ. 104 գերմանացիներից միայն 38-ն էին տղամարդ, 66-ը՝ կին: Քաղաքներում ապրում էր 82 մարդ (31 տղամարդ, 51 կին) կամ ամբողջ բնակչության 79%-ը, կանայք 1,7 անգամ շատ էին տղամարդկանցից:

Գերմանացիների թիվը 1970թ. մարդահամարի ժամանակ 407 էր (154 տղամարդ և 253 կին), ընդ որում նրանց մեծ մասը բնակվում էր քաղաքներում՝ շուրջ 63%: 1979թ. Հայկական ԽՍՀ-ում գերմանացիների թիվը

⁵⁸ Հայտնի է, որ գերմանական ազգի ձևավորումը և համախմբումը տևել է դարեր և հիմնականում ավարտվել է XIX դ. վերջին: Դրանով է պայմանավորված, որ գերմանացիների մեջ երկար գոյատևել են և կայուն լեզվամշակութային հատկանիշներով են բնութագրվել բազմաթիվ երոտարածքային և ենթաէթնիկ խմբեր և հանրություններ, ինչպիսիք են սաքսոնցիները, բավարցիները, շվաբները, ֆրանկոնցիները և այլն: XIX և XX դդ. Հայաստանում բնակություն հաստատած գերմանացիների մեջ (գործածվում է որպես ընդհանուր երանանում) բացարձակապես գերակշռում էին *շվաբները*, իրենց ուրույն՝ շվաբական լեզվով, մշակութային հատկանիշներով և կրոնական հավատալիքներով: Անհամեմատ փոքր տոկոս են կազմում ֆրանկոնցիները: Ա. և Ռ. Յասկոբսկիները հիշատակում են մի ուշագրավ փաստ. Կովկասի գերմանացիների շվաբական լեզվի մեջ XX դ. երկրորդ կեսին պահպանվում էին միջնադարյան շրջանի լեզվաբանական «արխաիզմներ», որոնք բուն Գերմանիայում խոսակցական լեզվում առկա չէին արդեն XIX դ. երկրորդ կեսին:

նվազել էր՝ կազմելով 333 մարդ (100 տղամարդ և 233 կին): Քաղաքային էր ամբողջ բնակչության 74%-ը: Կանանց գերակշռությունն ակնհայտ էր և՛ քաղաքներում, և՛ գյուղերում: Երևանում կենտրոնացված էր գերմանացիների ամբողջ թվի 33 %-ը:

Խորհրդային Միության վերջին մարդահամարի (1989թ.) ժամանակ գերմանացիների թիվը, 1979թ. մարդահամարի համեմատությամբ, նվազել էր,⁵⁹ հասնելով 265-ի, որոնց զրեթե 50%-ը բնակվում էր Երևանում: Այդ իսկ պատճառով բարձրացավ քաղաքաբնակ գերմանացիների տեսակարար կշիռը՝ հասնելով 84,5%-ի:

Հայաստանում բնակվող գերմանացիների արդի թվաքանակը հիմնականում արդյունք է վերջին մեկուկես տարիների ժողովրդագրական գործընթացների: Արտագաղթի բարձր տեմպերի հետևանքով նրանց թիվը զգալի անկում ապրեց:

ՀՀ գերմանացիների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում փաստել, որ նրանց շուրջ 27%-ը Հայաստանում բնակություն է հաստատել մինչև 1960-ականները:⁶⁰ Գերմանացիների մյուս մասը, հիմնականում բաղկացած կանանցից, հանրապետությունում բնակություն է հաստատել ազգամիջյան ամուսնությունների պատճառով: Ըստ հարցման մասնակիցների, նրանց գերակշիռ մասը տեղափոխվել է Հայաստան՝ Ռուսաստանից և Ադրբեյջանից:

Իրագործված հետազոտությունը քույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ ներկայիս տարածքի գերմանացիների շուրջ 80%-ը 30-59 տարեկան են, 60 և բարձր տարիքի մարդիկ կազմում են շուրջ 20%: 1990-ական թվականներին տեղի ունեցավ գերմանացիների արտագաղթ, որը առաջին հերթին պայմանավորված էր զանգվածային գործազուկության, նյութական պայմանների կտրուկ վատթարացման, սոցիալ-խրափական անպաշտպանվածության հանգամանքներով և առաջացած լեզվական խոչ-

⁵⁹ Շարունակվում էր գերմանացիների արտահոսքը ոչ միայն դեպի ԽՍՀՄ մյուս միութենական հանրապետություններ, այլ նաև դեպի Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:

⁶⁰ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում, որպես ռազմագերիներ, գերմանացիների բազմաթիվ խումբ տեղափոխվել է Հայաստան և աշխատել շինարարության տարբեր ոլորտներում: Պատերազմից հետո նրանց մեծ մասը հեռացավ Հայաստանից, միայն չնչին բվով գերմանացիներ մշտական բնակություն հաստատեցին հանրապետությունում:

ընդոտնեցրով:⁶¹ Արտագաղթած գերմանացիների հիմնական մասը ուղևորվեց դեպի Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:

Ըստ ՀՀ գերմանացիների մշակութային ընկերության նախագահ Ալեքսանդր Յասկոբսկու հաշվարկումների՝ «Հայաստանից գերմանացիների արտագաղթի դիմամիկան գնահատելու համար բավական է ասել, որ 1992թ. համայնքի մեջ մտած 52 ընտանիքից (159 մարդ) 1998թ. մնացել էր 13 ընտանիք (35 մարդ)»:⁶² Այստեղ անհրաժեշտ է նկատի առնել, որ խոսքը գերմանական համայնքի մասին է, այլ ոչ թե միայն գերմանացիների, բանգի «ՀՀ գերմանական համայնքի» մեջ, որն ինստիտուցիոնալ ինքնակազմակերպվել էր նույն՝ 1992թ., հենց սկզբից անդամագրված էին ոչ միայն գերմանական մեներքնիկ, այլ նաև հայ-գերմանական և գերմանա-հայկական երկեքնիկ ընտանիքներ:⁶³ Դա նշանակում է, որ ՀՀ գերմանացիների պատմության և արդյի կացության լավագիտակ Ալեքսանդր Յասկոբսկու նշած մարդկանց թվաքանակի մեջ ընդգրկված են և՛ գտարյուն գերմանացիներ, և՛ հայ-գերմանական (կամ գերմանա-հայկական) ծագում ունեցողները:

ՀՀ անկախության առաջին տարիներին հանրապետության գերմանացիների մեջ լայն տարածում ստացան արտագնա աշխատանքի մեկնելու միտումները, սկզբնական շրջանում այն (արտագնա աշխատանքը) ժամանակավոր բնույթ էր կրում, բայց հետագայում ստացավ անվերադարձ բնույթ: Վերը ներկայացված աղյուսակից երևում է, որ եթե 1989թ. գերմանացիների թիվը հանրապետությունում 265 էր, ապա 2001թ.՝ արդեն 133:

ՀՀ գերմանացիների արտագաղթի հարցերին անդրադառնալիս հարկ ենք համարում ընդգծել ևս երեք կարևոր հանգամանք.

ա) Գերմանական ազգային պետության (ի դեմս Գ-Դ-Հ-ի) առկայությունը խթանեց այդ գործընթացները:

բ) ԱՊՀ երկրներում բնակվող իրենց հայրենակիցների նկատմամբ

⁶¹ ՀՀ գերմանացիների գերակշիռ մեծամասնությունը ռուսախոս էր, ուստի ռուսաց լեզվի կիրառության ոլորտների, ինչպես նաև ռուսերեն լեզվով կրթություն ստանալու հնարավորությունների սահմանափակումը, ի թիվս վերոնշյալ հանգամանքների, խիստ բացասաբար անդրադարձավ նրանց ժողովրդագրական և սոցիալ-մշակութային զարգացման միտումների վրա:

⁶² *Ալեքսանդր Յասկոբսկի*, Կովկասցի գերմանացիները Հայկական լեռնաշխարհում, էջ 77:

⁶³ Այսօր էլ ՀՀ գերմանական համայնքում հիմնականում ընտանիքներով են անդամագրված, որոնց մեծ մասը երկեքնիկ է, այսինքն խառն ազգային կազմ ունի:

ԳՂՀ-ի կողմից վարած բարենպաստ միգրացիոն քաղաքականությունը:

զ) ՀՀ գերմանացիների արտագնա աշխատանքների մեկնումը, ինչպես նաև որոշ չափով արտագաղթը, հիմնականում կրել են ծրագրավորված և կազմակերպված բնույթ:

Հատկանշական է, որ հետազոտության ընթացքում անցկացված հարցումների ժամանակ, գերմանացիների 68%-ը նշել էր, որ իրենց ընտանիքի մի քանի անդամներ 1990-ականներից հետո մեկնել են համապետությունից: Մեկնելու հիմնական պատճառների մեջ առանձնացնում էին տնտեսական, ֆինանսական գործոնը, ինչպես նաև իրավական անպաշտպանվածությունը, համապետությունում ապրելու հետագա հեռանկարի անորոշությունը, սոցիալական առաջխաղացման հնարավորությունների բացակայությունը: Քիչ չէին նաև պատասխանները՝ կապված պատմական հայրենիքում ապրելու ցանկության հետ:⁶⁴

Արտագնա ժամանակավոր աշխատանքի մեկնողները, որպես *տնտեսական միգրանտներ*, ուղևորվում են դեպի Ռուսաստանի Դաշնություն, ԱՊՀ այլ երկրներ (հատկապես Ղազախստան) և Գերմանիա: Նոր վայրերում նրանք ընգրկվում են շինարարության, առևտրի և սպասարկման տարբեր ոլորտներում: Նրիտասայդ սերնդի շատ ներկայացուցիչներ մեկնում են Գերմանիա՝ միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու նպատակով: Դրանց զգալի մասը հետագայում նաև աշխատանքի է անցնում պատմական հայրենիքում՝ սերտ կապեր պահպանելով ընտանիքի մյուս անդամների, ազգականների, ընկերների հետ՝ պարբերաբար ֆինանսական օգնություն ցուցաբերելով նրանց:

Գրառած նյութերը վկայում են, որ արտագաղթած գերմանացիների շուրջ 30%-ը մտադիր է վերադառնալ Հայաստան՝ պայմանավորելով այն հանրապետությունում նյութական պայմանների բարելավման, նոր աշխատատեղերի ստեղծման, բարձր աշխատավարձի, իրավական և սոցիալական պաշտպանվածության ապահովման և այլ հանգամանքների հետ:

Սակայն, այսօր ակներև է, որ ներկա պայմաններից ելնելով, ՀՀ տարածքում բնակվող գերմանացիների մեջ դեռևս առկա են միգրացիոն տրամադրություններ: Հետազոտության ընթացքում պարզվեց, որ հարց-

⁶⁴ Յու.Ի. Մկրտումյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 4, 2001, էջ 22-24:

վողների 69%-ը տատանվում կամ մտադիր է պատեհ առիթի դեպքում արտագաղթել՝ ճանապարհածախսի հայթայթման, կոնկրետ վայրի ընտրության, բնակարանի (կամ տան) վաճառքի և այլ հանգամանքների բեռնով:

Այնուհանդերձ, որոշակիորեն նկատելի է, որ ՀՀ գերմանացիների արտագաղթը 2001-2003թթ. դանդաղել և ծավալներով նվազել է: Դրան նպաստող հանգամանքներից կարելի է նշել մի քանիսը: Հանրապետությունում այսօր բնակվող գերմանացիների մեծ մասը բարձրագույն կրթություն ունի և ներգրավված է արտադրության, գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում: Բացարձակապես գերակշռում է երկէքնիկ ընտանիքների տեսակարար կշիռը, ընտանիքներ, որոնք աչքի են ընկնում իրենց ամրությամբ և կայունությամբ: Մեծ է նաև «ՀՀ գերմանացիների մշակութային ընկերության» գործունեության բարերար ազդեցությունը համայնքի ուժերը հավաքագրելու, ազգային պատմամշակութային արժեքների պահպանման ու պրոպագանդման, համայնքի անդամների սոցիալական և հումանիտար հարցերի հոգածության ասպարեզման:

Ընդհանուր գծերով բնութագրելով ՀՀ գերմանացիների էթնոմշակութային բնորոշ գծերը, կարելի է նշել հետևյալը:

Գերմանացի առաջին բնակիչները (շվաբները) Հայաստանում հիմնականում գյուղացիներ և արհեստավորներ էին: Նրանց բնորոշ էին դաշտավարական (ցորենի մշակույթի գերակշռությամբ) և անասնապահական (մսա-կաթնային ուղղվածության) զարգացած տնտեսությունը, փայտի և մետաղի մշակման զարգացած տեխնիկատեխնոլոգիական հնարները, նրբաճաշակ և հարդարուն ներսույթով (ինտերիերով) և արտաքին տեսքով տները, կենցաղային բացառիկ մաքրությունը, ինչի շնորհիվ ՀՀ գերմանացիները վայելում էին բարձր հարգանք հայ բնակչության մեջ:

Հայոց մեծ բանաստեղծ և խոշոր ազգային գործիչ Հովհաննես Թումանյանը Հայաստանում բնակություն հաստատած գերմանացիների մասին գրում է. «Տոկուն և ժրաջան գերմանացի գաղթականներն էլ այգեգործությամբ և առհասարակ օրինակելի գյուղատնտեսությամբ ապահովել են իրանց և ապրում են քաղաքավարի, գեղեցիկ տներում, առանձնացա՛ցած, ջոկված մյուս ազգություններից...»:⁶⁵

⁶⁵ Հովհաննես Թումանյան, Բողջավույն. – Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Եր., 1994, էջ 30:

XX դարի խոշորագույն պատմական իրադարձությունները (I և II աշխարհամարտերը) էապես անդրադարձան Ռուսական կայսրությունում և ԽՍՀՄ-ում (այդ թվում՝ Հայաստանում)⁶⁶ բնակվող գերմանացիների ճակատագրի վրա.⁶⁷ գերմանացիների բռնագաղթերը, ներգաղթերը և արտագաղթերը հետևեցին մեկը մյուսին: Արդի ՀՀ գերմանական բնակչությունը, ինչպես նշվեց վերևում, աստիճանաբար կազմավորվեց II աշխարհամարտից հետո հիմնականում Ռուսաստանից, Վազախստանից, Ադրբեջանից, ինչպես նաև բուն Գերմանիայից, որոնց կազմում բացահայտորեն գերակշռում էին քաղաքաբնակները:⁶⁸ Սոցիալ-մասնագիտական առումով նրանց կազմում այսօր գերակշռում են հումանիտար և տեխնիկական մտավորականության ներկայացուցիչները:

Հայաստանում բնակվող գերմանացիները քրիստոնյաներ են և պատկանում են ավետարանական-լուսավորական ուղղությանը: Նրանց առավել բնորոշ է խորը հավատքը, կրոնական ծեսերի ջանասեր կատարումը: Օրինակ, հանրահայտ է, որ ՀՀ գերմանացիները ոչ հեռավոր անցյալում մույնիսկ բերքահավաքի եռուն շրջանում կիրակի օրերին չէին աշխատում, քանզի ըստ դավանանքի արգելված էր: Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Աբովյանում և մի շարք այլ վայրերում այսօր գործում են ավետարանական եկեղեցիներ, որոնք սպասարկում են բողոքական ուղղությունների հետևորդներին, այդ թվում նաև ավետարանական-լուսերականներին:

Հանրապետությունում ստեղծված է և հաջողությամբ գործում է «Գերմանական ուսումնական և մշակութային կենտրոն»: Գերմանացիների համայնքը «ամմիջականորեն մասնակցում է Կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերի ու միջոցառումների մեծ մասին»:⁶⁹ Մեծ ուշադրություն է դարձվում մայրենի լեզվի մշտապես գործող անվճար դասընթացների կազմակերպմանը (երեխաների և մեծահասակների համար), գերմանական ազգագրական խմբի գործունեությանը, ժողովրդական և պետական տոների անցկացմանը, ուսումնամեթոդական ձեռնարկների և տեղեկատվական նյութերի հրատարակությանը, գրադարանային հավաքածուների ձեռքբերմանը և այլն:

⁶⁶ Հայաստանի Հանրապետության արդի տարածքը 1828թ. մինչև 1917թ. մտնում էր Ռուսական կայսրության, իսկ 1922թ. մինչև 1991թ. Խորհրդային Միության կազմի մեջ:

⁶⁷ Տե՛ս սույն գլխի 43 ծանոթագրությունը:

⁶⁸ Տե՛ս սույն աշխատության 94 էջը:

⁶⁹ *Այերսանդդ Յասկոբսկի*, Կովկասի գերմանացիները Հայկական լեռնաշխարհում, էջ 78:

ՀՀ գերմանացիների մշակութային ընկերությունը, սկսած 2001թ. ֆինանսական օժանդակություն է ստանում ՀՀ Կառավարությունից,⁷⁰ ինչպես նաև տալիս է օժանդակություն ՀՀ-ում հավատարմագրված Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությունից: ՀՀ գերմանական համայնքի գործունեության համար նպաստավոր է նաև բազմակողմանի մշտական կապերի առկայությունը ԱՊՀ երկրների գերմանացիների հասարակական կազմակերպությունների, հատկապես Ռուսաստանի տալիս ընդունում գործող Գերմանական մշակույթի միջազգային կենտրոնի հետ: Համատեղ միջոցառումների կազմակերպումը և տեղեկատվական նյութերի փոխանակումը նպաստում են ՀՀ գերմանացիների ազգային-մշակութային նկարագրի պահպանմանը: Սակայն գերմանական համայնքի առջև ծառացած են բազմապիսի՝ դեռևս չլուծված խնդիրներ, որոնք մանրամասնորեն ներկայացված են նրա մախագահի տպագիր աշխատություններում:⁷¹ Դրանք վերաբերում են ֆինանսական, նյութական և գույքային օժանդակությանը, ինչպես նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությանը ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում և աշխատակազմերի կառույցներում:⁷²

Այստեղ մեկ անգամ ևս կարելի ընդգծել, որ ՀՀ ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև գերմանացիների, նկատմամբ Հայաստանում վարվող քաղաքականության մեջ բացակայում են խտրականության տարրերը, լինի դա քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, թե լեզվի, կրթական, մշակութային, միջազգային կապերի և այլ իրավունքների ասպարեզում:

3.5. Հրեաներ

2001թ. հանրապետությունում բնակվում էր 109 հրեա, որոնցից քաղաքացիները 105-ն էին, իսկ գյուղում բնակվողների թիվը ընդամենը 4-ն էր, կանանց թիվն ավելի քան երկու անգամ գերազանցում էր տղամարդկանց թվին (համապատասխանաբար՝ 74 և 35):⁷³ Որպեսզի հստակ

⁷⁰ Տարեկան շուրջ մեկ միլիոն դրամ:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 78-79:

⁷² Տե՛ս սույն գրքի Վերջաբանի փոխարեն բաժինը:

⁷³ ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

պատկերացում կազմենք Հայաստանում բնակվող հրեաների թվաքանակում կատարված շարժընթացի մասին, ստորև ներկայացվում է համապատասխան աղյուսակ.

**ՀՀ-ում բնակվող հրեաների թվաքանակի
շարժընթացը 1897-2001թթ.⁷⁴**

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
834	335	1024	1048	953	676	109

Նախքան աղյուսակի տվյալների վերլուծությունը նշենք, որ Հայաստանում հրեաների վերաբնակեցման մասին հիշատակությունները հասնում են մ.թ.ա. II-I դարեր: Հայաստանի և հայերի հետ հրեաներն ունեն խորը պատմական և մշակութային կապեր: Դրա մասին կան ինչպես գրավոր հիշատակություններ, այնպես էլ հնագիտական տվյալներ: Դրանցից ամենից ուշագրավը Վայոց Ձորի մարզի Եղեգիս գյուղի միջնադարյան բնակատեղիում հայտնաբերված հրեական գերեզմանոցն է, որը եզակի երևույթ է ոչ միայն Հայաստանի պատմական հուշաձանգների շարքում, այլ նաև՝ հրեա ժողովրդի համար:⁷⁵ Ուշագրավ են նաև XIXդ. առաջին կեսին վերաբերող վկայությունները, համաձայն որոնց՝ 1840թ. Երևանի նահանգում գոյություն է ունեցել հրեական երկու համայնք, որոնցից մեկում միավորված են եղել Եվրոպայից, իսկ մյուսում՝ Իրանից եկած հրեաները:⁷⁶ XIX-XXդ. սկզբներին Երևանում գործում էր սինագոգա (աղոթատուն հրեական համայնքի անդամների համար)⁷⁷:

Ըստ 1886թ. հաշվառումների՝ Հայաստանի տարածքում գրանցվել է հրեական 12 ընտանիք (52 մարդ՝ 31 տղամարդ, 21 կին), նրանց 85%-ը եղել է քաղաքացիական:

⁷⁴ Տե՛ս սույն գլխի 4-12 ծանոթագրությունները:

⁷⁵ *Հուսիկ Մելքոնյան, Նյուրա Հակոբյան*, Եղեգիսի 2001թ. պեղումները. – Հին Հայաստանի մշակույթ, XII. Գիտական գեկույումների հիմնադրույթներ, Եր., 2002, էջ 97-103; *Abraham Rabinovich*, Secrets from the Graveyard. An Ancient Cemetery in Armenia. Points to an Unknown Jewish Presence. – “Scopus” - Magazine of the Hebrew University of Jerusalem vol. 49, 2002, p. 20-22. *А. Левонау*, Еврейские ученые заявляют: сенсация! Нашествия в Египте свидетельствуют, что обнаружено самое раннее из известных в мире еврейских кладбищ. – “Голос Армении” 11 августа 2001.

⁷⁶ *Ռ. Պ. Լարժապետյան-Ֆելլեր*, Հրեական համայնքը. – Հայաստանի ազգությունները, էջ 48-49:

⁷⁷ Հայաստանի ազգային արխիվ, ֆ.113, ց.3, գ. 293,թ. 153:

Ըստ 1897թ. Համառոտաստանյան առաջին մարդահամարի տվյալների, նրանց թիվը հասել էր 834-ի, որոնցից 436-ը քաղաքաբնակ էին: Հատկանշական է, որ տղամարդկանց թիվը տասն անգամ գերազանցում էր կանանց թվին:

1926թ., ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, հրեաների թիվը Հայաստանում գրեթե 2,5 անգամ պակասել էր, հասնելով 335-ի, ինչն արդյունք էր 1910-1920-ական թվականների սկզբների քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձությունների, այդ թվում նաև Ռուսական կայսրության փլուզման: 335 բնակչից տղամարդ էր 221-ը, կին՝ 114-ը: Քաղաքային բնակչությունը 209 մարդ էր (151 տղամարդ, 58 կին) կամ 45%, գյուղականը՝ 126 մարդ (70 տղամարդ, 56 կին): Ինչպես տեսնում ենք, նախորդ տարիների համեմատությամբ որոշակիորեն աճել էր և՛ կանանց, և՛ գյուղաբնակ հրեական բնակչության տեսակարար կշիռը:

Խորհրդային հետագա տարիներին ընթացքում հրեական բնակչությունը Հայկական ԽՍՀ-ում որոշակիորեն աճեց՝ 1959թ. մարդահամարի ժամանակ կազմելով 1.024 մարդ, այսինքն ավելի քան երեք անգամ գերազանցելով 1926թ. ցուցանիշները. 33 տարի անց (1926-1959թթ.) հրեա քաղաքային բնակչությունը նորից բացարձակապես մեծամասնություն կազմեց (95%), իսկ կանանց թիվը 1,8 անգամով գերազանցեց տղամարդկանց թվին: Ամենայն հավանականությամբ, դա հիմնականում խառն ազգային (հայ-հրեական) ամուսնությունների աճի արդյունք էր:

XX դ. անցկացված մյուս մարդահամարների տվյալների համեմատությամբ, 1970թ. մարդահամարի ժամանակ Հայաստանում պաշտոնապես գրանցվել է հրեաների ամենամեծ թվաքանակը (1.048): Երևանում կենտրոնացված էր քաղաքային բնակչության շուրջ 63%-ը: Կանայք իրենց թվով փոքր-ինչ գերազանցում էին տղամարդկանց:

1979թ. մարդահամարի արդյունքներով գրանցված 953 հրեաներից 72%-ը մայրաքաղաքի բնակիչներ էին, իսկ գյուղական հրեական բնակչությունը նվազել էր ավելի քան երկու անգամ:⁷⁸

1989թ. հրեաների թիվը նվազել էր 1,4 անգամ՝ հասնելով 676-ի (249 տղամարդ, 427 կին), նրանց 98%-ը բնակվում էր քաղաքներում, կանայք 1,7 անգամ ավելի էին, քան տղամարդիկ: Երևանում ապրում էր հրեաների ամբողջ թվի ավելի քան 81%-ը:

⁷⁸ Итоги Всесоюзной переписи населения 1979г., М., 1980, сс. 408-481:

XX դ. վերջին երեք մարդահամարների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե 20 տարում հրեա բնակչության թիվը նվազել է 64,5%-ով, քաղաքային բնակչությունը, գերակշռող լինելով հանդերձ, պակասել էր 1,5 անգամ, նկատելի է կանանց թվի գերակշռությունը:

Իրագործված հետազոտությունների ժամանակ պարզվեց, որ վերջին մեկուկես տասնամյակում խառն ազգային (հայ-հրեական, ռուս-հրեական, ուկրաինա-հրեական և այլն) ընտանիքների երիտասարդ սերնդի որոշ ներկայացուցիչներ նոր մոտեցում են ցուցաբերում պաշտոնապես ներկայացվող էթնիկ պատկանելության հարցում, հաճախ ներկայանալով որպես հրեաներ:⁷⁹ Եթե խորհրդային տարիների օրոք, երբ տասնամյակներ շարունակ իրականացվում էր հակահրեական քաղաքականություն, մարդիկ թաքցնում էին իրենց հրեական ծագումը, ապա ներկա ժամանակաշրջանում ԱՊՀ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում գոյություն չունի բացահայտ պաշտոնական հակահրեական քաղաքականություն, ոչ միայն մենեթնիկ, այլ նաև երկէթնիկ ընտանիքների անդամները չեն թաքցնում իրենց հրեական պատկանելությունը:⁸⁰

Հեղինակների կողմից անցկացված հարցումների տվյալներով հարցման մասնակցած հրեաների 37%-ը բնակություն է հաստատել Հայաստանում մինչև 1960-ական թթ, 10%-ը՝ 1981-2001թթ.: Ըստ տոկոսային հարաբերության՝ որպես Հայաստան տեղափոխվելու գլխավոր պատճառ նրանց 40%-ը նշել է ամուսնությունը, 30%-ը՝ աշխատանքը, 21%-ը՝ ծառայությունը, իսկ 3%-ը՝ էվակուացիան, որը տեղի ունեցավ Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Հարցմանը մասնակցած հրեաների 31%-ը տղամարդ է, իսկ 69%-ը՝ կին: Տղամարդկանց 19%-ը պատկանում է 16-29 տարեկան, 12%-ը՝ 30-59 տարեկան, իսկ 13%-ը 60 և բարձր տարիքա-

⁷⁹ Ի դեպ, նման դրսևորումներ գրանցվել են նաև հայ-հունական, ռուս-հունական և այլ երկէթնիկ ընտանիքներում: - Ա.Զ. Թադևոսյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, 2000-2001, էջ 15-17, Յու.Ի. Մկրտումյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, 2000-2002, էջ 24:

⁸⁰ Յավոր, վերջին ժամանակներս գրանցվել են ազգային անհանդուրժողականության եզակի դեպքեր: 2005թ. հունվարին ՀՀ Դատախազությունը քրեական գործ էր հարուցել փոքրաթիվ և ոչ ազդեցիկ «Հայ արհմեծի միաբանություն» կուսակցության ղեկավար Արմեն Ավետիսյանի դեմ՝ հակահրեական արտահայտությունների և ազգային անհարգոթյունականություն հրահրելու մեղադրանքով: Նման դրսևորումները չեն արտահայտում ոչ հասարակության լայն զգալի մասի կարծիքը (վերաբերմունքը), ոչ էլ հանրապետության պաշտոնական դիրքորոշումը: Եվ օրինաչափ էր, որ Արմեն Ավետիսյանը դատապարտվեց 3 տարվա պալմանական ազատազրկման:

յին խմբին: Հարցման մասնակցածների մեջ 16-29 տարեկանները կազմում էին 30-35%, 30-59 տարեկանները՝ 35-40%, 60 տարեկանից բարձրերը՝ 20-25%: Այսինքն հրեաների մեջ ավելի բարձր է երիտասարդների ու միջին տարիքի ներկայացուցիչների տեսակարար կշիռը: Հարցվողների 64%-ը ուներ բարձրագույն, 25%-ը՝ միջնակարգ մասնագիտական և միայն 11%-ը՝ միջնակարգ կրթություն:

Սոցիալ-մասնագիտական տեսանկյունից ՀՀ հրեաների մեջ մեծ տոկոս են կազմում բարձր որակավորում ունեցող բժիշկները, երաժիշտները, մանկավարժները, ինժեներները և այլ մասնագիտության տեր անձինք: 1993-1996թթ. նկատելի էր հրեաների արտահոսքի աճ: Համաձայն հետազոտության, դա պայմանավորված էր հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ճգնաժամով և ոչ թե հրեաների նկատմամբ ազգային հողի վրա այս կամ այն բնույթի խտրականության գոյության: Կարևոր պատճառներից էր նաև պատմական հայրենիքում ապրելու ձգտումը: Վերջինիս համար նպաստող գործոն է եղել նաև Իսրայել պետության կողմից արտերկրներում բնակվող հրեա ազգության անձանց հանդեպ վարվող բարենպաստ միգրացիոն քաղաքականությունը: Մեկնողների մեջ ընտանեկան հոսքերն ավելի բարձր տոկոս են կազմում, քան անհատական:

ՀՀ հրեաների արտագաղթը բավական լայն աշխարհագրական ընդգրկում ունի և կազմակերպված բնույթ է կրում: Այդ ասպարեզում չափազանց մեծ է «Սոխնուտ» միջազգային հրեական գործակալության դերը: Այն իր ներկայացուցչություններն ու համակարգողներն ունի գրեթե բոլոր այն երկրներում, որտեղ գոյություն ունեն հրեական համայնքներ: Գործակալությունը ֆինանսավորվում է ինչպես Իսրայելի պետական միջոցներից, այնպես էլ բարեգործական կազմակերպությունների և մասնավոր հիմնադրամների կողմից: «Սոխնուտ» գործակալությունն օժանդակություն է կազմակերպում տարբեր երկրների հրեական համայնքներին՝ ապահովելով ուսումնական և զեղարվեստական գրականությամբ, բառարաններով, համակարգչային տեխնիկայով, ձայնա- և տեսաերիզներով՝ կազմակերպելով նաև անհրաժեշտ ֆինանսական օգնություն: «Սոխնուտ»-ը միաժամանակ գործում մասնակցություն է ունենում հրեաների արտագաղթի իրականացման գործում: Բացի Իսրայելից, բարձր է նաև ԱՄՆ, Կանադա և եվրոպական երկրներ արտագաղթի ծավալները: Նրանց հիմնական մասը մշտական բնակության է մեկնել, իսկ փոքր մա-

սը համարվում է *տնտեսական միգրանտ*: Մեկնողների մեջ մեծամասնություն են կազմում տղամարդիկ:

Ընդդիմ կրթական և մասնագիտական բարձր որակավորման՝ ՀՀ հրեաների մեծ մասն ընդգրկված է հիմնականում ինտելեկտուալ ոլորտների գործունեության մեջ: Չնչին տոկոսն է զբաղվում մանր առևտրով կամ սպասարկման այլ աշխատանքով: Արտագաղթած հրեաները սերտ կապեր են պահպանում Հայաստանում բնակվող իրենց ազգականների և բարեկամների հետ՝ ցուցաբերելով ֆինանսական և այլ տեսակի օժանդակություն: Ըստ հարցման արդյունքների՝ հայաստանաբնակ հրեաների 54%-ը ստանում է նյութական և ֆինանսական օգնություն արտասահմանում բնակվող իրենց բարեկամներից ու հարազատներից: Ուշագրավ է, որ ըստ անցկացված սոցիոլոգիական հարցումների, Հայաստանից արտագաղթած հրեաների շուրջ 67%-ը մեկնել է անվերադարձ, իսկ մյուսները մտադիր են վերադառնալ, եթե հանրապետությունում հաղթահարվի սոցիալ-տնտեսական ճգնաժամը և ստեղծվի բարձր կենսամակարդակի ապահովման իրական հնարավորություններ, չնայած հանրապետությունում այսօր բնակվող հրեաների մեջ դեռևս կենսունակ են արտագաղթի միտումները:

ՀՀ հրեաների ժողովրդագրական ցուցանիշների ուսումնասիրությունը քույլ է տալիս եզրահանգել, որ նրանց ընտանիքի անդամների միջին քիվը կազմում է մոտավորապես 4 մարդ: Հարցվողների մեջ 1-2 անձից կազմված ընտանիքները՝ շուրջ 15% են, 3-4 անձից բաղկացածները՝ 30-35%, 5 անձից կազմված ընտանիքները՝ շուրջ 40%:

Հրեաները Հայաստանում բնակվում են ցրիվ (դիսպերս) և չունեն հավաք (կոմպակտ) բնակության վայրեր: Այս հանգամանքը, ինչպես նաև նրանց համեմատաբար փոքրաթիվ լինելը բարդացնում է սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր միտումների բացահայտումը:

Ըստ անցկացված հետազոտության արդյունքների՝ քաղաքաբնակ հրեաների⁸¹ ճնշող մեծամասնությունը չի մասնակցել սեփականաշնորհման գործընթացներին: Հիմնական պատճառն այն է, որ նրանց մեջ մեծ քիվ են կազմում առողջապահական, կրթական և գիտական հաստատություններում ընդգրկված որակյալ մասնագետները, իսկ այս ոլորտներում, ինչպես հայտնի է, սեփականաշնորհում չի իրականացվել: Այսինքն, ինչ-որ առումով գործ ունենք նաև տվյալ ազգային փոքրամաս-

⁸¹ Գյուղաբնակները ընտանիքի կազմում մասնակցել են հողի սեփականաշնորհմանը և անասունների մասնավորեցմանը:

նության մասնագիտական կառուցվածքով պայմանավորված իրադրության հետ:

Կրթական և մասնագիտական բարձր որակավորումը հրեաներին հնարավորություն է տվել պահպանել զբաղվածության համեմատաբար բարձր մակարդակ: Այսպես, հարցվողների մեջ գործազուրկները կազմում են շուրջ 10-12%, կենսաթոշակառուները՝ մոտավորապես 25%, արդյունաբերական ձեռնարկություններում, գիտակրթական, առողջապահական հաստատություններում ընդգրկվածներն ու սեփական գործ ունեցողները՝ 60-63%: Չնայած զբաղվածության համեմատաբար բարձր մակարդակին, հարցման մասնակիցների մեծ մասի նյութական վիճակը վերջին տասնամյակում կտրուկ վատթարացել է: Նրանց ընտանիքների եկամուտների հիմնական մասը կազմում են ցածր աշխատավարձը կամ կենսաթոշակը, պետության կողմից տրվող նպաստները և հարազատների օգնությունը արտասահմանից:

Այնուհանդերձ, ՀՀ հրեաների կենսամակարդակը համեմատաբար բարձր է, և դրանում կարևոր դերակատարություն ունեն ինչպես նրանց հայաստանյան ազգային կազմակերպությունները, այնպես էլ Իսրայելից պարբերաբար ստացվող ֆինանսական և նյութական օգնությունը:⁸²

Ընդհանրացնելով Հայաստանում բնակվող հրեաների միջավայրում ընթացող սոցիալ-տնտեսական հիմնական գործընթացների բնութագիրը՝ կարելի է ներկայացնել որոշ դիտարկումներ, որոնք բույլ են տալիս արձանագրել, որ հրեաները, ինչպես հայ բնակչության գերակշիռ զանգվածը և այլ ազգային փոքրամասնություններ, ունեն բավականին լուրջ բարդություններ՝ կապված հանրապետությունում դեռևս չկայացած շուկայական հարաբերություններին հարմարվելու հետ: Որոշակիորեն կարելի է ընդգծել, որ հրեաները Հայաստանում չունեն ազգային պատկանելության գործոնով պայմանավորված սոցիալ-տնտեսական բնույթի բարդություններ:

Հայաստանի անկախացումից հետո, երբ վերացավ խորհրդային շրջանի հակահրեական քաղաքականության սպառնալիքը, հրեաների համար բացվեցին նոր հնարավորություններ իրենց ազգային ինքնությունը դրսևորելու և վերարտադրելու համար: Հայաստանի անկախ հանրա-

⁸² *Е. Казарян-Плинер*, Общественная жизнь, помочь каждому. — “Мирен Давид”, N 16, 2003 (Газета еврейской общины Армении).

պետության ազգային քաղաքականությունը ձեռքբազատվեց խորհրդային շրջանի բացասական հատկանիշներից, ինչը ՀՀ ազգային փոքրամասնություններին հնարավորություն տվեց նորովի մոտենալու իր ազգային պատկանելության և ինքնակազմակերպման խնդիրներին:

Ոչ միայն ազգային փոքրամասնությունները, այլ հենց հայերը նույնպես հնարավորություն ստացան անկաշկանդ մոտեցումներ ցուցաբերելու ազգային պատմամշակութային արժեքների պահպանման, վերախմաստավորման և ժառանգորդման գործում:

Հատկանշական է, որ հայերի ազգային ինքնագիտակցության և ինքնակազմակերպման մեջ տեղի ունեցող փոփոխությունները մեծապես խթանեցին հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային վերելքին, իրենց էթնիկ և մշակութային ինքնության խոր գիտակցմանը:⁸³

Հրեաները Հայաստանում ինքնակազմակերպված են և՛ որպես ազգային փոքրամասնություն, և՛ որպես էթնո-կոնֆեսիոնալ (էթնո-դավանական) համայնք: «Հայաստանի հրեական համայնքը», որպես ազգային-մշակութային հասարակական կազմակերպություն, ձևավորվել է դեռևս 1991 թվականին:⁸⁴ Մյուս կազմակերպությունը կրոնական է և կոչվում է «Սորդեխայ Նավի Խաբադ-Լյուբավիչ» հրեական համայնքային կենտրոն, ձևավորվել է 1996 թվականին:⁸⁵

Երկու կազմակերպություններն էլ բազմակողմանի գործունեություն են ծավալում Հայաստանի ամբողջ տարածքում հրեական բնակչության միջավայրում, ունեն պաշտոնական գրասենյակներ, պաքեթականներ («Марец Давид» և «Коэлет»): Կրոնական համայնքը Երևան և Սևան քաղաքներում ունի իր աղոթատները - synagogs: Երևանում բացվել և գործում է հատուկ գրադարան, որտեղ ամփոփված են հրեաների մասին տարբեր լեզուներով գրականություն, տեղեկատվական նյութեր, Հայաստանում և արտերկրներում տպագրվող հրեական պաքեթականներ:

Նշված երկու կազմակերպություններն էլ կարևոր դեր են խաղում հայաստանաբնակ հրեաների, որպես ազգային փոքրամասնության հասա-

⁸³ Ա.Զ. Թադևոսյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, 2001, էջ 15-20, տետր 3, 2002, էջ 5-6, Յու.Ի. Մկրտումյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, 2001-2002, էջ 24-27:

⁸⁴ Ռ. Պ. Վարժապետյան-Ֆելդեր, Հրեական համայնքը, էջ 48-50:

⁸⁵ Տե՛ս «Коэлет», հ.հ. 1-2, 3-4, 2001թ. (Орган Еврейской религиозной общины Армении, լույս է տեսնում ռուսերեն լեզվով):

րակական, մշակութային կյանքի կազմակերպման, համայնքի անդամների օգնության և փոխօգնության կազմակերպման, նրանց միջև կապերի ամրապնդման և էթնոմշակութային ընդհանրական միջավայրի ձևավորման գործում: «Հայաստանի հրեական համայնք» ազգային-մշակութային հասարակական կազմակերպության համակարգում գործում են հետաքրքիր հանդիպումների ակումբ, մանկական պարային համույթ, իրավաբանական, բժշկական և հումանիտար օգնության ծառայություններ, մշակութային տեղեկատվական կենտրոն և դպրոց: Դպրոցում կազմակերպվում են լեզվի, մշակույթի, պատմության դասընթացներ ինչպես դպրոցահասակների, այնպես էլ մեծահասակների համար:⁸⁶

«Մորդեխայ Նավի Խաբադ-Լյուբավիչ» հրեական կրոնական կենտրոնում գործում են աղոթատուն (սինագոգա), կիլակնօրյա մանկական դպրոց, բարեգործական կենտրոն, մեծահասակների համար ուսուցողական կուրսեր և գրադարան:⁸⁷

Կրոնական և ժողովրդական տոնածիսական ավանդույթների կանոնավորված գործառնությունը նպաստում է Հայաստանի հրեաների միավորմանը իրենց հոգևոր առանցքի շուրջը:⁸⁸ Եթե ՀՀ հրեաների հասարակական-մշակութային կյանքի կազմակերպման գործում մեծ է «Հայաստանի հրեական համայնք»-ի դերը, ապա կրոնական կյանքի կազմակերպման ասպարեզում նշանակալից է «Մորդեխայ Նավի Խաբադ-Լյուբավիչ» հրեական կրոնական կենտրոնի դերակատարությունը: Ամեն շաբաթ օր այս կենտրոնի կազմում գործող սինագոգայում իրականացվում են կրոնական արարողություններ և ծիսական հացկերույթ: Կրոնական համայնքը ղեկավարում է Հայաստանի հրեաների առաջնորդը (րաբունին), որը նաև իրականացնում է կրոնածիսական բոլոր արարողությունների համակարգումը:

ՀՀ հրեական կազմակերպությունները սերտ կապեր են պահպանում Թբիլիսիում հավատարմագրված Իսրայելի դեսպանության, ինչպես նաև ԱՊՀ տարբեր երկրների հրեական համայնքների հետ:

Հայաստանի հրեաների մեջ առանցքային նշանակության տոները, բովանդակությունից ելնելով, կարելի է բաժանել երկու մասի՝ կրոնական

⁸⁶ Ա.Պ. Վարժապետյան-Ֆելլեր, նշվ. աշխ., էջ 51-52:

⁸⁷ Мордехай Нави Хабат-Любавич: Еврейский общинный центр. Справочник "Спюр", Ереван, 2000, с. 101:

⁸⁸ Ա.Պ. Վարժապետյան-Ֆելլեր, նշվ. աշխ., էջ 54:

և պետական: Կրոնական տոներից հրեաների համար գլխավորներից են երեք հիմնական տոներ՝ Պեսախը (հրեական Չատիկը), Շաբուտը⁸⁹ (մոտավորապես կարելի է քարզմանել որպես երդման օր) և Սուկկոտը (որը ընդունված է անվանել մաս Վրանների տոն):⁹⁰ ՀՀ հրեաների մեջ հանդիսավորությամբ և մեծ ոգևորվածությամբ տոնում են Ռոշ-Հաշանա տոնը (հրեական Նոր տարի): Այն շաբաթական է, նշվում է սեպտեմբեր ամսին և սովորաբար ուղեկցվում է ճոխ և զվարթ հացկերությամբ:⁹¹

Ընդհանրապես հրեական տոներն իրենց բովանդակությամբ միայն կրոնական չեն: Դրանք խիստ ազգային բնույթ ունեն և արտացոլում են հրեա ազգի պատմական անցյալը և կենսական փորձի հիման վրա ձևավորված իմաստությունը:

Հայաստանաբնակ հրեաների ընտանիքների մեծամասնությունը խառնամուսնական է: Տարածված են հայ-հրեական (ավելի սակավ են հրեա-հայկական), հանդիպում են մաս հրեաների և արևելաալավոնական (ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ) ժողովուրդների ներկայացուցիչների խառնամուսնական ընտանիքներ:

Հանրահայտ է, որ հրեաների մեջ երեխաների ազգային պատկանելությունը փոխանցվում է մայրական գծով և որոշ հրեաների վկայությամբ,⁹² երեխայի՝ մայրական կողմից մինչև երրորդ սերունդ հրեական ծագումը բույլ է տալիս նրան համարել հրեական էթնիկ հանրության ներկայացուցիչ: Այս տեսակետից բացառություն չեն կազմում մաս որոշ իրողությունները մեր հանրապետությունում: Հետազոտության ընթացքում գրանցվել են շատ դեպքեր, երբ խառնամուսնական ընտանիքների հրեա մոր առկայության պայմաններում երիտասալ սերնդի անդամների մեջ ձևավորվել էր հրեական ազգային ինքնագիտակցություն:

Նկատենք մաս, որ Հայաստանի հրեաների մեծամասնությունը ռուսախոս է և համայնքի ներսում հաղորդակցության լեզուն հիմնականում ռուսերենն է: Սակայն այդ հանգամանքը չի բուլացնում մայրենի լեզվի

⁸⁹ Шануйт: Праздник единения с Торой. – Марец Давид, N 10-11, 2001.

⁹⁰ Սուկկոտին, ըստ ավանդույթի, ընդունված է քնակելի տան կողքին կառուցել ժամանակավոր վրաններ և դրանցում ապրել տոնակատարության ամբողջ ընթացքում:

⁹¹ *Ա.Զ. Թադևոսյան*, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 5, 2002, էջ 17-19; “Маленькие уголки большой страны. Март, Май, Сентябрь”, Иерусалим, 2001, 2002 (Еврейский календарь, издан для еврейских общин стран СНГ).

⁹² *Ա.Զ. Թադևոսյան*, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 5, 2001, էջ 22-24, *Յու.Ի. Մկրտումյան*, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, 2001-2002, էջ 24-27:

նկատմամբ հետաքրքրություն դրսևորելուն, և մույնիսկ հասուն տարիքի մարդկանցից շատերը ներկայումս սովորում են իրենց մայրենի լեզուն և ունեն դրան տիրապետելու ձգտում ու հնարավորություններ: Չնայած ռուսերենի մասն լայն տարածվածությանը ներկայումս ՀՀ հրեաների մեծ մասն ազգային լեզու է համարում իր մայրենին, այն դեպքում, երբ 1989թ. այդպիսիների քիվը կազմում էր 26%, 68,5%-ը մայրենի համարում էր ռուսերենը և 5,5%-ը՝ հայերենը:⁹³

Իրագործված հետազոտությունների ընթացքում հեղինակները համոզվեցին, որ ՀՀ հրեաների մեջ գրավոր և, հատկապես, բանավոր հայերենի իմացությունը բավականին բարձր է, չնայած ռուսերենը շարունակում է մնալ առավել կիրառվող, իսկ ազգային լեզուն՝ տակավին ուսումնառվող:

Ընդհանրացնելով ՀՀ հրեաների մասին սույն ակնարկը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ Իսրայելը և միջազգային հրեական կազմակերպությունները մեծ և բազմատեսակ օժանդակություն են ցույց տալիս հանրապետության հրեական համայնքին, ինչի շնորհիվ հնարավորություններ են ստեղծվում մայրենի լեզվի, ազգային մշակույթի ու ավանդույթների պահպանման ու զարգացման ասպարեզում, ինչը թույլ է տալիս նրա անդամներին բնականոն ձևով իրականացնելու իրենց մշակութային ինքնության վերարտադրությունը:

3.6. Լեհեր

ՀՀ 2001թ. մարդահամարի անցկացման ժամանակ հանրապետությունում գրանցվել էր 97 լեհ, որոնց կազմում բացահայտորեն գերակշռում էին կանայք (79 հոգի), այսինքն՝ շուրջ 81%,⁹⁴ ընդ որում, լեհական բնակչության գրեթե 95%-ը քաղաքաբնակ էր:⁹⁵

Տպագիր և արխիվային վիճակագրական տվյալների համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց ի հայտ բերելու ՀՀ ներկայիս տարածքում լեհական բնակչության քվաքանակի պատմական շարժընթացը, որը և բերվում է ստորև ներկայացված աղյուսակում.

⁹³ Ռ. Պ. Վարժապետյան-Ֆելլեր, նշվ. աշխ., էջ 50-51:

⁹⁴ ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

⁹⁵ Նույն տեղում:

**ՀՀ-ում բնակվող լեհերի բվարանակի
շարժընթացը 1897-2001թթ.⁹⁶**

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
1.188	705	-	389	691	270	97

Աղյուսակից երևում է, որ մինչև Առաջին աշխարհամարտի տարիները, հետագա տարիների մարդահամարների ցուցանիշների համեմատությամբ՝ լեհերի թիվը եղել է ամենամեծը:⁹⁷ 1910-1920-ական թվականների սկզբներին Հայաստանի տարածքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, եղեռնագործությունները, սոցիալ-տնտեսական վատթարագույն իրավիճակը պայմանավորեցին մահ լեհական բնակչության նկատելի նվազումը: Հետագայում՝ 1979թ. զրանցվեց լեհ բնակչության նկատելի աճ:⁹⁸ Լեհերի արտագաղթը Հայաստանից շարունակվեց 1979թ. հետո և մեծ ծավալների հասավ ՀՀ անկախության տարիներին՝ վերն արդեն նշված⁹⁹ պատճառներով:

Լեհերի առաջին ընտանիքները Հայաստանի Հանրապետության տարածքում հաստատվել են XIXդ. երկրորդ կեսից: Նրանց թվի վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ կան պահպանված 1886թ. «Ընտանեկան ցուցակներում»: Ըստ այդ հաշվառման՝ լեհերի մոտավոր թիվը 90 մարդ էր, որոնք կազմում էին 23 ընտանիք (55 տղամարդ ու 35 կին), այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիքում միջին հաշվով զրեթե 4 մարդ:¹⁰⁰ Լեհերը հիմնականում ցրվել (ղիսպերս) բնակվում էին Երևանում, Ալեքսանդրապոլում (ներկայիս Գյումրի), Մեծ Ղարաբլիխայում (ներկայիս Վանաձոր), ինչպես մահ Արարատյան դաշտավայրի, Շիրակի և Լոռվա տարածքի գյուղական բնակավայրերում:

Ըստ նույն աղբյուրի՝ լեհերի շուրջ 60%-ը գյուղաբնակ էր: 1897թ. Հա-

⁹⁶ Տե՛ս սույն գլխի 4-12 ծանոթագրությունները:

⁹⁷ Ի դեպ, հեղինակները ուսումնասիրեցին Հայաստանի ներկայիս տարածքում մինչև 1897թ. բնակվող լեհերի բվարանակը. այն որոշակիորեն զիջում էր 1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարի ցուցանիշներին: Սակայն դրանք մանրամասնորեն չեն դիտարկվում, քանզի, ինչպես նշվել է վերևում, սույն աշխատության գերակա խնդիրները կապված են արդիական, ժողովրդագրական, էթնոմշակութային և իրավաբանական կազմության հետ:

⁹⁸ Տե՛ս աղյուսակը:

⁹⁹ Տե՛ս սույն աշխատության էջ 65-74:

¹⁰⁰ Տե՛ս "Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г.", Тифлис, 1893, сс. 61, 397, 485, 497:

մառուսաստանյան առաջին մարդահամարի ժամանակ, որը կարևոր ուղեցույց է Հայաստանում լեհերի վերաբերյալ ժողովրդագրական վերլուծություններ կատարելու համար, 1.188 լեհերի շուրջ 78%-ը ապրում էր քաղաքներում:¹⁰¹ Տղամարդիկ 18 անգամ շատ էին կանանցից, ինչը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է նրանով, որ լեհ տղամարդիկ այստեղ էին եկել (կամ հրավիրվել) որոշակի աշխատանքներ կատարելու նպատակով: 1897 և 1886թթ. լեհերի թվաքանակի համեմատությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ 11 տարում լեհերի ընդհանուր թիվը աճել է 13,6 անգամ, իսկ տղամարդկանցը՝ 21 անգամ, մման աճ կարող էր տեղի ունենալ միայն զանգվածային ներգաղթի պայմաններում:

Հայաստանի լեհական համայնքի ղեկավար Ա. Բ. Կուզմինսկայան, իր ուշագրավ հոդվածում¹⁰² անդրադառնալով ՀՀ լեհական բնակչության ձևավորման հարցերին՝ առանձնացնում է երեք փուլ: «Հայաստանում լեհերի հայտնվելու պատմությունը կարելի է պայմանականորեն վերագրել XIXդ. երկրորդ քառորդին: Լեհերը փորձառու ռազմիկներ էին: Նրանցից շատերը ծառայում էին ցարական բանակում, մասնակցել էին Անդրկովկասում և Թուրքիայում մղված ռազմական գործողություններին: Նրանք ամուսնանում էին տեղացի աղջիկների՝ հայուհիների հետ: Նրանցից շատերը 1915թ. ցեղասպանության ժամանակ փախել էին Ռուսահայաստան և հիմնավորվել այստեղ: Դա մի ալիք էր:

Երկրորդ ալիքը աքսորյալներն էին՝ լեհական պետության վերականգնման համար ծավալված ազգային-ազատագրական շարժումների մասնակիցները: Համայնքում կան աքսորված լեհերի շառավիղներ, որոնց նախնիներն աքսորվել էին «ցարական գործերում խռովություններ հարուցելու», ասպտամբություններին մասնակցելու համար:

Երրորդ ալիքը մեր ոչ հեռավոր անցյալն է: Դա Լեհաստանի նոր բաժանումն էր ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև Երկրորդ աշխարհամարտի նախօրեին: 1939թ. նշանավորվեց զանգվածային աքսորներով, այդ թվում՝ զինվորականների, դեսիլ Սիբիր և Ղազախստան: Պատերազմից հետո ոմանք այնտեղից տեղափոխվեցին Կովկաս: Բացի այդ, Հայաստանում հայտնվել էին զգալի թվով լեհեր, որոնք պատերազմի ժամանակ

¹⁰¹ St'u Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г. Эриванская губерния, СПб., 1905, сс. 52-53; Елисаветпольская губерния, СПб., 1904, сс. 62-63; Тифлисская губерния, СПб., 1905, сс. 76-78:

¹⁰² *Այլա Կուզմինսկայա*, Հայաստանի լեհերը. – Հայաստանի ազգությունները, էջ 80-86:

եվակուացվել էին Արևմտյան Ուկրաինայից՝ Լվովից, Բրեստից և այլ վայրերից: Հետագայում նախկին ԽՍՀՄ ալլ հանրապետություններից աշխատելու համար Հայաստան էին եկել լեհ մասնագետներ իրենց լեհուհի կանանց հետ. շատ հայեր էլ ամուսնացել էին լեհուհիների հետ»:¹⁰³

Խորհրդային կարգերի օրոք անցկացված մարդահամարների տվյալները գալիս են լրացնելու Ա. Բ. Կուզմինսկայայի վերոնշյալ տեսակետները:

1926թ. մարդահամարի ժամանակ լեհերի թիվը 705 էր (621 տղամարդ, 84 կին), քաղաքային բնակչությունը գերակշռող էր՝ 684 մարդ (610 տղամարդ, 74 կին): Գյուղական վայրերում ապրում էր ընդամենը 21 մարդ:¹⁰⁴ Տղամարդկանց թիվը 7,4 անգամ գերազանցում էր կանանց թվին: Ակներև է, որ նախորդ մարդահամարի համեմատ լեհերի թիվը զգալի նվազել էր՝ շուրջ 1,7 անգամ, որի պատճառներին վերևում անդրադարձել ենք:

Վերլուծելով 1970թ. մարդահամարի ժողովրդագրական ցուցանիշները՝ կարելի է առանձնացնել երկու կարևոր հանգամանք.

- էապես փոխվել էր տղամարդկանց և կանանց քվաքանակի հարաբերակցությունը: Կանայք կազմում էին ամբողջ բնակչության 72%-ը,
- քաղաքներում ապրում էր լեհ բնակչության ավելի քան 88%-ը, միայն Երևան քաղաքում տեղավորված էր 61,4%-ը:

1926թ. մարդահամարի տվյալների հետ համեմատելիս տեսնում ենք, որ լեհերի թիվը 44 տարվա ընթացքում (1926-1970թթ.) նվազել էր 1,8 անգամ, նման անկումը կարող էր լինել արտագաղթի և բնական աճի բացասական միտումների դեպքում: Հարկավոր է հաշվի առնել նաև Երկրորդ աշխարհամարտի հետևանքով տղամարդ բնակչության նվազման գործունի առկայությունը:

Հետագա շուրջ տասը տարիների ընթացքում (1979թ.) լեհ բնակչության թիվը աճել էր գրեթե 1,8 անգամ և, ինչպես երևում է աղյուսակից, ուներ այսպիսի պատկեր. 691 բնակիչ, որից 58%-ը կանայք էին: Բնակչության կեսից ավելին ապրում էր քաղաքներում (51,6%), միայն Երևանում ապրում էր ամբողջ բնակչության 33%-ը:¹⁰⁵

¹⁰³ Նույն տեղում, էջ 81-82:

¹⁰⁴ Стат. Всесоюзная перепись населения 1926г. Население Закавказья: Краткие итоги, Тифлис, 1928, Таблица 5, с. 8:

¹⁰⁵ Տե՛ս սույն գլխի 4-12 ծանոթագրությունները:

Խորհրդային շրջանի վերջին մարդահամարը հանրապետությունում արձանագրեց 270 լեհ (103 տղամարդ և 167 կին), քաղաքային 206 բնակչից 138-ը կանայք էին (շուրջ 67%)¹⁰⁶ 1979թ. մարդահամարի համեմատ, եթե քաղաքային բնակչությունը նվազել էր 151 մարդով կամ 1,7 անգամ, ապա գյուղականը՝ 270 մարդով կամ 5,2 անգամ: Այս պարագայում ամբողջ լեհ բնակչությունը նվազել էր 2,5 անգամ, տղամարդկանց թիվը՝ 2,8, իսկ կանանցը՝ 2,4 անգամ:

2001թ. մարդահամարի տվյալներով, ինչպես նշվեց վերևում, Հայաստանում ապրում էր 97 լեհ (տե՛ս աղյուսակը) և, համեմատած 1989թ. մարդահամարի տվյալների հետ, նրանց թվաքանակը պակասել է շուրջ 2,8 անգամ:

Հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռում ամփոփ ներկայացնելու ՀՀ-ում այսօր բնակվող լեհերի ժողովրդագրական և էթնոմշակութային բնութագիրը: Նախ նշենք, որ նրանց մի մասը բնակություն է հաստատել Հայաստանում 1960-ական թվականներից հետո՝ անուսնության, աշխատանքի անցնելու պատճառներով, ինչպես նաև զինծառայությունից հետո:¹⁰⁷

Լեհերը հիմնականում բնակվում են ցրիվ (դիսպերս), և հանրապետությունում չկան նրանց հավաք (կոնպակտ) բնակության վայրեր: Լեհերը հիմնականում ապրում են Երևանում, ինչպես նաև Գյումրի, Վանաձոր, Էջմիածին, Աշտարակ, Ստեփանավան, Արմավիր և այլ քաղաքներում:

Հայաստանաբնակ լեհերի մեջ սակավ են մենեթնիկ լեհական ընտանիքները: Նրանց միջավայրում հիմնականում տարածված են միջեթնիկ ամուսնությունները, հատկապես՝ հայ-լեհական: Նկատենք, որ Հայաստանում առկա են նաև լեհ-ուկրաինական (ուկրաինա-լեհական), լեհ-բելառուսական (բելառուսա-լեհական), լեհ-ասորական (ասորա-լեհական), լեհ-հունական (հունա-լեհական) խառնամուսնական ընտանիքներ:¹⁰⁸

¹⁰⁶ Տե՛ս "Итоги Всесоюзной переписи населения 1989г. по Армянской ССР", М., 1989, с. 9:

¹⁰⁷ Հանրահայտ է, որ Խորհրդային Միության տարածքում բնակվում էր շուրջ 1,5 միլիոն լեհ, որոնց մի մասն էլ տարբեր միութենական հանրապետություններից զինծառայության էր գործուղվում Հայկական ԽՍՀ:

¹⁰⁸ Այստեղ մեկ անգամ ևս նպատակահարմար ենք գտնում ընդգծել, որ հանրապետությունում ազգամիջյան հարաբերություններում գոյություն ունեցող փոխադարձ բարյացակամությունը, սերտ համագործակցությունը և փոխհարգանքը հայերի և բոլոր ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև հենց իրենց, ազգային փոքրամասնությունների միջև նպաստել են ներդաշնակ, բարեմալատ և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, որի արդյունքում լայն տարածում են ստացել երկէթնիկ (լատին ազգային) ամուսնությունները:

Այս առումով հետաքրքրական է Ա.Բ. Կուզմինսկայայի հետևյալ դիտարկումը. «Հայաստանաբնակ լեհերը մեծ մասամբ չեն խոսում իրենց մայրենիների լեզվով, բացի այն սակավաթիվ անձանցից, որոնք վերջերս են դուրս եկել բուն Լեհաստանից կամ մայրենի Լեհաստանի պատկանած տարածքներից՝ Արևմտյան Ուկրաինայից և Արևմտյան Բելոռուսիայից)»:¹⁰⁹

Հայաստանում բնակվող լեհերի ընտանիքների կազմին և սեռատարիքային կառուցվածքին վերաբերող տվյալները թույլ են տալիս արձանագրել, որ տղամարդկանց թվաքանակը փոքր է (շուրջ 19%)¹¹⁰ Ժողովրդագրական ցուցանիշները վկայում են, որ ՀՀ լեհ բնակչության կանանց միջին տարիքը բարձր է: Նման իրավիճակի պայմաններում հանրապետության լեհերի բնական աճը առաջիկայում վտանգված է, առավել ևս, որ մենեթնիկ լեհական և երկեթնիկ խառնագային ընտանիքների երիտասարդ սերնդի անդամների արտագաղթը դեռևս շարունակվում է, չնայած 2000-ականներին սկզբներից այն որոշակիորեն նվազել է:¹¹¹

Լեհերի ակտիվ տեղաշարժերը հանրապետությունից հիմնականում տեղի են ունեցել 1993-1996թթ.:¹¹² ՀՀ լեհերի մեջ կատարված էքնոսոցիոլոգիական հարցումներից պարզվեց, որ հանրապետությունից մեկնելու գլխավոր պատճառներ են դարձել նրանց ընտանիքների նյութական ծանր պայմանները, աշխատատեղերի կրճատումը և գործազրկությունը, ցածր եկամուտները և կենսաթոշակները, սոցիալ-իլավական անպաշտպանվածությունը: Հայաստանի շրջափակումը ևս արտագաղթի պատճառներից էր: Հարցվողների կողմից նշվել է նաև հարազատներին մոտ ապրելու հանգամանքը:

Հայաստանի լեհերի «Պոլոնիա» հանրակցության նախագահ Ալլա Կուզմինսկայան իր վերոհիշյալ հոդվածում գրում է. «Պոլոնիայի» անդամների մեծ մասը ապահովված չէ աշխատանքով, բոլորն էլ գտնվում են նյութական ու սոցիալական ծանր պայմաններում: Ամեն ընտանիքում կան երեխաներ, որոնք մուլտիսկ չեն ստանում նվազագույն անհրա-

¹⁰⁹ Ալլա Կուզմինսկայա, նշվ. աշխ., էջ 83-84:

¹¹⁰ ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-77/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

¹¹¹ Մ.Վ. Գալստյան, Էքնոսոցիոլոգիական հետազոտությունների մախնական արդյունքները (ձեռագիր, պահվում է «Ոստան» էքնոմալոգիաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության արխիվում):

¹¹² Զու.Ի. Մկրտումյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 4, էջ 14-16:

ժեշտը»:¹¹³ «Հարկ է նշել ևս մի հանգամանք, - շարունակում է հեղինակը, - որը կարող է լեհերի գաղթի պատճառ հանդիսանալ: Դրանք այն խոչընդոտներն են, որոնք վերջին ժամանակներս ծագում են մարդկանց աշխատանքի տեղավորելիս՝ հիմնականում գրավոր հայերենին չտիրապետելու պահանջի պատճառով»:¹¹⁴

Հաշվի առնելով, որ ճակատագրի բերումով ՀՀ լեհերի մեծ մասը ռուսախոս է, դժվարություններ են առաջացել նաև ռուսման ասպարեզում. «Կրթություն ստանալը, հատկապես բարձրագույն, ներկայումս փաստորեն անհնար է դառնում»: Հոդվածում հիշատակվում է նաև հետևյալ փաստը. «Կար երկու ընտանիք (կանայք՝ լեհուհիներ, որոնք ամուսնացած են հայերի հետ, երիտասարդ ընտանիքներ), որոնք նյութական ծանր պայմանների պատճառով ցանկանում էին մեկնել Լեհաստան»,¹¹⁵ բայց դեռևս մնում են Երևանում, վստահ չլինելով, թե մեկնելու որոշումը ճիշտ է: Չպետք է մոռանալ, որ հայ ամուսնու համար դժվար է խզել կապերը իր հայրենիքի և հարազատների հետ»: Հեղինակն ապա նշում է, որ «Լեհաստանը քայլեր է ձեռնարկել ցանկացողներին հրավիրելու վերադառնալ պատմական հայրենիք և նրանց համար ապահովել աշխատանքի ու կյանքի բնականոն պայմաններ»:¹¹⁶

Միգրացիոն դիրքորոշումները առավել կայուն են երիտասարդ և միջին սերնդի շրջանում: Ինչ վերաբերում է հանրապետությունից նրանց մեկնման ուղղություններին և հետագա մշտական բնակավայրի ընտրությանը, հարցման մասնակիցների 65%-ը նշել է իրենց հայրենիքը՝ Լեհաստանը, 25%-ը՝ Ուկրաինան և Բելառուսը,¹¹⁷ իսկ 10%-ը՝ այլ երկրներ: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ լեհերի մեջ բարձր տոկոս է

¹¹³ *Այլա Կուզմինսկայա*, նշվ. աշխ., էջ 85:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 83: «Լեզվի մասին» ՀՀ օրենքի կիրարկմանը չափազանց կարճ ժամանակում անցնելու բացասական հետևանքների մասին տես սույն աշխատության 54-56 էջերը:

¹¹⁵ Գրքի հեղինակները նման փաստեր բազմիցս արձանագրել են Երևանում, Գյումրիում և այլ քաղաքներում: Տես, օրինակ, *Յու.Ի. Սկրառովյան*, Դաշտային ազգադրական նյութեր, տետր 4, 2001, տետր 5, 2002:

¹¹⁶ *Այլա Կուզմինսկայա*, նշվ. աշխ., էջ 85:

¹¹⁷ Հայաստանում բնակություն հաստատած լեհերի մի մասը նախկինում բնակվում էր Ուկրաինական ԽՍՀ-ում և Բելոռուսական ԽՍՀ-ում, որտեղ միշտ էլ լեհական բնակչության նշանակալի է եղել (տես, օրինակ, Распределение населения Украинской ССР по национальности. - "Итоги Всесоюзной переписи населения 1970 года. Национальный состав населения СССР", М., 1973, с. 152; Распределение населения Белорусской ССР по национальности. - "Итоги Всесоюзной переписи населения 1970 года. Национальный состав населения СССР", М., 1973, с. 192.):

կազմում տնտեսական միգրանտների քվաքանակը, որոնց մեջ գերակշռում են 20-45 տարեկան աշխատունակ տարիքի տղամարդիկ:

Միգրանտները մշտական կապեր են պահպանում Հայաստանում գտնվող հարազատների հետ, և, ըստ գրառած նյութերի, երիտասարդության մեծամասնությունը չի վերադառնա, քանի որ նրանք հարմարվել են նոր միջավայրին, ունեն աշխատանք և ապրում են բարձր կենսամակարդակ ունեցող երկրում: Մեկնողների մեջ կան նաև անհատներ, ովքեր ուսումը շարունակում են Լեհաստանում:¹¹⁸

Լեհերը առանձնանում են իրենց կրթական և մասնագիտական բարձր մակարդակով: Նրանցում գերակշիռ մեծամասնությունն է կազմում բարձրագույն, քերի բարձրագույն, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը: Վերևում հիշատակված հոդվածում լեհական համայնքի ղեկավարը՝ Ալլա Կուզմինսկայան, գրում է. «Հայաստանում բնակվող լեհերը հիմնականում մտավոր աշխատանքի մարդիկ են, տարբեր մասնագիտությամբ մտավորականներ՝ բժիշկներ, մանկավարժներ (նրանց թիվը գերակշռում է), երաժիշտներ, տնտեսագետներ, ֆիզիկոսներ, տարբեր պրոֆիլի ինժեներներ, տեխնիկներ, իրավաբաններ: Ցավոք, նրանցից շատերը չեն աշխատում ոչ միայն աշխատատեղեր չլինելու պատճառով, այլև հարկադրված էին թողնել աշխատանքը հայերենին անբավարար տիրապետելու պատճառով»:¹¹⁹

Բնութագրելով ՀՀ լեհերի սոցիալ-տնտեսական կացությունը, հարկ ենք համարում նշել, որ արդյունաբերական ձեռնարկություններում նախկինում աշխատող բանվորները և ծառայողները, ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների, մասնակցել են իրենց ձեռնարկությունների սեփականացնողին համարձակ գործընթացին և ստացել են բաժնետոմսեր: Ինչպես հայերը, այնպես էլ լեհերը հետագայում, կապված ընտանիքի ծանր նյութական պայմանների հետ, վաճառել են այդ բաժնետոմսերը: Այդ ձեռնարկությունների ինժեներատեխնիկական անձնակազմի մեծ մասը գործազրկության պատճառով արտագաղթեց Հայաստանից կամ վերադարձվեց տնտեսական միգրանտների՝ ուղևորվելով հիմնականում և՛ դեպի Լեհաստան, և՛ Ռուսաստան, Ուկրաինա ու Բելառուս:

¹¹⁸ Տե՛ս Մ. Վ. Գալստյան, Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութեր (սլահվում են «Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության արխիվում):

¹¹⁹ Ալլա Կուզմինսկայա, նշվ. աշխ., էջ 82-83:

Հումանիտար և սոցիալական ոլորտներում լեհերի զգալի մասը պահպանում է գրադավածության համեմատաբար բարձր մակարդակ, և նրանց շրջանում գործազուրկների թիվը փոքր է, չնայած նրանց նյութական պայմանները անհամեմատ վատթարացել են: Ուստի կենսական է այն օգնությունը, որ շատերը ստանում են Լեհաստան մեկնած ազգականներից ու բարեկամներից: Որոշակի նյութական օգնություն է ցուցաբերում նաև «Պոլոնիա» հասարակական բարեգործական կազմակերպությունը: 2001թ. սկսած՝ ՀՀ կառավարությունն ամեն տարի, ի թիվս մյուս բոլոր ազգային համայնքների, լեհական համայնքին տարբեր կաթիլների համար տրամադրում է շուրջ մեկ միլիոն դրամ:

Վերջին տարիներին ՀՀ լեհական համայնքը սերտ կապեր է հաստատել պատմական հայրենիքի պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների հետ, ստանում է հումանիտար աջակցություն (այդ թվում՝ դասագրքեր, պատմական և գեղարվեստական գրականություն և այլն): Լեհաստանում ստեղծվել է լեհական արտասահմանյան բոլոր համայնքները միավորող կազմակերպություն՝ «Վսպյուլնոտա Պոլսկա»,¹²⁰ որի հետ Հայաստանի «Պոլոնիա» լեհական հանրակցությունը պարբերաբար համագործակցում է:

Հայաստանաբնակ լեհերը, ըստ այստեղ բնակվելու վաղեմության, միմյանցից տարբերվում են մայրենի լեզվին տիրապետելու աստիճանով: Նրանց կարելի է բաժանել երկու խմբի.

- նրանք՝ ովքեր Հայաստանում բնակվում են արդեն երեք և ավելի սերունդ,
- նրանք, ովքեր բնակվում են ոչ ավելի, քան երկու սերունդ:

Առաջին խմբի ներկայացուցիչները մայրենի լեզվի տիրապետման աստիճանով աչքի չեն ընկնում, մայրենի լեզվի իմացությունը նրանցում հազվադեպ է: Երկրորդ խմբի ներկայացուցիչները, որոնք Հայաստան են տեղափոխվել հիմնականում Լեհաստանից, Հայաստանի անկախացումից հետո գլխավորապես հայ տղամարդկանց հետ ամուսնացած կանայք են և զերազանց են տիրապետում մայրենի լեզվին: Նրանց մեծ մասը, ի տարբերություն առաջին խմբի ներկայացուցիչների, ազգակցական կապերի շնորհիվ սկսելով հաղորդակցություն ունի հայրենիքի հետ: Վերջին տարիներին աշխատանքի համար արտասահման մեկնելը

¹²⁰ Այլա Կուզմինսկայա, նշվ. աշխ., էջ 84:

նույնպես նպաստեց Հայաստանում լեհերի թվի ավելացմանը: Լեհաստանում աշխատող հայ երիտասարդների զգալի մասը ամուսնանում է տեղացի աղջիկների հետ, «խկնդրոշ հայուհիներ կարողացել են իրենց լեհ ամուսինների համար սիրելի դարձնել Հայաստանը, և նրանք հիմնավորվել են այստեղ»:¹²¹ Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ լեհերենի իմացությամբ աչքի են ընկնում ոչ միայն ծագումով լեհ կանայք, այլ նաև նրանց հայ ամուսինները: Նշվածը բնորոշ է նաև լեհ-հայկական ընտանիքներին, որոնք, համեմատած հայ-լեհականի հետ, հազվադեպ երևոյթ են: Որոշ ընտանիքներից հայ ամուսինները նույնպես անդամագրվել են «Պոլոնիա» միությանը, ինչը նպաստում է լեհուհիների ավելի անկաշկանդ մասնակցությամբ համայնքի գործերին: «Պոլոնիան» միավորում է այն մարդկանց, որոնց տոհմածառի մեջ լեհական արյուն կա:¹²² Այս տեսակետից, բնութագրական է Հայաստանի լեհերի «Պոլոնիա» միության անդամների ցուցակը, որոնցում մեծ թիվ են կազմում հայկական ազգանունները, որոնք ներկայացնում են հայ-լեհական ընտանիքները:

Ոչ միայն դպրոցահասակ, այլ նաև հասուն տարիքի մարդկանց միջավայրում լեհերենի ուսուցման հնարավորության դեպքում այն սովորելու ցանկություն են հայտնում նաև հայ-լեհական և լեհ-հայկական ընտանիքների ոչ լեհ անդամները:

Հայաստանի լեհերի էթնոմշակութային զարգացման բնագավառում մեծ է 1995թ. գործող «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության դերը: Այն ծավալում է ծրագրային նպատակաուղղված գործունեություն հետևյալ ուղղություններով.¹²³

- ՀՀ-ում լեհական համայնքի ամրապնդում ու զարգացում,
- հայ և լեհ ժողովուրդների բարեկամություն և համագործակցություն,
- հայ-լեհական մշակութային, տնտեսական և գիտական կապերի զարգացում,
- Հայաստանում լեհերենի ուսուցման կազմակերպում ու լեհական մշակույթի տարածում, ինչպես նաև լեհական մշակութային կենտրոնի ստեղծում,

¹²¹ *Այս Կուզմինկայա*, ԵՂՎ. աշխ., էջ 82:

¹²² Նույն տեղում, էջ 83:

¹²³ «Կանոնադրություն լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության», Եր., 1999 («Պոլոնիա» կազմակերպության արխիվ):

- ՀՀ-ում ազգությամբ լեհ քաղաքացիների սոցիալական, քաղաքացիական, մշակութային, տնտեսական իրավունքների, ինչպես նաև ազատությունների պաշտպանություն,
- Լեհաստանի և այլ երկրների լեհական համայնքների հետ բազմակողմանի կապերի զարգացում և ամրապնդում,
- Հայաստանի լեհական համայնքի համակողմանի զարգացում, հոգևոր վերելքի ապահովում:¹²⁴

Փաստորեն, ամբողջ գործունեությունը նպատակ ունի նպաստելու հայաստանաբնակ լեհերի ազգային նկարագրիչ պահպանելու և վերադարձնելու գործին:

«Պոլոնիա»-ն ձգտում է բոլոր հնարավորություններն օգտագործել, որպեսզի իր անդամներին ծանոթացնի լեհական ազգային պատմամշակութային արժեքներին. կազմակերպվում են նշանավոր երաժիշտներին, գրողներին, ազգային գործիչներին նվիրված միջոցառումներ (ցերեկույթներ և երեկույթներ), ժողովրդական դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդեսներ, երաժշտական համերգներ և այլն:

Հայաստանաբնակ լեհերը հիմնականում կաթոլիկ քրիստոնյաներ են, և նրանց մեջ պահպանվում են կրոնական ծեսերն ու արարողությունները: «Պոլոնիա» կազմակերպության ջանքերով կապեր են ստեղծվել հայ կաթոլիկների համայնքի հետ: Հատկապես կարելի է առանձնացնել նրանց կապերը Շիրակի մարզի Փանիկ գյուղի կաթոլիկ համայնքի հետ: Լեհերն այս համգամանքն օգտագործում են նաև տեղի կաթոլիկ եկեղեցու ծառայություններից օգտվելու համար, ինչը նաև կարևոր գործոն է հայ-լեհական փոխհարաբերությունների մերձեցման առումով: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ լեհերից շատերը հաճախ այցելում են նաև հայկական եկեղեցիներ, մասնակցում տարբեր արարողությունների:

Հանրապետությունում լայն հնչեղություն ստացան լեհ մեծ բանաստեղծ, ազգային-ազատագրական շարժման գործիչ Ադամ Միցկևիչի 200-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները: Դրանք անցկացվեցին «Միցկևիչի տարին» համաշխարհային միջոցառումների շրջանակում:¹²⁵

¹²⁴ Այլա Կուզմինսկայա, նշվ. աշխ., էջ 82-86, «Կանոնադրություն լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության», Եր., 1999.
 («Պոլոնիա» կազմակերպության արխիվ):

¹²⁵ Այլա Կուզմինսկայա, նշվ. աշխ., էջ 84:

«Պոլոնիա» կազմակերպությունը, ըստ էության, այն եզակի միջավայրն է, որը հնարավորություն է տալիս լեհերին հանդիպելու, ծանոթանալու, շփվելու միմյանց հետ: Այն որոշակի ջանքեր է ներդրել լեհերենի ուսուցման, մանկական «Գվյադիչկա» երգչախմբի ստեղծման ու պահպանման ուղղությամբ: Հայաստանի լեհերը մասնակցեցին 2001թ. ապրիլին Լեհաստանում գումարված արտասահմանյան լեհերի միջազգային երկրորդ համագումարին: Հայաստանում գործող «Պոլոնիա» ազգային հանրակցությունը կապերի մեջ է մտնում լեհական սփյուռքի այլ կազմակերպությունների հետ, որոնց մեծամասնությունը կրում է նույն «Պոլոնիա» անունը:

Ընդհանուր առմամբ, մշակութային տեսանկյունից ՀՀ լեհերն ունեն ազատ հնարավորություններ իրենց ազգային ինքնությունը պահպանելու ու վերարտադրելու համար: Այդ ասպարեզում չկան քաղաքական կամ քաղաքացիական բնույթի խոչընդոտներ: Հիմնական բարությունները երեքն են.

- ՀՀ լեհերի քվաքանակի սակավությունը և ժողովրդագրական (հատկապես սեռատարիքային) կառուցվածքի ոչ նպաստավոր առանձնահատկությունները,
- հանրապետությունում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական ճգնաժամը և դրա արդյունքում առաջացած գործազրկությունը, կեցության ծանր պայմանները, որոնցից անմասն չմնաց մեծ լեհ բնակչությունը,
- «Պոլոնիա» կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ պայմանների (հիմնականում, մշտական աշխատավայրի և ֆինանսների) բացակայությունը:

Այդի շրջանում լայն զարգացում են ստանում Հայաստան-Լեհաստան միջպետական բազմակողմ հարաբերությունները, որոնց համակարգում իրենց որոշակի դերակատարություններն ունեն Հայաստանի Հանրապետության լեհական և Լեհաստանի բավական ստվար հայկական համայնքները:

ՉՈՐԻՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀՀ ազգային փոքրամասնությունների մասնակցությունը հանրապետության հասարակական-մշակութային կյանքին

Քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության կարևոր քաղաքականություններից է ազգային փոքրամասնությունների, որպես տվյալ հասարակության լիիրավ ու իրավահավասար մասի, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին լիարժեք մասնակցության, սեփական էքոնոմշակութային ինքնությունը պահպանելու ու վերարտադրելու հնարավորությունների ապահովվածությունը:

Էական խնդիր է ոչ միայն օրենքով նրանց իրավունքների պաշտպանվածության հոչակումը, այլ նաև գործուն մեխանիզմների և նպաստավոր մթնոլորտի առկայությունը: Դրանցում հատկապես կարևոր է ազգային փոքրամասնություններին ակտիվ կյանքով ապրելու և սեփական իրավունքների իրացում ապահովող հասարակական հաստատությունների, ինչպես և դրանց գործունեության համար ազատ ու նպաստավոր պայմանների ձևավորումը:

Այս առումով կարևոր են թե ազգային փոքրամասնությունների ինքնակազմակերպվելու և սեփական կազմավորումները ձևավորելու և դրանց ազատ ու անկաշկանդ գործունեության երաշխիքները: Կարևոր են նաև պետական, հասարակական, քաղաքական և մշակութային այլ հաստատությունների հետ համագործակցության հնարավորությունները և նրանց հետ համագործակցելու կամքի առկայության խնդիրը: Այսինքն, այս գլխում հանրապետության հասարակական կյանքին ազգային փոքրամասնությունների մասնակցության հարցը դիտարկվում է հիմնականում երկու տեսանկյունից.

ա) որքանով են լիարժեք ազգային փոքրամասնություններին ընձեռված հնարավորությունները ՀՀ-ում քաղաքացիական հասարակության

կայացման գործընթացներին մասնակից լինելու համար,

բ) որքանո՞վ են իրենք՝ ազգային փոքրամասնությունները, ակտիվ ու նախաձեռնող այդ ասպարեզում:

ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման այդի գործընթացներին ազգային փոքրամասնությունների մասնակցության հիմնահարցի բննարկումն անշուշտ առաջին հերթին վերաբերում է սեփական ինքնության պահպանման ու դիմամիկ ձևով վերարտադրության նպատակով ինքնակազմակերպվելու հնարավորությունների ու հավաքական կամքի առկայության հիմնախնդրին: Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանվածության աստիճանն ինքնին քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության կայացման ցուցիչներից մեկն է: Իսկ այդ կազմակերպությունների ձևավորման գործին ազգային փոքրամասնությունների կողմից ցուցաբերվող նախաձեռնության աստիճանը կվկայի ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորմանը ազգային փոքրամասնությունների մասնակցության և ներդրման չափի մասին:

Որոշակիորեն կարելի է ասել, որ ազգային փոքրամասնություններն իրենք անմիջական շահառուներն են այդ ոլորտում վարվող քաղաքականության: Նրանց կողմից ինքնակազմակերպման նախաձեռնողականությունը, սեփական ազգային հասարակական ու մշակութային կազմակերպությունների ձևավորումը դիտում ենք որպես ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման կարևոր նախադրյալ: Ուստի այդ նախադրյալների ձևավորմանը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների անհատական ու հավաքական մասնակցության ապահովումը դիտվում է որպես ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման գործում ցուցաբերված լուրջ ներդրում:

Ելնելով ՀՀ-ում տեղի ունեցած իրողություններից՝ կարելի է փաստել, որ ազգային փոքրամասնությունների մասնակցությունը Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորմանն ունի կարևոր նախադրյալներ: Դրանք ի հայտ եկան Հայաստանի անկախության ձեռք բերման հենց առաջին տարիներից, երբ ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների կողմից ստեղծվեցին սեփական հասարակական, կրթամշակութային, կրոնական առաջին կազմակերպությունները:¹

¹ Այդ կազմակերպությունների ստեղծման պատմությունը տես Հայաստանի ազգությունները, Եր., 2000:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջացումը բարենպաստորեն անդրադարձավ ոչ միայն հայերի, այլ նաև այստեղ բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների էթնովձակությանին արժեքների վերարտադրության գործընթացների վրա: Խորհրդային Միության տարիներին ազգային փոքրամասնություններից շատերը կանգնել էին սեփական լեզվամշակության ինքնության կորստի առջև և նրանց հիմնական լեզուն մայրենիի փոխարեն դարձել էր ռուսերենը:²

Արդեն 1990-ական թվականներին ազգային փոքրամասնություններն, օգտվելով Հայաստանի Հանրապետությունում հասարակական, մշակութային և քաղաքական միավորումներ ձևավորելու՝ օրենքներով ամրագրված իրավունքներից, սկսեցին ստեղծել ազգային-հասարակական (մշակութային, բարեգործական) կազմակերպություններ: Դրանք սկզբնական շրջանում ձևավորվեցին Երևան քաղաքում, իսկ այնուհետև դրանցից շատերը մասնաճյուղեր բացեցին նաև մարզերում: Ներկայումս Հայաստանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնություններն ունեն կայացած հասարակական կազմակերպություններ, իսկ նրանցից մի քանիսը (օրինակ, այս գրքում ուսումնասիրված հրեաները և գերմանացիները, իսկ առաջին գրքում՝ ռուսները, եզդիները, քրդերը, հույները և ասորիները)³ ունեն մեկից ավելի կազմակերպություններ:

Ազգային փոքրամասնությունների կողմից ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում կարևոր ներդրում պետք է համարել տարբեր ազգային փոքրամասնությունների կողմից 1994 թվականին Հայաստանի ազգությունների միության ձևավորումը:⁴ Այս կազմակերպության ստեղծումը դեռևս 1990-ականների առաջին կեսին նպաստավոր դեր ունեցավ ՀՀ ազգային փոքրամասնությունների գործունեությունը առավել համակարգված և արդյունավետ դարձնելու գործում: Մինչդեռ ժամանակ այն դրականորեն անդրադարձավ յուրաքանչյուր ազգային փոքրամասնության հեղինակության և նշանակության մեծացմանը, ՀՀ պետական կառույցների, միջազգային տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության հաստատմանը, հանրապետության հասարակական և մշակութային կյանքին ազգային փոքրամասնությունների մասնակցության աճին:

² Այս հիմնախնդրի մասին տես Ռ. Վարժապետյան-Ֆելլեր, Հրեական համայնքը, էջ 48-53, Ռ.Ն. Յավիր, նշվ. աշխ., էջ 100-102:

³ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I:

⁴ Վ.Խ. Չառոն, Հայաստանի ազգությունների միությունը. - Հայաստանի ազգությունները, էջ 8-14:

Հայաստանի ազգությունների միության ստեղծումը ունեցավ մեկ այլ կարևոր նշանակություն ևս՝ հանրապետության հասարակայնության ուշադրությունը բևեռվեց ազգային փոքրամասնությունների և նրանց առջև ծառացած խնդիրների վրա: Այն նպաստեց նաև ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման գործին, քանի որ դրա միջոցով շատ մարդիկ հնարավորություն ստացան մասնակցելու ազգային փոքրամասնությունների համակարգված գործունեությանը և հետամուտ լինելու իրենց ազգային իրավունքների պաշտպանությանը:

Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների գործունեությունը հիմնականում ընդգրկում է մշակութային, սոցիալական, լեզվակրթական ոլորտները:

ՀՀ ազգային փոքրամասնություններից շատերը գործունե կապեր են հաստատել ինչպես իրենց ազգային պետությունների, այնպես էլ արտերկրներում բնակվող ազգակից համայնքների հետ:

Ազգային կազմակերպությունների մշակութային գործունեության կարևորությունը հատկապես մեծ է այն փոքրամասնությունների համար, ուր չկա սպորտ են ցրիվ (դիսպերս), քանզի ներգրավվում են համայնքի ջանքերով կազմակերպվող բազմաթիվ մշակութային միջոցառումներին՝ դրանով իսկ առնչվելով ազգային պատմամշակութային արժեքներին: Շնորհիվ ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների՝ շատերը հնարավորություն ստացան ապահովելու իրենց ազգային ինքնության վերարտադրությունը: Այս կազմակերպությունների գործունեությունը նպաստում է ոչ միայն փոքրամասնությունների ներկայացուցիչների ազգային ինքնության պահպանմանը, այլ նաև շատ մարդկանց՝ դրա կորսված կամ խաթարված գիտակցության վերականգնմանը:

Ազգային փոքրամասնությունների կազմակերպություններից շատերի գործունեությունը ներառում է նաև տվյալ հանրության սոցիալապես անապահով անդամներին աջակցության ցուցաբերումը: Սա կարևոր դեր է կատարում ոչ միայն տվյալ անձի սոցիալական վիճակի բարելավման առումով, այլ, որ ոչ պակաս կարևոր է՝ անապահով վիճակում գտնվող մարդկանց՝ սոցիալական դրդապատճառներով պայմանավորված հասարակական կյանքից մեկուսացվածության հաղթահարմանը:⁵ Սա քաղաքացիական հասարակության կարևոր պայմաններից մեկի՝ հասարա-

⁵ Ա.Զ. Թադևոսյան, Դաշտային ազգաբնակչության նյութեր, տետր 3, 2001, տետր 4, 2002-2003 (պահվում է «Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոնի հասարակական կազմակերպության արխիվում):

կական կյանքին անձի մասնակցության բարձրացման գործում ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների կողմից ցուցաբերվող կարևոր ներդրում է:

Կարելի է փաստել, որ ՀՀ-ում ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունները կարևոր դեր են կատարում սեփական ազգային փոքրամասնության անդամների մշակութային, լեզվական և ազգային իրավունքների իրացման միջավայրի ձևավորման տեսանկյունից՝ դրանով իսկ մպաստելով ՀՀ-ում քաղաքացիական հասարակության բաղադրիչների կայացմանը:

ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման հիմնահարցի բննարկման համատեքստում կարևոր է ոչ միայն ազգային փոքրամասնությունների կյանքում նրանց դերակատարության խնդրի բննարկումը, այլ նաև այդ կազմակերպությունների տեղը Հայաստանում քաղաքացիական հասարակության և համապատասխան հաստատությունների կայացման տեսանկյունից: Արդեն նշվեց, որ ազգային փոքրամասնությունների կազմակերպությունները բավականին գործում դեր են կատարում իրենց համայնքի կյանքում, անդամներին համախմբելով ազգային, մշակութային խնդիրների շուրջ, և օժանդակում, միավորում են նրանց ազգային, մշակութային իրավունքների իրացման ոլորտում:

Ինչ վերաբերում է այս կազմակերպությունների մասնակցությանը համահայաստանյան բնույթի խնդիրների լուծման գործում, ապա նկատելի է ակտիվության թույլ դրսևորում: Հայաստանի սոցիալ-տնտեսական ճգնաժամը ընդհանուր է ամբողջ բնակչության համար, անկախ նրա ազգային պատկանելությունից: Ուստի տրամաբանական է, որ ընդհանուր հիմնախնդիրները լուծվեն ընդհանուր ուժերով: Այս առումով հարկ է նկատել, որ ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունները կենտրոնացնելով հիմնականում սեփական՝ ազգային բնույթի հիմնահարցերի վրա, համեստ դերակատարություն ունեն Հայաստանի հասարակական կյանքի մյուս ոլորտներին վերաբերող հարցերում:

Հետազոտության ընթացքում հաղորդակցվելով ՀՀ ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ղեկավարների և անդամների հետ՝ պարզվեց, որ նրանց մեջ այնպիսի դիրքորոշում է ձևավորվել, որ իրենց հիմնական գործունեությունն առնչվում է գլխավորապես ազգային

փոքրամասնություններին վերաբերող հարցերին:⁶ Այդ պատճառով նրանց կողմից չի ցուցաբերվում նախաձեռնություն՝ մասնակից դառնալու այլ բնույթի՝ հասարակական, քաղաքացիական խնդիրների լուծման գործընթացներին: Նման մոտեցումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- նախ նրանով, որ սկզբնական շրջանում իրենց հիմնական մտահոգությունը շաղկապված է սեփական կազմակերպական հարցերի, ինքնահաստատման, համայնքի և նրա առանձին անդամների առջև ծառացած ընդհանուր և անհատական խնդիրների հոգածության հետ,
- ՀՀ ազգային փոքրամասնությունների սակավաթվությամբ, որը նրանց մեջ թերահավատություն է առաջացրել համահայաստանյան խնդիրների լուծման ասպարեզում դերակատարության արդյունավետության նկատմամբ,
- ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն այսօր, ոչ մի կարգավիճակով ներգրավված չեն պետության ոչ օրենսդիր, ոչ էլ գործադիր մարմիններում, դրանով իսկ սահմանափակված են նրանց գործունեության մասնակցության հնարավորությունները հանրապետական բնույթի խնդիրների լուծման բնագավառում,
- հանրապետությունում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ինստիտուտների (կառույցների) անկատարությամբ և զարգացման գործընթացների բարդությունով:

Վերոնշյալից որոշակիորեն բխում է, որ կարևոր նշանակության խնդիր է ազգային փոքրամասնությունների, հատկապես հավաք (կոմպակտ) բնակությամբ համայնքների ներգրավումն ու մասնակցության ակտիվացումը հայաստանյան հասարակական, քաղաքացիական կյանքի բոլոր ոլորտներին:

Հայտնի է, որ ժողովրդավարության կայացվածության առանցքային պայմաններից է հասարակությունը – իշխանություն հետադարձ կապի ապահովումը: Վերջինիս իրականացումը հնարավոր է կառավարման գործընթացին հասարակական մասնակցության ապահովման միջոցով և կառավարող վերնախավին հասարակական տարբեր խավերի ու խմբերի ձայնը լսելի և հասու դարձնելու ճանապարհով: Կառավարմանը հասարակության մասնակցությունը գլխավորապես իրականացվում է հա-

⁶ Ա.Զ. Թադևոսյան, Դաշտային ազգաբնակչության նյութեր, տեսիր 4, 2002-2003, էջ 9-14:

սարակական և ոչ կառավարական այլ կազմակերպությունների միջոցով:

Նշված դերակատարությունն իրականացնելու համար հասարակական, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունները պետք է նախաձեռնեն կառավարությունում ընդունվող որոշումների հանրայնացում՝ նպաստելով կառավարման թափանցիկության մեծացմանը, և հանրության առաջարկությունները հավաքագրելու ու կառավարող շրջանակներին ներկայացնելու ճանապարհով նպաստեն կառավարող օղակներում ընդունվող վճիռների կայացման վրա հանրության մասնակցությանն ու ազդեցության աճին: Դրանով իսկ հասարակական և ոչ կառավարական այլ կազմակերպությունները նպաստում են հասարակության պատվերների հիման վրա կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Նշվածի արդյունքում կառավարող օղակները մոտենում են հասարակությանը, և նրանց ընդունած վճիռներն ու որոշումները կժառայեն ողջ հասարակության շահերին: Այս գործընթացի իրականացումը հասարակական սեկտորի կողմից կատարվում է համապատասխան շահառուների խմբերում: Նման մոտեցման դեպքում ՀՀ ազգային-մշակութային հասարակական կազմակերպությունների շահառուների հիմնական խմբերը պետք է հանդիսանան հենց ազգային փոքրամասնությունները, որոնք Հայաստանի որոշ մարզերում ունեն մեծ թվաքանակ, իսկ որոշ բնակավայրերում՝ մեծամասնություն:

Հետևաբար, ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների խնդիրներում վերը նշված դերակատարությունը առաջնային նշանակություն պետք է ստանա: Խնդրին ըստ էության մոտենալու դեպքում հարկ է նկատել, որ ՀՀ ազգային փոքրամասնությունների մասնակցությունը կառավարման, մասնավորապես որոշումների կայացման գործընթացներին պետք է կազմակերպվի և իրականացվի ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կողմից:

Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների մասնակցության աստիճանի բարձրացման խնդրին, կարևոր ներդրում են կատարում հենց իրենց կազմակերպությունները՝ իրականացնելով համայնքի անդամների իրավական և օրենսդրական բնույթի գիտելիքների բարձ-

րացմանն ուղղված ծրագրեր:⁷

Սակայն այս տեսանկյունից ազգային փոքրամասնությունները ներկայացնող հասարակական կազմակերպություններն իրենց ազդությունների միջավայրում ունեն հսկայածավալ անելիքներ: Խոսքը վերաբերում է գրական հայերենի չիմացության պատճառով օրենքների և հասարակական կյանքի կանոնակարգմանը վերաբերող կարևոր այլ փաստաթղթերի մասին տվյալ ազգային փոքրամասնության իրազեկմանը և անտեղյակության հասարակական մթնոլորտի հաղթահարմանը:

Ընդհանրապես, ազգային փոքրամասնությունների կողմից հանրապետությունում ընթացող գործընթացներին մասնակցության ակտիվության բարձրացումը երկու կարևոր նշանակություն ունի: Մյուս կողմից, այն կարող է նպաստել ողջ հանրապետությունում քաղաքացիական հասարակության կայացման գործընթացին, մյուս կողմից, այդ գործում ազգային փոքրամասնությունների դերակատարության ստանձնմանը և հետևաբար նաև քաղաքացիական հասարակության արդեն ձևավորված հաստատություններին ինտեգրմանը:

Քաղաքացիական հասարակության կարևոր ինստիտուտներից մեկի՝ զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցությունը նույնպես կարևոր է ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների համար: Ազգային փոքրամասնություններն այս ոլորտում ունեն իրենց զգալի ներդրումը: Նախ նշենք, որ ՀՀ-ում բնակվող եզդիները, քրդերը, ուկրաինացիները, հրեաները և վրացիները ունեն սեփական ամսաթերթեր:⁸ ՀՀ եզդիների, քրդերի, ռուսների, ուկրաինացիների, վրացիների համար հանրապետական հանրային ռադիոյով հաղորդումներ են հեռարձակվում: Հարկ է նկատել, որ ազգային փոքրամասնությունները սեփական լրատվամիջոցների հիմնադրման հարցում որևէ խոչընդոտների չեն հանդիպել և ովքեր ցուցաբերել են նախաձեռնություն ու ակտիվություն, նրանք էլ հիմնադրել են սեփական լրատվամիջոցներ:⁹ Կարելի է ասել,

⁷ Ազգային համայնքներից շատերը իրենց կառույցներում ստեղծել են համապատասխան խմբեր և հանձնաժողովներ: - Տե՛ս օրինակ, *Ռ.Պ. Վարժապետյան-Ֆելլեր*, 624. աշխ., էջ 48-53, «Պուրո», NN 9, 23.12.1997:

⁸ Յուրաքանչյուր ազգային փոքրամասնությանը նվիրված ակնարկում հիշատակված են նրանց կողմից հրատարակվող թերթերը. տե՛ս սույն գրքի համապատասխան էջերը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I», էջ 100-112 (եզդիների ազգային միության պաշտոնաթերթը մինչև 2003թ. կոչվում էր «Աուր Զալա», այժմ կոչվում է «Զալալա»):

⁹ 1997թ. մարտի 23-ին ուկրաիններեն և հայերեն լեզուներով լույս տեսավ Հայաստանի ուկրաինական համայնքի «Պուրո» թերթի անդրանիկ համարը, որտեղ տպագրվել էին Ռու-

որ հիմնադրելով ամսաթերթերը, ազգային փոքրամասնությունները զգալի ներդրում են ունեցել Հայաստանում նոր մամուլի ձևավորման գործում:

Դրանք կարևոր դեր են կատարում ինչպես տվյալ ազգային փոքրամասնության կյանքում նշանակալի հիմնահարցերի, այնպես էլ հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվության իրազեկման գործում:

Սակայն հարկ է նկատել, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կարծիքով,¹⁰ իրենց կողմից ՉԼՄ-ների հետ համագործակցության միայն վերը ներկայացված ձևերը բավարար չեն, և նրանց պետք է նոր հնարավորություններ ընձեռվեն հայաստանյան զանգվածային լրատվության միջոցներից ավելի լայնորեն օգտվելու ու իրենց հուզող խնդիրները ներկայացնելու համար: Նրանց կարծիքով դա յուրօրինակ միջոց կլինի, որ ազգային փոքրամասնությունների խնդիրները հայտնվեն ոչ միայն տվյալ ազգության ներկայացուցիչների ու ազգային հասարակական կազմակերպությունների, այլ նաև Հայաստանի ողջ բնակչության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ուշադրության կենտրոնում: Այդ հարցը 2004 թվականից մասամբ լուծվում է հանրային ռադիոյի առաջին ծրագրով ռուսերեն լեզվով հեռարձակվող հատուկ հաղորդաշարի շնորհիվ «Из жизни национальных меньшинств Республики Армения»:

ՉԼՄ-ների՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի գործունեությանը վերաբերող մեր ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել ևս մեկ, թերևս առանցքային խնդիր. ՉԼՄ-ներից շատերը, հատկապես էլեկտրոնային ՉԼՄ-ները, ներառյալ մասնավոր հեռուստաընկերությունները, իրենց գործին մոտենում են գլխավորապես ձեռներեցության տեսանկյունից, և եթե որևէ թեմա բիզնես տեսանկյունից շահավետ չի թվում, ապա պարզապես չըջանցվում է այն: Հարցը կոնկրետ դեպքում վերաբերում է ոչ միայն ազգային փոքրամասնությունների, այլ նաև ուրիշ ոլորտների հասարակական շատ հիմնախնդիրների: Հաճախ ՉԼՄ-ները եթերաժամ տրամադրելու համար պահանջում են բա-

րաինայի Նախագահ Լեոնիդ Կոչմայի և Հայաստանի Հանրապետության Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի շնորհավորանքները: Այս փաստն ինքնին վկայում է այն ուշադրության մասին, որը ցուցաբերվում է ՀՀ ազգային փոքրամասնությունների նկատմամբ:

¹⁰ Հայաստանի ազգությունները, էջ 105, Ա.Զ. Թադևոսյան, Դաշտային ազգագրական նյութեր, տեսող 4, 2002-2003, էջ 15-22:

վականին զգալի վարձավճարներ, որոնք փաստացիորեն հասարակական կազմակերպությունների համար անմատչելի են դարձնում դրանցից օգտվելը:

ՀՀ Կառավարությունն այսօր ֆինանսապես և տեխնիկապես օժանդակում է, որպեսզի ազգային փոքրամասնությունները (ովքեր ջանք են ներդնում և շահագրգռվածություն են ցուցաբերում) ստեղծեն իրենց էլեկտրոնային կայքը (սայթը) համաշխարհային ինտերնետային ցանցում, մի քանիսը արդեն այն իրագործել են և սերտ հաղորդակցություն են հաստատել ինչպես արտերկրների իրենց «հայրենակիցների», այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ:

Քաղաքացիական հասարակության կայացման տեսանկյունից կարևոր է նաև դիտարկել ՀՀ ազգային փոքրամասնությունների և նրանց կազմակերպությունների համագործակցության ձևերը պետական և քաղաքական կառույցների հետ: Այս առումով պետք է նշել, որ այն առավել կազմակերպված և համակարգված բնույթ ստացավ հատկապես 2000 թվականի մարտ ամսին գումարված ՀՀ բոլոր 11 ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների I համագումարից հետո: Համագումարն ընդունեց մի շարք կարևոր փաստաթղթեր, կապված այդ կազմակերպությունների զարգացման ասպարեզում գոյություն ունեցող խնդիրների հետ, ինչպես նաև ընտրեց ՀՀ Նախագահի խորհրդականին առընթեր *Համակարգող Խորհուրդ*, որի անդամներն ընտրվեցին հենց համագումարի պատգամավորների կողմից, բացառապես ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից: Իսկ 2004 թվականի սկզբներին ՀՀ Կառավարության աշխատակազմի համակարգում ստեղծվեց *Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն*, որի նախաձեռնությամբ ձևավորված 5 համձնաժողովների միջոցով ազգային փոքրամասնությունների կազմակերպությունները հնարավորություն են ստացել համագործակցել ՀՀ Կառավարության հետ իրենց ազգային, լեզվա և կրթամշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքացիական խնդիրներին վերաբերող հարցերի շուրջ: Այս վարչության միջոցով է կազմակերպվում նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը ներկայումս մշակվող ազգային փոքրամաս-

նությունների մասին ՀՀ օրենքի նախագծի կազմման աշխատանքներին:¹¹

Սույն գիրքը պատրաստ էր տպագրության, երբ ՀՀ Ազգային ժողովի Նախագահին առընթեր (2005թ. հունվարի 19-ին) ստեղծվեց ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող Հատուկ *խորհուրդ*, որը հիմնականում բաղկացած է 11 ազգային փոքրամասնությունների երկու-ական ներկայացուցիչներից: Այսինքն, այսօր զուգահեռ գործում են երեք¹² կառույցներ, որոնք կոչված են համագործակցված լուծելու ՀՀ ազգային փոքրամասնությունների առջև ծառացած կենսական հիմնախնդիրները:

Պետական մարմինների հետ ազգային փոքրամասնությունների համագործակցության գործում զգալի ներդրում է ունեցել նաև Հայաստանի ազգությունների միությունը: Այս կազմակերպությունը մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի կողմից «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիայի ընդունմանը, ՄԱԿ-ին ներկայացված «քոլոր տեսակի ռասայական խտրականությունների վերացմանն ուղղված» ՀՀ զեկույցի պատրաստմանը, ՀՀ Սահմանադրական Դատարանի հետ միասին կազմակերպել է «Ազգային փոքրամասնությունների իրավունքները մարդու իրավունքների համատեքստում» միջոցառումը:¹³

Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը քաղաքական կյանքին հիմնականում տեղի է ունենում անհատական մակարդակով՝ կախված անձի ակտիվության և գաղափարական համոզմունքների ուղղվածությունից: Այդ առումով տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ունեն տարբեր քաղաքական համակրանքներ և, ըստ

¹¹ Այս կապակցությամբ նշենք նաև, որ որոշ ազգային-մշակութային հասարակական կազմակերպություններ գտնում են, որ հանրապետությունում ձևավորված օրենսդրական դաշտը միանգամայն բավարար է, և ՀՀ ազգային փոքրամասնությունների մասին հատուկ օրենքի կարիք չկա. – *Յու.Բ. Մկրտումյան*, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 5, 2004, էջ 7-8:

¹² ՀՀ Նախագահի խորհրդականին առընթեր Համակարգող *խորհուրդը*, ՀՀ Կառավարության աշխատակազմի *Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն*, և ՀՀ Ազգային ժողովի նախագահին առընթեր ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերի նորաստեղծ *խորհուրդը*:

¹³ *Վ.Խ. Չատուր*, Հայաստանի ազգությունների միությունը. – Հայաստանի ազգությունները, էջ 10-12, *Յու.Բ. Մկրտումյան*, Ազգային փոքրամասնությունների իրավունքները մարդու իրավունքների համակարգում. – Համատեղ սեմինարների նյութերի ժողովածու, Եր., 1997, էջ 79-86:

իրենց մոտեցումների էլ, քաղաքական կուսակցությունների պատկանելություն: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների շարքային ներկայացուցիչներին, ապա նրանք քաղաքական հայացքների բազմազանությամբ աչքի չեն ընկնում և ընտրությունների շրջանում հարում են այն քաղաքական ուժերին, որոնք ծրագրային խոստումներ են ներկայացնում ընդհանրապես Հայաստանի զարգացման և, մասնավորապես, սոցիալ-տնտեսական ճգնաժամի հաղթահարման վերաբերյալ: Ըստ իրականացված դաշտային հետազոտությունների՝ 2003թ. ՀՀ ԱԺ պատգամավորների ընտրությունների ժամանակ ազգային մի շարք փոքրամասնությունների ներկայացուցիչներն արդեն սկսել են ցուցաբերել խմբային մոտեցումներ, և հաճախ նույն բնակավայրում ապրողները փոխհամաձայնեցված քվեարկում էին այս կամ այն թեկնածուի օգտին:

Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների՝ տարածքային և տեղական ինքնակառավարման կառույցներում մասնակցության և ընդգրկվածության հարցին, ապա այստեղ պատկերը հետևյալն է: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն որոշ չափով (ոչ անհրաժեշտ ծավալներով) ընդգրկված են մարզպետարանների և քաղաքապետարանների կառույցներում: Իսկ հավաք (կոմպակտ) բնակության գյուղական վայրերում մեծամասնությամբ հենց ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն են ընտրված գյուղապետեր և ավագանու անդամներ:¹⁴

Քաղաքական և կառավարման համակարգին ազգային փոքրամասնությունների մասնակցության հարցի առնչությամբ ամենից մեծ մտահոգությունն ազգային փոքրամասնությունների միջավայրում առաջացնում է ՀՀ Ազգային Ժողովում ազգային փոքրամասնություններին թեկնածու առաջադրելու հատուկ ընտրակազմի բացակայությունը:

Հետազոտությունների ընթացքում բազմիցս լսել ենք կարծիքներ, որ ազգային փոքրամասնություններին ԱԺ-ում պետք է հատկացվի հատուկ մանդատ, որին հավակնելու իրավունք կունենա միայն ազգային փոքրամասնության ներկայացուցիչ: Սակայն պետք է նշել, որ այս հարցը վիճելի է: Ի հենց ազգային փոքրամասնությունների միջավայրում, որոնցից շատերը պնդում են հակառակ կարծիք, համաձայն որի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները նույնպես Հայաստանի քաղաքա-

¹⁴ Ա.Զ. Թադևոսյան, Դաշտային ազգաբնակչության նյութեր, տետր 2, 2001, տետր 3, 2002-2003:

ցիներ են, և նրանք պետք է ընտրվեն նույն կարգով, որը ընդհանուր է ՀՀ բոլոր քաղաքացիների համար:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ աշխարհի տարբեր պետություններում գոյություն ունի մշակված և տարիներ շարունակ հաջողությամբ կիրառվող փորձ, որի ուսումնասիրությունը կարող է մեծապես նպաստել մեր հանրապետությունում հարցադրման դրական լուծմանը:

Որպես դրական երևույթ, արժանի է ուշադրության երկու կարևոր փաստ.

- Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Մարտի իրավունքների պաշտպանության հանձնաժողովում ընդգրկված էր նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչը, իսկ ՀՀ Արտաքին գործերի նախարարության համակարգում սահմանվել է ազգային փոքրամասնությունների հարցերով արտգործնախաբարի խորհրդականի պաշտոն, որը տարիներ շարունակ պաշտոնավարել է Հայաստանի ազգությունների միության նախագահ երջանկահիշատակ Վլադիմիր Չատուկը:¹⁵

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները քաղաքացիական ծառայության ներգրավվում են նույն կարգով, որն ընդհանուր է ՀՀ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից: Սակայն անհրաժեշտ է նկատել, որ ազգային փոքրամասնությունները թույլ են ներկայացված պետական կառավարման մարմիններում, մասնավորապես միջինից բարձր օղակներում:

Քաղաքացիական հասարակության կայացման առանցքային նշանակության պայմաններից է մշակութային երկխոսության և համագործակցության գործոնը: Այս առումով ՀՀ ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների դերը զգալի է: Նրանք ոչ միայն կարողանում են նպաստավոր պայմաններ ստեղծել յուրաքանչյուր ազգության լեզվամշակութային ինքնության պահպանման տեսանկյունից, այլ նաև առանցքային դեր են կատարում թե՛ ՀՀ-ում բնակվող տարբեր ազգությունների միջև մշակութային կապերի ու համագործակցության զարգացման, թե՛ Հայաստանի մշակութային կյանքին նրանց ներգրավման ու արդյունավետ մասնակցության գործում: Մշակութային տեսանկյունից ազգա-

¹⁵ Վ.Խ. Չատուկ, նշվ. աշխ., էջ 11:

յին փոքրամասնությունների կազմակերպությունները կարևոր դեր են խաղում մաս հայերի և ազգային փոքրամասնությունների միջնակութային սերտ հաղորդակցության և ներդաշնակ փոխըմբռնման մթնոլորտ ձևավորելու գործում: Ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների կողմից անցկացվող ազգային տոնակատարություններին հրավիրվում և մասնակցում են մաս այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Մասնավորապես ավանդույթի է վերածվել հրեական, եզդիական, ասորական Նոր տարվա տոնակատարությունները, որոնք լայն մասսայականությամբ են նշվում ինչպես մաս ռուսների, ուկրաինացիների, բելառուսների, հույների, վրացիների, լեհերի, գերմանացիների հիմնական տոնակատարությունները:¹⁶

Մշակութային բազմազգ միջոցառումներ կազմակերպելու տեսանկյունից կարևոր է առանձնացնել Հայաստանի ազգությունների միության դերակատարությունը: Մասնավորապես, կարևոր է հիշատակել ՀՀ Անկախության օրվա առթիվ ազգային փոքրամասնությունների ամենամյա մշակութային փառատոների կազմակերպումը:¹⁷ Իսկ 2001թ. կայացած մշակութային հերթական VI փառատոնը նվիրված էր Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700 ամյակին: Նույն առիթով Հայաստանի ազգությունների միությունը Հայաստանի ասորիների ասոցիացիայի հետ միասին կազմակերպել էր հայ-ասորական եկեղեցական կապերին նվիրված խորհրդաժողով: Հայաստանի ազգությունների միության նախաձեռնությամբ կազմակերպվել և իրականացվել են մաս միջնակութային կապերն ամրապնդող, ինչպես մաս Հայաստանի գիտամշակութային կյանքին ազգային փոքրամասնությունների մասնակցությունը խորացնող միջոցառումներ:¹⁸ Այս առումով կարելի է նշել ՅՈՒՆԵՍԿՈ-ի հետ միասին կազմակերպված Հայկական Խ. Արքեպիսկոպոսի անվան պետական մանկավարժական համալսարանի ստեղծման 75 ամյակի տոնակատարությունը, «Չարենցք բոլոր ժողովուրդներին» գրական մշակութային միջոցառումը, ինչպես մաս «Ա.Ս. Պոլշկինը՝ աշխարհի ժողովուրդներին» գրական-երաժշտական հանդիսավոր արարողությունները, որոնց ընթացքում «նրանց բանաստեղծությունները ինչեցին հայե-

¹⁶ Ա.Զ. Թադևոսյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 1, 2000, տետր 2, 2001:

¹⁷ Հ.Խ. Չատուկ, Հայաստանի ազգությունների միությունը. – Հայաստանի ազգությունները, էջ 13-14:

¹⁸ Նույն տեղում:

րեն, վրացերեն, ռուսերեն, ուկրաիներեն, բելառուսերեն, քրդերեն, ասորերեն, լեհերեն, եբրայերեն և գերմաներեն»:¹⁹

Երևանում և մարզերում պարբերաբար կազմակերպվում են ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդական արվեստի փառատոներ, ժողովրդական դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդեսներ, ազգային տոնահանդեսներ, պատմական և մշակութային իրադարձությունների հետ կապված հոբելյանական միջոցառումներ, որոնց մասնակցում են ոչ միայն տվյալ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները, այլ նաև հայ բնակչության և մյուս ազգային փոքրամասնությունների զանգվածներ: Այս ամենը լուսաբանվում է տպագիր և էլեկտրոնային մամուլում՝ հնարավորություն ընձեռելով հանրապետության լայն հասարակայնությանը հաղորդակից դառնալու ազգային փոքրամասնությունների առօրյա և մշակութային կյանքին:²⁰

Շարադրվածը, անշուշտ, վկայում է այն մասին, որ ՀՀ ազգային փոքրամասնությունները գործունե մասնակցություն են ցուցաբերում հանրապետության մշակութային կյանքի ոլորտում, նպաստելով միջմշակութային սերտ հաղորդակցմանը, մշակութային մերձեցմանը և հանրապետությունում մշակութային ընդհանուր դաշտի ձևավորմանը:

¹⁹ Նույն տեղում, էջ 10-12:

²⁰ Մանրամասն տե՛ս Հայաստանի ազգությունները, էջ 10-14, 24-26, 28-40, 44-46, 55-58 և այլու:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀՀ փոքրաթիվ էթնիկ խմբերը

Նախորդ չորս զրույցներում հանգամանորեն դիտարկվեցին ՀՀ ազգային փոքրամասնությունների ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական և իրավաքաղաքական խնդիրները, ինչպես նաև էթնոմշակութաբանորեն բնութագրվեցին հանրապետության ազգային փոքրամասնությունները:¹

Երկու գրքերի համար որպես ամփոփում, նպատակահարմար գտանք *«Էթնաբանի փոխարեն* խորագրի տակ ներկայացնել «Ազգային փոքրամասնությունները և նրանց իրավունքների օրենսդրական ապահովումը Հայաստանի Հանրապետությունում (էթնոմշակութային, սոցիալ-քաղաքական, միջազգային-իրավական և պետական-օրենսդրական տեսանկյունները)», քանզի դա առավել տրամաբանական և արդիական է Բաց հասարակության ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի կողմից հովանավորվող ծրագրի համար:

Սույն գլխում հակիրճ ներկայացվում են նաև այն ազգությունների ներկայացուցիչների խմբերը, որոնք հանրապետությունում հանդես չեն գալիս որպես *ազգային փոքրամասնություններ*, այլ միայն որպես *էթնիկ խմբեր*, որովհետև նրանք ինստիտուցիոնալ չեն ինքնակազմակերպվել, չեն ստեղծել իրենց ազգային-մշակութային կամ այլ բնույթի հասարակական կազմակերպությունները և չեն դրսևորում հավաքական կամք՝ պահպանելու և զարգացնելու սեփական էթնոմշակութային հատկանիշները: Չնայած, ինչպես ցույց են տալիս հեղինակների ուսումնասիրությունները, նրանցից շատերն անհատական և ընտանեկան կյանքում, խմբային փոխկապվածության պայմաններում ջանում են առաջնորդվել ազգային-մշակութային ավանդույթներով:

¹ Նրանցից վեցը՝ ուկրաինացիները, վրացիները, բելառուսները, գերմանացիները, հրեաները և լեհերը բնութագրվում են սույն գրքում, իսկ հինգը՝ եզդիները, եզդի քրդերը, ռուսները, ասորիները և հույները ներկայացվել էին հետազոտության առաջին գրքում:

Մենք արդեն անդրադարձել ենք այն փաստին, որ ՀՀ 2001թ. մարդահամարը վավերացրել է շուրջ 90 ազգություների ներկայացուցիչների բնակությունը հանրապետությունում, այլ հարց է, որ նրանց մի գզալի մասի թվաքանակը մեկ տասնյակից պակաս է:

Ստորև ներկայացվում են մի քանի փոքրաթիվ էթնիկ խմբեր, որոնց վերաբերյալ տվյալները արտահայտվել են ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներում. հաջորդականությունը տրվում է ըստ նրանց թվաքանակի նվազման:

Պ ա ր ս ի կ ն ե ր

2001թ. հանրապետությունում բնակվում էր 326 պարսիկ, որոնցից 253-ը (շուրջ 78%) քաղաքաբնակ էին, իսկ 73-ը՝ (շուրջ 22%) գյուղաբնակ: Քաղաքաբնակների գերակշիռ մեծամասնությունը ապրում է Երևան քաղաքում: Չնայած տղամարդկանց թիվը գերազանցում է կանանց թվին, սակայն տարբերությունն այնքան էլ մեծ չէ՝ 186 տղամարդ և 140 կին:

Տարբեր սկզբնաղբյուրների (հատկապես վիճակագրական) ուսումնասիրության հիման վրա հնարավոր դարձավ պարզել ՀՀ ներկայիս տարածքում բնակվող պարսիկների թվաքանակի շարժմբացը.²

ՀՀ-ում բնակվող պարսիկների թվաքանակի շարժմբացը 1897-2001թթ.³

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
388	5.043	-	4	8	14	326

Ելնելով աղյուսակի տվյալներից՝ որոշակիորեն կարելի է եզրակացնել, որ ՀՀ անկախության տարիներին պարսիկների ներգաղթ տեղի ունեցավ, որն արդյունք է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև վերջին մեկուկես տասնամյակում հաս-

² Հանրահայտ փաստ է, որ Երևանի և Նախիջևանի խանությունների անկումից և Արևելյան Հայաստանի այդ տարածքների՝ Ռուսական կայսրությանը միացվելուց հետո պարսիկների արտագաղթ տեղի ունեցավ դեպի իրենց պատմական հայրենիք, որի արդյունքում նրանց թիվը ՀՀ տարածքում նվազեց (*Դ.Դ. Տարխանյան*, Население Восточной Армении в XIX – начале XX в., Ереван, 2002, сс. 117-130, 141-151):

³ Տե՛ս սույն աշխատության երրորդ գլխի 4-12 ծանոթագրությունները:

տատված բազմակողմ (քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ) միջպետական բարխյաացիական հարաբերությունների: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում բնակություն հաստատած պարսիկների մեծ մասը ներգրավված է հանրապետության առևտրատնտեսական, մի մասն էլ՝ գիտակրթական ոլորտներում:

Հատկանշական է, որ անկախացումից հետո ընկած տարիների ընթացքում Երևանում վերանորոգվեց և վերաբացվեց տակավին XVIII դ. (1760թ.) կառուցված պարսկական մզկիթը (*Գյոյ* կամ *Կապույտ մզկիթ*), որի նշանակությունը մեծ է հանրապետության պարսիկների կյանածիսական և հասարակական կյանքում:

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում տասնյակ տարիներ գործում է իրանագիտության բաժին, իսկ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում՝ իրանագիտության ամբիոն: Երևանում հաջողությամբ գործում է նաև պարսկական թեքումով միջնակարգ դպրոց, որը սերտ կապեր է հաստատել ինչպես ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության, այնպես էլ Իրանի պետական մարմինների և գիտակրթական հաստատությունների հետ:

Փոխադարձ բարյացակամությունը, որը գոյություն ունի պարսիկների և հայերի մեջ, արտացոլվում է նաև նրանում, որ եզակի չեն խառն ազգային ամուսնությունները: ՀՀ պարսիկներն առօրյա և տոնական կենցաղում հետևողականորեն պահպանում են ազգային-մշակութային ավանդույթները՝ աստիճանաբար ներառելով նաև հայկական արժեքներ:

Արագ ներ⁴

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի ցուցանիշների՝ հանրապետությունում բնակվում էր 322 արագ, որոնցից 271-ը (շուրջ 80%) քաղաքաբնակ էին: Նրանց սեռատարիքային կազմի մեջ մի փոքր գերակշռում են կանայք՝ 170 հոգի (շուրջ 53%), ինչպես նաև միջին և երիտասարդ սերնդի ներկա-

⁴ Ինքնանվանումը *արագա*, էթնական ռուսական տարբերակը *абхазы*, որը խորհրդային տարիներին կիրառվեց նաև հայերենում՝ *արազիներ*: Սույն գրքում նպատակահարմար գտանք էթնական հայկական տարբերակը ներկայացնել ինքնանվանման հիման վրա՝ *արազներ*, ինչը կարծում ենք, ավելի ճիշտ է:

յացուցիչները:⁵ Պետք է խոստովանենք, որ արագների այդպիսի թվաքանակը մեզ համար անսպասելի էր, քանզի 1970թ. մարդահամարի տվյալներով Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր ընդամենը 4 արագ, 1979 և 1989թթ. մարդահամարների տվյալներով՝ 3-ական, իսկ ավելի վաղ շրջանների համար արագների բնակություն հանրապետության տարածքում գրանցված չի եղել:

Արագները բնիկ կովկասյան ժողովուրդներից են, պատկանում է հյուսիս-կովկասյան էթնոլեզվաընտանիքի արխազա-ադղական էթնոլեզվախմբին և իրենց լեզվաձևակութային հատկանիշներով միջանկյալ տեղ են գրավում արխազների և ադղների միջև՝ լեզվական առումով ավելի մերձ լինելով արխազներին: Արագների հիմնական զանգվածն այսօր բնակվում է Ռուսաստանի Դաշնության Ղարաչայա-Չերքեզական Հանրապետությունում՝ իրենց թվաքանակով լինելով չորրորդը՝ ռուսներից, դարչայներից և չերքեզներից հետո:⁶ Խառնագգային ամուսնություններն արագների մեջ բավականին տարածված են, չնայած արագների հիմնական զանգվածը Ղարաչայա-Չերքեզական Հանրապետությունում գյուղաբնակ է: Կրոնական պատկանելությամբ արագները մահմեդական սունիներ են:

Մի քանի հարյուր արագների՝ ՀՀ-ում բնակություն հաստատելն այս վերջին տարիներին ամենայն հավանականությամբ բացատրվում է ազգամիջյան լարված հարաբերություններով Հյուսիսային Կովկասում ընդհանրապես, և Ղարաչայա-Չերքեզական Հանրապետությունում, մասնավորապես: Ըստ որոշ տեղեկությունների՝ Հայաստանում բնակվող արագների մեջ և՛ մենեթնիկ ընտանիքներ կան, և՛ երկեթնիկ, այդ թվում նաև հայ-արագական ընտանիքներ: Նրանց մեջ կենսունակ են ամուր ազգակցական (պատրոնիմիական) կապերը:

Մ Ո Ղ ա վ ա ց հ ի ն եր

Բնութագրելով այս կամ այն էթնիկ խումբը՝ ինչպես տեսնում է ընթերցողը, մենք ելակետային ենք ընդունում նախ և առաջ ՀՀ 2001թ. մարդա-

⁵ Տե՛ս ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 25-7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

⁶ Տե՛ս, օրինակ. Итоги Всесоюзной переписи населения 1979г. Национальный состав населения СССР, М., 1982.

համարի ցուցանիշները, բանգի սույն աշխատությունում առաջնային է արդի իրավիճակն ու կացությունը: Եվ հետևելով այս սկզբունքին՝ նշենք, որ 2001թ. հանրապետությունում բնակվում էր 216 մոլդավացի (չենք բացառում, որ 2001թ. առ այսօր այդ թիվը որոշ փոփոխությունների է ենթարկվել):

Բնութագրելով ՀՀ մոլդավացիների ժողովրդագրական նկարագիրը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ նրանց մեջ բացարձակապես գերակշռում են կանայք (շուրջ 93%), որոնց մեծ մասը ամուսնացած է հայերի հետ և տարբեր տասնամյակներին տեղափոխվել է Հայաստան հիմնականում Մոլդավիայից և Ուկրաինայից:

Ստորև ներկայացվող աղյուսակն արտացոլում է մոլդավացիների թվաքանակի շարժընթացը Հայաստանում՝ սկսած 1897թ.:

ՀՀ-ում բնակվող մոլդավացիների թվաքանակի
շարժընթացը 1897-2001թթ.⁷

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
49	18	-	324	334	525	216

Աղյուսակից երևում է, որ խորհրդային տարիներին Հայկական ԽՍՀ-ում մոլդավացիների թիվը մարդահամարից մարդահամար ավելացել է՝⁸ հիմնականում Մոլդավական ԽՍՀ-ում բնակվող հայ-մոլդավական ընտանիքների՝ Հայաստան ներգաղթի շնորհիվ: Այստեղ կարելի է պատմական գուգահեռ անցկացնել, նշելով, որ հայերը Մոլդավիայում հաստատվել են միջնադարում և կազմել են մեծ համայնք, որը գոյություն ունի առ այսօր:⁹

Մո ղ փ ա ն ե ր

ՀՀ 2001թ. մարդահամարը հանրապետության տարածքում գրանցել է 184 մոլդավաների, որոնց մեջ տղամարդիկ կազմում էին շուրջ 61%, ընդ ո-

⁷ Տե՛ս սույն աշխատության երրորդ գլխի 4-12 ծանոթագրությունները:

⁸ 1959թ. վերաբերյալ չհաջողվեց գտնել համապատասխան տվյալներ:

⁹ *Е.М. Губогло*, Общество армянской культуры "Ани" в Республике Молдова. – В кн.: В лабиринтах самоопределения, М., 2003, с. 274-285.

յում մորդվաների մեծագույն մասը (շուրջ 98%) քաղաքաբնակ էր:

Գրականության և տարբեր սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց պարզել, որ Հայաստանում մորդվա առաջին վերաբնակիչները հաստատվել են 1830-ականներին, և նրանց մեջ գերակշռել են մոլդկան քրիստոնեական աղանդին պատկանողները, որոնք ցարական Ռուսաստանի իշխանությունների կողմից բույլտվություն ստացան Պովոլժիեից արտագաղթելու և բնակություն հաստատելու արդեն Ռուսաստանին միացված Անդրկովկասի տարածքում: Դրանով իսկ ցարական իշխանությունները օրինականացնում էին աղանդավորների վտարումը Ռուսաստանի կենտրոնական նահանգների ուղղափառ բնակչությունից:¹⁰

Ստորև ներկայացվող աղյուսակը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հանրապետության տարածքում բնակվող մորդվաների թվի վերջին հարյուրամյակի շարժմթացի մասին:

**ՀՀ-ում բնակվող մորդվաների թվաքանակի
շարժմթացը 1897-2001թթ.¹¹**

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
309	419	-	477	505	489	184

Աղյուսակից երևում է, որ ընդհուպ մինչև 1979թ. մորդվաների թիվը դանդաղ, բայց անընդհատ աճել է, անկախության շրջանում՝ կտրուկ նվազեց, քանզի մորդվաների մեծ մասը Հայաստանից գաղթեց դեպի Ռուսաստանի Դաշնություն:

ՀՀ մորդվաներին բնութագրելիս հարկավոր է նկատի առնել մի շարք հանգամանքներ:

1. Նախ այն, որ նրանք Հայաստանում հաստատվեցին ընտանիքներով՝ բերելով իրենց ամբողջ ունեցվածքը (հատկապես կահկարասին, երկրագործական և արհեստավորական գործիքները, սեր-

¹⁰ *И.В. Долженко*, Религиозный и культурно-бытовой уклад русских крестьян-сектантов Восточной Армении (XIX – начало XX вв.). – Сб. трудов Ин-та этнологии и антропологии им. Н.Н. Миклухо-Маклая, РАН, М., 1992; *И. Я. Семенов*, Молокане: история одного религиозного движения России, Ереван, 1997, с. 7; *Նույնի*, История Закавказских молокан и духов, Ереван, 2001, сс. 30-50.

¹¹ Տե՛ս սույն աշխատության երրորդ գլխի 4-12 ծանոթագրությունները:

մացում, անասունը և այլն): Այդ իսկ պատճառով մորդվաները սկզբնական շրջանում գերազանցապես գյուղաբնակ էին:¹²

2. Մորդվաները Հայաստանում վերաբնակվեցին ռուս աղանդավորների հետ և պատահական չէ, որ նրանց մի մասը, նույնացվելով ռուսների հետ, առանձին չէր հաշվառվում մայրախահամարների ժամանակ:¹³
3. Մորդվաները լեզվամշակույթով պատկանում են ուրալյան էթնոլեզվաընտանիքի ֆիննական խմբին՝ առավել ազգակից լինելով մարիներին և ուդմուրներին: Նրանք բաղկացած են երկու ենթաէթնիկ համալսություններից՝ էրզյաներից (որոնք մեծամասնություն են կազմում) և մոկշաներից՝ յուրաքանչյուրն իր ուրույն լեզվամշակութային առանձնահատկություններով: Հայաստանում բնակվող մորդվաների մեծ մասը էրզյաններ են, սակայն չեն պահպանել իրենց էրզյա լեզուն և մեծամասամբ ռուսախոս են, կայուն պահպանում են ընտանեկան նիստուկացը և հատկապես իրենց աղանդավորական տոնածիսական ավանդույթները:

Բ ու լ դ ա ր ն ե ր

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալների՝ բուլղարների էթնիկ խումբը բաղկացած էր 183 հոգուց (103 կին և 80 տղամարդ), բաղաբային և գյուղական բնակչության թիվը մոտավորապես հավասար էր (համապատասխանաբար՝ 93 և 84):

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, որ բուլղարների թիվը նախորդ մարդահամարների տվյալների համեմատությամբ զգալի աճել է:

**ՀՀ-ում բնակվող բուլղարների թվաքանակի
շարժընթացը 1926-2001թթ.¹⁴**

1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
3	-	78	100	83	183

¹² Միայն XX դ. վերջին տասնամյակներում մորդվաների արտահոսք տեղի ունեցավ գյուղից դեպի քաղաք (հիմնականում Երևան):

¹³ Հ. Մինասյան, Էրզյաներ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 6 հունիսի, 2001:

¹⁴ Տե՛ս սույն աշխատության երրորդ գլխի 4-12 ծանոթագրությունները:

Ուսումնասիրությունների ընթացքում հնարավոր դարձավ պարզել, որ խորհրդային շրջանում փոքրաթիվ բուլղարներ հաստատվեցին Հայկական ԽՍՀ-ում Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետությունից (հայ հայրենադարձների հետ) և Ուկրաինական ԽՍՀ-ից:¹⁵ Նրանք հիմնականում խառնազգային կազմ ունեցող ընտանիքների անդամներ էին և բնակություն հաստատեցին առավելապես քաղաքներում: Ինչ վերաբերում է ՀՀ անկախության տարիներին բնակություն հաստատած բուլղարներին, ապա նրանց հիմնական մասը ներգաղթել է Բուլղարիայի Հանրապետությունից և մենեթնիկ ընտանիքների անդամներ են, տեղավորվել են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Մինչդեռ 1979թ. մարտիս համարի տվյալներով Հայաստանում բնակվող բուլղարների 95%-ը քաղաքաբնակ էր:

Բուլղարների քվաքանակի աճը կարելի է դիտել որպես Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև տարեցտարի զարգացող բազմակողմ միջպետական հարաբերությունների արգասիք, առավել ևս, որ հայ-բուլղարական քաղաքական, տնտեսական և մշակութային կապերն ունեն բազմադարյան պատմություն:

Տեղին է նաև նշել, որ անկախության տարիներին մի քանի հազար (ավելի քան 10 հազար)¹⁶ հայեր տեղափոխվել են Բուլղարիա և ներգրավվել երկրի առևտրատնտեսական ոլորտի մեջ: Հատկանշական է, որ եթե 1976թ. Բուլղարիայում ապրում էր շուրջ 25 հազար հայ, ապա այսօր նրանց թիվը գերազանցում է 50 հազարը:¹⁷

ՀՀ հայերի նման զանգվածային արտագաղթը դեպի Բուլղարիա և համեմատաբար սակավաթիվ բուլղարների արտագաղթը դեպի Հայաստան բացատրվում է հիմնականում նրանով, որ մինչև վերջին ժամանակներս ՀՀ քաղաքացիների համար՝ Բուլղարիա և ԲԺՀ քաղաքցիների համար Հայաստան մեկնելիս, համաձայն միջպետական պայմանագրի, արտոնագիր չէր պահանջվում:

¹⁵ Նշենք, որ խորհրդային Միությունում ապրող բուլղարների (շուրջ 350 հազար) գերակշիռ մեծամասնությունն ապրում էր Ուկրաինական ԽՍՀ-ում:

¹⁶ Բուլղարական աղբյուրները նշում են մոյնիսկ ավելի քան 20 հազար:

¹⁷ Հայ Սփյուռք. հանրագիտարան, էջ 124:

Ի ն գ ու շ ն ե ր

Ինգուշների թիվը հանրապետությունում 2001թ. 158 էր (87 քաղաքա-
բնակ, 71՝ գյուղաբնակ): Վիճակագրական նյութերի համեմատական ու-
սումնասիրությունը քույլ է տալիս փաստելու, որ նրանց հիմնական մասը
Հայաստան են ներգաղթել վերջին մեկուկես տասնամյակում, ընդ որում՝
ընտանիքներով, դրա մասին է վկայում նաև կանանց և տղամարդկանց
թվաքանակի մոտավորապես հավասար լինելը (78 կին, 80 տղամարդ):

Հայաստանում ինգուշների առաջին խմբի վերաբերյալ վկայում են
Համառոտաստանյան առաջին մարդահամարի ցուցանիշները, ըստ
որոնց, նրանց թիվը մեծ չէր, ընդամենը 13 հոգի:¹⁸ Խորհրդային տարիներ-
ին ինգուշների թվաքանակն առանձնապես չաճեց. միայն 1980-ական-
ներին այն մի փոքր ավելացավ՝ հասնելով 33-ի:¹⁹

Ինգուշների ներգաղթը հանրապետություն՝ անկախության տարիներ-
ին բացատրվում է ազգամիջյան լարված հարաբերություններով և ար-
յունալի բախումներով Հյուսիսային Կովկասում ընդհանրապես, և Չեչնի-
այի և Ինգուշեթիայի հանրապետություններում, մասնավորապես: Այս
փաստը մեկ անգամ ևս վկայում է, որ Հայաստանի Հանրապետությու-
նում ազգամիջյան հարաբերությունների բնույթը և բալոյա հոգեբանա-
կան մթնոլորտը բարենպաստ են տալիս ազգությունների կեցության
համար:

Թ ա ր ա ր ն ե ր

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալների, ՀՀ-ում ապրում էր 123
թաթար,²⁰ որն ավելի քան 6 անգամ զիջում էր 1979թ. մարդահամարի
տվյալներին:

¹⁸ Первая всеобщая перепись населения Российской империи 1897г., Эриванская губерния, СПб., 1905, с. 52-53.

¹⁹ 1989թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Եր., 1991, էջ 99-102:

²⁰ Տես Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրության պետական խորհրդի փաստաթուղթ, թիվ 25-7/34-699:

**Թաթարների բնակչության հանրապետությունում՝
ըստ 1979, 1989 և 2001 թթ. մարդահամարների**

1979թ.	1989թ.	2001թ.
753	470	123

Ինչպես երևում է աղյուսակից, թաթարների արտահոսքը հանրապետությունից սկսվել էր 1980-ական բնակամեծներից և շարունակվում է առ այսօր,²¹ ընդ որում, XX դարի մարդահամարների մեջ թաթարների թվի ամենաբարձր ցուցանիշ է գրանցվել 1979թ.՝ 753 մարդ: Համեմատության համար նշենք, օրինակ, որ 1926թ. հանրապետությունում կար ընդամենը 27 թաթար:²² Հետագա տարիներին Խորհրդային Միության մյուս հանրապետություններից ներգաղթեցին մենեթնիկ թաթարական և երկեթնիկ հայ-թաթարական ընտանիքներ, որի շնորհիվ էլ հանրապետությունում աճեց թաթար բնակչությունը: Այդ իրողություններն իրենց արտացոլումը գտան թաթար բնակչության սեռատարիքային կազմում: 1979թ. բնակվող 753 թաթարներից 313-ը տղամարդ էին, 440-ը՝ կին:

Վերջին տարիներին մենեթնիկ թաթարական ընտանիքների գերակշռող մասը և երկեթնիկ, խառնագգային կազմ ունեցող (հայ-թաթարական) ընտանիքների որոշ մասն արտագաղթեց Հայաստանից, ինչն անդրադարձավ ոչ միայն նրանց բացարձակ թվաքանակի, այլ նաև ժողովրդագրական պատկերի վրա. այսօր ՀՀ թաթարների մեջ կանայք բացահայտ գերակշռություն են կազմում (շուրջ 87%)²³ և, ինչպես ցույց են տալիս գրառած նյութերը, նրանց մեծագույն մասն ամուսնացած է հայերի հետ: Ազգագրորեն դիտարժան են ազգամիջյան ամուսնությունների էթնոշակութային տեսանկյունները, որոնց հետազոտումը հնարավորություն կընձեռի բացահայտելու ոչ միայն էթնիկ գործընթացների բնույթը, այլ նաև միջնակութային դաստիարակության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

²¹ Հ. Գ. Մարգարյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 3, 2001-2002, էջ 8-12, *Յու. Ի. Մկրտումյան*, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 4, 2002-2003, էջ 14-16:

²² Всесоюзная перепись населения 1926г., т. XIV, ССР Армении, М., 1929, с. 7-11.

²³ Տե՛ս ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի տեղեկատվական աղյուսակ 7/34-699, (ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի արխիվ):

Օ ս ե թ

2001թ. հանրապետության տարածքում բնակվում էր 67 օս, մեծագույն մասը՝ քաղաքաբնակ: Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, այդ թիվը նվազագույնն էր նախորդ բոլոր մարդահամարների ցուցանիշների համեմատությամբ.

ՀՀ-ում բնակվող օսերի քվաքանակի շարժմբացը 1897-2001թթ.²⁴

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
100	128	-	256	249	331	67

Ամենամեծ քվաքանակը գրանցվել էր 1989թ.՝ 331 մարդ: Ավանդաբար, օսերի մեծ մասը բնակվում է հանրապետության քաղաքներում: Այսպես, 1926թ. գրանցված օսերի 100%, 1979թ.՝ շուրջ 94%-ը, իսկ 1989թ.՝ գրեթե 93%-ը քաղաքաբնակ էր, ավանդույթ, որը պահպանվում է առ այսօր:

Վերջին տասնամյակների վիճակագրական տվյալները ցույց են տալիս կանանց գերակշռությունը: Ըստ 1979թ. մարդահամարի ցուցանիշների՝ կանանց թիվը երկու անգամ գերազանցում էր տղամարդկանց թվին, իսկ 2001թ.՝ ավելի քան չորս անգամ, և նրանց մեծ մասը ամուսնացած է հայերի հետ: Ըստ գրառած նյութերի՝ հայ-օսական խառնագգային ընտանիքներ տարբեր տարիներին տեղափոխվել են Հյուսիսային Օսեթիայից: Անկախության տարիներին նկատվեց հակառակ միտումը: Զգալի թվով հայ-օսական ընտանիքներ տեղափոխվեցին Հյուսիսային Օսեթիա-Ալանիա Հանրապետություն, որտեղ առ այսօր գոյություն ունի հայկական մեծ համայնք (ավելի քան 15 հազար):

Լ ա տ ի շ ն ե թ

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալների՝ հանրապետությունում բնակվում էր 50 լատիշ, որոնցից՝ 31 կին և 19 տղամարդ, քաղաքաբնակ և գյուղաբնակ լատիշների թվի հարաբերակցությունը մոտավորապես հավասար էր:

²⁴ Տե՛ս սույն աշխատության երրորդ գլխի 4-12 ծանոթագրությունները:

Պատմական սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ առաջին լատիշ եկվորները Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում հաստատվել են XIX դ. առաջին կեսից, երբ տղամադիկ գործողվում էին Հայաստան՝ աշխատանքի կամ զինծառայության: Հետագա տասնամյակներին լատիշների թվաքանակը տատանվում էր: 1897թ. Համառոտաստանյան առաջին մարդահամարի տվյալներով լատիշների թիվը հասավ 101-ի, որոնցից, ի դեպ, 99-ը տղամադիկ էին, և նրանց մեծ մասը բնակվում էր Ալեքսանդրապոլ (ներկայիս Գյումրի) քաղաքում: Շատերը ընտանիքներ կազմեցին՝ ամուսնանալով հայուհիների հետ: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս լատիշների թվաքանակի շարժընթացը.

**ՀՀ-ում բնակվող լատիշների թվաքանակի
շարժընթացը 1897-2001թթ.²⁵**

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
101	12	-	754	118	145	50

Առաջին աշխարհամարտի և հետագա տարիներին լատիշների մեծ մասն իրենց ընտանիքներով արտագաղթեցին Հայաստանից: 1926թ. մարդահամարը, ինչպես ցույց է տալիս աղյուսակը, Հայկական ԽՍՀ-ում գրանցեց ընդամենը 12 լատիշ:

1970թ. նրանց թիվը զգալի էր. 754 մարդ (346 տղամարդ, 408 կին), որոնցից շուրջ 69%-ը քաղաքաբնակ էր, ապրում էին հիմնականում Երևան և Լենինական քաղաքներում: Մարդահամարի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում բնակվող լատիշների 97%-ը լատիշերենը համարել է մայրենի լեզու, միայն 3%-ը որպես մայրենի նշել է այլ լեզուներ, այդ թվում նաև հայերենը:

Հետագա տարիներին լատիշների մեծ մասը արտագաղթեց Լատվիա, այդ միտումը պահպանվեց նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին տասնամյակին: ՀՀ լատիշների մեջ գոյություն ունեն և՛ մենեթնիկ, և՛ երկեթնիկ (հայ-լատիշական) ընտանիքներ:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

Լիտվացիներ

ՀՀ 2001թ. մարդահամարը գրանցել է լիտվացիների և լատիշների հավասար քվաքանակ (50 մարդ), սակայն, ի տարբերություն լատիշների, լիտվացիների մեջ քաղաքային բնակչությունը գրեթե չորս անգամ գերազանցում է գյուղականին, կանայք կազմել են բնակչության 76%-ը. նրանց մեծ մասը ամուսնացած է հայերի հետ: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս լիտվացիների քվաքանակի շարժընթացը.

**ՀՀ-ում բնակվող լիտվացիների քվաքանակի
շարժընթացը 1897-2001թթ.²⁶**

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
4	4	-	249	83	219	50

Աղյուսակից երևում է, որ Հայաստանում լիտվացիների քվաքանակն աճեց հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո՝²⁷ 1970թ. կազմելով 249 մարդ: Խորհրդային Միության փլուզումից հետո, 2001թ. լիտվացիների թիվը 1989թ. համեմատությամբ Հայաստանում նվազել է ավելի քան չորս անգամ:

Ադրբեջանցիներ

ՀՀ 2001թ. մարդահամարը հանրապետության տարածքում վավերացրել է 29 ադրբեջանցիների մշտական բնակություն, որոնց մեծ մասը ապրում է քաղաքներում: Բերված աղյուսակը ցույց է տալիս ադրբեջանցիների քվաքանակի շարժընթացը Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում: Սակայն մինչ այդ՝ մեկ կարևոր պարզաբանում. մինչև 1929թ. ներառյալ *ադրբեջանցիներ* էթնանունը չէր գործածվում: Նույնիսկ 1926թ. ԽՍՀՄ մարդահամարի փաստաթղթերում այդ էթնանուն-

²⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁷ 1940թ. Լիտվան կորցրեց պետական անկախությունը և միացվեց Խորհրդային Միությանը, Երկրորդ աշխարհամարտից հետո լիտվացիների որոշ խմբեր մի շարք հանգամանքների (ամուսնության, աշխատանքի, զինմատայության և այլ) բերումով բնակություն հաստատեցին Հայաստանում:

նր ներառված չէր,²⁸ ժողովուրդների ցանկում հիշատակված են *թյուրքեր* (“*тюрки*”, “*turcs*”), որոնց անվան տակ միավորում էին թյուրքալեզու տարբեր հանրություններ, սկզբումը, որը լայնորեն կիրառվում էր XIX դ. աղբյուրներում:²⁹

Աղբյուրաբանական ԽՍՀ-ի կազմավորումը նպաստեց, որպեսզի տարբեր թյուրքալեզու էթնիկ խմբեր միավորվեն *աղբյուրաբաններ* էթնանվան տակ: Այս իրողությունն արտահայտված է ստորև բերված աղյուսակում.

	1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
Թյուրքեր	226806	76870	-	-	-	-	-
Աղբյուրաբաններ	-	-	107748	148189	160841	84860	29

Աղյուսակից պարզորոշ երևում է, որ խորհրդային տարիներին աղբյուրաբանների թվաքանակը Հայաստանում մարդահամարից մարդահամար աճում էր: Աղբյուրաբանները լայնորեն ներգրավված էին հանրապետության պետական, քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտակրթական կյանքի ոլորտներում: Նրանք էթնոմշակութային սերտ փոխկապվածության մեջ էին ինչպես հայ բնակչության, այնպես էլ հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների հետ:

1980-ական թվականների վերջերին և 1990-ականների սկզբներին Աղբյուրաբանում տեղի ունեցած հայկական զանգվածային ջարդերի հետևանքով ավելի քան երեք հարյուր հիսուն հազար հայ և այլազգի փախստականներ ապաստան գտան Հայաստանի Հանրապետությունում: Ստեղծված քաղաքական և բարոյաևոգեբանական պայմաններում Հայաստանում բնակվող աղբյուրաբաններն արտագաղթեցին Աղբյուրաբան, որտեղ հայկական ջարդերի կազմակերպիչներն ու իրականացնողները փաստորեն խորհրդային իշխանությունների կողմից մնացին անպատիժ, և Հայաստանում բնակվող աղբյուրաբանների մեջ տազմապ առաջացավ սեփական անվտանգության հարցում:³⁰ Չմայած չափազանց լարված ի-

²⁸ Всесоюзная перепись населения 1926г., т. XIV. ССР Армения, М., 1929, էջ 8: Նույն տեղում, Азербайджанская ССР, էջ 13.

²⁹ *Դ.Գ. Саркисян*, Население Восточной Армении в XIX – начале XX в., Ереван, 2002, с. 132.

³⁰ Այս փաստերը հանրահայտ են և լայնորեն լուսարանվել են տեղեկատվական բոլոր միջոցներով: Սակայն, հարկ է նշել, որ աղբյուրաբանական պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվական միջոցները քաղաքական շահադիտական նկատառումներով ակնհայտորեն ուժնացնում են Աղբյուրաբան գաղթածների, և ընդհակառակը, էապես նվազեցնում Աղբյուրաբանից բռնագաղթված հայերի (և այլազգիների) թվաքանակը:

քաղաքացիները՝ Հայաստանում հակաաղդրեջանական և հակախորհրդային տրամադրությունները չվերածվեցին բացահայտ զանգվածային բախումների:

Հայաստանի Հանրապետությունում չի գրանցված ազգային խտրականության և ոչ մի դեպք: Հայ-աղդրեջանական հարաբերությունները պետք է դիտարկվեն այլ հարթության վրա: 1988-1990-ականներին Աղդրեջանում տեղի ունեցած հայկական զանգվածային ջարդերը և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի առ այսօր լուծված չլինելը, ինչպես ասվեց, ծայրաստիճան սրեցին հայ-աղդրեջանական հարաբերությունները: Բայց այն հանգամանքը, որ այսօր Հայաստանում բնակվող քեկուզ փոքրաթիվ աղդրեջանցիներն ապրում են ազատ և անվտանգ՝ չթաքցնելով իրենց ազգային պատկանելությունը, սերտորեն հաղորդակցվելով հայ բնակչության և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, պերճախոս վկայություն է Հայաստանում տիրող ազգամիջյան փոխադարձ հանդուրժողականության և համագործակցության կայուն ավանդույթների կենսունակության մասին: Այդ համագործակցությունը և սերտ հաղորդակցությունն ակնհայտորեն տեսանելի է ինչպես կենցաղային մակարդակում, այնպես էլ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ու պաշտոնական ոլորտում:

1989թ. մարդահամարն արդեն արձանագրեց շուրջ 80.000 հազար աղդրեջանցիների արտագաղթը Հայաստանից, որը շարունակվեց մաս 1989³¹ և 1990թթ.:

Ուղիներ

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի ցուցանիշների՝ հանրապետությունում բնակվում էր 22 ուղի: Ուղիները բնիկ կովկասյան ժողովուրդներից են, լեզվական առումով պատկանում են հյուսիսկովկասյան էթնոլեզվաբնույթի վայնախա-դադստանյան էթնոլեզվախմբին, ծագումով առավել մոտ են լեզգիներին: Նրանց էթնիկ տարածքը ժամանակակից Աղդրեջանական Հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններն են: 1990-ականների սկզբներին նրանց թիվը շուրջ 8 հազ. էր և հիմնականում բնակ-

³¹ Նկատենք, որ մարդահամարն անցկացվեց հունվար ամսին, և պարզ է, որ այն վավերացրել էր միայն նախորդ տարվա իրողությունները:

վում էին Աղրբեջանում, Վրաստանում և Ռուսաստանում, մեծագույն մասը՝ Աղրբեջանում: Պատմական բարդ ճակատագիրը և խայտաբղետ էթնոլեզվամշակութային միջավայրը հանգեցրել էին այն իրողությանը, որ XX դ. կային ուղիախոս, հայախոս, բյուրքախոս և ռուսախոս ուղիներ, ընդ որում մի մասը (հայախոսները)՝ դավանանքով լուսավորչականներ էին, մյուս մասը՝ բրիտանոյա ուղղափառներ, երբորդը (բյուրքախոսները)՝ մահմեդականներ:³²

Հետաքրքիր է, որ հայախոս ուղիների գրական լեզուն հայերենն է, և նրանց մեծ մասն ունի հայկական անուններ և ազգանուններ: Հենց այս պատճառով 1980-ական թվականների վերջերին և 1990-ականների սկզբներին Աղրբեջանում տեղի ունեցած հայկական ջարդերի ժամանակ մեծապես տուժեցին նաև հայախոս ուղիները, որոնց մի մասը, մազապուրծ լինելով այդ ջարդերից, ապաստան գտավ Հայաստանում, և առ այսօր բնակվում է հանրապետությունում:

Պետք է խոստովանել, որ ելնելով հետազոտության արդյունքներից՝ ուղիների ավելի մեծ թվաքանակ էինք ակնկալում հանրապետությունում: Մարդահամարի ժամանակ արձանագրված ուղիների թիվը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է երկու հանգամանքով. մախ Հայաստանից նրանց մի մասի արտագաղթով, և ապա՝ բացառված չէ նաև, որ ուղիների որոշակի հատված մարդահամարի ժամանակ կամավոր գրանցվել է որպես հայ:

Այս տեսակետից ուշագրավ է կովկասյան էթնոմշակութային իրողությունների լավագիտակ Ն. Գ. Վոլկովայի հետևյալ դիտարկումը. «Часть удин, принявшая христианство (армяно-григорянская церковь), усвоила армянский язык и стала осознавать себя армянами»:³³ Եթե նման երևույթներն առկա էին Աղրբեջանական ԽՍՀ-ում բնակվող ուղիների մեջ, ապա տրամաբանական է, որ դրանք առավել ևս կդրսևորվեն նաև Հայաստանում հաստատվածների մեջ:

Հայաստանում զանցկացված մարդահամարների ժամանակ գրանցվել է ուղիների փոքր թվաքանակ: Այսպես, 1926թ.՝ 3, 1970թ.՝ 16, 1979թ.՝

³² Մանրամասն տե՛ս *З.И. Ямтальский, В.П. Кобычев*, Удины. – Народы Кавказа, т. II, М., 1962, с. 195-198; *Н.Т. Волкова*, Удины. – Народы и религии мира, М., 1998, с. 558; *Հ. Խառա-տեն*, Ուղիների էթնո-և ռասանական ինքնապատկանելության որոշ հարցեր (ԺԹ. – Ի. դդ.). – Հայկագեան Հայագիտական Հանդես, Պեյրոս, 2000, հտ. Ի, էջ 183-206:

³³ *Н.Г. Волкова*, նշվ. աշխ., էջ 558:

12 և 1989թ.՝ 19: Նրանց մեջ առկա են ինչպես մեմեթրիկ՝ ուղիական, այնպես էլ երկեթրիկ՝ ուղի-հայկական և հայ-ուղիական ընտանիքներ:

Գ ճ չ ու ն ե ռ

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով հանրապետությունում կար 10 գնչու՝ 5-ը քաղաքային, 5-ը գյուղական բնակավայրերում, որոնք ապրում էին մեմեթրիկ ընտանիքներով: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հանրապետության ներկայիս տարածքում գնչուական բնակչության թվաքանակը երբեք մեծ չի եղել: Ըստ երևույթին, Հայաստանի բնակչության և բնակավայրերի խտությունը նպաստավոր չէր գնչուական թափառախմբերի ապրելակերպի համար:

ՀՀ-ում բնակվող գնչուների թվաքանակի շարժընթացը 1897-2001թթ.³⁴

1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
3	2	10	12	59	48	10

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, խորհրդային տարիներին գնչուների փոքրաթիվ խմբեր գալիս էին Ռուսաստանից, կարճատև թափառական կյանք էին վարում Հայաստանում և նորից մեկնում Ռուսաստան: Շատ քչերն էին մշտական բնակություն հաստատում Հայաստանում՝ անցնելով նստակեցության և ներգրավվելով քաղաքային և գյուղական տնտեսությունների ոլորտներում: Չնայած իրենց սակավաթվությանը՝ ՀՀ գնչուները բնութագրվում են ընտանեկան կենցաղի ավանդույթայնությամբ և սերտ կապեր են պահպանում Ռուսաստանի գնչուական այն թափառախմբերի հետ, որոնցից սերվել են:

Այստեղ հարկ ենք համարում ընդգծել, որ գնչուների առաջին խմբերը Հայաստանի տարածքում հաստատվել են դեռևս Տղ.: Այդ խմբերի, ինչպես նաև 6-7 հարյուրամյակ անց դրանցից սերված հանրության՝ *քոշաների* էթնոմշակութային պատմությունը հանգամանորեն ներկայացված է «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր» առաջին գրքում:³⁵

³⁴ Տե՛ս սույն աշխատության երրորդ գլխի 4-12 ծանոթագրությունները:

³⁵ Տե՛ս՝ էջ 54-60, 95-99, 135-139:

Ավարտելով ՀՀ փոքրաթիվ եթնիկ խմբերի հակիրճ բնութագրությունը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2001թ. մարդահամարը վավերացրեց շուրջ 90 ազգությունների ներկայացուցիչների բնակությունը հանրապետությունում: Նրանցից 11-ը սույն հետազոտության շրջանակներում (երկու գրքերում) բնութագրվեցին որպես ազգային փոքրամասնություններ, իսկ 13-ը՝ որպես եթնիկ խմբեր: Մյուսներին հատուկ չանդրադարձանք՝ թվաքանակի սակավության և առավել շարժունության պատճառով:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ազգային փոքրամասնությունները և նրանց
իրավունքների օրենսդրական ապահովումը
Հայաստանի Հանրապետությունում
(ժողովրդագրական, էթնոմշակութային,
սոցիալ-քաղաքական, միջազգային-իրավական
և պետական օրենսդրական տեսանկյունները)

Ուսումնասիրության արդյունքում տպագրված երկու գրքերում,¹ առաջին անգամ Հայաստանում իրագործվեց ազգային փոքրամասնությունների ազգաբանական, էթնոժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և էթնոքաղաքագիտական համալիր հետազոտություն: Ամբողջ ուսումնասիրությունը և գրքերի հրատարակությունն իրականացվեց Բաց հասարակության ինստիտուտի Օժանդակության հիմնադրամի Հայկական մասնաճյուղի աջակցությամբ:

Ուսումնասիրության մեջ հիմնականում դիտարկվեցին ոչ թե պատմական տեսանկյունները (որոնք, անկասկած, նույնպես կարևոր են, բայց կպահանջվեր այլ բնույթի հետազոտություն), այլ արդիականության խնդիրները: Հանրահայտ է, որ հասարակության լայն զանգվածների և պաշտոնական ոլորտների անիրազեկությունն ազգային փոքրամասնությունների առկայության և նրանց առջև ծառացած խնդիրների մասին չի կարող ընդունելի համարվել *ժողովրդավարական պետություն և քաղաքացիական հասարակություն* կառուցող երկրի համար:

ՀՀ ազգային փոքրամասնությունները դիտարկվեցին բազմակողմանիորեն, բայց ուսումնասիրության երեք հարթություն կցանկանայինք հատուկ առանձնացնել.

¹ Սույն գիրքը և «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I», Եր., 2000:

1) Բացահայտվեցին ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդագրական, սոցիալ-մշակութային աղյի պատկերը և զարգացման միտումները,

2) Ազգային փոքրամասնությունները դիտարկվեցին հայ բնակչության և միմյանց հետ սերտ համագործակցության հարաբերություններում, դրանց ակուլտուրացիայի և հասարակության մեջ ինտեգրման գործընթացներում, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կայացման աղյի պայմաններում,

3) ՀՀ ազգային փոքրամասնությունների կացությունը և իրավունքների երաշխավորվածությունը ուսումնասիրվել է միջազգային իրավական, միջազգային քաղաքական չափորոշիչների և նորանկախ Հայաստանի Հանրապետության պետական օրենսդրության և կենսագործվող քաղաքականության համատեքստում:

Աշխատության եզրափակիչ բաժնում նպատակահարմար գտանքներ կայացնել Հայաստանի Հանրապետությունում այսօր բնակվող ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի շարժընթացները վերջին շուրջ 100 տարիների ընթացքում, բացահայտելով այդ շարժընթացի քաղաքական, սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական պատճառներն ու նախադրյալները:

Մյուս խումբ հարցերը վերաբերում են ՀՀ ազգային փոքրամասնությունների դրության կարգավորմանն ու բարելավմանը ուղղված միջազգային իրավական, միջազգային քաղաքական նորմերի ու երաշխիքների կիրառման պրակտիկայի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրական դրույթների և այդ բնագավառում վարվող քաղաքականության սկզբունքների վերլուծությանը, ուրվագծելով դրանց կատարելագործման ուղիները:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգությունների բնութագրման համար աղյուսակներում և ամբողջ աշխատության մեջ գործածվում է երկու հասկացություն՝ *էթնիկ խումբ* և *ազգային փոքրամասնություն*:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ ո՛չ ժամանակակից գիտության մեջ, ո՛չ էլ միջազգային իրավական և միջազգային քաղաքական փաս-

տաթոթքերում² «*էթնիկ խումբ*» և «*ազգային փոքրամասնություն*» հասկացությունները միանշանակ չեն սահմանվում ու բնորոշվում, նպատակահարմար գտանք անդրադառնալ այդ հասկացություններին և ճշգրտել դրանց գործածության առումները սույն աշխատության մեջ:

Այստեղ, կարծում եմ, տեղին չէ մանրակրկիտ վերլուծել գլխավորության մեջ և միջազգային-իրավական փաստաթղթերում գոյություն ունեցող բոլոր մոտեցումները և սահմանումները (նկատի առնելով այն հանգամանքը, որ սույն ուսումնասիրության հիմնական խնդիրները կապված են ՀՀ ազգային կազմի բնութագրման հետ), բայց ելնելով ասպարեզի վրա եղած բոլոր տեսակետների համադրումից, ուղղակի ընդգծենք, որ *էթնիկ խումբ* հասկացությունն այստեղ գործածելով նկատի ունենք որևէ էթնոսի (ազգի, ժողովրդի) այնպիսի հատված, որը բնակվում է այլ երկրում, այսինքն՝ իր պատմական հայրենիքից դուրս և սերտորեն կապված է տվյալ երկրի էթնիկ հանրության, նրա սոցիալ-տնտեսական, լեզվամշակութային և պետա-իրավական համակարգի հետ:

Եթե նման խումբը ինքնակազմակերպվում և ստեղծում է ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք միտված են միավորելու տվյալ խմբի հավաքական ջանքերը՝ պահպանելու և զարգացնելու համար սեփական լեզվամշակութային արժեքները, ապա այն հանդես է գալիս որպես *ազգային փոքրամասնություն*: Այսինքն, այս կամ այն *էթնիկ խումբ*ը, որը ցանկանում է և քայլեր է ձեռնարկում բնակության երկրում իր մշակութային և էթնիկ ինքնությունը պահպանելու, ստեղծելով մշակութային, կրոնական, բարեգործական և այլ համաբնույթ կազմակերպություններ, միություններ և համայնքներ, ապա այն հանդես է գալիս որպես *ազգային փոքրամասնություն*:³ Ընդ որում կարևորվում է ոչ այնքան տվյալ խմբի քանակական մեծությունը, որքան խմբի անդամների քաղաքացիական կարգավիճակը, այսինքն՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք

² *С.В. Соколовский*, Права меньшинств, М., 1997; Права и статус национальных меньшинств в бывшем СССР, М., 1993; Selection of Texts from International and Regional Human Rights Instruments and Other Documents, Lund (Sweden) 1993; *М.Ю. Мартынова*, Национальные меньшинства в странах Восточной Европы в 90-е годы, М., 1995; *Г.Е. Жвания*, Международноправовые гарантии защиты национальных меньшинств, Тбилиси, 1959; *С.М. Пушкин*, Проблема защиты меньшинств в международном праве. – Государство и право, 1992, N 8; *Эп. Ի. Միրումյան*, Ազգային փոքրամասնությունների իրավունքները մարդու իրավունքների համակարգում. – «Համատեղ սեմինարների նյութերի ժողովածու», Եր., 1997, էջ 79-86; *P. Thornberry*, International Law and the Rights of Minorities. – Oxford: Clarendon Press, 1991.

³ *С.В. Соколовский*, նշվ. աշխ., էջ 9-17:

պետք է լինեն տվյալ պետության քաղաքացիներ և մշտական բնակիչներ:

Ազգային փոքրամասնությունները իրենց ազգային-մշակութային արժեքների պահպանման ու զարգացման տեսանկյունից գտնվում են անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններում, քան էթնիկ խմբերը, քանզի վերջիններս հաճախ ունենալով ցրիվ (դիսպերս) բնակություն, փաստորեն զրկված են իրենց էթնոմշակութային ինքնությունը պահպանելու համար հավաքական ջանքեր գործադրելու հնարավորությունից:

Հատկանշական է, որ ՀՀ 2001թ. մարդահամարը վավերացրեց շուրջ 90 ազգությունների ներկայացուցիչների բնակությունը հանրապետությունում, նրանցից 11-ը սույն հետազոտության շրջանակներում բնութագրվեցին որպես ազգային փոքրամասնություններ, իսկ 13-ը՝ որպես էթնիկ խմբեր (տե՛ս աղյուսակ 1 և աղյուսակ 2): Մյուս էթնիկ խմբերին հատուկ չանդրադարձանք՝ քվաքանակի սակավության և առավել շարժունության պատճառով:

Վերլուծելով Աղյուսակ 1-ի և Աղյուսակ 2-ի տվյալների շարժընթացը, ինչպես նաև ավելի վաղ շրջանների վիճակագրությունը, կարելի է անել մի շարք հետևություններ.⁴

1. Նշված ժամանակահատվածում ազգային փոքրամասնությունների տեսակարար կշիռը Հայաստանում մեծ չի եղել, մույնիսկ կարելի է ասել, որ համեմատած հարևան երկրների հետ՝ բավականին փոքր է եղել: Հենց այդ պատճառով որոշ մասնագետներ Հայաստանի բնակչությունը մեն-էթնիկ են համարել, չնայած, ինչպես տեսնում ենք, դա, բառիս բուն իմաստով, չի համապատասխանում իրականությանը: Վերոհիշյալ փոքր տոկոսը հետևանք է մի շարք ողբերգական պատմական իրադարձությունների: Հայաստանը բազմիցս ենթարկվել է հարձակումների, ավերածությունների, երկիրը մե'րթ կորցրել, մե'րթ վերականգնել է իր պետական անկախությունը, իսկ նրա հիմնական բնակչությունը ենթարկվել է հալածանքների, ցեղասպանության, բռնազաղթերի և հարկադրական գաղթերի, որոնց արդյունքում հայ ժողովուրդը հայտնվեց ծանրագույն կացության մեջ:

⁴ Այդ աղյուսակները մանրամասն վերլուծված են սույն աշխատության երրորդ և հինգերորդ գլուխներում:

Աղյուսակ 2. ՀՀ-ում այսօր բնակվող էթնիկ խմբերի թվաքանակի շարժընթացը 1897-2001թթ.

Էթնիկ խմբերը	Թվաքանակն ըստ տարիների						
	1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
սլավոններ	-	3	-	-	8	14	326
արաբներ	-	-	-	4	3	3	322
մոլդավացիներ	49	18	-	324	334	525	216
մոլդովացիներ	309	419	-	477	505	489	184
բուլղարներ	-	3	-	78	100	83	183
ինգուշներ	13	-	-	-	10	33	158
թաթարներ	-	27	-	-	753	470	123
օսեր	100	128	-	256	249	331	67
լատիշներ	101	12	-	754	118	145	50
լիտվացիներ	4	4	-	249	83	219	50
ադրբեջանցիներ*	-	-	107.748	148.189	160.841	84.860	29
ուկրաիներ	746	128	-	16	12	19	22
գնչուներ	3	2	10	12	59	48	10

* Մինչև 1930 թ. «ադրբեջանցիներ» էրնանումը չէր գործածվում (Всесоюзная перепись населения 1926г. М., 1929, сс. 7, 21):

Աղյուսակ 1. ՀՀ-ում այսօր բնակվող ազգային փոքրամասնությունների թվաքանակի շարժընթացը (1897-2001թթ.)⁵

Ազգային փոքրամասնություններ	Թվաքանակն ըստ տարիների						
	1897թ.	1926թ.	1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2001թ.
եզդիներ	-	12.237	-*	-*	-*	51.976	40.620
ռուսներ	25.014	19.548	56.477	66.108	70.336	51.555	14.660
ասորիներ	2.522	2.215	4.326	5.544	6.183	5.963	3.409
ուկրաինացիներ	1.853	2.826	5.593	8.390	8.900	8.341	1.633
բլղեր	27.961	3.025	25.627	37.486	50.822	4.151	1.519
հույներ	5.936	2.980	4.976	5.690	5.653	4.650	1.176
վրացիներ	514	274	816	1.439	1.314	1.364	696
բելառուսներ	103	360	-	1.179	1.183	1.061	257
գերմանացիներ	207	104	-	407	333	265	133
հրեաներ	834	335	1.024	1.048	953	676	109
լեհեր	1.188	705	-	389	691	270	97

⁵ Ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի հաջորդականությունը տրվում է ըստ նրանց թվաքանակի նվազման սկզբունքի (որպես ելակետային հիմք են ծառայում ՀՀ 2001 թ. մարդահամարի ցուցանիշները):

- տվյալներ հնարավոր չի եղել հայթայթել:

* 1959, 1970 և 1979 թթ. մարդահամարների ժամանակ **եզդիներին** գրանցել էին «**բլղեր**» անվան տակ:

Այսօր Հայաստանի Հանրապետությունն ընդգրկում է հայկական էթնիկ տարածքի շուրջ 10%-ը՝ 29,8 հազ. քառ.կմ, իսկ հայության շուրջ 70%-ն ապրում է Սփյուռքում: Հասկանալի է, որ եթե հայությունը չի կարողացել կայուն բնակություն հաստատել իր պատմական հայրենիքում, ապա այստեղ բնակվող այլազգիները, առավել ևս չէին կարող բնականոն զարգացման պայմաններ ունենալ:

Տարբեր երկրների պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ ազգային փոքրամասնությունները կայուն զարգացում են ապրում այն երկրներում, որտեղ քաղաքական, տնտեսական, սոցիալական և հումանիտար զարգացման համար հաստատվում են նպաստավոր պայմաններ, և ընդհակառակը:

2. Նորանկախ Հայաստանի Հանրապետության տասներեք տարիների ընթացքում ազգային փոքրամասնությունների և՛ բացարձակ թվաքանակը, և՛ տեսակարար կշիռն ամբողջ բնակչության կազմում կտրուկ նվազել է 10,3%-ից (1979թ.) և 6,7%-ից (1989թ.) 2,2%-ի 2001 թվականին, ինչը հետևանք է նոր աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ՀՀ զարգացման գործընթացների, որոնցից առավել կարևորներն են Խորհրդային Միության փլուզումը և գոյություն ունեցած տնտեսական կապերի խզումը, Ադրբեջանի կողմից հրահրված Արցախյան պատերազմը և Հայաստանի Հանրապետության առ այսօր շարունակվող շրջափակումը, երկրի տևական և խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամը և այլն: Այս ամենն առաջացրեց զանգվածային արտագաղթ դեպի մերձավոր և հեռավոր երկրներ, ընդգրկելով հայության և ՀՀ տարածքում բնակվող այլ ազգությունների հազարավոր ներկայացուցիչների:⁶

1980-ական թվականների վերջերին և 1990-ականների սկզբներին Ադրբեջանում տեղի ունեցած հայերի զանգվածային ջարդերի հետևանքով ավելի քան երեք հարյուր հիսուն հազար հայ և այլազգի փախստականներ ապաստան գտան Հայաստանի Հանրապետությունում: Ստեղծված քաղաքական և բարոյաևոգեբանական պայմաններում Հայաստանում բնակվող ադրբեջանցիների մեծ մասն արտագաղթեց Ադրբեջան, որտեղ հայկական ջարդերի կազմակերպիչներն ու իրականացնողները փաստորեն խորհրդային իշխանությունների կողմից մնացին անպատիժ,

⁶ Ըստ ճշգրտված տվյալների՝ 1990-ական թվականների սկզբներից մինչև 2004թ. ավելի, քան մեկ միլիոն մարդ է արտագաղթել հանրապետությունից: Նվազած ծավալներով արտագաղթը շարունակվում է առ այսօր:

և Հայաստանում բնակվող աղյրեջանցիների մեջ տազնապ առաջացավ իրենց սեփական անվտանգության հարցում:՝ Չմայած չափազանց լարված իրադրությանը, Հայաստանում հակաաղյրեջանական և հակախորհրդային տրամադրությունները չվերածվեցին բացահայտ զանգվածային բախումների:

3. Լեռնային Ղարաբաղի հայերի ազգային-ազատագրական պայքարը, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը, ամբողջատիրական համակարգի վերացումը, հայ ժողովրդի ազգային վերելքը բարձրացրին ՀՀ ամբողջ բնակչության, այդ թվում նաև, ազգային փոքրամասնությունների ազգային ինքնագիտակցությունը և հետաքրքրությունը դեպի սեփական ազգային մշակութային արժանիքներն ու արժեքները: Դա ուղեկցվեց նաև նրանով, որ նրանց ազգային պետությունները և զանազան ազգային ու միջազգային կազմակերպություններն իրենց «հայրենակիցների» համար արտագաղթի ծրագրեր մշակեցին և իրագործեցին, ինչն անշուշտ բացասաբար անդրադարձավ Հայաստանում նրանց բացարձակ և հարաբերական թվաքանակի վրա:

Հետազոտության իրականացման արդյունքում հնարավոր դարձավ.

ի հայտ բերել ՀՀ ազգային փոքրամասնությունների հոծ և ցրիվ բնակության հիմնական վայրերը, կազմել «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների արդի տեղաբաշխման քարտեզ»-ներ, որոնք արտացոլում են 1999-2004 թվականների իրողությունները,

բնութագրել նրանց լեզվամշակութային առանձնահատկությունները, ազգային ավանդույթների պահպանվածության և կիրառման ձևերը, երկլեզվության և բազմալեզվության կենցաղավարումը, մենեթնիկ և երկեթնիկ ամուսնությունների, խառը ազգային կազմ ունեցող ընտանիքների տարածվածության աստիճանը, հասարակության մեջ սերտաճման մակարդակը: Գրառած նյութի հիման վրա պարզ դարձավ, որ ազգային փոքրամասնությունների հոծ (կոմպակտ) բնակեցման վայրերում նրանց լեզվամշակութային հատկանիշները, ավանդույթներն ավելի լավ են պահպանված, քան ցրիվ բնակեցման վայրերում, ինչը հեղինակներին հիմք տվեց

* Այս փաստերը հանրահայտ են և լայնորեն լուսաբանվել են տեղեկատվական բոլոր միջոցներով: Հարկ է նշել, սակայն, որ աղյրեջանական պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվական միջոցները քաղաքական շահադիտական նկատառումներով ակնհայտորեն ուղծացնում են Աղյրեջան գնացածների թիվը, և ընդհակառակը, էսպես նվազեցնում Աղյրեջանից բռնագաղթված հայերի (և այլ ազգիների) թվաքանակը:

եզրակացնելու, որ միևնույն ազգային փոքրամասնության տարբեր հատվածները՝ հասարակության մեջ ինտեգրման տարբեր մակարդակներով են բնութագրվում, վեր հանելով դրանց պատճառներն ու նախադրյալները,

բացահայտել ազգային փոքրամասնությունների՝ հասարակության անցումային շրջանի և քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններին հարմարվելու գործընթացի առանձնահատկությունները, հաշվի առնելով, որ հանրապետությունում ներկայումս բնակվող ազգային փոքրամասնությունները միմյանցից տարբերվում են մի շարք էական հատկանիշներով, որոնցից են՝ Հայաստանում բնակության վաղեմությունը, տեղական պայմաններին հարմարվածության աստիճանը, հայկական միջավայրում նրանց սերտաճման մակարդակը, քվաքանակը և տեսակարար կշիռը, սոցիալ-մասնագիտական կառուցվածքը, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը, ինքնակազմակերպվածության (ինստիտուցիոնալ կազմակերպվածության) մակարդակը, սեփական ֆինանսական և նյութական հնարավորությունները, խմբային ձգտումները և այլն: Պարզվեց, որ դրան համապատասխան էլ ազգային փոքրամասնությունների դրությունն ու խնդիրները միմյանցից փոքր-ինչ տարբերվում են: Այդ հանգամանքը մեզ հիմք տվեց հնարավոր, գուցե և անհրաժեշտ համարել ոչ միայն միասնականացված պետական օժանդակության ծրագրի մշակումը, այլ նաև տարբերակված մոտեցում ցուցաբերել այս կամ այն ազգային փոքրամասնության խնդիրներին աջակցելու հարցում: Ասվածը պարզ դարձնելու համար ներկայացնենք մի քանի օրինակ. Հայաստանում ազգային փոքրամասնություններ կան, որ քայլեր են ձեռնարկում հիմնելու և ունենալու սեփական պարբերական մամուլ, մյուսները մնան նպատակ չեն հետապնդում: Ազգային փոքրամասնություններ կան, որոնք ջանում են ստեղծել կրթական ծրագրեր, գրադարաններ, ժողովրդական գեղարվեստական համույթներ, կրոնական համայնք, ձգտելով ունենալ համապատասխան պաշտամունքային կառույց և այլն: Մյուսներն այս կամ այն հարցում մնան ձգտումներ չեն ցուցաբերում կամ ցուցաբերում են այլ բնագավառներում: Հասկանալի է, որ յուրաքանչյուր ազգային փոքրամասնությանն աջակցելիս Հայաստանի իշխանությունները և հասարակությունը պետք է հաշվի առնեն գոյութ-

յուն ունեցող իրողությունները և խնդիրները,⁷

երևան հանել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության չափն ու ձևերը սեփականաշնորհման և մասնավորեցման գործընթացներին գյուղում և քաղաքում, ներկա պայմաններում նրանց տնտեսական գործունեության հիմնական ոլորտները, սոցիալական և էթնոմշակութային առանձնահատկությունները, արտագաղթի և ներգաղթի ծավալները և ուղղությունները:

Գրառած նյութերը ցույց են տալիս, որ բոլոր ազգային փոքրամասնությունները, անկախ իրենց հոծ կամ ցրվ ընկնեցումից, ստացան հայերին հավասար իրավունքներ և մասնակցեցին գյուղատնտեսության, արդյունաբերության և տնտեսության այլ ոլորտներում իրականացված սեփականաշնորհման և մասնավորեցման գործընթացներին, այսինքն, նրանց *տնտեսական* իրավունքները պաշտպանվել են օրենքով և իրագործվել են պրակտիկայում: Այլ բան է, որ սեփականաշնորհման և մասնավորեցման գործընթացներն իրականացվել են ոչ կատարյալ օրենքներով և եղանակներով, որի արդյունքում հանրապետությունը հայտնվեց խորը սոցիալ-տնտեսական տևական ճգնաժամի մեջ: Վատթարացան ինչպես հայ բնակչության, այնպես էլ ազգային փոքրամասնությունների մեծամասնության կենսական պայմանները, հանրապետությունը դասվեց աշխարհի աղքատ երկրների շարքին:

Սոցիալ-տնտեսական ճգնաժամին զուգընթաց երկրում տարածում ստացան այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են կոռուպցիան և բազմապիսի ու բազմաբնույթ այլ իրավախախտումների դրսևորումներ, որոնք այսօր դժվարացնում և դանդաղեցնում են ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացները, արժեքներ, որոնք Հայաստանի Հանրապետության զարգացման և բարգավաճման գլխավոր երաշխիքներն են:

Այս հարցերը ներառվեցին հետազոտության ճանաչողական խնդիրների շարքում, քանզի ազգային փոքրամասնությունների կայունությունը և բնականոն զարգացման ընթացքը ուղղակիորեն կապված է հանրապե-

⁷ Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ 2000թ. լույս տեսած առաջին գրքում հեղինակները նպատակահարմար գտան հետազոտական ծրագրի շարունակումը, քանզի նրանում բնութագրվել էին տասնմեկ ազգային փոքրամասնություններից միայն հինգը: Սույն գրքում ներկայացված վեց ազգային փոքրամասնություններով, փաստորեն, ամբողջական ենք դարձնում հետազոտությունը:

տության սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական զարգացման գործընթացների և պայմանների հետ: Այդ իսկ պատճառով ՀՀ ազգային փոքրամասնություններին նվիրված առաջին գրքում դիտարկվեցին պետականության նոր համակարգի ստեղծման, հասարակության սոցիալ-տնտեսական, իրավական և քաղաքական հիմքերի վերափոխումների առաջին փուլի գործընթացները:

Սույն գրքում հիմնական ուշադրությունը բևեռվեց ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման արդի բարդ ու հակասական պայմաններին: Անկախության հռչակումից առ այսօր անցել է ընդամենը տասներեք տարի, ուստի հասկանալի է, որ այդ կարճ պատմական ժամանակահատվածում դժվար է ամբողջատիրական, ժողովրդավարության տարրերից զուրկ համակարգից սահման և արագ անցում կատարել դեպի նոր արժեքային համակարգ. պակասում է փորձ, գիտելիք և ինչպես պարզվեց, նաև համապատասխան բարոյական արժեքների համակարգ: Ազգային մտակեցվածքը (մենքալիտետը), այդ թվում, նախ և առաջ, պետական պաշտոնյաների մտակեցվածքը կտրուկ չի փոխվում սոսկ օրենքների և որոշումների ընդունմամբ:

Սույն գրքի երկրորդ գլխում հանգամանորեն դիտարկված են քաղաքացիական հասարակության կայացման ընթացքը և հիմնախնդիրները հանրապետությունում 1991-2004թթ. և կատարված են համապատասխան եզրահանգումներ:⁸ Ի հայտ են բերված օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի խոչընդոտները, որոնք առաջացրեցին հանրապետությունում խոր և տևական ճգնաժամ:

Վերլուծելով ներկա իրողությունները, կարելի է նշել, որ այսօր խոսք պետք է գնա ոչ այնքան ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման մասին, որքան այդ արժեքային համակարգերի առանձին, քեև կարևոր տարրերի *ի հայտ գալու* մասին: Գոյություն ունեցող խնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետության և հասարակության ներդաշնակ, համագործակցված, նպատակաուղղված գործունեություն, որն առ այսօր չի իրագործվում: Նորին Գերզանցություն *Շամանակը* ինքնին, տարերայնորեն չի կարող նպաստել հիմնահարցերի լուծմանը:

Աշխատության մեջ վերհանված սուբյեկտիվ բնույթի խոչընդոտների

⁸ Տես սույն աշխատության երկրորդ գլուխը:

շարքում հիշատակված են գ ի տ ու թ յ ա ն անտեսումը նորանկախ պետականության կառավարման գործընթացներում:

Մինչդեռ իրագործված սոցիալ-տնտեսական, քաղաքական, օրենսդրական և մշակութային համակարգային վերափոխումները պետք է հիմնվեն գիտականորեն մշակված ծրագրերի վրա: Գիտական ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանային երկրի կառավարման ռազմավարության և մարտավարության համար: Արևմտանվորպական բոլոր զարգացած երկրների պատմությունն ապացուցում է, որ գիտությունը մեծ դերակատարություն է ունեցել տնտեսության և պետության հզորացման գործում, քանզի դրա շնորհիվ նվազագույնի են հասցվել հնարավոր սխալները և գտնվել են զարգացման ամենաարդյունավետ ուղիները: Այս բոլորը Հայաստանում տեղի չունեցան, չնայած հզոր գիտական ներուժի առկայությանը:

Պարզ է, որ շուտափույթ մշակած և ընդունած ծրագրերը կամ ուրիշ երկրներից ընդօրինակած փորձը՝ առանց հանրապետության առանձնահատկությունները հաշվի առնելու, պետք է ուղեկցվեն վրիպումներով, սխալներով և կոյուստներով, ինչը և տեղի ունեցավ: Հանրահայտ է հետևյալ պարզ ճշմարտությունը՝ հաջող կառավարելու համար անհրաժեշտ է գոյություն ունեցող օբյեկտիվ գործոնների խմացություն և ձեռնարկվելիք քայլերի հետևանքների գիտական կանխատեսում:

Սեփականաշնորհման և մասնավորեցման արդյունքում երեք կարևորագույն նպատակներից ոչ մեկը չիրականացվեց: Վերափոխումները նպատակաուղղված էին. 1) բարձրացնելու գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրության արդյունավետությունը, 2) էլ ավելի բարելավելու հանրապետության բնակչության կենսամակարդակը, 3) ստեղծելու նախադրյալներ հասարակության մեջ սոցիալ-ունեցվածքային միջին դասի և համապատասխան տնտեսական հարաբերությունների ձևավորման համար:

Սակայն տնտեսական վերափոխումների իրագործումն ունեցավ բազմաթիվ բացասական հետևանքներ՝ շատ կարճ ժամանակահատվածում հարուցեց արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալների կտրուկ անկում, զանգվածային գործազրկություն, զանգվածային աղքատացում, հանրապետության բնակչության գերակշիռ հատվածի կենսամակարդակի արագ հետընթաց, բնակչության ունեցվածքային ծայրահեղ բևեռացում, հասարակության պառակտվածու-

քյուն և որպէս այս ամենի արդյունք՝ զանգվածային արտագաղթ: ՀՀ նորանկախ պետութիւնը չապահովեց՝ բնակչության առավել կարիքավոր և վերափոխումների արդյունքում աղքատացած խավերի սոցիալական պաշտպանութիւնը:

Բացասական հետևանքներից էր նաև այն, որ չստեղծվեցին անհրաժեշտ նախադրյալներ հասարակության մեջ սոցիալ-ունեցվածքային միջին դասի ձևավորման համար, ինչն առաջօր էապէս խոչընդոտում է ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացներին: Այս իրողութիւնը փաստում է, որ թեև հանրապետութիւնում *ի հայտ են եկել* ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կարևոր տարրեր, առայժմ չի կարելի խոսել հանրապետութիւնում այդ արժեքային համակարգերի լիարժեք ձևավորման, առավել ևս կայացման մասին:

Անցած տարիներին պետութիւնը չցուցաբերեց համապատասխան *քաղաքական կամք*⁹՝ նպաստելու բնակչության մեջ ժողովրդավարական արժեքների արմատավորմանը: Համաշխարհային պատմութիւնն ապացուցում է, որ միայն այն երկրներն են հասնում սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակի, և այն երկրներում է բարձրանում բնակչության կենսամակարդակը, ու արտագաղթը փոխադրվում ծավալուն և զանգվածային ներգաղթով (իսկ մեր օրինակով՝ հայրենադարձութեամբ), որտեղ պետության բոլոր մակարդակների մարմինները հետևողականորեն դրսևորում են քաղաքական կամք՝ ապահովելու իրավական և արդարացի սոցիալական սկզբունքների գերակայութիւնը երկրում: Հայաստանում այդ խնդիրն ամենահրատապն է ու կարևորագույնը:

Կարելի է ևս մի բանի ոչ պակաս կարևոր եզրահանգումներ կատարել, սակայն վերը շարադրված՝ համակարգային բնույթ կրող եզրահանգումները բավական են հասկանալու, որ պետութիւնը մեզանում որդեգրեց քաղաքականութիւն, որն, ի թիվս գոյութիւն ունեցող անբարենպաստ *օբյեկտիվ* գործոնների, առաջացրեց նաև *սուբյեկտիվ* բնույթի, առ այսօր չհաղթահարված խոչընդոտներ, որոնք բացասաբար անդրադարձան երկրի, բնակչության, այդ թվում նաև ՀՀ ազգային փոքրամասնութիւնների հիմնական զանգվածների զարգացման գործընթացների վրա, խոչ-

⁹ Հակառակ ջանքերը, ցավոք, հաճախ են գործադրվել մեզանում:

ընդոտներ, որոնք դանդաղեցնում և բարդացնում են քաղաքացիական հասարակության կայացումը:

Օբյեկտիվ բնույթի խոչընդոտներից կարելի է առանձնացնել կարևորագույնը՝ ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման և կայունացման համար բացակայում է սոցիալ-տնտեսական հիմքը, ձևավորված և ամրացած միջին դասը, որը վերոհիշյալ արժեքների հիմնական կրողն է: Իսկ մեր հանրապետության բնակչությունը դեռևս բաղկացած է երկու բևեռացված խավերից՝ աղքատներից և օլիգարխներից, միջին խավն աննշան տեղ է գրավում և կայացած չէ որպես սոցիալական և քաղաքական գործոն:

ՀՀ ազգային փոքրամասնությունների արդի կացությունը և զարգացման միտումները ճիշտ ընկալելու և զմահատելու համար կարևոր է ևս երկու գործոնների դիտարկումը:

Առաջինը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում տիրող ազգամիջյան հարաբերությունների բարոյահոգեբանական մթնոլորտին:

Արդարացի կլինի այն բնորոշել որպես միանգամայն բարենպաստ և բարյացակամ, քանզի ո՛չ պատմական անցյալում, ո՛չ էլ անկախության տարիներին Հայաստանում տեղի չեն ունեցել ազգամիջյան բախումներ, չեն նկատվել այդ ասպարեզում լարվածություն կամ լուրջ հակասությունների դրսևորումներ: Դա հանրահայտ փաստ է, որը բազմիցս վկայակոչվել է հենց ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային հասարակական կազմակերպությունների ղեկավար գործիչների ու շարքային անդամների կողմից:¹⁰

Եվ այս առումով երևի օրինաչափ է, որ Հայաստանի Հանրապետությունում երկկեզվությունը և բազմալեզվությունը լայն տարածում է ստացել ինչպես հայ բնակչության, այնպես էլ ազգային փոքրամասնությունների մեջ: Նույն, հանդուրժողական և բարյացակամ մթնոլորտի մասին է վկայում ազգամիջյան ամուսնությունների բավականին տարածվածությունը, հատկապես ազգային փոքրամասնությունների միջավայրում, որոնց պերճախոս իրողությունները դիտարկվել են սույն ուսումնասիրության տարբեր հատվածներում: Այդ մույն երևույթի մասին են վկայում հետազոտության ընթացքում արձանագրված բազմաթիվ փաստերն այն մա-

¹⁰ Տե՛ս օրինակ՝ *Վ.Խ. Չատուհ, Հայաստանի ազգությունների միությունը*. – Հայաստանի ազգությունները, Եր., 2000, էջ 8-14; *Թ.Լ. Ասաֆյանի, Վրացական համայնք*. – Նույն տեղում, էջ 42-47:

սին, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն այցելում են հայկական եկեղեցիներ, աղոթում, մոմ վառում և ծխական այլ արարողությունների ու տոնական հանդեսների մասնակցում:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված չէ ազգային խտրականության և ոչ մի դեպք: Հայ-ադրբեջանական հարաբերություններն, ինչպես նշեցինք, պետք է դիտարկվեն այլ հարթությունում: 1988-1990-ականներին Ադրբեջանում տեղի ունեցած զանգվածային հայկական ջարդերը և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի առ այսօր չլուծված լինելը ծայրահեղ լարվածություն առաջացրեց հայ-ադրբեջանական հարաբերություններում, որոնց անդրադարձել ենք վերևում: Բայց այն հանգամանքը, որ այսօր Հայաստանում բնակվող քեկուզ փոքրաթիվ ադրբեջանցիներն ապրում են ազատ և անվտանգ, չթաքցնելով իրենց ազգային պատկանելությունը, սերտորեն հաղորդակցվելով հայ բնակչության և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, պերճախոս է և վկայում է Հայաստանում տիրող փոխադարձ ազգային համերոժողակամության և համագործակցության կայուն ավանդույթների կենսունակության մասին: Այդ համագործակցությունը, սերտ հաղորդակցությունն ակնհայտորեն տեսանելի է ինչպես կենցաղային մակարդակում, այնպես էլ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ու պաշտոնական, պետական ոլորտում:

Մյուս խումբ հարցերը վերաբերում են ՀՀ ազգային փոքրամասնությունների կացության կարգավորման ասպարեզում միջազգային իրավական, միջազգային քաղաքական նորմերի և երաշխիքների կիրառմանը, ինչպես նաև Հայաստանում ձևավորված ու կենսագործվող օրենսդրությանը:

Առաջին գրքում հատուկ բաժին հատկացվեց ՀՀ ազգային փոքրամասնությունների իրավաքաղաքական կարգավիճակին և դրա կատարելագործման ուղիներին,¹¹ այստեղ նպատակահարմար գտանք ՀՀ ազգային փոքրամասնությունների de jure և de facto գոյություն ունեցող և կենսագործվող իրավունքների և երաշխիքների հայեցակարգային վերլուծություն կատարել, այլ ոչ քան գոյություն ունեցող փաստաթղթերի թվարկում և բնութագրում (որը նույնպես կարևոր հանգամանք է), հատկապես ուշադրությունը բևեռելով քաղաքացիական և քաղաքական, լեզվական,

¹¹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I, էջ 140-148:

մշակութային և կրթական, տնտեսական, ինստիտուցիոնալ ինքնակազմակերպման և միջազգային կապերի իրավունքների կենսագործման վրա:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին

Ազգային փոքրամասնությունների իրավունքների համակարգում քաղաքացիության հետ կապված իրավունքները կարևորագույններից են: Հայաստանի անկախության ձեռքբերման գործընթացներում ամենաառաջին իրավական փաստաթուղթը «Հայաստանի անկախության մասին Հռչակագիր»-ն էր, որն ընդունվեց 1990 թվականի օգոստոսի 23-ին: Դրանում իր արտացոլումը գտավ կարևորագույն հոդվածներից մեկը՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: ... Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից» (հոդված 4):¹² Հետագայում այս դրույթն իր զարգացումն ու վավերացումը գտավ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության» մեջ և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» հատուկ օրենքում:¹³

1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը» հռչակեց, որ «ՀՀ քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հաշաքքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները» (հոդված 15):¹⁴ Հաջորդ՝ 16-րդ հոդվածում վավերացված է, որ «բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով»:¹⁵

¹² Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995, էջ 7:

¹³ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Ա, Եր., 1999, էջ 61-70:

¹⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., 1996, էջ 10:

¹⁵ Նույն տեղում:

Այսինքն, այս օրենսդրական փաստաթղթերը հնարավորություն ընձեռեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալ բոլոր այն մարդկանց, ովքեր այդ ժամանակ մշտապես բնակվում էին հանրապետության տարածքում: Առաջին հայացքից դա միանգամայն բնական և տրամաբանական է թվում, սակայն այդպես չի եղել ԽՍՀՄ փլուզումից հետո անկախություն ձեռք բերած նախկին միութենական մի շարք հանրապետություններում:

ՀՀ ազգային փոքրամասնությունները դավանում են տարբեր կրոններ, ուստի կարևոր է երաշխիքների ապահովումը կրոնական կյանքի բնագավառում: ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է, որ «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք» (հոդված 23):¹⁶ Հետագայում ընդունվեց հատուկ օրենք «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին»,¹⁷ ուր այդ իրավունքը մանրամասնված է և ՀՀ ազգային փոքրամասնություններին վերապահված է իրավունք ազատորեն՝ իրենց ազգային դավանանքով հիմնելու կրոնական կազմակերպություններ (հոդված 5): «Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի և կրոնական դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր»:¹⁸ Կիրառելով այս սահմանադրական և օրենսդրական դրույթները, ՀՀ ազգային փոքրամասնությունները ստեղծել են ոչ միայն ազգային մշակութային հասարակական կազմակերպություններ, այլ նաև կրոնական համայնքներ, հիմնելով համապատասխան պաշտամունքային կառույցներ և ազատորեն կազմակերպելով իրենց կրոնածիսական արարողությունները (համապատասխան նյութերը և բնութագրությունները բերված են սույն գլխի 3-րդ գլխում, ինչպես նաև առաջին գլխի 4-րդ գլխում):¹⁹

Անկախության հռչակումից առ այսօր Հայաստանի ազգային փոքրամասնությունների որևէ ներկայացուցչի առջև քաղաքացիության և քաղաքական իրավունքների հետ կապված ոչ մի բարդույթ չի ծագել կամ սուր

¹⁶ Նույն տեղում, էջ 11:

¹⁷ Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), եր., 1995, էջ 477-478:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր 1, էջ 100-128:

իրավիճակ չի ստեղծվել, ինչը վկայում է երաշխավորված և ազգային փոքրամասնությունների շահերն արտահայտող իրավունքների կենսագործման մասին:

Լեզվական, մշակութային և կրթական իրավունքների մասին

Հանրահայտ է, որ մայրենի լեզուն հանդիսանում է ցանկացած ազգային փոքրամասնության էթնիկ և մշակութային ինքնության պահպանման առաջնահերթ գործոններից մեկը: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում վավերացված է կարևոր դրույթ, որի համաձայն «ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիներն ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք»:²⁰ Հետագայում հատուկ օրենքներում պարզաբանվել, հստակեցվել և ամրագրվել են ազգային փոքրամասնությունների իրավունքներն այդ բնագավառներում:

Հատկապես կցանկանայինք անդրադառնալ 1993 թվականին ընդունված «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին: Հենց առաջին հոդվածում վավերացված է, որ «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»²¹ և որ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրերով ու հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ» (հոդված 2):²² Նույն օրենքի «Հաստատությունների լեզվական իրավունքների և պարտականությունների մասին» հատվածում սահմանվում է, որ «ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ» (հոդված 4):²³ Ըստ գործող օրենսդրության ՀՀ ազգային փոքրամասնություններին իրավունք է վերապահված մայրենի լեզվով հրատարակելու

²⁰ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, էջ 14:

²¹ Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), էջ 478:

²² Նույն տեղում, էջ 477-478:

²³ Նույն տեղում:

պարբերական մամուլ, դասագրքեր, գրականություն, գործածել այն հրապարակային ելույթներում, ստեղծել գրադարաններ, ակումբներ և այլն.²⁴

Օրենսդրական ակտերից բերված դրույթները, անկասկած, վկայում են այն ուշադրության մասին, որ Հայաստանում ցուցաբերվում է ազգային փոքրամասնությունների խնդիրների հարցում: Լեզվի և մշակույթի պահպանման ասպարեզում ստեղծված իրավական դաշտն ապահովում է ժառանգորդությունն ու այդ արժեքների փոխանցումը նոր սերնդին:

Հարկ է նշել, որ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի իրականացման կարգն, ըստ իս, լուրջ վրիպումներ էր պարունակում: ՀՀ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց զգալի մասն ազատ չէր տիրապետում գրավոր և բանավոր (խոսակցական մակարդակով) հայերենին: Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում պարտադիր ուսուցման լեզուն ռուսերենն էր, և ազգային փոքրամասնությունների համար միութենական հանրապետության բնիկ ազգության լեզվի ուսուցումը դպրոցում պարտադիր չէր, այլ կամավոր էր, ուստի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող էին չսովորել և չիմանալ տվյալ միութենական հանրապետության բնիկ ժողովրդի ազգային լեզուն: Տասնամյակների ընթացքում դա հանգեցրեց մի իրողության, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների զգալի մասը բավարար մակարդակով չգիտեր այն ազգի լեզուն, որի միջավայրում ապրում էր:

ԽՍՀՄ փլուզումից ու նորանկախ պետությունների կազմավորումից հետո, երբ համապատասխան օրենքներ ընդունվեցին պետական լեզուների մասին, ազգային փոքրամասնությունների այն ներկայացուցիչները, ովքեր չէին տիրապետում բնիկ ազգության լեզվին, հայտնվեցին դժվար կացության մեջ: Դժվարություններ առաջացան կրթության, ծառայողական և մասնագիտական առաջխաղացման ասպարեզներում, որոնք սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետ մեկտեղ նպաստեցին զանգվածային արտագաղթին: Անհրաժեշտ է նշել, որ գրեթե համանման դժվարություններ ծառացան նաև այն հայերի առջև (հատկապես հայ փախստականների միջավայրում), ովքեր ճակատագրի բերումով ռուսախոս էին դարձել: Նրանց մի մասն էլ արտագաղթեց Հայաստանից:

Հիշյալ օրենքի կիրարկման կարգը սահմանվեց շատ կարճ ժամանա-

²⁴ Նույն տեղում:

կախատվածում՝²⁵ օրենքն ընդունվեց 1993թ. ապրիլի 17-ին և նրա որոշ հոդվածների կիրարկումը սահմանվեց նույնիսկ «հրապարակման պահից», մյուսներինը՝ 1993թ. հունիսի 1-ից, 1993թ. սեպտեմբերի 1-ից, իսկ ամբողջ օրենքի կիրարկումը՝ 1994թ. հունվարի 1-ից:²⁶ Նկատի չառնվեցին գոյություն ունեցող իրողությունները, չնախատեսվեցին պետական միջոցներով պետական լեզվի արագացված դասընթացներ այն տասնյակ (գուցե և հարյուր) հազարավոր ՀՀ քաղաքացիների համար, ովքեր այդ ժամանակ չէին տիրապետում հայերենին: Հանրապետության քաղաքացիներին անհրաժեշտ էր տալ ժամանակ, որպեսզի նրանք կարողանային հարմարվել լեզվական ու սոցիալ-հոգեբանական նոր պայմաններին, քանզի օտարում տեղի ունեցավ, և մեծացան արտագաղթի ծավալները: Օրինակ, Բելառուսում անցումը նման օրենքին սահմանվեց տասը տարով,²⁷ պետական լեզվին չտիրապետողների համար նախատեսելով կարճաժամկետ և երկարաժամկետ արագացված դասընթացների կազմակերպում ու ֆինանսավորում պետական բյուջեից, ինչն աստիճանական անցման հնարավորություն ընձեռեց և կանխեց ցավազին հետևանքները: Նման խոհեմություն Հայաստանում մենք չորստեղծեցինք:

Հատկանշական է, որ շուրջ վեց տարի անց՝ 1999թ. սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հավանություն տվեց լայն միջոցառումների ծրագիր պարունակող «Ռուսաց լեզուն Հայաստանի Հանրապետության կրթության համակարգում և մշակութային-հասարակական կյանքում» հայեցակարգին,²⁸ ուր ընդգծվում է ռուսաց լեզվի կարևոր դերն ու նշանակությունը մեր հասարակության զարգացման գործընթացում:²⁹ կրթության, գիտության, մշակույթի, ազգամիջյան հարաբերությունների և հաղորդակցության մեջ:

Բազմաթիվ հարցումները, որոնք իրագործվեցին սույն հետազոտության ընթացքում, ցույց տվեցին, որ ՀՀ ազգային փոքրամասնությունների բացարձակ մեծամասնությունն օրինաչափ է համարում հայերենը որպես

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ *А.Н. Билык*, Национальные меньшинства Республики Беларусь и законодательное обеспечение их прав. — Расы и народы, вып. 24, М., 1997, с. 130.

²⁸ «Ռուսաց լեզուն Հայաստանի Հանրապետության կրթության համակարգում և մշակութային-հասարակական կյանքում» հայեցակարգ. — ՀՀ Կառավարության որոշում, սեպտեմբեր, 1999:

²⁹ Նույն տեղում:

պետական լեզու ընդունելը և գտնում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, հայոց լեզվին չտիրապետելով, չեն կարող ներդաշնակորեն ներգրավվել հանրապետության հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին: Այնպես որ, հայոց լեզվին տիրապետելը օբյեկտիվորեն բխում է ազգային փոքրամասնությունների իրական շահերից, հնարավորություն է տալիս ծառայողական առաջընթացի, տարբեր ազգությունների ներկայացուցիչներին միմյանց հետ ազատ հաղորդակցվելու և չի խոչընդոտում իրենց մայրենի լեզվի, մշակութային ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:

Առաջին և երկրորդ գրքերում բնութագրվեցին բազմաթիվ տվյալներ, որոնք վկայում են ՀՀ գյեթե բոլոր ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի, ազգային մշակույթի և պատմության դասավանդման մասին, ինչը, որպես կանոն, կազմակերպվում է նրանց կողմից սեփական նախաձեռնությամբ և հանրապետական ու տեղական իշխանությունների և աջակցությամբ: Դասավանդումը կազմակերպվում է ազգային փոքրամասնությունների հոծ բնակության վայրերում, առանձին միջնակարգ դպրոցներում կամ առանձին դասարաններում, հատուկ կիրակնօրյա դպրոցներում կամ ուսումնական խմբերում: Այդ պարապմունքներին մասնակցում են հիմնականում դպրոցական հասակի երեխաները, ոչ եզակի դեպքերում՝ նաև չափահաս մարդիկ: Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ ազգային փոքրամասնությունների կողմից կազմակերպված այդ դասընթացներին մասնակցում են ոչ միայն տվյալ ազգի ներկայացուցիչները, այլ նաև խառնազգային կազմ ունեցող ընտանիքների անդամները, մույնիսկ, հայերը:

ՀՀ ազգային փոքրամասնությունները մեծ ուշադրություն են դարձնում ժողովրդական ստեղծագործության խմբակների և գեղարվեստական համույթների կազմակերպման գործին: Եզդիական, քրդական, ռուսական, ասորական, հունական, ուկրաինական, վրացական, հրեական և գերմանական երաժշտական համույթները հանրահայտ են հանրապետությունում, ընդ որում, կան ոչ միայն չափահասների, այլ նաև մանկական համույթներ: Այս ամենը լավագույնս նպաստում է ազգային արժեքների մշակութային ժառանգորդությանը:

Երևանում և մարզերում պարբերաբար կազմակերպվում են ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդական արվեստի փառատոններ, ժողովրդական դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդեսներ,

ազգային տոնահանդեսներ, պատմական և մշակութային իրադարձությունների հետ կապված հոբելյանական միջոցառումներ, որոնց մասնակցում են ոչ միայն տվյալ ազգային փոքրամասնության, այլ նաև հայ բնակչության և մյուս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Այս ամենը լուսաբանվում է տպագիր և էլեկտրոնային մամուլում, հնարավորություն ընձեռելով հանրապետության լայն հասարակայնությանը հաղորդակից դառնալու ազգային փոքրամասնությունների առօրյա կյանքին և մշակութային բնութագրին:

Ազգային փոքրամասնություններից շատերն ունեն նաև իրենց մամուլը, որտեղ լուսաբանում են ինչպես իրենց կյանքի տարբեր բնագավառներն ու խնդիրները, այնպես էլ իրադարձությունները Հայաստանի Հանրապետությունում, իրենց պատմական հայրենիքում և արտերկրների ազգակից համայնքներում: Այս ամենը մի կողմից մեծապես նպաստում է ՀՀ ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային ինքնության, ազգային պատմամշակութային արժեքների ու հատկանիշների պահպանմանը, զարգացմանը և նոր սերնդին ազգային արժեքների փոխանցմանը, մյուս կողմից նրանց բնականոն ներգրավմանը Հայաստանի Հանրապետության լիաբյուր կյանքին: Եզրակացնելով՝ անշուշտ կարելի է փաստել, որ ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզվական, մշակութային և կրթական իրավունքները ոչ միայն երաշխավորված են օրենսդրորեն, այլ նաև գործնականում իրականացվում են պրակտիկայում: Ինչ վերաբերում է Հայաստանի Կառավարության պետականորեն ծրագրավորված աջակցությանն այս բոլոր հարցերում, ստորև դրան կանդրադառնանք հանգամանորեն:

Տարբեր երկրներում ազգային փոքրամասնությունների դրությունն ուսումնասիրող մասնագետները հաճախ են նկատել, որ էական տարբերություն կա օրենսդրական փաստաթղթերում հռչակված *իրավական* երաշխիքների և ազգային փոքրամասնությունների *իրական* դրության միջև: Պարզ է, որ հաճախ իրական դրությունն ավելի վատթար է: Հենց այս պատճառով մենք փորձ ենք անում համադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների *de jure* կարգավիճակը և *de facto* դրությունը: Համապատասխան հետևություններ կալող է անել յուրաքանչյուր ընթերցող:

կանության դրսևորում: Վերևում մենք արդեն անդրադարձել ենք, որ սեփականաշնորհման և մասնավորեցման բուն օրենքները և դրանց կիրարկման կարգը թերի էին և հանգեցրին բազմաթիվ բացասական հետևանքների, որոնք ընդհանուր էին բոլորի համար: Աստեղ հարկ ենք համարում նշել, որ շատ օրենքներ ընդունվեցին և գործադրվեցին առանց նախնական գիտական լուրջ փորձաքննության և հասարակական լայն քննարկումների, չկանխատեսվեցին և չկանխվեցին հնարավոր բացասական հետևանքները:

Ուսումնասիրության շնորհիվ մաս բացահայտվեցին տարբեր ազգային փոքրամասնությունների սոցիալ-մասնագիտական կառուցվածքի առանձնահատկությունները, կրթության մակարդակը, առանձին մասնագիտությունների (գեղամուկների) և տնտեսության տարբեր ոլորտում ներգրավվածության աստիճանը: Համեմատությունները ցույց են տալիս, որ, օրինակ, ձեռներեցությունը գրեթե մույն տոկոսային հարաբերակցությամբ է տարածված ինչպես հայերի, այնպես էլ ազգային փոքրամասնությունների մեջ, որոշ աննշան տարբերակվածությամբ, ինչն, անշուշտ, արդյունք է ոչ միայն ազգամիջյան առողջ փոխհարաբերությունների և փոխհամագործակցության, այլ մաս որևէ խտրականության բացակայության:

Ինստիտուցիոնալ ինքնակազմակերպման իրավունքի մասին

Ժամանակակից միջազգային իրավունքի համակարգում ճանաչվում և ամրագրվում են ոչ միայն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց *անհատական*, այլ նաև, *կոլեկտիվ*, *հավաքական* իրավունքները:³⁴ Վերը բնութագրված ՀՀ օրենսդրական փաստաթղթերում արդեն արտահայտված են ազգային փոքրամասնությունների իրավունքների այս երկու տեսակները: Կոլեկտիվ իրավունքները ցայտուն սահմանված են մաս «ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում,³⁵ որը հնարավորություն է ընձեռում բոլոր ազգային փոքրամաս-

³⁴ *М.Ю. Мартынова*, նշվ.աշխ., էջ 5-18; *С.В. Соколовский*, Права меньшинств, М., 1997, сс. 74-94.

³⁵ ՀՀ Օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին». -- Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Ա, եր., 1999, էջ 467-477:

նություններին ինքնակազմակերպվելու և հասարակական հիմունքներով տարբեր տեսակի միություններ և ասոցիացիաներ ստեղծելու, հոգալու իրենց ազգային արժեքները, լայն փոխհարաբերություններ հաստատելու Հայաստանի սահմաններից դուրս գտնվող իրենց ազգային պետական կազմավորումների և տարբեր երկրներում բնակվող ազգակից համայնքների հետ: Արժանի է հիշատակության Հայաստանի Ազգությունների Միության գործունեությունը՝ համախմբելու մեկ տասնյակը գերազանցող տարբեր ազգային-մշակութային հասարակական կազմակերպությունների միասնական ջանքերը՝ սերտ համագործակցություն հաստատելու հանրապետության հասարակական, քաղաքական, պետական ոլորտների հետ, ազգային փոքրամասնությունների բնականոն զարգացման ընթացքն ապահովելու և ներառելու իրենց կարողությունները հանրապետությունում ընթացող գործընթացներում: Եվ մեծ է այդ գործում քույր հասարակական պետական գործիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Վլադիմիր Չատուկի ներդրումը:³⁶

1990-ական թվականներից առ այսօր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից ստեղծված այդպիսի հասարակական կազմակերպությունների թիվն անցնում է՝ չորս տասնյակից: Դրանք իրենց գործունեությամբ շատ բանով նպաստեցին և նպաստում են իրենց ազգային մշակութային արժեքների պահպանման, պրոպագանդան և զարգացման գործին: Այդ կազմակերպություններն ակտիվորեն համագործակցում են ինչպես հանրապետության պետական կառույցների, այնպես էլ իշխանության տեղական մարմինների ու հասարակական բազմաթիվ ու բազմապիսի կազմակերպությունների հետ:

Ի դեպ, այս հետազոտության իրականացման ընթացքում արդյունավետ համագործակցություն հաստատվեց «Ոստան» էթնոմշակութաբանական կենտրոն հասարակական կազմակերպության և գրեթե բոլոր ազգային մշակութային հասարակական կազմակերպությունների միջև, ինչը երկուստեք չափազանց օգտակար էր մի քանի առումներով: Ազգային փոքրամասնությունների և նրանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները չափազանց ոգևորված էին, ուր ձեռնարկվել է հանրապետության ազգային փոքրամասնությունների խնդիրների բազ-

ՀՀ Օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին». – Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2001թ.), գիրք Դ, Եր., 2001, էջ 771-784:

³⁶ Վ. Չատուկ, Հայաստանի ազգությունների միությունը. – Հայաստանի ազգությունները, էջ 9-14:

մակոդմանի ուսումնասիրություն: Հենց հետազոտության ընթացքում իշխանության տարբեր մակարդակների պաշտոնյաների ուշադրությունը հրավիրվեց ազգային փոքրամասնությունների խնդիրների վրա: Հաճելի է նշել, որ դրանց մի մասը լուծում էր ստանում կարճ ժամանակահատվածում: Եվ վերջապես, այդ համագործակցությունն օգնեց հեղինակային խմբին ճիշտ ընկալելու գոյություն ունեցող խնդիրների էությունը և հրատարակված երկու գրքերում արտացոլել նաև նրանց կողմից արված առաջարկությունները:

Որոշակիորեն կարելի է հավաստել, որ ՀՀ ազգային փոքրամասնությունների գերակշիռ մեծամասնությունը Հայաստանը դիտում է որպես երկրորդ հայրենիք և պատրաստ է իր կարողությունները ներդնել Հայաստանի բարգավաճման գործին:

ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային մշակութային հասարակական կազմակերպությունների գործունեությունն ուսումնասիրելիս եկանք այն հաստատուն եզրակացության, որ դրանց մեծագույն մասը ջանում է հնարավորին չափով հոգ տանել իրենց ազգային փոքրամասնության տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման հարցերում, ինչն, անկասկած, մեծապես կարևորում է դրանց դերն ու նշանակությունը:

Միջազգային կապերի իրավունքի մասին

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը³⁷ ազգային փոքրամասնություններին հնարավորություն է ընձեռում ազատ, անկաշկանդ կապեր հաստատել ու իրագործել ինչպես իրենց ազգային պետական կազմավորման, այնպես էլ տարբեր երկրներում բնակվող այն քաղաքացիների հետ, որոնց հետ ընդհանուր ծագում և մշակութային ու

³⁷ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., 1996, Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995; Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Ա, Եր., 1999, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք Բ, Եր., 1999, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2000թ.), գիրք Գ, Եր., 2000, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2001թ.), գիրք Դ, Եր., 2001, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2002թ.), գիրք Ե, Եր., 2002, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2003թ.), գիրք Զ, Եր., 2003, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2004թ.), գիրք Է, Եր., 2004:

կրոնական ընդհանրություն ունեն: Այն ազգային փոքրամասնությունները, որոնք Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս չունեն ազգային պետական կազմավորում, սերտ կապեր ու համագործակցություն են հաստատել արտերկրներում իրենց ազգակից համայնքների հետ: Ծանոթանալով այդ կապերի ու համագործակցության ծավալների և ձևերի հետ, գալիս ենք այն եզրակացության, որ դրանք չափազանց կարևոր նախադրյալներ են ՀՀ ազգային փոքրամասնությունների էթնոլեզվամշակութային զարգացման համար: Տարբեր երկրների նույն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն այդ համագործակցություններն իրականացնում են ոչ միայն անձնական, անհատական, այլ նաև կոլեկտիվ, համայնքային մասշտաբով, կազմակերպելով պատվիրակությունների փոխայցելություններ, փառատոններ, համատեղ խորհրդաժողովներ, գրքերի և դասագրքերի փոխանակում, նյութական, ֆինանսական փոխօգնություն, մշակելով նաև հեռանկարային ծրագրեր՝ միտված ազգային լեզվի, մշակույթի, ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև հայրենակիցների տնտեսական, սոցիալական դրության բարելավմանը: Գրառված նյութերը ցույց են տալիս, որ 1990-ական թվականներին՝ սոցիալ-տնտեսական դրության տեսակետից առավել դժվար ժամանակաշրջանում, ՀՀ ազգային փոքրամասնությունների զգալի հատվածները ստացան իրենց ազգային պետական կազմավորումներից պետականորեն ծրագրավորված օժանդակություն, ինչպես նաև զանգվածային հայրենադարձության հնարավորություն: Այդ նույն նպատակներին ծառայեց նաև բազմաթիվ ազգային և միջազգային կազմակերպությունների գործունեությունը: Արդյունքում՝ ՀՀ ազգային փոքրամասնությունների թվաքանակի՝ զգալի նվազում տեղի ունեցավ, ինչն այսօր բացասաբար է անդրադարձնում նրանց զարգացման ժողովրդագրական միտումների վրա:

Այն իրողությունը, որ ՀՀ ազգային փոքրամասնությունները և նրանց ստեղծած կազմակերպությունները անկաշկանդ կապեր են հաստատում պատմական հայրենիքի և արտերկրում բնակվող իրենց հայրենակիցների հետ, անշուշտ, կարելի է որակել որպես Հայաստանում ժողովրդավարության նվաճում:

ՀՀ ազգային փոքրամասնությունների վերոհիշյալ հինգ խումբ իրավունքների դիտարկումն որոշակիորեն վկայում է, որ իսկ ընդհանուր ճանաչմանն արժանացած միջազգային իրավական և միջազգային քաղաքական երաշխիքները ոչ միայն օրենսդրություն արագրված են Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև կյանքի են կոչված և իրականություն դարձած: Ավելին, հենց այդ միջազգային իրավական չափանիշներն են դրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմքում:

Այս տարիներին հանրապետությունը միացավ մարդու իրավունքներին վերաբերող շուրջ հինգ տասնյակ միջազգային հիմնական պայմանագրերի և ակտերի, սահմանադրություն հռչակելով, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերը «Հանրապետության իրավական հիմնական օրենսդրության մասն են»:³⁸ Այդ պայմանագրերից կցանկանալինը հստակապես տրանսպարենտ «Լճային» փոքրամասնությունների պաշտպանության մասին Ստրասբուրգի 1995 թվականի փետրվարի 1-ի շրջանակային Կոնվենցիան»³⁹ և «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների սուպահովման մասին Կոնվենցիան (21 հոկտեմբերի, 1994թ.)»:⁴⁰

Չգտելով այդ բնագավառում գոյություն ունեցող միջազգային պայմանագրերի բովանդակությունը տարածել և պրոպագանդել հանրապետությունում՝ «Միջազգային իրավունքի հայկական ընկերակցությունը» 2001թ. «Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր» վերտառությամբ երկու ծավալուն գրքեր հրատարակեց:⁴¹

Միջազգային կազմակերպությունները բարձր են գնահատում ոչ միայն ազգային փոքրամասնությունների դրության կարգավորման հարցում միջազգային չափանիշներով առաջնորդվելը, այլ նաև յուրաքանչյուր քայլ՝ ուղղված տարբեր երկրներում բնակվող ազգային փոքրամասնությունների էթնոշակութաբանական և իրավաքաղաքական բնույթի հարցերի ուսումնասիրություններին, որոնք միտված են օբյեկտիվորեն

³⁸ Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Փաստաթղթերի ժողովածու, գիրք Ա, եր., 2001: Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Փաստաթղթերի ժողովածու, գիրք Բ, եր., 2001:

³⁹ Նույն տեղում, գիրք Բ, էջ 229-243:

⁴⁰ Նույն տեղում, գիրք Բ, էջ 244-252:

⁴¹ Նույն տեղում, գիրք Ա, գիրք Բ:

վեր հանելու գոյություն ունեցող խնդիրները, ծանոթացնելու լայն հասարակայնությանը նրանց էթնոմշակութային նկարագրին, դրանով իսկ նպաստելով ինչպես գիտելիքների տարածմանը, այնպես էլ ազգամիջյան հարաբերություններում փոխըմբռնմանն ու փոխհարգանքին:

